Գիրքը լուսապատճենվել և համացանցում է **տեղադրվել** Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորին կողմից սիրված «Գրքամոլ»-ը մեկնարկել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը ընթերցասերների հարթակում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությունը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորին հաճելի ընթերցանություն:

**Գրքամոլ Նախաձեռնություն**
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Since 2012 © Grqamol. All Rights Reserved.


ԲԱՐՈՅԱԿԱՆ
ՃԳՆԱԺԱՄ

ՏՎԻԳԵՐՆ

# ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ

ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 821.19 - 31
ԳՄԴ 84 (5Հ) - 44
Վ 301

Վարդանյան Գագիկ, Գորգիսյան Իշխան, Վարդանյան Տիգրան
Վ 301 Բարոյական Ճգնաժամ:
ՏՎԻԳԵՐՆ / Գ. Վարդանյան, Ի. Գորգիսյան, Տ. Վարդանյան
Եր.: Հեղ. հրատ., 2017. - 139 էջ:

ՀՏԴ 821.19 - 31
ԳՄԴ 84 (5Հ) - 44

ISBN 978-9939-0-2390-8

© Վարդանյան Գ., 2017
© Գորգիսյան Ի., 2017
© Վարդանյան Տ., 2017

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ - ՀՐԱՇՔՆԵՐԻ ՆԱԽԵՐԳԱՆՔԸ ……………………………..4
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ - ԿՅԱՆՔ ԾԱՂՐԱԾՈՒ …………………………………..…44
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ - ԺՊՏԱՑՈՂ ԱՉՔԵՐ ………………………………………..59
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ - ԹՌԻՉՔ ԱՌԱՆՑ ԹԵՎԵՐ ………………………………69
ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ - ՏԵՂԱՊՏՈՒՅՏ ………………………………………84
ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ - ՄԻԵՎՆՈՒՅՆ Է, ՄՆՈՒՄ ԵՍ ԴՈՒ ԾԱՂՐԱԾՈՒ ...……97
ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ - ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ ……………………………123

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ՀՐԱՇՔՆԵՐԻ ՆԱԽԵՐԳԱՆՔԸ

*Erst kommt das Fressen, dann kommt die Moral.*
*B. Brecht*

Լուսավոր ապագայի հույսի և անցյալի անհույս խավարի հատման միապաղաղ գորշության մեջ՝ տարածության մի անկյունում, ժամանակից լքված, ծվարել էր փոքրիկ քաղաքը: Նրա եզրերը ձուլվում էին հալածված բնության քրտինքի գոլորշիների հետ, և թանձր մշուշի մեջ այն դրսից պարզապես չէր երևում: Մշուշն այնքան վճռականորեն էր պաշարել այդ բնակավայրը, որ այն չէր երևա, նույնիսկ եթե նրա անունը... Երևան լիներ... Փոքր էր հարևանների համեմատ, բայց ավելի քան բավարար էր՝ տեղավորելու բնակիչների փոքրիկ հոգիները, իսկ քարտեզի վրա գուցե չկար էլ: Բացառիկ էր իր անհյուրընկալ մռայլությամբ, բայց միևնույն ժամանակ՝ երիտասարդ այնքան, որ հանելուկ էր հազարամյակների փոշու առկայությունը: Փոշին, սակայն, չէր էլ հասցնում նստել փողոցների վրա, բնավ ոչ այն պատճառով, որ բնակիչներն անձնուրաց ուշադրությամբ հետևում էին մաքրությանը, այլ այն պատճառով, որ խեղճ քաղաքը գերի էր ընկել սաստիկ քամիներին: Ու այդ փոշին թոքերով անընդհատ մտնում էր մարդկանց հոգիներն ու հանգիստ դուրս էր գալիս, իսկ այդ ցավից մարդիկ կարծես հաճույք էին ստանում: Բնությունն ասես չէր ընդունում այդ փոքրիկ հողակտորը որպես իր սեփականը. խեղճ մարդիկ անխղճորեն խլել էին այն բնության ձեռքից: Բայց որքան էլ որ զարմանալի չէ, օրը մեկ անգամ գոնե դեռևս անպիղծ լույսը բացվում էր բռնի ուժով վերջերս պղծված քաղաքի վրա, ափսոս, չէր հասցնում թափանցել մինչև քաղաքացիների՝ վաղուց արդեն ինքնակամ պղծված հոգիները: Ու քաղաքն ամեն երեկո լույսի հետ մեռնում էր, առավոտյան հարություն առնում կրկին: Ամեն անգամ մեռնելիս նա այնքան խղճուկ տեսք էր ընդունում, որ թվում էր, թե վերջին անգամ է մեռնում: Հանգիստ էր մեռնում, առանց որևէ ճիչ արձակելու. մեկ է՝ ոչ ոք դրան ուշադրություն չէր էլ դարձնելու. չէ՞ որ մարդիկ վաղուց արդեն համակերպվել էին, որ իրենց հարազատ օրրանը հոգեվարքի մեջ է և տառապում է անբուժելի վարակիչ տենդով: Ոչ ոքի մտքով չէր անցնում անգամ, որ մի օր էլ իրենք գուցե վարակվեն իրենց քաղաքից, իսկ թե ումից էր վարակվել ինքը՝ քաղաքը, գիտեին բոլորը: Գիտեին, բայց չէին խոստովանում...

Անձուկ փողոցների արանքներում անկանոն վխտում էին հնամաշ հյուղակներ, որոնք դրսից տեսնելն արդեն բավարար էր տանտերերի այլայլված կենցաղը պատկերացնելու համար: Տնակներն ասես ժողովի էին եկել, որտեղ քննարկվելու էր մի շատ կարևոր որոշում, որի կայացման մեջ, սակայն, իրենք ոչ մի դեր չէին խաղալու: Նրանք պարզապես հնազանդ լսարան էին նիստի խոսնակի համար, որը քաղաքի հյուսիսային մասում գտնվող «Ամենաթողության» երկնաքերն էր՝ բազմած «Անպատժելիության» բլրի գահին: Անճոռնի նրբաճաշակության հեգնական հայացքով նա վերևից նայում էր անշուք տնակների գլխիկոր նախրին և խղճալով թաքուն քմծիծաղ տալիս: Իսկ այդ կեղծ ժպիտը երկնաքերի երեսին դրոշմել էին խրճիթներում ապրող բանվորները, ովքեր վերջին անգամ ժպտացել էին անհիշելի ժամանակներ առաջ: Երկնաքերի բակից սկիզբ էր առնում «Նորաձևության» պողոտան, որը կեղծ ժպիտի օրգանական շարունակությունը հանդիսացող սպի էր երիտասարդ քաղաքի կնճռոտ դեմքի վրա: Պողոտան «Վայելքների» խճուղու հետ խաչվում էր «Անզուսպ կրքերի» հրապարակում, որն այնքան մաքուր էր մնացյալ քաղաքի համեմատ, որ կարծես ամաչելու փոխարեն նույնիսկ հպարտ էր, որ ծառայում է իբրև կենդանական ցանկությունների սանձազերծման վայր կամ սավան, որ գցված է երկու հոգու համար նախատեսված անկողնու վրա, որը, սակայն, օրական ընդունում է հազարների, և... որի վրա դեռ ոչ մի անգամ արյուն չի կաթել:

Հրապարակի վրա գտնվում էին մի քանի պանդոկներ և հյուրանոցներ, որոնք, թերևս, մարդկանց միակ մխիթարանքն էին: Երևակայական ցնծության պատրանքը նրանք այնպիսի ջանասիրությամբ էին շփոթում իշխող իրականության հետ, որ թվում էր, թե հասարակության՝ հարբեցողությունն ու անբարո վայելքներն ամեն քայլափոխի խստորեն դատապարտող ստվար զանգվածի փրկությունը հենց իրենց անողոք քննադատության առարկաներն էր: Գունավոր և անգույն, ոգելից և ոչ այնքան ըմպելիքները հորդում էին շիշերով, իսկ ագահությամբ նրանց տրվող մարդիկ անձնուրաց կերպով դատարկում էին բաժակներն այնպես, որ տպավորություն էր ստեղծվում, թե հաջորդ օրն առավոտյան խոր հիասթափություն չէին ապրելու: Սխալվում էին հերթական անգամ, հերթական, բայց, ցավոք, ոչ վերջին...

Եվ ահա այս հրապարակում էլ անհողդողդ խոյացել էր մի բարձրահարկ մոթել, որը մյուսների անվերջանալի ցանկի մեջ ընդծվում էր բազմամարդությամբ ու հաճախորդների բազմազանությամբ: Մոթելի տիրոջ՝ ցածրորակ նյութերով ռոմանտիկ և գրավիչ միջավայր ստանալու ցանկությունն ակնհայտորեն չէր իրականացել, ինչը, սակայն, չէր խանգարում, որ ողջ գիշեր մոթելի համարներում վխտային սեռաքաղց

տղամարդկանց և վաղուց արդեն գրավչությունն ու երիտասարդությունը կորցրած կանանց բազմությունները: Մինչ ոմանք հաջողության են հասնում՝ օգտագործելով գլուխը, մյուսները՝ ձեռքերը, այս կանայք հաջողության են հասնում ողջ մարմնով: Սակայն գուցե մարմին վաճառողը չէ իրականում արժանի այս հեգնանքին, այլ այդ մարմնին գին տվողը: Դա կենդանական հողի վրա կատարվող մի առուծախ է, որը ոչ մի կապ չի կարող ունենալ օրինաչափ կյանքի հետ: Ուստի այս երևույթն ամբողջությամբ մի խղճուկ արարողություն է՝ միտված մի կողմից բավարարելու մարմնավաճառի կենցաղը, մյուս կողմից մի քանի անջղաձիգ վայրկյան պարգևելու անբաշար տղամարդուն:

Ահա այդ մոթելի իններորդ սենյակում արդեն տասը րոպե է, ինչ սրանով էին զբաղված քսանամյա Մեսսետան և քառասունհինգամյա մի ճարպակալած տղամարդ, որը, մոռացած, որ ինքն է վճարել, այլ ոչ թե հակառակը, փորձում էր Մեսսետային պարգևել մի այնպիսի հաճույք, որը նա երբեք չէր մոռանա: Իսկ Մեսսետան մտքերով արդեն տանն էր:

Ընդամենը երեք տարի առաջ նա ապագայի հետ կապված բոլորովին այլ երազներ էր հյուսել, բայց... Բայց տասնյոթ տարեկան հասակում նա սեռական կապի մեջ մտավ մի երիտասարդի հետ, որին ընդհանրապես չէր հետաքրքրում՝ ուզում է Մեսսետան դա, թե ոչ: Ավելին. երբ աղջկա ճիչերից արդեն անհերքելի դարձավ, որ նա դա չի ուզում, երիտասարդը ցույց տվեց, որ իսկական տղամարդ է և մի քանի հուժկու հարվածով անձայնացրեց անչափահասին: Իսկ երբ ժամեր անց վերջինս ուշքի եկավ, ճակատագրի հեգնանքի թե մի վերջնական ծանր հարվածի հետևանքով չկարողացով մտաբերել հերոսի դեմքը: Հենց այս պատճառով էլ բախտախնդիր երիտասարդը մնաց անպատիժ, չնայած ամենևին էլ ակնհայտ չէր, որ նա կպատժվեր, նույնիսկ եթե աղջիկն ի վիճակի լիներ նրան նույնականացնելու: Երիտասարդի բախտը ծնողների հարցում բերել էր:

Մի թափառական ծերուկ հաստատ չէր համաձայնվի վերևում ասվածին...

Ահա այս բանից հետո Մեսսետան հասկացավ, որ կյանքը եթերային սիրուց ու կարդացված երջանկությունից բացի ունի նաև իրական կողմեր: Այստեղ ամենևին չի հերքվում սիրո կամ երջանկության գոյությունը, այլ դրանց ընկալումն է լինում իրական կամ անիրական: Կատարվածը կարող էր փոխել նրա ընկալումը, դարձնել ավելի հասուն, սառնարյուն և օգնել հասնելու մեծ հաջողությունների: Սակայն դա փոխեց ամեն ինչ, բացի հենց իրենից, պարզապես ամեն ինչ իմաստազրկվեց, ու ստացվեց այն, ինչ ստացվեց: Սա ցավոտ և բազմածալք թեմա է, ուստի առայժմ արժե չանդրադառնալ դրան:

Այդ դեպքերից մի քանի ամիս անց ընտանիքում արդեն ստեղծված հիվանդ մթնոլորտից բխող անիմաստ վեճերն անհնարին դարձրին Մեսսետայի համատեղ կյանքը ծնողների, անճար քրոջ և թևաթափ եղբոր հետ: Նա սկսեց ապրել վարձով: Այս որոշումն ընդունվեց առանց վեճերի և բավականին խաղաղ քննարկման արդյունքում. ինչ-որ մեկը խորհուրդ էր տվել ծնողներին՝ չխառնվել աղջկա կյանքին և թույլ տալ նրան ինքնուրույն մարսել ամբողջն ու կողմնորոշվել: Այստեղ հաշվի չէր առնվել, որ բարոյալքված, լքված, հիասթափված մարդու կողմնորոշումը համաչափ չէ դրականի և բացասականի նկատմամբ: Ուսումը շարունակելու և կենցաղը բավարարելու համար ծնողների տրամադրած գումարներն սկսեցին ծախսվել սրճարանների, բարերի, դիսկոտեկների և նմանատիպ ժամանցային վայրերի վրա: Դրանք իրականում նախատեսված են աշխատանքից հոգնած, ծանրաբեռնված մարդկանց համար, որպեսզի մի քիչ հանգստացնեն, կամ, ինչպես ասում են, անջատեն գլխուղեղն ու ազատություն տան սրտին և քմահաճույքներին, բայց միայն՝ մի քիչ: Այդ պայմանին չբավարարող գլխի վրա այս գործիքի կիրառումը վերջնականապես անջատում է այն և տրամաբանության, դատողության ու բանականության աշխարհից մարդուն շպրտում քմահաճույքի, անկայունության և անլիարժեքության գոտի: Շարունակությունը թեև հետաքրքիր է հոգեվերլուծության տեսանկյունից, սակայն տրամաբանական է և տեսանելի: Ուստի այլևս կարիք չկա բացատրելու, թե ինչպես Մեսսետան աստիճանաբար դարձավ վաճառական:

Թեև ամենազոր ժամանակի ընթացքում քիչ թե շատ կարգավորվել էին հարաբերությունները ծնողների հետ, սակայն վերադառնալու մասին արդեն խոսք չկար: Մի կողմից Մեսսետան իրեն համարում էր լիովին կայացած և ինքնուրույն մարդ (հակառակվելը դժվար է), մյուս կողմից ծնողներն արդեն գիտեին, թե ինչն է իրենց բալիկի եկամտի աղբյուրը: Այստեղ բախվել էին երկու հզոր ուժ՝ ծնողական սերը, որն ինչ-որ չափով հպարտության և գոռոզության մի խառնուրդ է, և, որքան էլ որ զարմանալի է, բայց նորից հպարտությունը և գոռոզությունը՝ արդեն բացահայտ ձևով: Այստեղ կարելի էր խոսել նաև ամոթի, խղճի մասին, բայց անիմաստ է, քանի որ ծնողական այս ներքին մենամարտը միշտ տեղի է ունենում զգացմունքային հողի վրա, և սառը դատողությունը մի քիչ խեղդված է: Ուստի մենամարտի արդյունքը կամայական է, այսինքն՝ հավասար հավանական: Մի խոսքով, աղջիկն ապրում էր միայնակ՝ ժամանակ առ ժամանակ այցելելով ծնողներին: Գուցե տարօրինակ թվա, սակայն ոչինչ չի խանգարում ասել, որ ամեն ինչ բնական էր, իսկ որպես կյանքի հերթական մոդել՝ գրեթե կատարյալին մոտ:

Այն ծերուկը հաստատ կհակառակվեր...

Մեսսետան արդեն լոգանք էր ընդունել և հագնվում էր, իսկ քառասունհինգամյա տղամարդը, բավարարված ժպիտը դեմքին, դեռ անկողնում պառկած էր: Նա փորձում էր աղջկա հետ մտերմիկ զրույց սկսել, սակայն Մեսսետան բավականին սառը և անտարբեր էր պատասխանում նրան, երբեմն-երբեմն էլ ընդհանրապես անպատասխան թողնում: Մեսսետայի նուրբ ու գիշող հեգնանքը, սիրտ քամող գեղեցկությունն ու տղամարդու տեսանկյունից ողբերգական ճակատագիրը նրան մի երանելի պտուղ էին դարձնում գրեթե բոլոր հաճախորդների համար: Դա սեր չէ, բայց տանջել կարողանում է: Առաջին օրը գրեթե ամբողջությամբ լցված է նրանով, հաջորդ օրը դու նրան հիշում ես ժամանակ առ ժամանակ, երրորդ օրը նրա մասին հիշեցնում է կողքովդ անցնող գեղեցիկ աղջիկը, հետո սկսում ես հիշել ամեն անգամ նմանատիպ արարողությունների ժամանակ, մինչև հանդիպում ես ավելի լավին: Հենց այդպիսի մի բան երևի կկատարվի այդ ավելորդ կիլոգրամներով տղամարդու հետ ու կանցնի:

Մեսսետան արագ հասավ տուն և անմիջապես պառկեց քնելու, քանի որ հաջորդ օրը պետք է գնար ծնողների տուն. վաղուց չէր տեսել քրոջը: Մեսսետայի քույրը նրա մասնագիտությանն ընդհանրապես նշանակություն չէր տալիս և նրան համարում էր այն հազվագյուտ մարդկանցից, ովքեր իրեն հասկանում են մինչև վերջ: Ու ընդհանրապես, նա համոզված էր, որ Մեսսետան բավականին խոր և իմաստուն անձնավորություն է:

Իրականում երեք տարի առաջ Մեսսետայի կյանքը չշարդվեց, պարզապես նրա հյուսած երազները մի քիչ հետաձգվեցին. նա որոշեց դրանք իրականացնել մահից հետո: Հիմա նրա երազանքն իր ողբերգությունն ապրելն էր: Այստեղ ողբերգությունը պետք չէ հասկանալ այնպես, ինչպես հասկանում են: Ո՛չ, այդ բառի փոխարեն պետք է հորինել մեկ ուրիշը և ողբերգությունն ընկալել որպես հրաշքի պես մի բան: Նա սիրահարված էր ու այդ սերն ընկալում էր իր ձևով: Մի անգամ քրոջ հետ սիրուց զրուցելիս նա ասաց.

—Սերը երջանկություն է, սակայն ոչ այն հասարակ պատկերացված ընտանեկան երջանկությունը: Պետք չէ սերը և ամուսնությունը դիտարկել միասին, դրանք միանգամայն առանձին և ինքնուրույն երևույթներ են: Ողբերգական սերն է երջանկություն, այն իրականը, այն, որ ավերում է ամեն ինչ, այն, որին պետք չէ ոչինչ, որ մնում է հավերժ, այն տանջանքը, որին կարոտում ես, այն տանջանքը, որի համար տանջվում ես, այն սերը, որ տանելու ես մինչև վերջ ու վերջից հետո էլ չես թողնելու, անցկացնելու ես ամեն ինչի միջով ու հասցնելու ես քեզ: Այդ սիրո համեմատ կյանքն այնքան չնչին է, որ հոգ չէ, թե այս կյանքում չես հասնի դրան: Այդ սիրո ճանապարհին

ճաշակած տխրությունն այնքան քաղցր է, որ դասական երջանկությունը ժպիտ է թվում: Եվ ես հասնելու եմ նրան:

Թափառականն այստեղ երկար կխոսեր...

Մեսսեւտայի քրոջ անունը Էլլա էր:

Գեղեցիկ էր նա, բայց նրա կանացի հմայքը փոքր-ինչ ճնշվում էր փոքր քրոջ անփույթ վայրիության կողքին: Բարեկամներից ոմանք ասում էին, որ նրանք շատ են նման իրար, իսկ ուրիշները տրամագծորեն հակառակ կարծիք ունեին: Ծանոթ մարդկանց տպավորությունների այս բախումը վերաբերում էր ինչպես արտաքինին, այնպես էլ էությանը: Էլլան ընտանիքի առաջնեկն էր և վայելում էր ծնողների հարգանքն ու աջակցությունը. մանավանդ վերջին ողբերգական դեպքերից հետո նրան կարծես նորից վերաբերվում էին այնպիսի ջերմ սիրալիրությամբ, ինչպես այն տարիներին, երբ նա դեռ ընտանիքի միակ զավակն էր:

Միջինից բարձր հասակով, ճերմակ ու հարթ մաշկով, նուրբ կառուցվածքով մի օրիորդ էր Էլլան: Առաջին հայացքից նրան հեշտորեն կարելի էր չնկատել ամբոխի մեջ, այդուամենայնիվ նա մինչև վերջ չէր ձուլվում իրականությունից վերցված և ոչ մի համայնապատկերի: Յուրատեսակ աշխարհընկալումն արտացոլված էր նրա խորհրդավոր աչքերի մեջ, որոնք թաքցնում էր արևային մուգ ակնոցի տակ: Իսկ այն մեծ էր ոչ այն պատճառով, որ նորաձև էր, ուղղակի նրա աչքերն էին արտասովոր խոշոր, բայց միևնույն ժամանակ՝ սովորական գեղեցիկ: Իսկ արտասովոր գեղեցիկ նա դառնում էր միայն ժպտալիս, որովհետև ժպտում էր աչքերով: Անասելի դժվար էր դիմանալ նրա՝ ցանկացած բնույթի կեղծավորություն մերժող ժպիտից առաքված ճառագայթների զորությանը: Հենց դրա համար էլ նա իր դեմքի մի մասը եսասիրաբար թաքցնում էր ակնոցի հետևում և քանի որ հայելու առջև երկար կանգնելու և իր հրաշք դեմքով հիանալու տարիքից էլ արդեն դուրս էր եկել, նրա դեմքը մնում էր ստվերում: Ինչևէ, ունակ էր այդ դեմքը և՛ տանջելու, և՛ երանություն պարգևելու, և՛ ծնկի բերելու, և՛ ոտքի կանգնեցնելու: Միայն թե չէր աշխատում իր բոլոր հնարավորությունների չափով, այլ հազվադեպ էր զարդարում շրջապատն իր անկրկնելի թափանցիկությամբ: Բայց այնտեղ, որտեղ նա հայտնվում էր, աշխարհը փոխում էր իր ամբողջ բովանդակությունը և դառնում էր ավելի հյութեղ ու ցանկալի: Իսկ նրա ախորժելի ձայնն ուղղակի ապրելու անհագ ցանկություն էր վերածնում դիմացինի մեջ:

Ապրում էր ներքին և արտաքին աշխարհների հորինված ներդաշնակության տիրույթում, որն այնքան վարպետորեն էր հյուսված, որ իրականության հետ դեռևս լուրջ հակասություններ չէր ունեցել ու երևի թե երբեք էլ չէր ունենա, եթե միայն չսիրահարվեր:

Բայց դրանում մեղավոր չէր նա, իսկ ավելի ճիշտ՝ նա չէր մեղավորը…

Ինչևէ, սերն այնքան քաղցր էր նրա համար, որ նրա ապրած ամենամեծ հոգեկան ցնցումը թերևս Մեսսետայի ողբերգությունն էր, որի գլխավոր հերոսն այդպես էլ անհետացավ նույնքան անսպասելի, որքան որ հայտնվել էր մութ փողոցի անկյունում մի քանի հարբած ընկերների ուղեկցությամբ: Էլլան ավելի ծանր էր տանում այդ վիշտը, քան ինքը՝ տուժածը: Նա անգամ վախենում էր իրեն պատկերացնել կրտսեր քրոջ կարգավիճակում. անորոշ ժամանակով հետաձգված պլաններ, փշրված երազներ և խորը վիրավորված արժանապատվություն: Իսկ Մեսսետան չէր էլ տանջվի, եթե ստեղծագործ մարդիկ իրենց հանճարն անխնա ներդրած չլինեին մի վերացական հասկացություն հորինելու մեջ, որ կոչվում է պատիվ: Նա չէր տանջվի նաև, եթե որոշ ծնողներ մոռացած չլինեին դաստիարակել իրենց տեսակը շարունակողներին: Մի՞թե կարելի է կենցաղով այնքան տարված լինել, որ մոռանաս կրթել սեփական երեխայիդ: Եթե ոչ, ապա միակ տրամաբանական այլընտրանքը կարող է լինել այն, որ հերոսի ծնողները միտումնավոր էին նրան այդպես դաստիարակել: Այդ դեպքում հավանաբար ներողություն խնդրենք անմեղ զավակից և այսուհետ մեղադրանքներն ուղղենք նրա ծնողներին՝ հավատացած լինելով, որ նա՝ զավակը, դրանից այնքան էլ շատ չի վիրավորվի:

Ամեն դեպքում կյանքի այս դառը դրսևորումների կողքին կար նաև սերը, որը նոր զգացմունք էր Էլլայի համար: Մինչ նա բացահայտում էր դրա նրբությունները, ժամանակն աննկատ հոսում էր, և Մեսսետայի հետ պատահածը վաղուց արդեն դադարել էր քննարկման առարկա լինելուց: Բայց ավագ քրոջ հոգում դա մի անջնջելի սպի էր թողել, որը նրան ավելի հետաքրքիր երանգներ էր հաղորդում՝ դրանով իսկ ավելի գրավիչ դարձնելով իր սիրո թիրախի համար, և ոչ միայն նրա…

Քույրերի անբացատրելի հմայքը բազմապատկվում էր, երբ նրանք միասին էին. միասնականությունն էր հանդիսանում նրանց հաղթաթուղթը: Իրենց ամբողջ համատեղ կյանքում նրանց ամենալուրջ վեճը եղել էր մանուկ հասակում ինչ-որ խաղալիքի համար: Մինչդեռ այժմ նրանք հասկանում էին իրար նույնիսկ հայացքների փոխանակությամբ: Նրանք ընդհանուր շատ բան ունեին, ավելի ճիշտ՝ նրանց կյանքի փորձն ամբողջությամբ ընդհանուր էր, այն բացառությամբ, որ կրտսեր քույրը դեռ բախտ չէր ունեցել ճաշակելու սիրո դառնությունը, իսկ ավագը դժբախտություն չէր ունեցել ապրելու ցանկացած հաջողված սիրո եզրափակիչ փուլի քաղցրությունը: Բայց Մեսսետայի պարագայում դա ոչ թե սիրո եզրափակիչ փուլն էր, այլ կրքի որակավորման փուլը, որտեղ պարտվողը դուրս է մնում հետագա պայքարից, իսկ խաղի ելքը

վճռված է նախօրոք: Այդ խաղը ո՛չ ազարտային է, ո՛չ էլ, առավել ևս, մարզաձև: Դա մի այլ արվեստ է, որն իրենից ներկայացնում է նշված երկուսի մի այլասերված խառնուրդ: Ի՞նչ կարելի է մտածել մի խաղի մասին, որի դատավորը հենց խաղացողներից մեկն է: Անհեթեթություն... կողքից նայելիս: Երանության պատրանք՝ հարձակվողի, և ամոթալի ինքնապաշտպանություն՝ մրցակցի համար: Իսկ մեզ համար՝ ընդամենը մի հուզիչ պատմություն, որը կարեկցանք է առաջացնում, բայց մի քանի օրից՝ անդարձ մոռացվում:

Իսկ Էլլայի համար ծանր էր հարազատ քրոջը տեսնել այդ վիճակում: Առավել ծանր էր, որ Մեսսետան չկարողացավ պատվով դուրս գալ անպատվաբեր իրավիճակից: Սակայն դա չէր կարող լուրջ ազդեցություն ունենալ քույրերի հարաբերությունների վրա: Էլլան չէր մեղադրում քրոջը, որ հոգեկան խռովքից հուզված՝ իրեն նետել էր գիշերային կյանքի խոր փոսը, որն, ի դեպ, էլի անգործ մարդիկ էին փորել: Իսկ Մեսսետայի համար այդ փոսն ամենևին էլ գերեզման չէր. ճիշտ հակառակը՝ մի հարմարավետ մեկուսարան, որտեղ նա ազատ էր, որտեղ նրա կամքի վրա այլևս ոչ ոք չէր բռնանա, որովհետև արդեն կարելի էր ոչ մեծ գումարով համաձայնության գալ նրա հետ:

Յուրաքանչյուր մարդ իր սեփական կարգավիճակի հիմնավորման վարպետն է:

Մինչ Մեսսետան ավելի էր հարմարվում հորի հատակին, Էլլան հարթում էր դեպի վեր տանող իր ճանապարհը: Օրինակելի ուսանողուհի էր, խելացի և աշխատասեր: Նվիրված էր իր ապագա մասնագիտությանը, որն իր կարծիքով անթիվ դռներ էր բացելու իր առջև: Արդեն սովորում էր մագիստրատուրայում, բայց սովորելու անհագ ծարավը դեռ չէր հասցրել կտրվել հուսախաբության հողի վրա, ինչպես իր համակուրսեցիներից շատերի հետ էր պատահել: Բայց նա ամենևին էլ միամիտ չէր: Նրան ուղղակի չափազանց համոզիչ կերպով էին ներշնչել դասախոսները, որ լավ մասնագետների կարիք կլինի այնքան ժամանակ, որքան որ կգոյատևի մարդկությունը: Նա քաջ գիտակցում էր, որ իրեն արհեստականորեն էին հուսադրում, բայց կարողանում էր արդարացնել իր անկոտրում համառությունը՝ պատճառաբանելով, որ մարդ ունակ է ամեն ինչի հասնելու, եթե միայն շատ ցանկանա: Նրա հետ վիճելն անիմաստ էր: Այդուհանդերձ՝ դժվար թե Մեսսետան երբևէ ցանկություն էր ունեցել մի հասարակ մսագործի տակ պառկելու... իսկ որ հեշտությամբ հասավ դրան, անհերքելի էր: Մինչդեռ իր նվիրական ցանկությունները մնացին անհաս: Այս կապակցությամբ մեկնաբանություններ տալիս միայն Էլլան դժվարանում էր, և նրա սահուն ու գրագետ արտասանված խոսքերն ընդմիջվում էին մտքերի երթևեկությամբ: Նորածին, բայց փորձառու մտքերը շրջում էին կյանքի մութ կողմի ոլորաններում՝ մի տեղ, որտեղ ինքը առաջ երբևէ չէր հայտնվել:

Չէր հայտնվել նաև այն երիտասարդը, ում հետ արդեն մի տարուց ավելի է, ինչ ընկերություն էր անում Էլլան: Իհարկե, միայն դա չէր, որ նրանց կապում էր: Նրանց կապում էր մի փոքր ավելին՝ սերը, որ երկուսն էլ առաջին անգամ էին զգում, գուցե դրա համար էլ սեր էին կոչել: Դժվար էր հարաբերությունը փորձություն համարել նրանց համար: Զարմանալի հարթ էին ընթացել մեկնարկային բանակցությունները, և երկուսն էլ խստորեն համոզված էին, որ իրար համար են ստեղծված, և որ ճակատագիրն էր դիտավորյալ կերպով խաչել նրանց կյանքի ուղիները: Շարունակվում էին ջերմ հանդիպումները, սրտառուչ զրույցներն ու խելահեղ համբույրները, որոնց մեջ տղան այնքան կյանք էր ներդնում... Իսկ Էլլան որքան էլ որ ջանում էր չբորբոքվել համբույրի ժամանակ, այնուամենայնիվ ամենաշատն այդ ակնթարթներին էր կարոտում՝ իհարկե չխոստովանելով ինքն իրեն, որ դա այդպես է: Բայց համաձայնե՛ք, որ դա էլ մեղադրելու չէ: Իրավունք ուներ, չէ՞ որ համբուրում էր սիրած տղային: Ինչո՞ւ պետք է փորձեր իրեն հետ պահել այդ գայթակղությունից...

Մինչդեռ Էլլան ինքն իրեն այդ հարցադրումով չէր փորձում խեղդել, որ վայելքը լինի ամբողջական, առանց ճնշող վերապահությունների: Փոխարենը նա համոզված էր, որ ճիշտ ընտրություն էր կատարել, իսկ նրա նման գրավիչ օրիորդը, հավատացե՛ք, մեծ ընտրության հնարավորություն ուներ: Նույնը կարելի էր ասել նրա ընտրյալի մասին: Այսպիսով նրանք միասին էին այն գիտակցությամբ, որ իրենցից յուրաքանչյուրն էլ վայելում է հակառակ սեռի ներկայացուցիչների անսահման համակրանքը. նրանցից ամեն մեկը դրա համար ուներ իր պատճառը: Իսկ այն միտքը, որ երկրպագուհիների այդքան մեծ բանակից տղան իրեն է ընտրել, Էլլային թևեր էր տալիս: Նրան ընձեռված թռիչքի հնարավորությունները, սակայն, վերևից սահմանափակվում էին այն սարսափելի հեռանկարով, որ ինչ-որ մեկի կողմից իրագործված փոքրիկ սխալը հարաբերությունների առաջին հարկերի կառուցման փուլում կարող էր հետագայում հանդիսանալ ճակատագրական բաժանման հիմք:

Սակայն փոքրիկ սրճարանում, որտեղ նրանք հանդիպել էին հերթական անգամ, բնավ էլ բաժանման մասին չէին զրուցում: Այցելել էին այդ համեստ սրճարանը, որովհետև քաղաքի՝ իրենց հանդիպումների ավանդական վայրը դարձած շքեղ սրճարաններից մեկը վերանորոգվում էր, որպեսզի նոր շնչով վերաբացվեր և հետևում թողներ մրցակիցներին, որոնք առանց այն էլ կորցրել էին երբեմնի եկամտաբերության հույսը: Իսկ այս անգամվա հանդիպման վայրը, որ շարքային անդամ էր այն անթիվ սրճարանների բազմության, որոնք, սնկերի պես բուսնելով քաղաքային ջունգլիում, այն լցրել էին խելահեղ խայտաբղետությամբ և դրանով է՛լ ավելի հեռացրել իր երբեմնի բարի ու բնականոն տեսքից, գրեթե դատարկ էր: Մատուցողները, որոնք սովորաբար

երեկոյան այս ժամերին շատ ավելի զբաղված էին լինում, մատնված էին պարապության, և առիթից օգտվելով՝ ամեն մեկը մյուսներից թաքուն փորձում էր հաշվել օրվա վաստակածը և գուցե արդեն մտովի ծախսում էր այն: Երևի այդ էր պատճառը, որ զբաղեցված երկու սեղանները կատարյալ անտարբերության էին մատնված:

Առաջին սեղանի մոտ, որը գտնվում էր դռանն ավելի մոտիկ, նստած էր հիսունին մոտ, ամբողջովին ճերմակած մազերով մի տղամարդ: Նրա նիհար ու չլուտ մարմինը կարծես կախիչի պես կրում էր մի կապույտ վերնաշապիկ, որի վերին կոճակներն արձակված էին: Անծանոթը երկու ձեռքով ամուր բռնել էր իր առջև դրված գարեջրի մեծ բաժակը և անորոշ հայացքն ուղղել նրա հատակին՝ ասես նորից ու նորից փորձելով գտնել բաժակի մեջ կորսված իր բոլոր խնդիրները: Սա արդեն երրորդ բաժակն էր, որից հետո նա երևի փակելու էր հաշիվը: Գարեջրի փրփուրն ամբողջությամբ լցրել էր նրա գլուխը՝ այնտեղից դուրս մղելով բոլոր տեսակի մտքերն ու դատողությունները, որոնք այժմ սավառնում էին նրա գլխավերևում՝ համբերատար սպասելով իրենց վերադարձին: Գուցե դա էր պատճառը, որ բացի իր սեղանի աղքատիկ զարդարանքը կազմող ամենապարզ հեռախոսից, հին մեքենայի բանալուց ու իր հարազատ գավաթից, նա ոչինչ չէր նկատում իր շուրջը…

Կողքից նայողին կարող էր թվալ, որ հենց վերջին հանգամանքն էին հաշվի առել սրահի ավելի խորքում դրված սեղանի շուրջը նստած սիրահարները, երբ ընտրել էին հենց այս սրճարանը: Կարմիր վարդը, որ փաթաթված էր ամենասովորական թղթով, կարծես կիսում էր սեղանը՝ այն բաժանելով տղայի և աղջկա միջև: Բայց նրա կիսաբաց կոկոնը չէր հասնում սեղանի եզրին. այն մեղմորեն հպվում էր ուժգին սեղմված ափերին, որոնցից ավելի նուրբն ու բարակը պարբերաբար փարվում էր կարմիր թերթիկներին՝ կարծես նրանց տալով այն ջերմությունն ու գուրգուրանքը, որ չէր համարձակվում փոխանցել իրեն ամուր բռնած ավելի մեծ ու առնական ձեռքին: Իսկ վերջինիս տերը զուսպ, հավասարակշռված ու առաջին հայացքից մի փոքր էլ անտարբեր մի անձնավորություն էր: Մյուս ձեռքով նա պարբերաբար բերանին էր մոտեցնում իր ծխախոտի գլանակը՝ միևնույն ժամանակ անթարթ հայացքը չհեռացնելով Էլլայի ժպտուն աչքերից: Զարմանալի է, թե ինչքան սեր է անհրաժեշտ, որպեսզի կարողանա լցնել այդ խոշոր աչքերը. իսկ դրանք այժմ ամբողջությամբ սիրով էին լցված: Տղան իր ողջ էությամբ սուզվել էր այդ թավշյա հայացքի մեջ և լուռ վայելում էր նրա ժպիտը, որը վերջին րոպեներին ավելի հաճախակի էր սկսել ուրվագծվել աղջկա հրեշտակային դեմքին: Թվում էր՝ նրանց շուրջը սավառնում է մի երկնային մեղեդի, որ պարուրել էր նրանց սրտերն ու դրանց բաբախումները

դարձրել համահունչ: Նրանք պատրաստ էին այսպես մնալ մի ամբողջ հավերժություն՝ մոռացած տարածության ու ժամանակի մասին… Կար միայն սեղանը, վարդը և նրանց՝ խելահեղ համբույրով միախառնվել տենչացող շուրթերը, որոնք ասես քարացել էին հենց համբույրի կես ճամփին: Իսկ մնացած ամեն ինչը, որ գտնվում էր նրանց մեղեդու ազդեցությունից դուրս, պարզապես կարևոր չէր: Ոչինչ չէին խոսում, քանզի ցանկացած բառ այդ պահին ավելորդ էր: Փոխարենը խոսում էին նրանց հայացքներն ու սրտերը: Էլլան ու Էվիլիոն պարզապես ապրում էին այս պահը՝ վայելելով այն իր ողջ խորությամբ ու քաղցրությամբ:

Մոտ մեկ տարի էր արդեն, ինչ սեր կոչվող այս անբացատրելի հանելուկը միավորում էր նրանց, բայց թվում էր՝ նրանք մի ամբողջ կյանք ապրել էին միասին և մի այդքան էլ պատրաստ էին ապրել: Գուցե Էլլայի պարզության, անկեղծության ու անմիջականության շնորհիվ էր, որ Էվիլիոն նրան քիչ ավելի լավ էր ճանաչում: Նրան արդեն հարազատ էր դարձել Էլլայի դիմախաղի ամեն մի մանրուք, ամեն մի շարժում և առաջին հայացքից մի քիչ տարօրինակ թվացող ամեն մի արտահայտություն, որոնք բնորոշ էին միայն նրան: Այո՛, նա ճանաչում էր աղջկան իր բոլոր թերություններով ու առավելություններով և երևի սիրում էր նրան այնպիսին, ինչպիսին որ կար: Իսկ աղջիկն Էվիլիոյի մեջ շատ էր գնահատում նրա լրջությունն ու սթափությունը և դրանց հետ մեկտեղ՝ նաև նրբանկատությունն ու քնքշությունը: Էլլային պետք էր մի հզոր ուղեկից, մի հենարան, որը, չափազանց նրբությամբ կարդալով իր սրտի լարերը, նաև պատրաստ լիներ պաշտպանել իրեն ամեն տեսակի պատուհասից: Բայց ամենից շատ նրան գրավում էր Էվիլիոյի ձայնը. այն առնական էր ու խրոխտ և միևնույն ժամանակ՝ այնքան նուրբ ու հոգեհմա, որ ամեն մի բառը մեղմ թրթռացնում էր աղջկա սիրտը՝ արձագանքելով նրա գլխում: Էլլան առաջին անգամ էր սիրում, և գուցե հենց փորձի պակասն էր խանգարում նրան՝ ճիշտ արտահայտելու իր ողջ զգացածն ու մտածածը: Բացի այդ, նա հիմնավոր պատճառներ ուներ զգուշություն դրսևորելու…

Սակայն այս պահին սիրահարների մտքով անգամ չէր անցնում նման վերլուծություններ անել: Նրանք ապրում էին պահը՝ այդ բառի լրիվ իմաստով և վայելում էին իրար: Վայելում էին, մինչև այդ կատարյալ ռոմանտիկ վիճակն ընդհատվեց Էվիլիոյի հեռախոսի՝ այդ պահին ամենաանհարիր զանգով… Էլլան ուշադիր նայում էր իր սիրեցյալի աչքերին՝ կարծես փորձելով գուշակել այն պատճառը, որը, թեև կարճ ժամանակով, բայց պետք է բաժաներ իրենց: Ի վերջո Էվիլիոն հեռախոսը դրեց սեղանին, սակայն խոսելու փոխարեն բացակա հայացքն ուղղեց աղջկան՝ երևի հարմար բառեր փնտրելով:

Լռությունն արդեն անհարմար էր դառնում... Չնայած նրան, որ արդեն վաղուց անցել էին այն անխուսափելի անհարմար պահերի միջով, երբ դժվար է ինչ-որ բառեր փոխանակել, այս պահը տարօրինակ և գուցե անտեղի կրկնությունը դարձավ պատմության գիրկն անցած այդ բազում պահերից մեկի: Իսկ այդ պատմությունը շատ էր սիրում թերթվել սիրահար զույգերի կողմից. նրանք սիրում էին հիշել իրենց առաջին հանդիպումները և զրույցները, այդ թվում և ամենաառաջին խոսակցությունը, որ անսպասելիորեն տեղի ունեցավ գեղեցիկ ու արևոտ մի օր...

* * *

Հուլիսյան մի շոգ կիրակի էր, շաբաթվա վերջին, իսկ Էլլայի համար նոր կյանքի առաջին օրը: Երկինքն այդ օրը կարծես տվել էր իր համաձայնությունը և բարեհամբույր էր տրամադրված Էլլայի նկատմամբ, որ զբոսնում էր «Զուր ծնված մտքերի» այգում, ինչպես ամեն կիրակի: Ուղղակի այդ օրը նա զարմանալիորեն մենակ էր: Չէր կարող սնահավատ աղջիկը խախտել ավանդույթ դարձած իր զբոսանքները միայն այն պատճառով, որ քույրը չէր կարող գալ, որովհետև այդ օրն առավոտից լքել էր քաղաքը մի մեծահարուստի պատվերով: Բայց Էլլան չէր մտածում, թե ինչքան գումար կարող է վաստակել իր քույրիկը, եթե աշխատանքը սկսել է առավոտից: Փոխարենը նա մտածում էր... ոչնչի մասին: Հենց դրա համար էլ դասերով ծանրաբեռնված աղջիկը սիրում էր հանգստյան օրը գնալ այգի և ուղղակի մոռանալ կենցաղային (և ոչ այնքան) հոգսերը: Իսկ այն լուսավոր կետը, որի մասին մտածելով պետք է մոռանար իր խնդիրների ու դժվարությունների մասին, դեռևս անհասանելի էր նրան: Էլլան հույս չուներ անգամ մոտենալու իր անհաս երազին, և դրա համար էլ այն իրավացիորեն դասել էր կենցաղային խնդիրների շարքում ու փորձում էր չմտածել դրա մասին նույնպես: Ամեն դեպքում դժվար էր խենթացնող դեմքի հետևում մտածող ուղեղ ունեցողի համար ոչնչի մասին չմտածելը: Դժվար էր, բայց հնարավոր... ինչպես ցանկացած բան Էլլայի համար: Իսկ ուղեղին կարճաժամկետ արձակուրդ ուղարկելուն անշահախնդրորեն օգնում էին անշարժ տերևները, որոնց հանգստի էր ուղարկել զորեղ քամին, չէ՞ որ այսօր այգին սիրալիր էր իր մշտական այցելուի հանդեպ: Սակայն անշարժ տերևներին նույնքան անշարժ հայացքը սևեռած աղջիկն այնքան էլ միամիտ չէր, որ երեխայի պես փորձեր հոգսերի գրոհներից խուսափելու համար անջատել ուղեղը. նա դա անում էր ժամանակավորապես, որպեսզի հետո թարմացած գլխով և սառը դատողության ամբողջ թափով մարտավարություն մշակեր՝ հակագրոհի անցնելու համար:

Ու քայլում էր՝ առանց ոտքերի առաջ նայելու, աչքերն ուղղած դեպի հեռվի ծառերը: Բայց ծառերն իրենց բնական շնչով տեսնելուն նրան խանգարում էր մի բան, որն աներևույթ ձևով օգնում էր ուրիշ շատ հարցերում՝ ակնոցը, որը, մեղմորեն հենված լինելով դեմքին անչափ շատ սազող փոքրիկ քթիկին, մեկուսացնում էր Էլլայի մաքուր հոգին կեղտոտ իրականությունից: Բայց նա համաձայն էր անգամ փոքր-ինչ թաթախվել կյանքի սև մոխրի մեջ, միայն թե ավելի համահունչ ու ներդաշնակ լիներ շրջապատին, որովհետև նա արդեն բավական գիտակից էր՝ հասկանալու, որ կարող է խեղդվել այդ անհամաձայնության ծովի կործանիչ ալիքների մեջ: Խնդիրն էլ հենց այն էր, որ նա ստացել էր այնպիսի դաստիարակություն, որը խստորեն բացառում էր ցանկացած բնույթի ոտնձգություն սեփական սկզբունքների հանդեպ: Դա նրա մեջ սերմանել էին մանկուց, ջանասիրաբար սնել ու ջրել էին պատանեկության տարիներին, բայց, միևնույն է, ցողունի ուժը բավարար չէր՝ բետոնե հաստ շերտի տակից դուրս սողոսկելու համար: Եվս մեկ բան, և կարծես բավարար կլիներ: Մի բան, որի մասին երազում է ցանկացած աղջիկ, մեկը, ով իրեն կնվիրվեր մինչև վերջ, կամ գուցե մի փոքր էլ ավելի: Այդուհանդերձ, չէր պատկերացնում առաջին անգամ սիրահարվածների բազմության անդամ հանդիսացող Էլլան, որ աշխարհում ինչ-որ մեկը ինչ-որ մեկին կարող է նվիրվել այնքան, որքան ինքն է նվիրվել այդ մշտապես խնամված տեսք ունեցող գեղեցկադեմ տղային, որի անունն անգամ չգիտեր, չէ՞ որ անձամբ չէր էլ ճանաչում. ընդամենը մի քանի անգամ տեսել էր իրենց համալսարանի բակում ընկերների հետ կանգնած: Այդ մի քանիսից մեկը Էլլայի համակուրսեցին էր, բայց դա չէր կարող պատճառ հանդիսանալ, որ Էլլան ամեն անգամ չփոխեր ճանապարհը՝ փորձելով գլուխը կախ շրջանցել այդ տղաների խումբը, որոնցից մեկին ծանոթ էր, իսկ մեկ ուրիշի հետ շատ կուզեր ծանոթանալ: Եվ սակայն այդ քմահաճ ցանկությունններն այնքան անլուրջ էին գիտակից աղջկա համար, որ նա բանտարկել էր իր պատանեկան երազների ասպետի ընթացիկ մարմնավորման կերպարը սրտի խուլ անկյուններից մեկում՝ նախօրոք ապահովագրելով, որ հանկարծ դա իր արտացոլումը չգտնի իր միշտ սքողված և ավելի քան միշտ անկեղծ աչքերի մակերևույթին: Սակայն դա նրան միայն թվում էր...

Ինչքան էլ որ նրա խաղացած քամահրանքը փորձում էր կոճկել զգացմունքի բերանը, միևնույն է, նրա գողտրիկ հայացքը մի նամակ էր, որի բովանդակությունը դժվար չէր կռահել նույնիսկ առանց ծրարը բացելու: Շուտով նրանց միջև սկսվեց մի եթերային նամակագրություն, ընդ որում նամակները գնալով երկարում էին մինչև այն պահը, երբ այն ի վերջո ընդհատվեց մի կանխատեսելի բարևով: Էլլան անթիվ անգամներ

պատկերացրել էր այս պահը, բայց այն իրականում այնքան ուրիշ էր, այնքան ավելի լավը, քան իր երևակայածները, Էվիլիոյի ձայնն այնքան հարազատ էր, որ այլևս ոչինչ պետք չէր Էլլային այգին դրախտի վերածելու համար... Նա հանեց ակնոցը՝ պահն իրական գույներով վայելելու համար, նորից փորձեց կոծկել հուզմունքն ու կեղծ զարմանք արտահայտող հայացքով վերադարձրեց Էվիլիոյի բարևը...

Դժվար չէ պատկերացնել, որ Էլլայի մեկ բարևը նշանակում էր մի քանի տասնյակ կոտրված սրտեր: Էվիլիոն հաղթողն էր, բայց քանի-քանիսը ջերմ բարևի փոխարեն արժանացել էին սառն անտարբերության: Էլլայի համար դա համարյա սովորական էր դարձել: Որքան էլ նրա փոքր եղբայրը փորձեր վանել նրա դիվային գեղեցկության վրա պատահականորեն վրա տվող ենթահասարակությանը, միևնույն է, նրանք բուսնում էին միշտ ու որսում այն եզակի պահերը, երբ նա միայնակ էր: Երևի դրա համար էր նա արդեն ամեն կերպ խուսափում մենակ զբոսնելուց, բայց կիրակնօրյա վաղորդյան զբոսանքը նրա համար միշտ կարևոր էր, նույնիսկ երբ քույրը հետը չէր: Այսպես Էլլայի մերժումների շղթան վերջապես ընդհատվեց, ավելի ճիշտ ընդմիջվեց մի դրական արձագանքով. Էվիլիոն պաշտոնապես առաջինն էր, ում հետ խոսելիս նա ինքն էր շփոթվում, և ոչ թե հակառակը:

* * *

—Տենց էլի...

Աղջիկը խախտեց լռությունը: Սա այն հատուկ արտահայտություններից էր, որ Էլլան հաճախակի օգտագործում էր, հատկապես երբ շփոթված էր լինում ինչ-որ անհարմար վիճակից: Սակայն նա դա ասում էր մի այնպիսի պարզությամբ և միայն իրեն բնորոշ մանկական անմեղությամբ, որ այս բառերը պարզապես կախարդում էին ցանկացած զրուցակցի: Ա՜խ, որքան էր այս պահին սիրում նրան Էվիլիոն... Սակայն նրանց համատեղ կյանքի հերթական այս կախարդական պահն էլ, ինչպես առհասարակ ամեն ինչ, պետք է ավարտվեր: Տղան խնդրեց հաշիվը...

Սրահում շարունակում էր տիրել ընդհանուր լռություն, որը ներծծված էր տարբեր ծխախոտների ծխով և այդ տհաճ մշուշում սավառնող վարդի հազիվ ընկալելի բույրով: Այդ բույրին, սակայն, անտարբեր էր ճերմակ մազերով անծանոթը, որ գինովցած գլուխն անզոր կախել էր սեղանի վրա՝ կարծես գտնվելով գիտակցության և ենթագիտակցության ճիշտ սահմանին, և հեռվից նայողին կարող էր թվալ, թե նա ընկղմված է խոր քնի մեջ: Գուցե

վախենալով հենց այդ քունը խանգարելուց՝ սիրահարները սրճարանից դուրս եկան առանց բառ փոխանակելու:

Քաղաքն արդեն կիսով չափ սուզված էր երեկոյան կիսախավարի մեջ, երբ սիրահար զույգը լքեց սրճարանը: Փողոցի աղտոտված օդը լուծված էր տարբեր ծագման հոտերով, գույնզգույն լույսերով, անսովոր ականջի համար նույնիսկ խլացնող միապաղաղ աղմուկով և, իհարկե, հազարավոր, հազարավոր մտքերով: Խառն էին դրանք, ինչպես այն փողոցները, որոնցով անցնում էր մի սիրահարված գեղեցկուհի՝ մի ոչ պակաս սիրահարված տղայի ուղեկցությամբ: Նրանք, երկուսը մեկ դարձած, քայլում էին մայթերով և մերթընդմերթ կտրում էին հայացքները գետնից ու կարոտով նայում միմյանց՝ ևս մեկ անգամ հրաշքով հիանալու առիթը ձեռքից բաց չթողնելու ազնիվ մղումով: Հնարավորություն, որ շռայլորեն ընձեռել էր նրանց ճակատագիրը՝ կարծես ոչինչ չուզելով փոխարենը: Իսկ սիրահարներն անհատույց նվերը գրկաբաց ընդունել էին մանկական ոգևորությամբ և նրան վերաբերվում էին այնպես, ինչպես փոքրիկ երեխան՝ հենց նոր նվեր ստացած մի անծանոթ, բայց միևնույն ժամանակ հետաքրքիր իրի:

Բայց երիտասարդ էին նրանք և րոպեական պոռթկման պահին գուցե մոռացել էին, թե քանի խաղալիք են անզգուշորեն կոտրել մանուկ հասակում...

Շարունակում էին քայլել, և հետզհետե ավելի էին ջերմանում Էվիլիոյի բերանով արտասանված քնքուշ խոսքերը: Եվ ահա մակերեսային զրույցով համեմված նրանց համահունչ քայլերը վերջապես հասան իրենց տրամաբանական հանգրվանին, որ մի անշուք շքամուտք էր «Ներշնչանքի աղբյուրի» բակում:

Դա մեկն էր այն հազարավոր բակերից, որոնք անկանոն դասավորված էին կենտրոնական թաղամասում: Այն փաստը, որ այդտեղի բնակիչները քիչ թե շատ սոցիալապես ապահով էին, ամենևին չէր խանգարում, որ բակերը հանդիսանային մռայլ քաղաքի կառուցվածքային և գործառական միավոր, որը կրում է քաղաքի բոլոր բնութագրիչ գծերը: Չորս կողմերից շենքերով շրջապատված բակը նմանվում էր մի անփորձ և սկսնակ ճարտարապետի կառուցած պաշտպանական ամրոցի, որտեղ մուտքերն ու ելքերն այնքան շատ էին, որ զո՛րքը պետք է պաշտպաներ ամրոցը, ոչ թե ամրոցը՝ զորքին: Բայց, իհարկե, ոչ մեկի մտքով չէր անցնում պահակներ կարգել մուտքերի մոտ, չնայած որ բնակիչների ապահովության զգացումը փոքր-ինչ կասկած էր հարուցում: Բակի կենտրոնում տեղ-տեղ աճած ծառերն իրենց դեռևս կանաչ տերևներով մի անճաշակ համադրություն էին կազմում տիրող համայնապատկերի հետ: Իրար նայող շենքերի ստորին հարկերը մերթընդմերթ զգում էին բնության անհամաձայնության արձագանքները քամուց օրորվող

ծառերի պատակի տեսքով: Ծառերն էլ հաճախ էին օգտվում ճկվելու և չջարդվելու իրենց առավելությունից և այդպիսով ճարահատյալ ծաղրում էին իրենց պարիսպների մեջ առած մարդակերտ անշարժ շենքերին: Իսկ բնակիչները՝ բացարձակապես անտեղյակ այս հինավուրց հակամարտությունից, նայում էին իրենց պատուհաններից ու հիանում ծառերի օրորով, բայց դա՝ պարապ ժամանակ: Իսկ զբաղված ժամանակ ծառերն ինչքան էլ ճղվեին մեջտեղից, միևնույն է, չէին կարող գրավել նրանց ուշադրությունը:

Բակի անկյուններից մեկում մռայլությունն իր տեղը չէր զիջում բարեբեր լույսին նույնիսկ ամենաշոգ ամառվա ամենաշոգ օրերին, որովհետև աչքաթող էր արված արևի կողմից: Այդ ստվերն այնքան կտրուկ էր առանձնանում մնացած լույսից, որ թվում էր, թե այս աշխարհից չէ, այլ մի երևակայական մղձավանջից, որ խցկվել է այստեղ լրտեսելու հրամանով: Չէ՞ որ գիշերները նա այլևս չէր առանձնանում մնացած մասից և լռելյայն ականատես էր լինում արդեն խաղաղված անցուդարձին: Նրա ամենատես աչքերից չէին վրիպում նաև համեստության նկատառումներով փոքր-ինչ զսպված և ջանասիրաբար քողարկված նուրբ համբույրները, որոնք վերջերս հաճախ էին տեղի ունենում բակի մի այլ անկյունում՝ մուտքի աստիճանների կողքին:

Երբ սիրահարները հասան այդտեղ, Էլլան մեղմորեն շրջվեց և խոշոր աչքերը հառեց իր ուղեկցի աչքերին, բայց վերջինս թույլ չտվեց նրան խոսել՝ հայացքով արդեն անծրար մի բացիկ ուղարկելով նրան, որի բովանդակությունը թևածում էր Էլլայի գլխում նույնպես: Էվիլիոն քնքշորեն փարվեց սիրեցյալին և իր շուրթերի մեջ առավ նրա շուրթերը, որոնք սովորականի պես սկզբից ջղաձգվում էին, այնուհետև պայքարի մեջ մտնում: Սոսկ այդ պահի համար Էլլան պատրաստ էր ապրել, մյուս կողմից՝ հանուն այդ պահի նա իր կյանքն էլ չէր խնայի: Ինչքան նա ավելի էր սեղմվում Էվիլիոյի կրծքին, այնքան ավելի էր մեծանում ակնթարթային երանությունը հավերժության վերածելու անհնարին ցանկությունը: Տենդի մեջ Էլլան մոռանում էր այն ամենը, ինչ որ ուզում էր մոռանալ, և տրվում էր քաղցր համբույրի ճնշող զորությանը՝ ևս մեկ անգամ համոզվելով, որ շատերն են ամբողջ կյանքում փնտրում այն, ինչ ինքն արդեն ունի, և այդպես էլ չեն գտնում: Հավատացե՛ք, խոհեմ և շրջահայաց աղջկա համար, ինչպիսին Էլլան էր, դա էլ արդեն բավական լուրջ հայտ էր՝ երջանիկ զգալու իրեն: Այդ երջանկության զգացումն էլ հենց ծանրանում էր նրա կոպերին և մինչև վերջ փակում նրա անկրկնելի աչքերը: Շուրթերի մեղմ հպումից Էլլան այնքան լիցք էր խլում, որ կբավարարեր մի ամբողջ հավերժություն, որը նա, անկասկած, կանցկացներ Էվիլիոյի հետ, ինչպես նրանք արդեն որոշել էին: Եվ համբույրի

այդ կարճ րոպեների ընթացքում նա զգում էր հավերժության բույրով օծված երջանկության համն ու անձնվիրաբար փորձում այնպես անել, որ այն երկար մնա իր շուրթերին, գոնե մինչև մյուս համբույրը: Բայց ընթացքում ծնվում էր նաև մի փոքրիկ պատառ վաղվա օրվան թողնելու խելամիտ ցանկությունը, որն սկսում էր ավելի գերակշռել, և դրա շնորհիվ էր, որ նրանք միշտ բաժանվում էին կարոտով, իսկ նրանց շուրթերն ապահովագրվում էին իրար ձուլվելուց: Ու նախաձեռնությանը տիրած Էլլան աստիճանաբար մեղմացնում էր իր փխրուն շուրթերի նուրբ շարժումները՝ այդպիսով նշան անելով, որ բավական է՝ հիշեցնելով, որ դա վերջինը չէ: Ոչ պակաս տարված Էվիլիոյի համար ընդունելի էր ոչ-ոքիի առաջարկը, և նա հանդարտ հետ քաշեց իր շուրթերը, բայց դեռևս բաց չթողեց նրան իր ամուր գրկից.

—Ես սիրում եմ քեզ,– լեզուն արդեն ուրիշ կերպ օգտագործելով՜ շշնջաց նա, և անմիջապես, առանց պատասխանի սպասելու, համբուրեց նրա ճակատը:

Եզրափակիչ համբույրին հաջորդեց Էլլայի պատասխանը, որն, ինչպես ճիշտ կռահեցիք, հնչեց այսպես.

—Ես էլ քեզ:

Այս բովանդակալից երկխոսությամբ էին սովորաբար ավարտվում թե՛ նրանց համբույրները, թե՛ զրույցները, թե՛ հանդիպումները:

Էվիլիոյի գրկից վերջնականապես ազատված Էլլան շուտով հասնելու էր տուն, մնում էր միայն զգալ խունացած պատերով և մութ աստիճաններով խորհրդավոր ու միևնույն ժամանակ նողկալի մուտքի ամուր գրկախառնությունը, որն Էլլայի հոգեառն էր: Բայց այս անգամ այն շատ փոքր էր, որ նկատելի լիներ ցնծության մեջ գտնվող հոգու համար, որի տերն այդպես էլ չզգաց, թե ինչ արագությամբ բարձրացավ չորս հարկը:

Անջնջելի թվացող ժպիտը դեմքին և սիրահարվածի անփութությամբ Էլլան ավելի շատ ներխուժեց, քան մտավ տուն: Իսկ խոհանոցում գտնվող նրա մոր ձեռքի լոլիկի համար դա ամենաքիչը հրաշք էր: Մայրը դանակն ու լոլիկը դրեց տախտակին, որը նախատեսված է բուսական և կենդանական աշխարհի տարբեր ներկայացուցիչներին մարդու բերանին ավելի հարմար դարձնելու համար, ու գնաց դիմավորելու աղջկան: Մինչ Էլլան սեփականն ուրիշի հետ կիսել չցանկացողի ժլատությամբ պատասխանեց մոր բազմածալք ու ամեն տեղ սողոսկող հարցերին, լոլիկն արդեն հասցրեց հավատալ, որ հրաշքներ իրոք լինում են, նորից սկսեց պաշտել իր աստվածներին, որոնցից գրեթե հիասթափվել էր, սգալ իր հետ մի թփի վրա աճած լոլիկի ողբերգական մահը, որը սփռված էր քիչ այն կողմ, և վերջապես գալ այն եզրահանգմանը, որ ինքն ընտրյալ լոլիկ է: Նա գրեթե հասել էր ճակատագրի գաղափարին, երբ մոր

հետ գրույցի առաջին մասը հաջողությամբ ավարտած Էլլան կամ երբեմնի հրաշքը, նույն ժպիտը դեմքին, մոտեցավ լոլիկին և նրան արագ արժանացրեց թփակցի բախտին՝ ընթացքում ագահորեն ուտելով առաջին մեկ ութերորդը: Մայրը նրան նախատեց հերթական անգամ՝ առանց ձեռքերը լվանալու ուտելու համար. մի սովորություն, որը գլուխ էր բարձրացնում ամեն անգամ, երբ սիրո հյուրընկալ ճանկերում հայտնված օրիորդն ինչ-ինչ պատճառով ցրված էր լինում: Բայց դա նաև այն բազմաթիվ ապացույցներից էր, որ նա դեռևս փոքր էր մնացել: Հոգով երեխայի ձեռքերն էլ այնքան մաքուր էին, որ օճառն ու ջուրն անգամ ավելորդ էին: Բայց դա չէր խանգարում հոգատար մորը՝ ևս մեկ անգամ ձայն բարձրացնելու իր ավագ գլուխգործոցի վրա: Իսկ մոր ձայնի բարձրությունը չէր խանգարում Էլլային՝ շփոթելու դիտողությունը օրհնանքի հետ: Երբ նա վերջապես դուրս եկավ խոհանոցից ու գնաց լվացվելու, մայրը շարունակեց տանջել անպաշտպան բանջարեղեններին, որոնց վերջին ճիչերը չափազանց ախորժելի են թվում մարդկանց:

Բայց պակաս մաքուր չէին նաև դահճի ձեռքերը. ամենատաք արյունը, որով նրանք երբևէ պատվել էին, պատկանում էր սպանված անհամար լոլիկներին:

Այդ սուրբ ձեռքերը, որ մանկուց խնամել էին երեք երեխաներին, դեռևս չէին կորցրել իրենց երբեմնի կորովն ու երիտասարդությունը: Այնքան կյանք էր ներառված այդ երկու ափերի և տասը մատների մեջ, որ նրանց նուրբ ճաքերից ճառագող եռանդն ունակ էր նոր կյանք ծնելու: Կյանքի բովով անցած և քիչ կոշտացած ձեռքերն այնքան էին վարպետացել, որ իզուր էր ամեն մի ակնթարթ, երբ նրանք հանգստանում էին. չէ՞ որ փոխարենը կարող էին կյանք արարել: Իսկ նրանցից առատորեն կաթող ջերմությունը տրվում էր անվերադարձ, բայց ոչ ձեռքերի տիրոջ ներսում եղած անսպառ կրակի հաշվին, որն անթաքույց արտացոլված էր նրա համեստ և խոհեմ աչքերում, որոնց արժանի ժառանգորդն էին այն խոշոր և ծիծաղկոտ աչքերը:

Իսկ այդ աչքերի տերն արդեն հասցրել էր լվացվել ու գնացել էր իր սենյակ՝ վայելելու երանավետ միայնությունը և տրվելու գրեթե իրականություն դարձած երազներին: Այնքան քաղցր է նորից ու նորից մտովի վերապրել ամեն մի ակնթարթը, որ անց ես կացրել սիրեցյալիդ հետ, նորից մաշկիդ վրա զգալ նրա մեղմ հպումները, զգալ նրա բույրը, որը քեզ պարզապես խելքահան է անում, շոշափել սեփական շուրթերդ՝ կարծես զգալով նրա շուրթերի խոնավությունը դրանց վրա: Հենց այսպիսի պահերին է, որ քեզ կատարյալ երջանիկ ես զգում, քանի որ սիրելիիդ գրկում պարզապես մտքովդ չի անցնում գիտակցել սեփական երջանկությունդ, իսկ այստեղ՝ քո սենյակում,

կատարյալ միայնության մեջ, գիտակցում ես վերապրածդ ամեն մի վայրկյանի գեղեցկությունն ու կախարդանքը:

Այսպես պառկած էր Էլլան միայնակ իր սենյակում, նրա անփորձ սրտիկն ուժգին բաբախում էր, և հենց այդ բաբախումն էր կարծես ճառագայթում այն կախարդանքը, որում այժմ սուզված էր սիրահարված աղջիկը: Ինչքա՜ն գեղեցիկ էր փոքրիկ քաղաքի ամենասովորական բնակարաններից մեկի սենյակում պատկերված փոքրիկ հրաշքը. անկողնով մեկ մեկնված կատարյալ մարմնով մի կատարյալ աղջիկ՝ կատարյալ երջանկության պահին: Սակայն այսպիսի պահերը չափազանց քմահաճ են... Հենց այդ պատճառով էլ քմահաճ պահն ակնթարթորեն անհետացավ գիշերվա խավարում՝ իր հետ տանելով սենյակում սավառնող ողջ կախարդանքը, երբ սենյակի դուռը կամաց բախեց Էլլայի մայրն ու զգուշորեն բացեց այն: Էլլան բարձրացավ ու ծուլորեն բացեց աչքերը, որոնք հիասթափությամբ էին լցված... Մայրը ստիպված էր երրորդ անգամ կրկնել միևնույն բառերը, մինչև աղջիկը հասկացավ դրանց իմաստը: Իսկ երջանիկ առանձնության խաթարման պատճառն աղջկա եղբայրն էր, ավելի ճիշտ՝ վերջինիս սենյակը, որն անհրաժեշտ էր կարգի բերել:

—Ես նոր միայն նկատեցի, թե ինչ վիճակում է այն, իսկ Նինյոն այսօր տուն չի գալու,— մեղմորեն ասաց մայրը և նորից վերադարձավ խոհանոց՝ շարունակելու կիսատ թողած իր եղեռնագործությունը խեղճ բանջարեղենի հանդեպ:

Էլլան դժկամորեն ոտքի ելավ ու ավելի շատ սավառնելով, քան քայլելով անցավ հարևան սենյակը: Իսկ այստեղ, ինչպես սովորաբար լինում է, առօրյա քաոս էր տիրում. անկողնու վրա սփռված էին Նինյոյի բոլոր հնարավոր գրքերն ու տետրերը, մի քանիսն ընկած էին գետնին, սենյակով մեկ թափված էին տղայի հագուստները, որոնցով նա կարծես դիտավորյալ զարդարած լիներ գրեթե բոլոր առարկաները: Փոքրիկ սեղանը, որ նախատեսված էր դաս անելու համար, ծանրաբեռնված էր մի կավե փոքրիկ արձանիկով, էլեկտրական լամպով ու սեղանի հենց մեջտեղում շրջված մի գանձատուփով, որն, իհարկե, դատարկ էր, իսկ դրա երբեմնի բնակիչներից մի քանիսը թափթփված էին սենյակի հատակով մեկ:

Չնայած որ սենյակի հարդարումը տևեց մի քանի րոպե միայն, Էլլային դա մի ամբողջ հավերժություն թվաց. չէ՞ որ այդ րոպեները խլվել էին իր երանելի առանձնությունից: Արդեն պատրաստվում էր դուրս գալ պատուհաս սենյակից, երբ եղբոր մահճակալի տակ նկատեց ևս մի տետր: Այն բարձրացնելուց և սեղանին խնամքով դնելուց հետո միայն Էլլան գիտակցեց, որ այս տետրն ամենևին նման չէր եղբոր մնացած տետրերին. դրանց համեմատ այն շատ ավելի թարմ ու չհալածված տեսք ուներ, չնայած որ էջերի մեծ մասը

գրոտված էին Նինյոյի անփույթ ձեռագրով: Երևի սա էր պատճառը, որն աղջկան ստիպեց բաց անել առաջին էջը և բոլորովին այլ ուղղությամբ սուրացող ուշադրությանը կենտրոնացնել առաջին տողերի վրա.

*Ողջույն, իմ սիրելի՛ օրագիր: Առաջին անգամ որոշել եմ օրագիր պահել, այդ պատճառով չգիտեմ՝ ինչից սկսեմ: Ինքս էլ չգիտեմ, թե ինչու սկսեցի գրել այս օրագիրը, գուցե հետո կարդալով գրածներս՝ հնարավորություն կունենամ կողքից նայել սեփակ...*

Էլլան անմիջապես փակեց օրագիրը և այն ամուր բռնած՝ մի քանի վայրկյան քարացել էր փոքրիկ գրասեղանի դիմաց: Նրա՝ մարմարյա հանդարտությամբ կնքված դեմքից անհնար էր նկատել այն անզիջում պայքարը, որ ծավալվեր էր թափանցիկ հոգում: Իրար էին բախվել երկու հակասական զգացմունք՝ մի կողմից մանկական անմեղությունն ու ազնվությունը, որոնք համառորեն պնդում էին, որ չի կարելի կարդալ, թեկուզ հարազատ եղբոր, բայց, միևնույն է, ուրիշի օրագիրը, և մյուս կողմից աներևակայելիորեն բորբոքված նույնքան մանկական հետաքրքրությունը, որ պարտադրում էր վերսկսել այս ապշեցուցիչ տեքստի ընթերցումը, որը փաստացի ապացույցն էր այն բանի, որ Էլլան իր եղբորն ամենևին չէր ճանաչում: Հենց այս բացը լրացնելու ազնիվ մղումն ընդունելով որպես արդարացում՝ նա ծայրահեղ զգուշությամբ նորից բացեց իր ձեռքերում գտնվող գանձը և անհամբերությունից դողալով՝ շարունակեց իր սև գործը.

*...նայել սեփական կյանքիս կամ ավելի լավ ճանաչել ինքս ինձ: Չեմ կարծում, որ երբևէ ուրիշ ինչ-որ մեկն էլ կկարդա քեզ, այնպես որ գրում եմ միայն ինձ համար: Չգիտեմ էլ՝ ինչ գրեմ... Երևի նախ պատմեմ իմ մասին. անունս Նինյո է, տարիքս կարևոր չէ, գտնվում եմ երևի ինքնահաստատման ու ինքնաբացահայտման տարիքում: Ունեմ երկու քույր՝ ինձնից մեծ և փոքր: Երկուսին էլ անչափ սիրում եմ, բայց Էլլան թող չնեղանա, երևի Մեսսեստան ինձ ավելի լավ է հասկանում: Կամ ես եմ նրան ավելի լավ հասկանում, միշտ փորձում եմ նրան օգնել ու պաշտպանել, չէ՞ որ փոքրիկ քույրս այնքան նուրբ է ու փխրուն՝ չնայած Էլլայի համեմատ ավելի անհանդուրժող բնավորությանը: Ունեմ հայր ու մայր: Մորս նման բարի և գթասիրտ կին աշխարհում երևի չկա, ամեն հարցում նա պատրաստ է ինձ հասկանալ, ընդառաջել և միշտ ըմբռնումով մոտենալ իմ բոլոր կամակորություններին: Հայրս, ընդհակառակը, բավական խիստ է, դա երևի պայմանավորված է նաև նրա աշխատանքով. նա քրեական ոստիկանության ավագ տեսուչ է: Շատ անգամ ստիպված եմ եղել*

*լսել նրա դիտողությունները ու տանել հանդիմանող լուռ հայացքը, որին ես կգերադասեի մի լավ հայրական ապտակը: Չնայած՝ բոլորն էլ գիտեն, որ ես էլ նորածնի պես անմեղ չեմ ու բազմիցս ընկել եմ այնպիսի խնդիրների ու հիմար իրավիճակների մեջ, որ միանգամայն արժանի եմ իմ հասցեին հնչող բոլոր նախատինքներին:*

*Կարծես մի փոքր շեղվեցի. որոշել էի պատմել իմ մասին: Պատմելու շատ բան էլ չկա, գրեթե սովորական տղա եմ, ունեմ շատ ընկերներ, նրանք բոլորն էլ ինձ սիրում ու գնահատում են, թեև մեկ-մեկ ինձ թվում է, որ նրանց պարզապես չեմ հասկանում: Ամեն դեպքում ոչ միայն ընկերներիս շրջանում, այլ նաև ողջ բակում ինձ ճանաչում ու հարգում են... Մի տեսակ լավ չստացվեց. օրագիրս սկսեցի ինքնագովեստով ու հիմար բաներ եմ գրում: Երևի անհաչող միտք էր, ավելի լավ է քեզ դեն նետեմ, քանի դեռ ոչ ոք չի տեսել...*

***

*Հազիվ գտա քեզ: Այո՛, չէի մտածում, որ երբևէ նորից կդիմեմ քո օգնությանը, բայց ինչ արած, եթե մեկի հետ չկիսվեմ, չգիտեմ էլ, թե ինչ կլինեմ: Նորից հորս հետ վիճեցի... Փորձեմ շարադրել եղածը, գուցե սիրտս էլ կթեթևանա: Ամեն ինչ սկսվեց նորից այդ հիմար ընկերոջիցս: Նա հերթական անգամ սիրահարվել է մի անհասկանալի արտաքինով աղջկա (ասում եմ, չէ՞՝ մեկ-մեկ ընկերներիս չեմ հասկանում), սակայն նա միակ այդպիսի հիմարը չէ. ասաց, որ մի տղա էլ կա, որ այդ աղջկա նկատմամբ անտարբեր չէ, և ընկերս, բնականաբար իմ ուղեկցությամբ, պետք է նրա հետ պարզի, թե ում հնարավորություններն են ավելի ճշմարտամոտ... Մի խոսքով, մենք այդպես էլ ընդհանուր հայտարարի չեկանք, և սկսվեց մի ահավոր ծեծկռտուք: Ես այնպես էի տարված այս ամենով, որ լրիվ մոռացել էի, որ այդ ժամին, հենց նույն բակով հայրս ամեն օր աշխատանքից տուն է գնում: Եվ այս անգամն էլ, իհարկե, բացառություն չեղավ. Ինչպես քիչ առաջ պարզեցի՝ նա տեսել է ինձ այդ խառնաշփոթի ամենաթեժ պահին... Հերթական անգամ: Այս ամենից անտեղյակ՝ ես, իմ կարծիքով աննկատ, փորձում էի սողոսկել տուն, որպեսզի մաքրեմ վրայիս ողջ կեղտն ու փոշին և Մեսսեդայի օգնությամբ վրայիցս լվանամ ուրիշների՝ արդեն չորացած արյան հետքերը (մենք, բնականաբար, նրանց ծեծել էինք): Բայց Մեսսեդայի փոխարեն իմ առջև դուռը բացեց արդեն ինչպես հարկն է բարկացած հայրս: Պատկերացրու՛, թե նա ինչպես արձագանքեց իմ այդ զավեշտալի տեսքին, և ինչպիսի լուրջ զրույց ունեցա ես*

*նրա հետ: Մի խոսքով, ես պատժված եմ. մի ամբողջ ամիս զրկվել հորս ֆինանսավորումից... Այո՛, դժվար է լինելու...*

Պարբերությունն ավարտելուց հետո միայն ապշած աղջիկը հասկացավ, որ դեռևս գտնվում է Նինյոյի սենյակում և անմիջապես գաղտագողի սողոսկեց իր սենյակը՝ բնականաբար, հետը տանելով իր նորահայտ խաղալիքը: Սենյակ մտնելուն պես նա անմիջապես մոտեցավ լուսամուտին և հայացքն ուղղեց երկնքին... Կախված ամպերի խառնաշփոթի մեջ նա հազիվ կարողացավ նշմարել մի քանի գունատ աստղ, որ աննույս թարթում էին՝ կարծես հաղորդակցվելով միմյանց հետ: Բայց նրանց այդ առօրյա եթերային կապն արդ հասանելի չէր անգամ Էլլային՝ չնայած որ հրեշտակը մի որոշ ժամանակով երկնքից իջնելիս չէր խզել կապերը երբեմնի հարևանների հետ: Ի՞նչ իմանար նա, որ իրեն վիճակված չէր վերադառնալ. շատ փխրուն էին նրա թափանցիկ թևերը՝ այդ բիրտ կապանքներից անվնաս ազատվելու համար: Բայց նա երկնքին չէր նայում որպես իր վաղեմի բնօրրանի, այլ նայում էր որպես բնության մի մասի, այն մասի, որ դեռ չի պղծվել ավերիչ մարդու անցանկալի ներկայությամբ: Դժվար է ասել, որ նա հիանում էր պատկերով, բայց ամեն երեկո նա այդպիսով գոնե մի քանի ակնթարթ կարողանում էր զգալ հոգեկան հարմարավետության բաղձալի զգացումը: Անշարժ աչքերի առջև ուրվագծված պատկերը շարունակ ենթարկվում էր գիտակցության ոտնձգություններին, որը, բնական է, չէր ուզում անջատվել ու ջանք չէր խնայում Էլլայի աչքերի առջև սողոսկելու համար՝ ևս մեկ անգամ հիշեցնելով իր գոյության կարևորության մասին: Էլլան հազվադեպ էր հոգնում մտածելուց, բայց այսօր նա սովորականի համեմատ մի քիչ շատ էր զարմացել: Մի՞թե այսքան ժամանակ չէր ճանաչել հարազատ եղբորը և անչափ հարգելով ու սիրելով նրան՝ կարծել, որ երբեք ընկերություն չէր անի նրա նման մեկի հետ: Միգուցե այդպես էր մտածում, քանի որ արդեն ուներ իդեալական ընկեր: Հնարավոր է, որ նա եղբոր մեջ պարզապես չէր փնտրել այն արժեքները, որ գնահատում էր ամենից առավել: Այնուամենայնիվ, ապշեցուցիչ մի բացահայտում էր արել այսօր՝ շոշափելով եղբոր հոգու այն նուրբ զգացմունքայնությունը, որ հիանալի կերպով քողարկված էր մի պողպատե դիմակի ետևում, որ շրջապատն էր նրա դեմքին դրոշմել: Մի՞թե նա կամովին էր հանձնվել այդ այլակերպ արարածների ծնած հոսանքին, թե՞ վարձով էր տվել իր անձը, որն իր սեփականությունն է: Բայց ի՞նչ էր ստանում նա փոխարենը... Համաձայն եմ. ապահովագրության համար պետք է վճարել: Բայց ինչքա՞ն...

Այդ գիշեր էլ երևի հենց այդ նպատակով էր, որ Նինյոն տանը չէր գիշերելու: Իսկ դա հնարավորություն էր տալիս ավագ քրոջը՝ վերջապես ծանոթանալու հարազատ եղբոր էությանը, որ արդեն իր ափերի նրբին գրկում էր՝ պատուհանի գոգին պառկած: Մի անշուք, բայց նորի տեսք ունեցող տետր, որը տարիների վաղեմություն ուներ: Դրա մասին վկայում էին տարեթվերը՝ ուղղակիորեն իմաստազրկելով էջերի թարմությունը, որ պարզապես հետևանք էր քիչ թերթվելու:

*Այսօր ընկերոջս ծննդյան օրն էր, մի լավ զվարճացանք... Չնայած՝ եթե անկեղծ լինեմ, այն անցավ նույն ծանոթ սցենարով, ինչպես մեր բոլոր հավաքույթները, իսկ տղաներից բաժանվելուց հետո մի տեսակ դատարկություն զգացի մեջս, առաջին անգամ գիտակցեցի, որ այս հավաքույթն ինձ բացարձակապես ոչինչ չտվեց...*

*Մի տեսակ ձանձրացել եմ, չգիտեմ՝ ինչից, գուցե առօրյայից, գուցե շրջապատից, որի առաջատարը լինելով՝ երևի երբեք լիակատար անդամ չեմ եղել: Մի տեսակ տաղտկալի է ամենը, կարծես ոչինչ տեղի չի ունենում, երկրագունդը մի պահ կանգ է առել երկու գորշ ակնթարթների արանքում և հրաժարվում է այլևս պտտվել՝ խուսափելով իր վրա փաթաթել ժամանակի փոշու հերթական ճնշող շերտը: Կարծես ամեն ինչ նույնն է՝ նույն մարդիկ, նույն գորշ դեմքերը, նույն դատարկ հայացքներն ու արժեզրկված արժեքները: Հոգնել եմ ամեն ինչից, երևի այդպես չպետք է լիներ, բայց հոգնել եմ նույնիսկ իմ ընկերներից, որոնցից կարծում էի, որ երբեք չպետք է հոգնեի: Այդպես է լինում. սկզբում գտնում ես նրանց, ովքեր համապատասխանում են հասարակության պատրաստած լավագույն պիտակին, որոնք միշտ հաղթում են, ցանկացած իրավիճակում, բոլորն էլ այնքան ինքնավստահ են, որ իրենք են թելադրում հասարակության փոքրիկ մոդելի՝ մեր բակի բոլոր օրենքները: Մենք ենք որոշում՝ ով հարգանքի է արժանի, ով՝ ծաղրի, ով՝ ատելության կամ ով՝ արհամարհանքի, սակայն այն ամենը, ինչի վրա հիմնվում ենք, պարզապես ծիծաղելի է: Ես գտա նրանց, երբ փնտրտուքների մեջ էի, փորձում էի ինքնահաստատվել ու իմ տեղը գտնել, չասեմ՝ այս կյանքում, այդ ժամանակ՝ գոնե մեր բակում: Այսպիսով վերցրի այն դիմակը, որ պատրաստված էր հասարակության բոլոր օրենքների համաձայն, որ կարված էր ամենաբարձր արժեքների կտորից ամենաազնիվ սկզբունքների թելերով: Ու սկսեցի խաղալ, նույնիսկ հավատացի իմ դերին, նույնիսկ սիրեցի բոլոր խաղընկերներիս, որոնք երևի նույնպես նման մի դեր են խաղում, բայց, ցավոք, ոչ ոք չգիտի, թե ում համար. մենք երևի բոլորս դերասան ենք, իսկ ո՞վ է հանդիսատեսը: Գուցե ժամանակն է դեն նետելու դիմակներն ու պարզապես զրուցելու մեր*

*ներկայացման մասին՝ որպես այն գնահատող հանդիսատես: Մի խոսքով, սիրեցի ընկերներիս ու դարձա մեր ընկերության, և, ընդհանրապես, հասարակության լիակատար անդամ: Սակայն ժամանակի ընթացքում այս խաղը մի տեսակ ձանձրացրեց. հոգնեցի նույն զրույցներից մեքենաների, աղջիկների, մեր կռիվների, մի քիչ՝ սպորտի ու մեր արած բոլոր անկարգությունների մասին: Հոգնեցի միօրինակ հավաքույթներից, որտեղ չարաշահվող խմիչքը ստիպում է մեզ ժամերով գովերգել մեր ընկերությունը: Իսկ մարդկային հարաբերությունները քննարկման, առավել ևս գովերգման ենթակա չեն, քանզի այդ խոսքերը, ծամվելով հազարավոր անտեղի բերաններում, ի վերջո դառնում են այնքան ծեծված, որ այլևս ոչ ոք չի հասկանում ընկերության բուն իմաստը. այն չափազանց խեղաթյուրվել ու պղծվել է, ինչպես առհասարակ ամեն ինչ: Խնջույքները, որպես կանոն, ավարտվում են ծեծկռտուքով, իսկ վերջինս՝ տնային կալանքով կամ հայրիկի հորինած նման մի պատժամիջոցով. նույնիսկ դրանք են արդեն ձանձրացրել: Մարդիկ թաքցնում են իրենց մտքերը, իրենց հույզերն ու կրքերը... Սուտ և անտարբերություն. այս երկուսն են այժմ տիրում բոլոր մարդկանց մտքերին: Կարծես տղաները բաժանվում են երկու խմբի՝ մենք՝ լավ տղաներս, որոնց բոլորը հարգում են, կամ եթե չեն էլ հարգում, գոնե վախենում են, որոնք թելադրում են ճիշտն ու սխալը, լավն ու վատը, որոնք վերցնում են կյանքից այն, ինչ ցանկանում են, նույնիսկ առանց հարցնելու, և այն անհաջողակները, որոնց մենք՝ լավ տղաներս, անխնա ծաղրում ենք, երբեմն էլ՝ ծեծում: Իսկ նրանք, միևնույն է, չեն ենթարկվում մեր օրենքներին. անում են այն, ինչ իրենք են ուզում, հագնում են իրենց նախընտրած հագուստը, լսում են իրենց սիրած երաժշտությունն ու առհասարակ ապրում են մի տեսակ այլ կերպ՝ երևի սրտի թելադրանքով: Գուցե ես պարզապես սխալ դեր եմ ընտրել. այսքան տարի բոլորին ու հենց ինքս ինձ համոզել եմ, որ ես նման եմ մյուսներին, որ սիրում ու հարգում եմ այն ամենը, ինչ պետք է սիրեմ ու հարգեմ, որ ուզում եմ անել այն, ինչ պետք է անեմ: Իսկ իրականում ես բոլորովին էլ այս չէի ուզում: Ուզում եմ ընկերներիս հետ կիսվել ամենաթաքուն իմ մտքերով: Ինչո՞ւ չենք կարող պարզապես անկեղծ լինել միմյանց հետ: Ինչո՞ւ պետք է թաքցնեմ, որ սիրում եմ բանաստեղծություններ կարդալ, որ ամեն անգամ ինչ-որ հուզիչ ֆիլմ դիտելիս մանկան նման արտասվում եմ, որ երազում եմ ջութակ նվագել, կամ թեկուզ, որ... օրագիր եմ պահում: Ուզում եմ մի շրջապատ գտնել, որտեղ առօրյա հիմարություններից բացի խոսենք նաև մեզ հուզող հարցերից, խոսենք պոեզիայից, խոսենք հայրենիքի մասին, որին արդեն բոլորը մոռացել են, խոսենք սիրուց, որն այնքան է ոտնատակ արվել, որ բոլորովին թաթախվել*

*է առօրյա կեղտով, մի խոսքով, խոսենք անկեղծ... Ուզում եմ մարդկանց հետ անկեղծ լինել ու չամաչել դրա համար...*

*Երևի արդեն շատ բան ուզեցի մեկ գիշերվա համար, ավելի լավ է՝ քնեմ, միևնույն է, անվերջ բողոքելով բան չեմ փոխի:*

*Այս անիծյալ գարեջրից արդեն սիրտս խառնում է...*

* * *

Քամին այնքան ուժեղ չէր, որպեսզի շարժեր կիսաբաց լուսամուտը, և թաքուն սողոսկելով ներս՝ կարողացավ միայն ալեկոծել կիսաթափանցիկ վարագույրը: Քամին տարածվեց սենյակով մեկ, կամացուկ շարժեց վաղուց արդեն թանաքոտված ու այս գիշեր առաջին անգամ ընթերցված տարօրինակ օրագրի թերթերը: Դրանք, զգալով անսպասելի հյուրի մեղմ հպումը, արձակեցին մի հեշտագին շրշյուն՝ կարծես պատասխանելով քամու քնքուշ գուրգուրանքներին: Այսպիսով սկսվեց մի երկար սպասված զրույց երկու հին բարեկամների միջև, որոնք վերջին անգամ հանդիպել էին դեռ անհիշելի ժամանակներում, երբ այս անփույթ ձեռագրով գրոտված օրագիրը դեռ... ծառ էր: Սակայն զրուցում էին մի խլացած շշուկով՝ կարծես վախենալով խաթարել մոտակա անկողնում կարճ ժամանակով հանգրվանած հրեշտակի անխռով քունը: Նա անշարժ պառկած էր իր ճերմակ անկողնում և ինչ-որ անհայտ հաճույք արտահայտող ժպիտով վայելում էր իր հերթական դրախտային երազը: Նրա խիտ սև մազերը սփռվել էին մետաքսե բարձի վրա՝ ծածկելով այն մի երկնային փայլով, որ անդրադարձն էր լուսամուտից իրենց ընկերուհուն ժպտացող աստղերի: Էլլայի սպիտակ ճակատը, նրա անմեղությունն էլ ավելի ընդգծող բարալիկ ունքերը, նույնիսկ փակ ժամանակ իրենց խոշորությամբ հիացնող աչքերը, դեմքին կատարյալ սազող փոքրիկ քթիկն ու անգամ երազում ժպտացող նուրբ շրթունքները ստեղծում էին մի կատարյալ համայնապատկեր՝ պարուրված նույնիսկ փոքր-ինչ անկենդան թվացող խաղաղությամբ: Խոր ու համաչափ շնչառությունը դանդաղ վերուվար էր անում փարթամ կուրծքը, որ իր մարմարե անբասիր ճերմակությամբ խելքահան կաներ ցանկացած սիրահարի, և որը, սակայն, երբեք չէր զգացել այն մեղմ հպումները, որ ի վերջո ազատ կարձակեին Էլլայի կուսական հոգում ծպտված խելահեղ կրքի կրակը: Բոլորովին մերկ էր քնում՝ անչափ սիրելով իր անթերի մարմինն ու պատշաճ գնահատելով նրա ամբողջ շքեղությունը: Ամենածաղկուն տարիքի աղջկա մարմնի այս կատարյալ նմուշը պարուրված էր մետաքսե ծածկոցով, որն առայժմ միակն էր, որ երբևէ շոյել էր այդ անթերի հարթ մաշկը: Խանդոտ սիրահարի պես ծածկոցն ամբողջությամբ ծածկել էր

Էլլայի բարեմասնությունները՝ թաքցնելով դրանք գիշերային խավարում դարանած ամեն տեսակ հնարավոր ու անհնար հայացքներից: Սակայն նույնիսկ ծածկոցն ի զորու չէր թաքցնելու այն եթերային լույսը, որ ակամա ճառագում էր հրեշտակը՝ իր փոքրիկ սենյակը լցնելով եդեմական շնչով: Պարզապես եսասիրություն էր թաքցնել բնության այս գլուխգործոցը կեղծ գլուխգործոցների ձգտող մարդկությունից. բոլորը պետք է տեսնեին այս հրաշքն ու հիանային դրանով: Սակայն Էլլայի մարմինը կատարյալ էր հենց իր կուսական մաքրությամբ ու անապակ վեհությամբ: Անհնար էր չհիանալ այս հրաշքով, որի արարմանն, անկասկած, միջամտել էին երկնային ուժերը:

Հավանաբար ինչ-որ բանից վիրավորված՝ քամին հանկարծ մի հառաչ արձակեց՝ անխնա թերթելով իր վաղեմի բարեկամի էջերն ու առանց պատասխանի սպասելու դուրս սուրաց սենյակից՝ իր հետևից փակելով կիսաբաց փեղկը:

***

Լուսամուտի շխկոցը նույնիսկ չնկատեցին այն զույգ ձեռքերը, որոնք անձնուրաց շոյում էին մեկը մյուսից անկրկնելի ազդրերը...

Դրանք ագահորեն հպվում էին կաթնագույն մաշկին՝ նուրբ ընկղմվելով նրա փափկության մեջ: Ձեռքերի տերը չէր կողմնորոշվում ինչ հերթականությամբ շոյի այդ խելացնոր մարմնի մասերը. դրանք մերթ սահում էին փռված անզուգական ոտքերի վրայով, մերթ շոյելով կուրծքը՝ հանգրվանում էին գոտկատեղի վրա: Հետո դեռ չհագեցած՝ գրկում էին բարալիկ մեջքն այն գիտակցությամբ, որ այդքանով չի ավարտվելու երանելի վայելքը: Մինչ ձեռքերը կվերսկսեին իրենց շրջագայությունը, շուրթերը զբաղված էին տաք համբույրով: Ագահ ծարավով համբուրում էր շուրթերը, այտերը, և պարանոցով շարունակում էր դեպի փխրուն ուսերը: Արանքում արտասանում էր բառեր, որոնք չէին անցնում գիտակցության անցակետով. չէ՞ որ հնարավոր չէ սիրել մեկին, ում հետ րոպեներ առաջ ես ծանոթացել ու գումար ես տվել սիրելու համար: Ինքնամոռաց փորձում էր զգալ գեղեցկուհու մարմնի բնական քաղցրությունը, որ գնալով ավելի էր սաստկանում: Զարմանալի է, բայց այս անգամ հրեշտակն ինքն էլ էր տրվել սատանայական վայելքին: Վայելում էր այդ համակրելի երիտասարդի շուրթերի և ձեռքերի ամեն մի հպումը, ինչպես նաև նրա սրտից բխող ամեն մի ջերմ խոսքը, որ ուղղակիորեն դիպչում էր իր սրտին: Այնքան էր բորբոքվել ցանկության և երանության ճիրաններում, որ պատրաստ էր ծնկի գալ և շնորհակալություն հայտնել կյանքին՝ այդպես դասավորվելու համար: Նրա ուղեղում լցված

հաճույքի կաթիլները դուրս էին մղել բոլոր հոգսերն ու վատ հուշերը՝ նրան մեն-մենակ թողնելով սաստիկ ցանկության դեմ, որն անհաղթահարելի էր: Նա պարզապես եփվում էր կրքի գրկում, և ձուլվելով զուգընկերոջ հետ՝ անխնա ծեծում էր անկողինը: Ծնցող տեսարանն ամբողջացնում էին պարբերաբար արձակվող սրտառուչ ճիչերը, որոնք կարծես անդրադառնում էին հայելապատ առաստաղից: Դրանք այնքան անկեղծ էին, որ ճանապարհին ճմրթում էին ամեն ինչ՝ հասնելով մինչև հեծյալի սրտի գալարները և դուրս գալով նրա առնական թիկունքի հետևից: Սավանը քիչ էր մնում պատռվեր Մեսսեւտայի ձեռքերում, մինչդեռ անկողինը պատվով էր կատարում իր աշխատանքը: Նույնը կարելի էր ասել նաև բարեհամբույր երիտասարդի մասին, որն այդ պահը հավերժացնելու համար պատրաստ էր վճարել իր ողջ ունեցվածքի թեկուզ կեսը, որն այնքան էլ քիչ չէր: Մեսսեւտան էլ իր հերթին պատրաստ էր նրան վերադարձնելու գործի ողջ գումարը: Բայց հարցը գումարը չէր. այս անգամ գումարը տեղ չուներ ո՛չ մեկի, ո՛չ էլ մյուսի կրքի ու բավարարվածության արանքում: Նրանք զբաղված էին ավելի կենսական գործով, որ մի մեծ խմբաքանակ հաճույք էր պարգևում, որի ծանրության տակ կքած Մեսսեւտան վերսկսում էր սիրել իր կյանքը: Ճիչերը դառնում էին ավելի անկանոն, իսկ պատանին արնախումի նման կառչել էր զոհի նուրբ և անուշահամ պարանոցից: Իսկ հաճույքի ամենաթեժ վերելքի պահին նրա արձակած աղաղակն ուղղակի դուրս եկավ սենյակից թե՛ դռան, թե՛ պատերի միջով՝ ցնցելով ամբողջ շինությունը: Այնուամենայնիվ, դա չլսվեց լպիրշ խնջույքի մյուս մասնակիցների մոտ, որովհետև երաժշտությունն ավելի բարձր էր:

Խնջույքը, որ սկսել էր շատ վաղուց, մի հերթական անառիթ խրախճանք էր, որ միավորել էր շվայտ կյանքի մեծ փորձ ունեցող մի քանի երիտասարդների, որոնք բարուրից լող էին տվել անհայտ ծագման թղթադրամների առատության մեջ: Բայց նրանց հետ կար մեկը, որ առաջին անգամն էր վայելում սերտ շփումն աղջկա հետ: Հենց նրան էր բաժին ընկել երեկույթի թագուհին՝ Մեսսեւտան, ում մեծահոգաբար պատանուն էին նվիրել նրա ավագ ընկերները: Նրանք էլ իրենց հերթին գրկախառնված նստել էին մի քանի ուրիշ աղջիկների հետ և ուրախանում էին. ծխում էին չափից ավելի և, իհարկե, անշնորհք կերպով ծիծաղում էին պատեհ-անպատեհ: Նրանցից մեկն էլ այնքան հպարտ էր նստած, որ, կարծես, իր փոքր եղբորը նոր կյանք խցկելով՝ ևս մի անհավատի էր դարձի բերել: Դժվար էր ասել, որ նորեկն անհարմար էր զգում այդ գունեղ խավարում, ավելին՝ դա նրան դուր եկավ: Այնուամենայնիվ, կար մի բան, որը նրան առանձնացնում էր ներկա զանգվածից: Եվ դա գուցե նրա անկեղծ և սրտանց վերաբերմունքն էր իր

ժամանակավոր կողակցի նկատմամբ. չէ՞ որ միայն նման միջավայրին անսովոր մեկը կարող էր գործի ավարտից հետո այսօրինակ զրույցի բռնվել մի աղջկա հետ, ում համար ինքը ո՛չ առաջինն էր և ո՛չ էլ վերջինը:

—Լսի՛ր, Մեսսե՛տա, արի՛ գնանք այստեղից մի ուրիշ տեղ, որտեղ մենք մենակ կլինենք,— կիսաձայն ասաց նա:

Մեսսետայի համար դա մեծ անակնկալ չէր, բայց նա իսկույն չկողմնորոշվեց՝ ինչ արձագանք տալ փոքր-ինչ տարօրինակ թվացող առաջարկին, որ միայն սկիզբն էր:

—Ինչո՞ւ, քեզ այստեղ դուր չի՞ գալիս,— վարանելով պատասխանեց նա:

—Մի՞թե դու իրոք կարծում ես, որ ես մեկն եմ այս անսիրտ գազաններից, և ես տեսնում եմ, որ դու էլ այն դերում չես, որ քեզ կսազեր:

Մեսսետան, որն արդեն մոռացել էր հետոյի մասին մտածելու վաղեմի սովորությունը, մյուս կողմից թաքուն հավատալով մի անէ հրաշքի՝ վերջապես դրական պատասխան տվեց.

—Թե կարողանաս համոզել եղբորդ, կգամ:

Մանկական ժպիտ խաղաց Բանչեի պատանի դեմքին, և նա, բռնելով աղջկա ձեռքը, դուրս եկավ սենյակից: Անցնելով մյուսների մոտով, որ դժվար էլ նկատեին իրենց բացակայությունը, Բանչեն, այնուամենայնիվ, ճիշտ համարեց տեղյակ պահել՝ պատճառաբանելով, թե ուղղակի զբոսնելու են գնում և շուտով կվերադառնան: Ի պատասխան՝ արբած ընկերները մի լավ ծաղրեցին, հետո խմելով նրանց շուտափույթ ամուսնության կենացը՝ բաց թողեցին: Բանչեն ոչ մի նշանակություն չտվեց նրանց զառանցանքներին, ինչպես միշտ, և շարունակեց ճանապարհը: Երբ դուրս եկան, բավականին ցուրտ էր. չէին նկատել, որ առավոտյան ժամը հինգն է: Ախր չէ՞ որ երջանիկները ժամին չեն հետևում: Մեսսետան նույնպես այսօր ժամին չէր հետևում, բայց այն պատճառով, որ նրան վարձել էին ամբողջ գիշերվա համար: Մի խոսքով, այդ օրը նա էլ էր երջանիկ... Նստեցին մեքենան, և ճանապարհին Բանչեն երկար փորձում էր վերսկսել իրենց զրույցը՝ տարված իր ձեռքբերումով: Վերջապես նա շատ կտրուկ և հանկարծակի արտաբերեց.

—Ես քեզ կազատեմ այս տանջալի կյանքի ճիրաններից, որում դու հայտնվելես, ինչպես այսօր արդեն մի անգամ արեցի,— ասաց նա՝ անտարբեր հայացքը չթեքելով ճանապարհից:

Մեսսետան մտովի քմծիծաղ տվեց, բայց ոչ թե նրան վիրավորելու կամ նրա հնարավորություններին կասկածելու ակնարկով (երևի հենց դրա համար էլ դա արեց մտովի), այլ սեփական հաջողակության վերաբերյալ անհաստատ լինելու կապակցությամբ:

—Չէի ցանկանա քեզ միանգամից հիասթափեցնել, բայց անգամ իմ ծնողները չկարողացան դա անել, և երևի կարիք էլ չկա նշելու, որ իմ երազանքն էլ սա չէր:

—Բայց դա դեռ ապրելառճի չի վերածվել քեզ համար, մենք դեռ կարող ենք,–համառեց Բանչեն:

—Գնահատում եմ նվիրումդ, բայց վախենում եմ, որ դու անտեղի ոգևորության մեջ ես, որը սովորաբար կարճ է տևում:

—Ի՛նձ լսիր, եղի՛ր միայն իմը, և ես քեզ կվճարեմ շատ ավելին, քան դու կարող ես վաստակել քո այդ չքնաղ մարմնով: Դու ոչնչի կարիք չես ունենա, միշտ ապահով կլինես, և մենք միասին կվայելենք կյանքի հաճույքները:

Այս ամենը Մեսսեռայի ականջում հնչեց խղճառատ, բայց եսասիրաբար, ողորմած, բայց շահախնդիր, նորովի, բայց քաջածանոթ:

—Իսկ մի՞թե քեզ նման ապահովված և համակրելի երիտասարդը մնացել է ինձ պես մեկի հույսին:

—Մեղավո՞ր եմ ես, որ չեմ կարողանում սիրահարվել պարկեշտ սատանաներից և տաղտկալի ու դատարկագլուխ տիկնիկներից և ոչ մեկին:

Այստեղ Մեսսեռան արդեն անզոր էր վերահսկել շուրթերի անկյունների մկանների շարժը, որ այնքան հրապուրիչ երանգ ավելացրեց նրա գողտրիկ դեմքին և այնքան դրական ընթացք՝ նրանց խոսակցությանը... Իսկ այն շարունակվեց ոչ շատ երկար... Բանչեն խնամքով ու մեծ զգուշությամբ կայանեց մեքենան մի փոքրիկ սրճարանի դիմաց: Սրճարանի մայթի տարօրինակ սալահատակի նույնքան տարօրինակ կտկտոցը, որ առաջացրին աղջկա բարձրակրունկ կոշիկները, միակ ձայնն էր, որ լսվեց փոքրիկ փողոցում: Տարօրինակ անդորր էր տիրում, անդորր, որն այնքան անսովոր էր այս քաղաքի համար, անդորր, որին ամեններին չէր համապատասխանում ընդամենը մի քանի փողոց այն կողմ շարունակվող խրախճանքը, որի ձայները, բարեբախտաբար, խլացնում էր սալահատակի մեղմ կտկտոցը: Այս կտկտոցը, սակայն, մի պահ կանգ առավ. Մեսսեռան զարմացած նայում էր շուրջը. երբեք այստեղ չէր եղել այս ժամին, վաղուց այսքան փափուկ լռություն չէին ունկնդրել նրա ականջները, որ սովոր են իր աշխատատեղին բնորոշ կենդանական վայնասունին: Փողոցն ամբողջությամբ այնքան հանգիստ էր, այնքան անխռով ու անշարժ, որ հեշտ էր այն շփոթել մի հանճարեղ հրաշագործի կտավի հետ, որով այժմ հիանում էր Մեսսեռան: Այս ամենը մի տարօրինակ երազ էր հիշեցնում, կամ ավելի շուտ՝ հեքիաթ, որտեղ բարի և ուժեղ արքայազնը իսկապես փախցնում է գեղեցկուհուն անգութ ու արյունարբու հրեշների ճիրաններից ու տանում մի երանավետ աշխարհ, որը ոչ մի կապ չունի նախկին մղձավանջի հետ: Աղջիկը նույնիսկ մի պահ ժպտաց

իր այս զավեշտալի ու մանկական մտքից, որ մի ակնթարթ միայն հանգրվանեց նրա գլխում, հետո դուրս թռավ վախվորած թիթեռնիկի նման ու թափահարելով իր անզոր թևերը՝ հանգիստ հեռացավ դեպի անհայտություն: Ներս մտան... Առաջին անգամ էր այստեղ. բավական հարմարավետ ու գողտրիկ մի տեղ էր՝ թաթախված աչք շոյող նուրբ կիսախավարով: Սրահը, բնականաբար, դատարկ էր, և այստեղ նույնպես տիրում էր նույն արբեցնող լռությունը:

Քնաթաթախ մատուցողը, զարմացած անսպասելի հաճախորդների գալուստից, հորանջելով ու աչքերը տրորելով, մոտեցավ նրանց: Սրճարանը, որ ոչ միայն այս, այլ նաև օրվա ամենաեռուն ժամերին շատ քիչ հաճախորդներ էր ունենում, կահավորված էր բավականին կոկիկ ու նրբաճաշակ: Մատուցողը շտապ վառեց փայտյա զարդանախշերով սեղաններից մեկի մոմերն ու խնամքով առաջ քաշեց նույն նախշերով պատված աթոռը՝ հրավիրելով Մեսեսային նստել: Մոմերն առանց շտապելու լուսավորեցին սեղանի կենտրոնում գտնվող փոքրիկ մանուշակագույն ծաղիկները, որոնք, թեև արհեստական էին, սակայն կարողացան աննկատ կերպով ամբողջացնել պահի կախարդական գեղեցկությունը: Մեսսեսան հանդարտ նստեց՝ մտովի իրեն թույլ տալով այս գիշեր գոնե լինել ոչ թե վաճառական, այլ, օրինակ, թագուհի: Վաղուց այսքան բավարարված չէր եղել:

—Ի՞նչ կցանկանաք, Ձե՛րդ պայծառափայլություն...

Մատուցողի սովորական հարցին վերջին բառերն, իհարկե, ավելացրեց Մեսսեսայի մանկական երևակայությունը, որ, չգիտես ինչպես, այս երեկո ազատվել էր անցյալի ժանգոտած կողպեքով փակված իր բանտախցից: Նա ևս մեկ անգամ մտովի ժպտաց իր այս տարօրինակ մտքից ու հնարավորինս զսպելով իր սիրտն անսպասելիորեն հեղեղած հույզերը՝ հանգիստ պատասխանեց մատուցողին: Երբ վերջինս հեռացավ, Բանչեն, կարծես մոռացած քիչ առաջ ընդհատված իրենց զրույցը, անշտապ սկսեց խոսել.

—Սիրում եմ այս վայրը, այստեղ մի տեսակ խաղաղություն ու հանգստություն կա, մի հարմարավետ մաքրություն կա, որի նմանը չես գտնի այս տիղմով թաթախված քաղաքում: Հաճախ եմ այստեղ գալիս, մեծ մասամբ միայնակ, երբ ուզում եմ մեկուսանալ ամեն ինչից ու գոնե մի քանի րոպե անկեղծանալ մտքերիս ու հենց ինքս ինձ հետ:

Մեսսեսան ի վերջո ժպտաց, սակայն այս ժպիտը դառնությամբ էր լի.

—Զարմանում եմ... Եթե այդքան գնահատում ես մաքրությունը, ի՞նչ գործ ունես այժմ այստեղ ինձ նման մի աղջկա հետ,– վերջին բառերն արտասանեց մի այնպիսի հայացքով, ինչպիսին ունենում են երեխաները, երբ չարություններն են խոստովանում իրենց ծնողներին:

Բանչեն վառեց ծխախոտը. նա ակնհայտորեն շփոթված էր նման ուղիղ ու անսպասելի հարցից:

—Չգիտեմ,– ի վերջո անշտապ արտաբերեց նա,– չգիտեմ ինչու, ինձ թվում է, որ դու այդպիսին չես, և քո հոգին շատ ավելի մաքուր է ավելի մաքուր համարվող շատ աղջիկներից:

—Դու իրավացի ես, իմ հոգին մաքուր է, գուցե իսկապես ավելի մաքուր, քան քո իմացած շատ աղջիկներինը: Սակայն, ցավոք, այն այլևս ինձ չի պատկանում. ես վաղուց արդեն այն կամովին վաճառել եմ սատանային, որը, պատկերացրու, վատ չի վճարում: Քչերը կարող են բացատրել այս որոշումը, էլ ավելի քչերը կարող են հասկանալ այն, սակայն երբ նման մաքուր հոգու տիրոջը անասնաբար պղծում են՝ հաշվի չառնելով ո՛չ նրա, ո՛չ էլ նրա հոգու կարծիքը, այդ ժամանակ այդ որոշումն այնքան էլ սարսափելի չէ, քանի որ մաքուր հոգին պիղծ մարմնում երկար չի դիմանում: Իսկ, ընդհանրապես, ես յուրահատուկ չեմ և ոչ էլ միակը. իմ մասնագիտության տեր ցանկացած աղջիկ քեզ կհրամցնի մի սրտաճմլիկ պատմություն, որի միակ տրամաբանական ելքը հենց այս տխրահռչակ արհեստն է: Այնպես որ, այդ տեսանկյունից մենք բոլորս էլ մաքուր հոգի ունենք:

Մի ակնթարթում այս հիասքանչ սրճարանը վերածվեց քաղաքի ամենասովորական սրճարաններից մեկի, սեղանի ծաղիկները հիասթափված կախեցին իրենց գլխիկները (չնայած որ արհեստական էին), իսկ մոմերի հանդիստ օրորվող լույսը մի տեսակ խամրեց, ինչպես խամրեցին Բանչեի այնքան ոգևորված աչքերը: Մեսսետան մի ակնթաթում կործանեց իր իսկ հեքիաթը, որն այնքան մեծ ջանքերի գնով հորինել էր իր մանկական երևակայությունը: Նա գուցեև կզղջար իր խոսքերի համար, եթե դրանք ճշմարտացի չլինեին...

Սակայն Բանչեն հեշտ հանձնվողներից չէր: Չնայած նրան մի քանի վայրկյան պետք եղավ աղջկա անսպասելի խոսքերն ընկալելու համար, նա շուտով կարողացավ ժողովել մտքերն ու հանգիստ պատասխանեց.

—Գուցե դու իրավացի ես, և բոլորն են նախկինում ունեցել մաքուր հոգի և հանգամանքների բերումով են միայն հայտնվել նման կարգավիճակում, բայց այս պահին ինձ մյուսներն ամենևին չեն հետաքրքրում...

***

*Տանը մենակ եմ... Ողջ թաղամասում հոսանքն անջատվել է, երևի այս անիծյալ անձրևից է... Խավարի մեջ միայնակ նստած՝ այրվում եմ զայրույթից ու արյան ծարավից: Անհավոր տանջվում եմ, գլուխս կարծես կորցրած լինեմ,*

*թվում է՝ ինչ-որ մեկը շիկացած երկաթով խանձում է ուղեղս, գուցե դու ինձ հանգստացնես: Սակայն չնչին են իմ տառապանքներն իմ փոքրիկ Մեսսետայի համեմատ: Ա՜խ, քույրի՛կս, ինչո՞ւ այդ ահավոր դեպքը պետք է հենց քեզ հետ պատահեր: Ինչո՞ւ հենց քեզ նման մի անմեղ ու անբասիր արարած պետք է զոհ գնար այդ տականքի կենդանական հաճույքին: Ես կգտնեմ այդ ստահակին, անպայման կգտնեմ նրան, և երբ գտնեմ, նա կպաղատի ներում, բայց այդպես էլ չի ստանա: Անչափ դաժը կզղջա իր ոճրի համար և նույնիսկ կաղերսի ինձ մահվան մասին: Նա, իհարկե, կստանա իր երանավետ մահը, սակայն միայն այն բանից հետո, երբ սեփական արյամբ ու արցունքներով կմաքրի իմ փոքրիկ քրոջ ապականված պատիվը: Տեսնես ինչպես է հիմա նա: Ծնողներս, երևի, հիմա նրա մոտ են՝ հիվանդանոցում, իսկ ես չկարողացա գնալ: Ինչպե՞ս նայեմ նրա աչքերին, քանի դեռ այդ այլանդակն ապրում է այս աշխարհում, ինչպե՞ս խոսեմ նրա հետ, ի՞նչ ասեմ իմ թևատված հրեշտակին, ի՞նչ խոսքերով նրան մխիթարեմ, ինչպե՞ս փարատեմ նրա անհանգիստ հոգին: Ա՜խ, որքա՜ն անարդար է այս աշխարհը, որքա՜ն ստոր են մարդիկ ու որքա՜ն անարժան... Ամբողջ օրը թափառում էի այդ անիծյալ բակում, հարցրի երևի բոլոր բնակիչներին, սակայն ոչ ոք ոչինչ չի տեսել: Միևնույն է, ես կգտնեմ քեզ, արդար վրեժից չես փախչի... Իմ ձեռքերով կպոկեմ քո գարշելի սիրտն այդ անհոգի մարմնիցդ ու կխժռեմ հենց քո պիղծ աչքերի առջև... Ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ հիմա: Պետք է բոլորին ոտքի հանել, բոլոր ծանոթներիս, բոլորին, թո՛ղ փնտրեն, թո՛ղ հետաքրքրվեն ու հարցուփորձ անեն ամենքին: Պետք է գտնեմ նրան... Բայց ախր ինչպե՞ս ընկերներիս պատմեմ եղածը, ինչպե՞ս կարող եմ իմ բերանով նկարագրել այն մղձավանջը, որ տեղի է ունեցել հարազատ քրոջս հետ... Բայց այսպես նստել չի կարելի. ես նորից գնում եմ այդ բակը, թքա՛ծ անձրևի վրա...*

Չնայած որ հետաքրքրաշարժ ընթերցանությունը շարունակելու գայթակղությունն անչափ ուժեղ էր, բայց կար մի բան, որ շատ ավելի կարևոր էր Էլլայի համար. այսօր նա իր ընկերոջը ներկայացնելու էր ծնողներին: Վերջին անգամ նայելով Էվիլիոյի նվիրած ժամացույցին և շտկելով առանց այդ էլ անթերի զգեստը՝ նա դուրս վազեց՝ դիմավորելու իր սիրեցյալին իրենց մշտական բաժանման վայրում՝ շքամուտքի առաջ:

Իրար ձեռք բռնած՝ նրանք մտան տուն: Էլլայի աչքերը կփայլեին ուրախությունից, եթե միայն թեթև և միշտ տեղին անհանգստությունը չսահմանափակեր բերկրանքի ճախրը: Վերջապես հասել էր այն օրը, երբ իր գտած գանձը ցուցադրելու էր ծնողներին, և հոգու խորքում գուցե նպատակ ուներ նաև զարմացնելու նրանց: Չնայած նա համոզված էր, որ ամեն ինչ

կարգին է լինելու, և չէր կասկածում, որ հայրն ու մայրը հավանություն կտան իր ընտրյալին, և ոչ մի խոչընդոտ չի կարող լինել: Նա չափազանց մոտ էր իր երջանկությանը. մնում էր միայն, որ Էվիլիոն ճիշտ խաղար իրեն վերապահված դերը, իսկ դրան Էլլան ամենաքիչն էր կասկածում, քանզի նա պատահական մարդ չէր ընտրել. Էվիլիոյի դերասանական կարողությունները բազմիցս հասցրել էր ստուգել իր խորամանկ մտքով: Իսկ վերջինս, չնայած որ դեմքի արտահայտությունն արտաքուստ անտարբեր էր, իսկ խոսքն ու շարժուձևը՝ բավականին համեստ ու բնական, այնուամենայնիվ, նրա կեցվածքն այնպիսին էր, կարծես բոլորը նրան խոշոր գումար են պարտք: Երբ Էվիլիոն արդեն ծանոթացավ Էլլայի ծնողների հետ, Էլլան իր տարերքի մեջ էր. նա ջանում էր, որ հյուրասիրության սեղանը մոտ լինի այն անթերիին, որին ինքն արժանացել էր Էվիլիոյի ծնողների տանը: Մինչ այդ տղամարդիկ զրույցի էին բռնվել. Էվիլիոն իրեն հատուկ սառնությամբ խոսում էր տանտիրոջ հետ, երբ դուռը թակեցին. Մեսսետան էր: Նրան միշտ դիմավորում էր Էլլան, բայց այս անգամ նա ավելի կարևոր գործով էր զբաղված, և նրան հյուրասենյակ ուղեկցեց մայրը: Մեսսետան օրինաչափ հետաքրքրասիրությամբ մտավ սենյակ և քաղաքավարի բարևեց: Էվիլիոն գլխով բարևեց ու նորից հայացքը գցեց պարոնի վրա, կարծես մտովի հարցնելով. «ո՞ւր էինք հասել»: Մայրը ներկայացնում էր Մեսսետային, երբ սենյակ ներխուժեց Էլլան՝ ընդհատելով.

—Քույրս է՝ Մեսսետան,– ասաց նա, հետո նոր ինքը բարևեց քրոջը:

Դրանից հետո Էվիլիոն և Մեսսետան արդեն հայացքներ ու քաղաքավարության ժպիտներ փոխանակեցին: Րոպեներ անց մթնոլորտն ավելի ջերմացավ, և ամեն ինչ սկսեց ընթանալ ավելի լավ, քան Էլլան նախատեսել էր: Ստացվում էին զրույցները, ստացվում էր նաև Էվիլիոյի խաղը: Իսկ Մեսսետայի արդեն փարատված շփոթմունքը լուռ արտահայտությունն էր այն բարի նախանձի, որ նման հավաքույթ իր առիթով այս կյանքում թերևս չի լինի. նա ակամա կորցրել էր այդ հնարավորությունը: Ինչևէ, մնում էր միայն ուրախանալ քրոջ հաջողությամբ: Իր անձնական կյանքի մահկանացուի հետ նա արդեն համակերպվել էր, չնայած որ մանկապատանեկան երազանքներն ու հույսերը երբեմն հիվանդագին գլուխ էին բարձրացնում՝ ստիպելով լավատես լինել: Այդպիսի ապրումներն, իհարկե, կախված էին տրամադրությունից, որ այսօր բարձր էր գուցե նաև նրա համար, որ հյուրի ներկայությամբ ծնողներն էլ ավելի ջերմ էին դարձել իր նկատմամբ, իսկ դրան նա շատ էր կարոտել:

***

*Ողջո՛ւյն, իմ օրագի՛ր... Անզորությունն ու հուսահատությունը պատել են իմ առօրյան ու ամբողջ էությունս: Արդեն խենթանում եմ անկարողությունից: Օրերը շարունակում են հոսել նույնքան բութ ու գարշելի, իսկ սիրտս չի հանդարտվում, հոգիս շարունակում է կրծել վրեժը: Եվ ո՞վ է ասել, թե վրեժը սառն են մատուցում, ես այժմ այրվում եմ վրեժի ծարավից, խելագարվում եմ այդ տականքին կտոր-կտոր անելու անկառավարելի ցանկությունից: Ներսս ամբողջովին վառվում է, կարծես դժոխքի բոլոր սատանաները, իրենց գործերը թողած, որոշել են գալ ու մի նոր դժոխք հիմնել իմ հոգում... Թվում է՝ կատաղությունից կպայթեմ: Ա՜խ, իմ փոքրի՛կ քույրիկ, մի՞թե դու սրան էիր արժանի, մի՞թե դու, իմ փխրո՛ւն հրեշտակ, որ կարծես ստեղծված էիր դրախտային կյանքի համար, արժանի էիր այս դժոխքին, մի՞թե արժանի էիր այն տխմար վիժվածքին, որն այժմ հավանաբար չի էլ հիշում քո մասին: Բայց ոչինչ, ես կգտնեմ նրան, թող ամիսներ անցնեն, թող տարիներ անցնեն, բայց ես չեմ հանգստանա, մինչև չլուծեմ քո վրեժը: Ատում եմ այս քաղաքն իր օրինական ապօրինությամբ, որ իշխում է ամենուր: Ես չեմ կարող ոչինչ փոխել այստեղ, բայց մի բան ես հաստատ կփոխեմ... Ես կորցրել եմ կյանքի համը, ոչինչ ինձ այլևս չի հետաքրքրում, ոչ մի բանից էլ հաճույք չեմ զգում, ոչ ոք ինձ չի կարող ուրախացնել, այս կյանքն այլևս անիմաստ է, քանի դեռ այդ ճիվաղն ապրում է ու շնչում այս գարշելի քաղաքի օդը: Ատում եմ բոլորին, այն ստորաքարշ ստահակներին, որ սարսափից լեզուները կորցրել են ու հրաժարվում են որևէ բան ասել, ատում եմ այն ծախու արարածներին, որոնք չնչին գումարներով վաճառեցին իրենց խիղճն ու լռությունը: Ատում եմ ինձ, որ այսպես անօգնական բողոքում եմ բոլորից՝ գործելու փոխարեն. ինձ անդամալույծ եմ զգում, մի անկար հաշմանդամ, որ ունակ չէ նույնիսկ պաշտպանելու իր փոքրիկ քրոջ պատիվը: Ա՜խ, Մեսսետա... Նա այնքան է փոխվել, այնպես սառն ու անկենդան է դարձել, որ կարծես ամբողջովին հեռացած լինի իրական աշխարհից: Չի ուզում շփվել որևէ մեկի հետ, իսկ ես էլ սիրտ չունեմ նրա աչքերին նայելու կամ գոնե մեկ բառ հետը փոխանակելու: Ես ինձ մեղավոր եմ զգում, մեղավոր եմ, որ նրան այսքան տառապանք պատճառողը դեռ կենդանի է, մեղավոր եմ, որ ոչնչով չկարողացա օգնել նրան կամ ինչ-որ կերպ թեթևացնել նրա ցավը: Նա ժամերով բացակայում է տանից, իսկ երբ վերադառնում է, հրաժարվում է որևէ հարցի պատասխանել, փակվում է իր սենյակում ու լուռ հեկեկում: Երևի թափառում է փողոցներով՝ փորձելով ցրվել իր սիրտը կեղեքող մտքերից, երևի փորձում է մոռանալ իր մորմոքն ու անտանելի ցավը: Ա՜խ, որքան եմ կարոտել մեր այն երկար ու գվարթ*

*գրույցները: Մեր միջև կապը կարծես բոլորովին կորել է, նա երևի ամաչում է ինձնից կամ գուցե մեղադրում է իմ այս անգործության համար, իսկ ես պարզապես խուսափում եմ նրանից ու չեմ համարձակվի որևէ բան ասել, քանի դեռ նրա պատիվը վերականգնված չէ:*

*** * ***

Ամեն ինչ պատրաստ էր... Պատրաստ էր հազարավոր անգամներ շահագործված և հերթական անգամ անթերի հարդարված անկողինը... Պատրաստ էր մի հոյակերտ բնապատկեր արտացոլող էժանագին նկարը, որ կախված էր իր բովանդակությանն ամենևին չսազող պաստառներով պատված պատից... Պատրաստ էին նկարը կարծես ծաղրելու նպատակով սենյակի մի անկյունում դրված արհեստական ծաղիկները, որ երբևէ չէին արժանացել սենյակ ելումուտ անող բազմահազար արկած որոնողներից և ոչ մեկի ուշադրությանը... Պատրաստ էին սենյակի օդը տհաճ մածուցիկությամբ լցնող անորակ մոմերը, որ անթափանց կարմիր վարագույրների վրա պատկերում էին ստվերների մի դիվային պարահանդես... Պատրաստ էր կարծես այդ պարահանդեսի համար հատուկ նախագծված երաժշտությունը, որ գործարքի մասնակից կողմերից մեկի գլուխը լցնում էր մի անորոշ տենչանքով ու կրքի ծարավով, իսկ մյուս կողմի համար այնքան սովորական էր արդեն, որ աննկատ խառնվում էր նրա աշխատանքային առօրյայի միապաղաղ աղմուկին... Առաստաղը երկու անհավասար մասերի բաժանող բաց կարմիր ջահը, որը միտումնավոր թույլ էր վառված, որպեսզի նշված բոլոր երևույթների հետ ամբողջացնի ռոմանտիկ մթնոլորտի թշվառ նմանակեղծումը, նույնպես պատրաստ էր: Եվ իհարկե, պատրաստ էր նաև գլխավոր հերոսը, որն այստեղ էր եկել ինքն իրեն հերթական անգամ խաբելու և դրանից մի երկնային հաճույք ստանալու վճռական մտադրությամբ: Նա անհանգիստ նստել էր իր քաշից շատ ավելի ծանր փորձությունների դիմացած անկողնում և տենդագին անհամբերությունից ջանասիրաբար եղունգները կրծելով՝ անթարթ նայում էր իրեն բաժին ընկած կանանցից լավագույնին, որը միշտ պատրաստ կատարյալ մարմնով մի էակ էր: Գլխավոր հերոսուհին, ով հանդիսանում էր նշված մարմնի անմիջական սեփականատերը, նույնպես արդեն գրեթե պատրաստ էր:

Մեսսետայի կենցաղին համահունչ և նրա անհաշվելի աշխատանքային պրոցեսների մի կատարյալ նմուշ հանդիսացող այս իրավիճակը, երևի, կլիներ ընդհանրապես շուտ մոռացվող ամենասովորականներից մեկը, եթե նա կարողանար արհամարհել մի աննշան հանգամանք: Այս անգամ պատրաստ չէր նրա փոքրիկ սրտիկը. այն ինչ-որ հրաշքով փախել էր վաղուց արդեն իրեն

չպատկանող իր կացարանն անխնա շահագործող գիտակցության ճիրաններից և իր ընդվզուն բաբախումներով փորձում էր իր բողոքն արտահայտել այսքան տարի իր բողոքների անտեսման դեմ:

Սակայն Մեսսետան քաջ գիտակցում էր, որ բիզնեսի այս ոլորտում պայմանավորվածությունը չեղարկելը կարող է վտանգավոր լինել: Այդ իսկ պատճառով շրջակա խլացուցիչ աղմուկի մեջ միայն իր փոքրիկ սրտիկի բաբախումները զանազանող աղջիկն սկսեց անշտապ հանել անթերի մարմինն ամուր գրկած, բայց հարկ եղած դեպքում հեշտությամբ արձակվող իր զգեստները: Այդքան երկար շահագործված, բայց իր թարմությունն ամենևին չկորցրած մարմնի մերկացման ամեն մի սանտիմետրի հետ հաճախորդի հուզումն ու անհամբերությունն էքսպոնենցիալ կերպով աճում էր: Եվ աղջկա շարժումները, թվում էր, գնալով դանդաղում են՝ ստիպելով անկողնու վրա նստած ոչ այնքան տհաճ արտաքինով տղամարդուն արդեն ցնցվել խելահեղ սպասումից: Դանդաղումն այնքան արագ էր, որ ի վերջո ժամանակը մի պահ կանգ առավ՝ տեղում քարացնելով թե՛ Մեսսետային, որ գրեթե հասցրել էր մերկացնել անթերի կուրծքը, և թե՛ ոգևորված հաճախորդին: Շուրջբոլորը մարեցին ամեն տեսակի ձայները, և երկրագունդը կարծես մի պահ դադարեցրեց իր ձանձրալի պտույտը: Այս պահը գուցե դեռ երկար կձգվեր, եթե հանկարծ կոպտորեն չընդհատվեր ուժգնորեն բացված դռան շրխկոցով: Մի բան, որ երբևէ չէր եղել այս կարգապահ մոթելում, և որն ակնթարթորեն սթափեցրեց երկուսին էլ:

Զարմանքի ու անհանգստության վայրկենական պոռթկման մարումից հետո միայն Մեսսետան գիտակցեց, որ ներս խուժողը նախորդ օրվա հերոսն է, որն ապօրինաբար, բայց և չգիտակցելով միջամտելով աղջկա մարմնի ներքին գործերին՝ գաղտնի կերպով ձայնի իրավունք էր շնորհել փոքրիկ սրտիկին: Նորեկի և Մեսսետայի հայացքները դեռ երկար ժամանակ կմնային այդպես մեկմեկու գամված, եթե աղջկանից քիչ ավելի ուշ ուշքի եկած հաճախորդը չբարձրաձայներ իր բողոքը երրորդ կողմի ի հայտ գալու դեմ, ինչը բացարձակապես չէր համապատասխանում իրենց համաձայնության և ոչ մի կետին:

—Ի՞նչ է կատարվում, գրո՛ղը տանի, դուք ո՞վ եք,– կատաղությամբ, անզորությամբ ու հիասթափությամբ լցված ձայնով ասաց տղամարդը:

—Հագնվի՛ր, Մեսսե՛տա, մենք գնում ենք,– հարց տվողի վրա չնչին ուշադրություն անգամ չդարձնելով՝ հաստատուն ձայնով ասաց Բանչեն:

***

Մի պահ՝ ընդգրկված նախորդող ու հաջորդող երկու ձանձրալի պահերի նեղ արանքում, որն այնքան հզորություն ու կամք ունի հրելու իրեն զսպող այդ մտացածին սահմաններն ու հրելու այնքան անձնվիրաբար, որ նրանք միաձուլվեն վերջում, այն վերջում, որ գերեզմանն է հույսերի՝ հորինված այլ բաներ հորինելու անկարող խեղճ մարդկանց կողմից, ստիպում է քեզ զգալ, որ, այնուամենայնիվ, աշխարհում կան բաներ, որոնք կարող են ստիպել քեզ: Քեզ, որ ինքդ քեզ ամենակարող էիր հռչակել՝ առանց հասկանալու, որ դու կարող ես շատ բաներ անել, բացի ինքդ քեզ թագավոր հռչակելուց: Ա՜խ, եթե միայն հասկանալ կարողանայիր... Եթե կարողանայիր, կհրաժարվեիր ինքնակոչ թագավորության երերուն թագից, որ դիմակայելով հողմերին՝ կարող է գլխիցդ ընկնել մի անզգույշ տատանումից՝ ծնված անխուսափելի հերթական մի փոսի վրայով ցատկելու անհաջող փորձից: Մի փոս, որ քո կարճատես աչքերը շատ փոքր էին գնահատել, կարող է քեզ սովորեցնել չհավատալ սեփական աչքերիդ և մնացած այն ամենին, որ քո սեփականն է: Միամիտ ես դու, եթե մտքովդ երբեք չես անցկացրել, որ կարող ես խաբվել: Իսկ ի՞նչ ասի խեղճ ժողովուրդը, որին ամեն օր խաբում են նրանք, ովքեր կարող են խաբվել անգամ միամիտ ժողովրդի հորինած ստից: Սուտ, որը քննադատվում է բոլոր բարոյական սկզբունքներով և միևնույն ժամանակ հանդիսանում է այն կշռաքարը, որը, դրված լինելով կշեռքի մի նժարին, միևնույն է, չի կարողանում ավելի բարձր դիրք գրավել, քան ճիշտը, որովհետև ավելի ծանր է: Եթե չլիներ կյանքի դաժան փորձը, գուցե կուրորեն հավատայինք կշեռքի ճշտությանը: Իսկ հիմա ստիպված ենք կշեռքը ստուգել մի անկախ կշռաքարով, որը, սակայն, նույնպես խաբում է՝ այս անգամ ոչ թե շահից ելնելով, այլ... սովորության համաձայն:

Մի քար էլ մարդն է, որ շարունակում է անել այն, ինչ արել է անցյալում՝ ապրել... ընդամենը:

Այդ դեպքում թող մեռնի նա, որ զգա այն պահերի կարոտը, որ գլխի չի ընկել զգալ ու վերապրել: Բայց մեղք չունի նա, որ մոլորվել է չերևացող այս քաղաքում, որտեղ ցուցանակ անգամ չկա: Ու չի էլ լինի այնքան ժամանակ, քանի դեռ մարդիկ կզլանան ուղեցույցները հեքիաթային հարթությունից իջեցնել կյանքի նկուղը: Ցավալին էլ այն է, որ ով էլ փորձում է դա իրագործել, ակամա մնում է աստիճանների վրա, իսկ հերթական աստիճանն իջնելիս վախենում է սայթաքել և գլորվել շատ ավելի խորը, քան կյանքի մռայլ նկուղն է...

Ամիսներ անցան, ծաղկեցին ծառերը, նկուղը չփոխվեց: Ձմեռային ցեխին ու կեղտոտությանը հաջորդեցին վարդագույն բողբոջները, բայց ինչպես ամեն տարի, այս անգամ էլ նրանք երջանկություն չբերեցին քաղաքի բնակիչներից շատ-շատերին: Սակայն Էլլայի և Էվիլիոյի համար այս գարունը հատկապես բարեբեր էր. ամուսնանում էին: Մի հերթական շաբաթ առավոտյան, երբ շատերը դեռ քնած էին՝ ուրբաթ երեկոյի գինարբուքից թմրած, մի քանի հոգի շատ վաղ էին արթնացել: Նրանք, առանց տեղը տեղին լվացվելու և նախաճաշելու, անցել էին գործի: Պիտանի և բավարարված լինելու զգացումից նրանք այնքան էին հուզված, որ անգամ քունն էին կորցրել: Վեր կենալով նախատեսվածից շուտ՝ զարթուցիչը դեռ չզանգած, դեռ լույսը չբացված, հայտնվել էին «Միապետության» հրապարակում, որպեսզի մաքրեին այն: Չնայած դա նրանց ամենօրյա գործն էր համարվում, բայց վաղուցվանից աշխատավարձ ստացած չլինելու պատճառով դադարեցրել էին կանոնավոր մաքրումները: Սակայն այս օրը բացառիկ էր. նրանք հատուկ կանչվել էին գործի և վճարվել նախօրոք ու սովորականից բարձր: Այսպես տեղի էր ունենում ամեն չորս-հինգ տարին մեկ, երբ քաղաքում պարբերական քաղաքական գործընթացներ էին տեղի ունենում, կամ էլ երբ այդ գործընթացների հերոսներն ուրախության առիթ էին ունենում նշելու: Այդ օրը հարսանիք էր, խնամի էին դառնում երկու ընտանիքներ, որոնցից մեկը բարձր հասարակության հիմնադիր անդամներից էր:

Հավաքարարներն աշխուժորեն և քթների տակ երգելով ավլում էին մայթերը ծաղկած ծառերից թափված ծաղկաթերթերից: Մի ուրիշ խումբ ձեռքով հավաքում էր ավելի մեծ աղբի կտորներ, իսկ մյուսները պատրաստում էին ջրցան մեքենաները՝ հրապարակն ու այնտեղ մտնող ու դուրս եկող բոլոր վեց փողոցները ողողելու համար: Այս աղջամուղջյան եռուզեռը մերթընդմերթ խանգարվում էր հատուկենտ մեքենաների անցուդարձով: Դրանք այն մարդիկ էին, ովքեր դարձյալ գործի բերումով շուտ էին արթնացել կամ նոր հերթափոխը վերջացրած՝ գնում էին տուն: Նրանց մի մասի աչքերը զարմանքից սառում էին՝ տեսնելով հրապարակը մաքրվելիս, իսկ մյուս մասինը՝ ոչ, քանզի նրանց գործը նույնպես այդ օրվա հարսանիքի հետ էր կապված. ոմանք պետք է հասցնեին լվանալ որոշ մեքենաներ, մյուսները պետք է բացեին գեղեցկության սրահը՝ նորապսակներին վաղ առավոտյան սպասարկելու համար, երրորդները պետք է հասցնեին դասավորել սեղանները հարսանյաց սրահում և այլն...

* * *

Քաղաքը դեռ չէր զարթնել, չնայած որ արդեն լրիվ լույս էր: Օդում սավառնում էր մի անբովանդակ դատարկություն, որը քամին անշտապ տարածում էր դատարկ մայթերով: Քաղաքի տարբեր արվարձաններով մեկ ցիրուցան եղած ծառերը, ինչպես ամեն օր այս ժամին, գործում էին ուժերի գերլարումով, որպեսզի գոնե թթվածնի մի փոքրիկ պաշար ստեղծեին իրենց այդքան անմարդկայնորեն վերաբերվող մարդկանց համար: Իսկ այդ պաշարը, միևնույն է, չէր հերիքելու, և արդեն կեսօրից հետո մարդիկ շարունակելու էին շնչել իրենց թոքերի համար սովորական դարձած փոշով ու անտարբերությամբ թաթախված հեղձուցիչ օդը: Չնայած դրան՝ ծառերը ջանք ու եռանդ չէին խնայում... Գունատ արևի քնաթաթախ ճառագայթները դեռ այնքան ուժ չունեին, որպեսզի կարողանային ճեղքել քաղաքը շրջափակման մեջ առած սմոգի հաստ շերտը: Այնուամենայնիվ, այդ ճառագայթներից ամենապայծառներն էին, որ ի վերջո հաղթահարեցին այդ տեխնածին պատնեշը և ճանապարհ հարթեցին իրենց հաջորդների համար: Դրանք հաղթականորեն մուտք գործեցին քաղաք ու առանց հարցնելու ներխուժեցին իրենց ճանապարհին ընկած առաջին իսկ լուսամուտից ներս՝ անթերի կահավորված ննջարանի պատի վրա ստեղծելով այդ օրվա արևի առաջին լուսավոր բիծը: Էվիլիոն, սակայն, այնքան զբաղված էր իրենց սիրո մահճին անշարժ պառկած հրեշտակի քունն ունկնդրելով, որ ամենևին չնկատեց նոր օրվա գալուստն ազդարարող փոքրիկ լույսի կտորը: Էվիլիոն երբեք նման զգացմունքներ չէր ունեցել: Բուռն պատանեկությունն ու ոսկե երիտասարդության անդամատոմսը նրա առջև բացել էին մի շարք դռներ ու ծանոթացրել էին նրան ամենատարբեր զգացողությունների հետ, բայց այս մեկը գրեթե խորթ էր նրան, գոնե մինչև վերջին ժամանակները: Նա միշտ էլ իր ուրույն ձևով սիրել էր Էլլային, բայց հիմա, երբ արդեն մի քանի ամիս էր, ինչ պաշտոնապես ամուսիններ էին, ամեն ինչ մի փոքր այլ էր՝ դրական իմաստով: Ու փոփոխությունն ամենևին էլ այն չէր, որ տեր է դարձել իր ընտրյալին, որովհետև նա տեր էր եղել միշտ էլ: Հիմա նա արդեն ամուսին էր, և դա մի անբնական ուժով բազմապատկում էր նրա սերը կնոջ հանդեպ: Նրա երջանկության բաժակը լցված էր մինչև վերջ ու, թվում էր, թե դեռ շատ երկար չի պարապվի: Եվ այսպիսի բուռն զգացմունքային հողի վրա նստած՝ նա վայելում էր իր իսկ ձեռքով պատրաստած սուրճի պարունակությունը: Էվիլիոն գլուխը կախել էր բաժակի վրա և մի ձեռքով կարծես շոյում էր այն, մտովի խորանալով մինչև բարու և չարի այն սահմանագիծը, որ հստակորեն գծվել էր վերջերս, երբ նրա հոգում առողջ գործընթացներ սկսվեցին սիրահարված

լինելու կապակցությամբ: Հենց նախորդ գիշերն էր հանդիպել իր պատանեկության ընկերներին, որոնք հիշեցրել էին իրեն անցյալի որոշ դրվագներ, որոնց հիմա ամոթով էր նայում: Մյուս կողմից էլ անմիջապես գտնում էր արդարացումը. չէ՞ որ այն ժամանակ նա չէր սիրում, իսկ հիմա սիրահարված է մինչև ականջների ծայրը, ինչն ազնվացնում է իր հոգին: Բայց նա արդեն չէր էլ ուզում մտածել այդ դատարկ անցյալի շուրջ. նա կնախընտրեր նայել սիրեցյալի աչքերին և ևս մեկ անգամ հիանալ դրանցով:

Ծրվեց մտքերից, երբ վերջացրեց իր սուրճը, բայց քանի որ չէր նկատել, թե ինչպես հասցրեց դատարկել այն, որոշեց երկրորդը պատրաստել և ևս մեկն էլ՝ սիրեցյալի համար և մատուցել անկողնում: Վերցրեց բաժակը, վեր կացավ, բայց մի անսպասելի հեռախոսազանգ կասեցրեց նրա ազնվագույն մտահղացման իրականացումը...

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԿՅԱՆՔ-ԾԱՂՐԱԾՈՒ

*Այս տկարամիտ տխմարների շրջապատում ես խեղդվում եմ չհասկացված լինելու գիտակցումից...*

Երեկոյան ժամը ութն էր: Նեկրիստոն, բերանում ծամծմելով նոր հետ ունեցած վեճի վերջին տողերը, աննպատակ թափառում էր «Կորսված քայլերի» պուրակում: Նա գտնվում էր բազում հնարավորությունների, խենթությունների, հիասթափությունների, հիացմունքի, մի քիչ միամտության ու բուռն սիրո տարիքում, սակայն իր տարիքի համար ուներ շատ ավելի խոհուն ու մտածկոտ հայացք, որն այժմ լի էր տառապանքի ու հուսալքության արցունքներով: Պուրակը գրեթե դատարկ էր, և եթե նույնիսկ նա գոռար ամբողջ ուժով, իր թշվառ գոյության դեմ դառնացած, միևնույն է, շրջակայքում գրեթե պատահմամբ հայտնված խլացած սիրահարները, որոնք ծպտված էին քաղաքային աղտեղությամբ թաթախված կանաչներում, ուշք չէին դարձնի նրա վրա: Սակայն նա չէր ճչում, ոչ էլ ջղաձիգ շարժումներ էր անում կամ խոսում ինքն իր հետ: Դեռ մանկուց նրա մեջ դրոշմվել էր բնավորության այդ խոնարհ գիծը՝ լուռ կուլ տալ այն ամենը, ինչ կյանքը խցկում է կոկորդդ: Եվ նա հիմա պարզապես քայլում էր. չէր լսում հեռվում դեպի հեռուն սլացող մեքենաների խլացած աղմուկը, չէր զգում այն տոթը, որ ստիպել էր խոնարհվել թե՛ բույսերին և թե՛ քաղաքի՝ դրանց ազգակից մնացած բնակիչներին, չէր նկատում այն անիմաստ միջատներին, որոնց կոխկռտում էին իր կիսամաշ կոշիկները՝ վերջ դնելով դրանց նույնքան անիմաստ գոյությանը: Նույնիսկ չէր մտածում հենց նոր տեղի ունեցած վեճի մասին և ոչ էլ անպատասխան սիրո կամ իր հոգսերի ու դժվարությունների մասին: Նույնիսկ եղանակի փոփոխականության, տարերային աղետների, պատերազմների, ահաբեկչության ու մարդկության բնականոն զարգացմանը սպառնացող նման այլ հարցերի մասին նա չէր մտածում. չէ՞ որ նա պարզապես քայլում էր: Մեղմ քամին սավառնում էր նրա շուրջը և կարծես ներխուժելով նրա գանգոսկրի մեջ՝ այն մաքրել էր նմանատիպ ամեն տեսակ մտքերից՝ մոռացնելով ամենաչնչին խնդիրներն անգամ... Պարզապես քայլում էր: Նա հաճախ էր գբոսնում այս պուրակում: Սա նրա համար ամենահարազատ վայրն էր «Համատարած խավարի» արվարձանում, ուր նրանք տեղափոխվել էին ընդամենը մի քանի տարի առաջ՝ ստիպված վաճառելով իրենց թերևս մի փոքր ավելի հարմարավետ բնակարանը, որ

կենտրոնում էր գտնվում: Այս արվարձանում նա շատ քչերի հետ էր շփվում, և շատ քչերն էին նրան ճանաչում: Նեկրիստոն շատ դժվար էր շփվում մարդկանց հետ, նոր ծանոթություններ գրեթե չէր ստեղծում, իսկ անծանոթ միջավայրում այնքան անհարմար էր զգում, որ պատրաստ էր ամեն ինչ թողնել ու փախչել, եթե դա նրան թույլ տային նորից ինչ-որ պարապների կողմից հորինված էթիկայի կանոնները: Նա իրեն փայլուն գիտելիքների տեր չէր համարում, բայց նաև չէր կարողանում իրեն ստիպել շփվել ավելի ցածր ինտելեկտով մարդկանց հետ, հատկապես աղջիկների. ատում էր նրանց, ովքեր, անընդհատ օգտագործելով ինչ-որ խելացի մտքեր, որ պատահմամբ ինչ-որ մեկից լսել են և որոնց իմաստն իրենք էլ չեն հասկանում, ջանում են երևալ շատ ավելի խելացի, քան իրականում են: Եվ այս կրկեսում ամենազավեշտալին ոչ թե նրանք են, այլ այն մարդիկ, ովքեր համակ ուշադրությամբ լսում են վերջիններիս ու հիանում նրանց արտահայտած մտքերի խորությամբ: Մի խոսքով, նա իրեն չէր համարում այս արվարձանի բնակիչ ու անհամբեր սպասում էր այն օրվան, երբ հնարավորություն կունենար լքել այն: Քանզի չէր կարողանում հարմարվել այն միջավայրին, որտեղ պետք է ջանք գործադրել խոսելիս, այլ ոչ թե ասել այն, ինչ կա գլխումդ, որպեսզի դուրս չգաս նրանց պարզագույն շրջանակներից, որտեղ պետք է զտել ամեն խոսքդ ու միտքդ, որպեսզի ծաղրի առարկա չդառնաս, իսկ շրջապատի ծաղրը չափազանց դաժան է, հաճախ՝ նաև կործանիչ: Իրենք իրենց համար հորինում են ինչ-որ օրենքներ ու կարծրատիպեր և ողջ կյանքում փորձում են հավատարիմ մնալ դրանց, որպեսզի իսկական տղա համարվեն: Իսկ նա արհամարհում էր դրանք ու նրանց՝ միևնույն ժամանակ չդադարելով ոչ իսկական և ոչ էլ առավել ևս տղա լինելուց: Երևի նրա այս տեսակետով էլ բացատրվում էր, թե ինչու այսքան քիչ ընկերներ ուներ...

Արդեն գրեթե մութ էր, Նեկրիստոն չնկատեց, թե ինչպես հերթական օրն անհետացավ հորիզոնում և քաղաքային լույսերով ու փոշու ամպերով հագեցած երկնքում սկսեցին կամացուկ նշմարվել հատուկենտ աստղերը, որոնք այնքան պայծառ էին, որ համարձակվեցին ճեղքել-անցնել անթափանցելի թվացող մշուշով խտացված մթությունը: «Երևի տանն արդեն անհանգստանում են,– ակամա մտածեց նա, սակայն իսկույն և ինքն իրեն պատասխանեց.–հետո՞ ինչ»: Արդեն ձանձրացավ, իսկ ծխախոտն էլ վերջանում էր. կարելի էր գնալ, մի քիչ թափառել փողոցներով: Պուրակին ամենամոտը գտնվում էր մի փոքրիկ փողոց, որը թեև լուսավորված չէր, սակայն անընդմեջ անցուդարձող տարբեր մակնիշի ավտոմեքենաներն այնպիսի պայծառությամբ էին լցրել այն, որ Նեկրիստոն ստիպված էր կկոցել աչքերը այդ անբնական լույսից: Նա հեռացավ փողոցից, որպեսզի թաքնվի

բակերի ստվերներում և չլսի դրա միապաղաղ աղմուկը: Քայլերը նրան տանում էին դեպի ինչ-որ ծանոթ ու հոգեհարազատ մի վայր, որտեղ նա ենթագիտակցորեն ակնկալում էր հանգստություն ու կարեկցանք գտնել: Ահա և հեռավոր մթության գրկում ուրվագծվեց աղբակույտը: Նեկրիստոն արագացրեց քայլերը՝ հուսալով դեռ արթուն գտնել աղբամաններից ու ստվարթղթերից կառուցված խղճուկ կացարանի թշվառ բնակչին: Նաստալդը երևի Նեկրիստոյի ամենամոտ ընկերն էր: Նա միշտ տեղում էր, միշտ պատրաստ էր լսել ու հասկանալ նրան, այդ ծեր թափառականը կարծես մի օրագիր լիներ կամ, ինչո՞ւ չէ, անվճար հոգեվերլուծող, որին կարելի էր հանձնել գրեթե ցանկացած գաղտնիք, ում հետ կարելի էր կիսվել, պատմել ամենանվիրական երազանքներդ ու զգացմունքներդ, մի խոսքով, ում առջև կարող էիր բացել հոգիդ: Նրանք ծանոթացել էին տարօրինակ պայմաններում, որոնց ոմանք զուգադիպություն կանվանեին, ուրիշները՝ պատահականություն, մյուսները՝ ճակատագիր: Բարեկամները բոլորովին տարբեր էին, սակայն նրանց հարաբերությունները չափազանց թեթև էին. նրանք շփվում էին առանց որևէ պարտադրանքի, պարտավորվածության, պատասխանատվության և հետագայից որևէ ակնկալիքների: Տղայի ոտնաձայներն ու հանդարտ շնչառությունը կարծես նախօրոք որոշված մի գաղտնաբառ լինեին, որը ստիպեց ծերուկին գլուխը դուրս հանել կիսախոնավ ստվարաթղթի վրա բացված կլոր անցքից, որ, երևի, պատուհանի դեր էր խաղում այդ ինքնաշեն հյուղակում, և խավարի միջից դեպի մոտեցողն ուղղել իր՝ ժամին համապատասխան արբեցմամբ լցված աչքերի անխամր փայլը: Նաստալդը մի անտուն թափառական էր, որի մասին ոչ ոք ոչինչ չգիտեր, նույնիսկ ինքը՝ Նեկրիստոն, որ երևի նրա միակ ծանոթն էր: Ո՞վ էր նա, որտեղի՞ց էր եկել, ինչքա՞ն ժամանակ էր արդեն այս աննախանձելի վիճակում, ինչպե՞ս էր հայտնվել այս անդունդում: Տղային հայտնի էր միայն նրա անունը, իսկ մնացածը կարևոր էլ չէր: Նաստալդը դուրս եկավ իր խցից, որպեսզի համապատասխան ընդունելություն ցույց տա իր պատվավոր հյուրին: Ամբողջ հասակով մեկ ընդգծվեց նրա ողջ թշվառությունը: Կեղտոտ կոշիկները, որ նա հագել էր բոբիկ ոտքերին, այնքան էին մաշված, որ կգերադասեին վաղուց արդեն հանգստի անցած լինել մի նմանատիպ աղբակույտում: Բզիկ-բզիկ եղած հնամենի տաբատն ու բազմաբղետ կարկատաններով զարդարված շապիկը կարծես հատուկ սազեցված լինեին իրար. չէ՞ որ երկուսն էլ ներկված էին միևնույն՝ կեղտի գույնով: Ձնայած ամառվա շոգին՝ ուսերին գցել էր մի կանացի մորթե վերարկու, որը, երևի, ավելի շատ բան էր տեսել, քան իր ներկայիս տիրոջ երիտասարդ հյուրը, և որի երիտասարդ օրերի փափկությունը տարիների ընթացքում վերածվել էր ճգնավորի կնգուղի կոշտության: Նրա

խառնակ մազերն ու մորուքը անփութորեն ծածկել էին ողջ գլուխը՝ նմանեցնելով նրան ավելի շուտ ինչ-որ տարօրինակ կենդանու. այնքան յուղոտ էին դրանք, որ դժվար էր միանշանակ որոշել դեռ ճերմակել չհասցրած մազերի բնական գույնը: Մորուքի մեջ խճճվել էին մի քանի օրվա վաղեմության ուտեստների մնացորդները՝ խառնված տիրող փոխուքի հետ: Դեմքի վրա երևում էին տարբեր կեղտաբծեր ու վերքեր, որոնք նա վաստակել էր ինքնամոռացության հասնող հերթական գինարբուքի հետևանքով: Կեղտոտ փալասով փաթաթված ձեռքով բռնել էր գրեթե դատարկ մի շիշ, որը կարծես կատարյալ էր դարձնում շրջմոլիկի այդ պատկերը: Նայելով Նեկրիստոյին՝ անհոգ ժպտաց, այնքան անհոգ, որքան ի վիճակի էր նրա վիճակում հայտնված մարդը: Համապատասխան ողջույն արտահայտող մի դիմանկար էլ հայտնվեց Նեկրիստոյի երեսին, ինչը, սակայն, չնկատեցին Նաստալդի փայլող աչքերը: Պատճառը գուցե մթությունն էր կամ ծերուկի կողմից չարաշահված խմիչքը, որ ստիպում էր նրան ընդհանրապես ուշադրություն չդարձնել իրեն անմիջականորեն չվերաբերող և ոչ մի մանրուքի: Ամենասովորական ողջույնից հետո բարեկամները մի քանի վայրկյան հնարավորություն տվեցին լռությանը՝ սավառնելու այդ անհյուրընկալ աղբակույտի շրջակայքում, որը սակայն, հավանաբար չդիմանալով տիրող անտանելի գարշահոտությանը, նույնքան անսպասելի անհետացավ, ինչպես որ հայտնվել էր:

—Ինչո՞վ է պարտական ծեր թափառականն իր հարգարժան ընկերոջ այցելությանը գիշերվա այս անհարիր ժամին:

—Պարզապես մոտակայքում զբոսնում էի,– ասաց տղան, սակայն հասկանալով, որ զրուցակցի բազմանշանակ հայացքից չի կարող թաքցնել իրենց հանդիպման բուն պատճառը հանդիսացող իր հերթական խնդիրը, նա ազատություն տվեց իր մեջ կուտակված արցունքների շիթերին ու գլխում խտացած հախուռն մտքերի հեղեղին:

—Նորից վիճեցի հորս հետ... Զարմանում եմ՝ ախր ինչպես կարող է այդպիսի բառեր ասել սեփական որդուն, թեև՝ նա մեղավոր չէ. նրա փոխարեն խմիչքն է ամեն ինչ ասում: Ատում եմ այդ անիծյալ խմիչքը, ատում եմ հորս, ատում եմ ինձ, որ ատում եմ հորս, ատում եմ կյանքս... Երևի արդեն խելագարվում եմ: Այս ամենն արդեն չափազանց երկար է շարունակվում և պիտի որ ինձ համար սովորական դարձած լիներ, բայց ամեն անգամ նա տարբեր է, նրա ամեն մի խոսքը ներխուժում է մարմնիս մեջ ու երակներովս հասնում սրտիս՝ կարծես թունավորելով այն: Եվ ես ակամայից պատասխանում եմ նրան, ինչի համար զղջում եմ միայն հետո:

Նաստալդը, քարացած այս հեղեղից, որ հորդում էր տղայի հոգու ամենանվիրական խորքերից, հազիվ հասցնում էր հետևել նրա մտքերի

անկանոն թռիչքին և չէր համարձակվում ընդհատել գրեթե ինքնամոռացության հասնող այս անկեղծ մենախոսությունը:

—Ատում եմ... Ատում եմ, չգիտեմ էլ՝ ինչը: Մի՞թե ոչ ոք ինձ չի հասկանալու: Երբեմն ուզում եմ պարզապես հանձնվել ու տրվել իմ դևերին, որ ինձ տանեն ուղիղ դեպի դժոխք՝ նետելով ինքնասպանության անդունդը: Այո, ես ծնվել եմ սխալ վայրում և սխալ ժամանակ, գուցե հենց այն երևույթն եմ, որին բոլորը թյուրիմացություն են անվանում՝ առանց պատկերացնելու դրա բուն իմաստը (այսինքն՝ ինձ): Գուցե հաջորդ կյանքում ես այսքան ցնդած չեմ լինի մնացած հիմարների աչքում, որոնց համար ես չափազանց խելացի եմ... Ա՜խ, հա՜յր, դու սպանում ես ինձ, քայքայում ես սիրտս քո ողջ անմեղությամբ, ինչպես վարպետն է կտոր առ կտոր ծեփերը պոկոտում չհղկված քարից, որպեսզի այն վերածի գլուխգործոցի: Իմ սիրտը, սակայն, քարից չէ, ցավոք, ու գլուխգործոցի վերածվելու փոխարեն այն մի օր պարզապես կհոգնի ու կդադարի կատարել իր անշնորհակալ գործը... Բայց դու մեղավոր չես, հայրի՛կ. այն ամենից հետո, ինչ դու ես տեսել, շատերը, գուցե, կգժվեին, իսկ դու պարզապես հարբեցող դարձար: Նույնիսկ չգիտեմ, թե որն է ավելի վատ՝ հարատև մթությու՞նը, թե՞ մթություն, որը, թեկուզև կարճ է տևում, բայց անպայման ընդհատվում է առողջ քնով: Ա՜խ, որքան կուզեի քեզ օգնել, բայց երբ դու խլանում ես ու անտարբերության մշուշով արբած ոչինչ չասող հայացքդ հառում ես վրաս, ես խորտակվում եմ ու մերժում եմ քեզ, պապանձվում եմ ու թույլ եմ տալիս, որ շուրջդ սավառնող գարշահոտը ներթափանցի մաշկիս մեջ ու նողկանքի սերմերին օգնի՝ դուրս հանելու նորանոր ծիլեր...

Այս ամենը սավեց գրեթե մի շնչով, և դրանից հետո միայն Նեկրիստոն սթափվեց՝ վերադարձնելով սառը դատողությունը, որ մի ակնթարթ կորցրել էր անկեղծության այդ անսպասելի պոռթկման պահին: Եվ հիմա միայն հիշեց, որ միայնակ չէ այդ լքված աղբակույտի մոտ, և որ մի զույգ կիսահարբած աչքեր անխոս հետևում են իր այդ սրտաբուխ ճառին ու պատրաստում ոչ պակաս ծավալուն ու սրտաբուխ մի պատասխան, որը գուցե ինչ-որ չափով կհանգստացներ ոգևորված պատանու այրվող սիրտը:

Աղբակույտում դարձյալ թևածեց լռությունը, որը, թվում էր, վերջին այցելությունից հետո այլևս երբեք չի վերադառնա: Լռությունը, սակայն, կատարյալ չէր. այն հանդարտ ալեկոծվում էր դեպի ծերուկի կոկորդը հորդող գինու երգեցիկ հնչյուններով: Երբ շիշն արդեն դատարկ էր, Նաստալդը մի խորը հոգոց հանեց՝ այդ կերպ ստիպելով տղային՝ ուշիուշով հետևել իր խոսքերին.

—Ներշնչանք, սիրելի՛ Նեկրիտո, ես ներշնչանք եմ փնտրում այս անտակ շշի հատակում: Այս բարոյալքված, արժեզրկված ու կեղծ կատարելության ձգտող աշխարհում այլևս ոչինչ ինձ չի ոգեշնչում: Չես պատկերացնում, թե որքան դժվար է ապրել առանց ներշնչանքի: Այդ մտքից անգամ սարսափելով՝ սկսում ես ավելի ինքնամոռաց փնտրել այն, փնտրում ես ամենուր և որքան շատ ես ցանկանում գտնել, այնքան ավելի հեռանում է այն քեզնից: Ի վերջո հանձնվում ես, ուզում ես մոռանալ քո պարտությունը, խմում ես առաջին բաժակը, հետո երկրորդը... Ու պատկերացրո՛ւ, թե ինչ կատարյալ հաճույք ես զգում, երբ, ամբողջությամբ մոռացած նրա մասին, հանկարծ հանդիպում ես: Գիտեմ՝ դու հիմա ինձ չես հասկանա, և դա շատ լավ է: Ասածս այն է, որ ամեն մեկը մի բան է փնտրում և, ինչո՞ւ չէ, նաև գտնում խմիչքի փրփուրների մեջ: Սակայն ընդհանուր է մի բան. մենք փնտրում ենք փրփուրների մեջ, իսկ այնտեղ գտնված ամեն ինչ նույն փրփուրի պես ի վերջո անէանում է: Եվ առավոտյան զարթնելով մենակ՝ նորից սկսում ես փնտրել ու այսպես՝ ինքդ էլ դա չգիտակցելով, դառնում ես թուլակամ մի հարբեցող:

Վերջին բառերը Նաստալդը ասաց մի տեսակ մտախոհ. դժվար է մարդու համար իր իսկ դատավճիռը բարձրաձայնել: Այնուհետև հայացքն ուղղեց տղային, որն անշարժ կանգնել էր իր դիմաց ու խորասուզվել մտորումների մեջ:

—Քեզ այժմ ոչ մի զրուցակից պետք չէ, տղա՛ս,— շարունակեց ծերուկը,— դու ավելի լավ է հիմա մենակ մնաս, փորձի՛ր զրուցել սեփական «ես»-իդ հետ, քո հոգու հետ, մի՛ տրամաբանիր, մի՛ դատիր ու մի՛ գիտակցիր, մի պահ պարզապես փորձի՛ր վերանալ քեզնից ու կողքից նայել սեփական հոգուդ: Ու դու կլսես հոգուդ ձայնը, իսկ հոգիդ, հավատա՛, քեզ վատ խորհուրդ չի տա...

—Այժմ արի՛ բաժանվենք, սիրելի՛ ընկեր,— փոքրիկ դադարից հետո արդեն ոչ նույն լուրջ ու ազդեցիկ ձայնով շարունակեց նա,— ես այսօր շատ եմ հոգնել և գիշերային այս հիասքանչ ժամին կուզենայի վայելել իմ ներշնչանքը, որն այնքան կարճատև է, բայց այնքան քաղցր... Գուցե ինչ-որ բան էլ գրեմ:

Նեկրիտոն հասկացավ, որ իր գնալու ժամանակն է: Նա լուռ գլխով արեց իր տարօրինակ ընկերոջը՝ թողնելով նրան իր ներշնչանքի հետ, ու հանդիստ քայլերն ուղղեց դեպի չլուսավորված լուսավոր փողոցը՝ կարծես իր ներշնչանքն էլ փնտրելով փողոցների անկյուններում՝ մայթերի վրա մոռացված: Դժվար էր ասել, թե ինչքանով էր դա ավելի արդյունավետ իր զրուցակցի և նաև իր հոր ընտրած տարբերակից, բայց այդ պահին նա չէր կարող անել ավելին, քան անխնա մաշել սեփական կոշիկները:

Պակաս տարօրինակ չէր նաև ինքը, համենայն դեպս շրջապատի մարդկանց համար: Իսկ իրականում նա մի հասարակ տղա էր, աշխարհի

հերթական հյուրերից մեկը՝ ակամա ծնված մի հասարակ ընտանիքում: Ընտանիքի միակ զավակն էր, գովասանքի, ջերմ խոսքերի միակ թիրախը: Փայփայում էին նրան՝ նրա համար չխնայելով ոչ մի ջանք: Բայց ոչ մեկի համար էլ գաղտնիք չէ, որ հասարակ աշխատավոր ծնողները չէին կարող բավարարել դեռևս քնած գիտակցությամբ պատանու քմահաճ ցանկությունները: Չէ՞ որ մարդը ստեղծված է այնպես, որ ուզում է այն, ինչ տեսնում է աչքերով: Ա՜չք... սարք, որը նախատեսված է արտաքին աշխարհից տեղեկություն ստանալու, ինչո՞ւ չէ, նաև գեղեցկության, բայց ոչ երբեք հարևանի ունեցվածքի վրա գցելու համար: Մի՞թե երջանիկ չէր լինի մարդը, եթե պարզապես աչքեր չունենար: Շատ կերազեր այս տղան կույր ծնվել, բայց կյանքի օրոք աչքի լույսից հրաժարվելը մահից էլ ծանր կլիներ նրա, ինչպես նաև ցանկացած ուրիշի համար: Չի բացառվում, որ նա կփափագեր տեսնել լույսը այն ժամանակ, երբ կույր ծնված լիներ: Միևնույնն է, զուր է բացատրելը կույրին, որ աշխարհում առանձնապես տեսնելու բան էլ չկա: Բայց չկա հասարա՛կ մարդու համար. վայելքները հասու չեն նրան, նա տեսնում է միայն ցավ, վիշտ, դառնություն, հեգնանք, անտարբերություն, այլ կերպ ասած՝ կյանքի մի կողմը միայն:

Հասարակ էր տղան ոչ միայն սոցիալական կարգավիճակով, այլ նաև արտաքնապես: Առանձնապես գեղեցիկ չէր, համենայն դեպս հույս ուներ, որ ինչ-որ մի հասարակ աղջիկ նրա մեջ կգտներ մի կայծ, ինչո՞ւ չէ, նաև բոց: Գանգրահեր էր, խորաթափանց սև աչքերով, իսկ թե այդ տարիքում ինչպես էր հասցրել կորցնել աչքերի փայլը, Աստված գիտի: Ոչինչ չասող անտարբեր հայացք ուներ, բայց ամենապատասխանատու պահերին չէր կարողանում անտարբեր ձևանալ, եթե նույնիսկ դա այդպես էր: Հավանաբար դա էր նրա դժբախտության հիմնական պատճառը: Իսկ դժբախտ նա ինքն էր իրեն հռչակել: Մի խոսքով՝ տաղանդավոր էր նա, բայց, ցավոք, նրա տաղանդը դերասանության մեջ չէր: Դերասանները հեշտ են ապրում. նրանք կարողանում են արդյունքի հասնել անելանելի թվացող իրավիճակներում: Ինչ արած, այս հարցում էլ Տերը չէր շռայլել:

Ապրում էր նա, իսկ ինչը ավելի ճիշտ կբնութագրի նրա կենցաղը՝ քարշ էր տալիս իր գոյությունը:

Հանճարեղ երազող էր: Կարծես ապրում էր իր մտացածին երազների աշխարհում, որը ոչնչով չէր տարբերվում իրականից, միայն թե այնտեղ նա հասարակ չէր, այլ՝ արտոնյալ: Դա էր այն պատճառներից մեկը, որ մենակ էր. ոչ ոք չէր կարողանում կամ չէր ուզում հասկանալ նրա էությունն ու ապրելաոճը: Եվ նա քաջ գիտակցում էր դա դեռևս մանուկ հասակից, սակայն այլ կերպ ապրելու բոլոր փորձերը մատնվել էին անհաջողության: Իսկ քանի որ

նա աչքի չէր ընկնում համառությամբ, այդ առումով վաղուց արդեն հանձնվել էր: Պայքարելու կամքով էլ նա ամենևին չէր փայլում, սակայն մերթընդմերթ նրան համակում էին հեռանկարային ծանրակշիռ գաղափարներ, որոնցով նա տարվում էր անսահման ագահությամբ: Դրանց նպատակը մեկն էր՝ իրականության կարգավիճակ տալ երազներին, գոնե մի քանիսին: Ուներ երկու ճանապարհ՝ փոխել հրամայող աշխարհը, որն առնվազն անտարբեր էր իր հանդեպ, կամ փոխել անհնազանդ ներաշխարհը: Նա զգում էր, որ այդ ամենը երկար չի կարող տևել, և անհյուրընկալ աշխարհի նախաձեռնած գրոհներից պաշտպանվելու համար փնտրում էր երրորդ ուղին:

Բավականաչափ ինքնամփոփ էր, բայց հարմար մթնոլորտում բացվում էր մինչև վերջ: Պարզապես ծիծաղելին այն էր, որ դեռ չէր շրջապատվել հարմար մթնոլորտով. նա անհարմար էր զգում իրեն ամենուրեք, բացի տնից, որտեղ նա ապրում էր, իսկ նա ապրում էր, ինչպես ճիշտ գուշակեցիք, մի հասարակ տան մեջ, որտեղ նոր և պարտքով գնված հասարակ կահույքն ուղղակի չէր սազում խամրած պատերին: Այդուհանդերձ, տունը նրա միակ ապաստարանն էր, այն վանդակը, որտեղ նա իրեն ազատ էր զգում:

Նա թյուրիմացություն էր համարում իր լույս աշխարհ գալը: Նա կարծում էր, որ ինչ-որ մի տեղ սխալմունք է տեղի ունեցել՝ կամ Տիրոջ գրասենյակում, կամ ինչ-որ տեղ ցուցակների մեջ: Բայց ճակատագիր էր. եթե սխալ կար, ապա այն անուղղելի էր: Մի բան էր միայն կարող վարպետորեն անել. թաքցնել իր մտքերը: Եվ իսկապես, ինչո՞ւ կիսվել, եթե չեն հասկանալու, ինչո՞ւ արտահայտվել, եթե ծաղրելու են: Իսկ զգացմունքները կամ առավել ևս՝ վերաբերմունքն այս կամ այն մարդու նկատմամբ նա անզոր էր քողարկել: Դա դեմ էր նրա էությանը, որ գտնվում էր իր սեփական զենքերով կյանքի դեմ պայքար մղելու անհնարինության գիտակցման հուսահատ փուլում:

Սա նրա հոգու ներքին խոհանոցն էր, իսկ շրջապատի համար նա լիովին համապատասխանում էր մի քիչ տարօրինակ տղայի իր բարձր կոչմանը, քանի որ կարողանում էր ուրախանալ փոքրիկ առիթներով:

Սովորում էր «Երևակայական Պատրանքների Համալսարանում», ավելի ճիշտ՝ փորձում էր սովորել: Չնայած որ շատ ընդունակ էր, հազիվ ստանում էր միջին գնահատականներ: Իսկապես, դժվար է համոզել հուսահատվածին, թե ամեն ինչ դեռ վերջացած չէ: Այս նպատակասլաց պատանու անհաջողությունն ուսման բնագավառում ուղղակի հետևանք էր այն բանի, որ նպատակ չէր տեսնում հազարավոր անգամներ զուր տեղն ընթերցված դասագրքերը ևս մեկ անգամ կարդալու մեջ: Կարդում էր միայն այն, ինչ քիչ թե շատ հարազատ էր համարում իր չարչրկված հոգուն, իսկ այդպիսի բաները շատ քիչ էին կամ գուցե նույնիսկ չկային: Քիչ տարօրինակ էր նա, բայց բնավ ոչ

անկանխատեսելի: Խելացիները, որոնք նույնպես շատ քիչ էին շրջապատում կամ գուցեև չկային, կարողանում էին գոնե տրամաբանություն գտնել նրա արարքների հաջորդականության մեջ, մինչդեռ միջին ինտելեկտի մակարդակով անձինք նրան համարում էին բավականաչափ հետաքրքիր՝ որպես ծանոթներ շփվելու համար:

Արդեն մի քանի տարի շարունակ նա անցնում էր նույն ճամփով՝ տնից՝ համալսարան, այնտեղից էլ՝ տուն, և, ինչպես հայրն էր սովոր ասել, անցնում էր՝ աչքերը փակ, գլուխը կախ, կողքերը չնայելով: Դա այնքան էլ չէր համապատասխանում իրականությանը, բայց նա ուշադրություն չէր դարձնում հոր այդ խոսքերին: Առհասարակ, հայրը շատ ավելորդ բաներ էր ասում, երբ քիչ գինովցած էր լինում, իսկ նա հազվադեպ էր լինում այդպիսի վիճակում, որովհետև ավելի հաճախ ուղղակի հարբած էր: Իսկ այդ ժամանակ նա դառնում էր անտանելի:

Իշխող միապաղաղությունը բազմազանությամբ փոխարինելու, անիմաստ դատարկությունը թեկուզ ինչ-որ դատարկ բանով լցնելու, սև-սպիտակ աշխարհը գունավորելու համար նա պատրաստ էր զանազան խենթությունների: Օրերով տուն չէր գալիս, զբոսնում էր գիշերներով՝ հաշվի չառնելով, որ ապրում է բավականին վտանգավոր թաղամասում: Նա կարծես ոչինչ չուներ կորցնելու, արկածներ էր որոնում՝ համաձայն լինելով անգամ պարտված դուրս գալ, միայն թե խաղար: Վիճում էր հոր հետ, բայց ավելի շատ ինքնահաստատվելու համար, ձևացնելու համար, թե ինքն արդեն մեծացել է, սակայն հոգու խորքում անվերապահորեն ընդունում էր հոր խորհուրդները՝ փորձելով հոր կյանքի փորձը գումարել իրենինին՝ չիմանալով, սակայն, որ այդ դեպքում գործում են գումարման լրիվ այլ կանոններ: Արկածախնդիր տղայի լավագույն արկածները, սակայն, մնում էին վեճերը հոր հետ, և ոչ ավելին:

Մինչդեռ համալսարանում նա խաղաղ էր: Ոչ ոքի անգամ արժանի չէր համարում՝ հետը վիճելու համար: Հազվադեպ էր զայրանում, բայց լավ էր չտեսնել նրան այդ վիճակում. դա ընդհանրապես չէր սազում նրա՝ հասարակ տղայի համար բավականաչափ յուրօրինակ հոգեկերտվածքին:

Եթե նրա համակուրսեցիները ուշադիր լինեին, կնկատեին, որ ընկճված է և նեղվում է ամեն տեսակ բարիքից, երբ տեսնում է այն անարժան մեկի ձեռքին: Ա՜խ, եթե միայն ուշադիր լինեին: Մյուս կողմից նա չէր լինի մեր հերոսը, եթե գտնվեր բոլորի ուշադրության կենտրոնում, չէ՞ որ դա միայն նրա երազանքն էր:

Ինքն իր հետ դեռևս հակասության մեջ գտնվող հասարակ տղայի դասական կերպար էր նա, միայն մի էական տարբերությամբ. նա թքած ուներ մեծ քաղաքականության, անկախության, հայրենասիրության ու դրանց նման

այլ տխմար բաների վրա: Երևի հենց սա էր հոր հետ ունեցած գրեթե բոլոր վեճերի հիմնական պատճառը, եթե, իհարկե, չհաշվենք չարաշահված խմիչքը:

Իսկ Նեկրիստոյի հայրը նախկին զինվորական էր, նա հաշմանդամ էր... Իր վերքն ստացել էր այն հինավուրց ժամանակներում, երբ դեռ Պատերազմն էր ընթանում, և երբ սեփական կյանքդ քո քաղաքին անձնվիրաբար զոհելը ոչ միայն անմտություն չէին համարում, այլև դա հերոսություն էին կոչում: Հիմա, իհարկե, ամենն այլ կերպ էր: Մոռացվել էր ամեն ինչ՝ թե՛ Պատերազմի հերոսները, թե՛ ինքը՝ Պատերազմը և թե՛ այն սերը քաղաքի հանդեպ, որը Պատերազմում հերոսներ ծնեց: Պատերազմից հետո, ընդհանրապես, շատ բան էր փոխվել. նույնիսկ ամենասուրբ ու ամենավեհ գաղափարները ժամանակի ընթացքում այնքան էին ծամծմվել ու մաշվել, որ բոլորովին կորցրել էին իրենց արժեքը, իմաստն ու, որ ամենակարևորն է, կախարդանքը: Մարդիկ սկսել էին մտածել առհասարակ ոչնչի մասին, անտարբերությունը հիմնովին բնավորվել էր նրանց սրտերում ու բարեխղճորեն կառավարում էր դրանք: Նույն անտարբերությանն էլ մատնված էր Նեկրիստոյի հայրը: Նա վաղուց արդեն կորցրել էր հույսը՝ արժանի փոխհատուցում ստանալու իր հերոսական անցյալի համար: Նկարիչ էր... Իր արվեստանոցը թողնում էր մեծագույն կարոտով, երբ Պատերազմ էր գնում, բայց հավատում էր, որ մի օր կվերադառնա ու կզբաղվի սիրած գործով: Ինչպես գիտենք, մեր ամենանվիրական երազանքները շատ հաճախ իրականանում են, բայց ոչ այն տեսքով, ինչ մենք սպասում էինք: Հիմա նա զբաղվում էր իր սիրած գործով և ոչ միայն զբաղվում էր, այլ դրանով նաև դրամ էր վաստակում: Սակայն, ինչպես ասվեց, ամեն ինչ վաղուց արդեն արժեզրկվել էր, այդ թվում, բնականաբար, նաև արվեստը: Այնպես որ, վաստակած գումարը հազիվ հերիքում էր հետպատերազմյան իր կյանքին ամենուր ուղեկցող խմիչքին, նույնիսկ մի չնչին մաս էլ մնում էր՝ օգնելու կնոջը, որն օրնիբուն աշխատում էր՝ բավարարելու առօրյա կարիքները: Այս ամենից հետո էլ, սակայն, նա շարունակում էր նույն ձևով սիրել իր քաղաքը՝ ծուռումուռ փողոցներով, խավար բակերով, կիսախոնավ ու միշտ կեղտոտ անցումներով: Քաղաքն ամեն դեպքում հարազատ էր նրա սրտին իր ողջ թշվառությամբ:

* * *

*Ու ինչքան կուզի, թող սիրտս իրեն*
*պատից պատ զարկի խելագարի պես, մեկ է,*
*կասես՝ բաբախում է, ու անսանձ լեզուս ինչքան*
*էլ կուզի, թող խենթացած մտքեր շաղ տա քո*
*առաջ, մեկ է, կկարծես, թե կատակում եմ...*

*«Խենթերի» այգուց քիչ հեռու էր այն աղջկա բնակարանը, ում երևի սիրում էր Ցիանկոն: Նա այդ աղջկան ճանաչում էր արդեն չորս տարի, և ուղիղ այդքան ժամանակ էլ սիրում էր նրան: Ցիանկոյի թաքուն սերն ավելի խորհրդավոր ու հետաքրքիր էր դարձրել նրանց ընկերությունը: Ծանոթացել էին դպրոցում, երբ սովորում էին իններորդ դասարանում, ու հաջորդող չորս տարիները, կարելի է ասել, ապրել էին միասին, պարզապես քնում էին տարբեր տներում, չնայած պատահել էր՝ նաև միասին էին քնել: Եթե նույնիսկ չէին տեսնվում, ապա հեռախոսային նամակագրությունը նրանց օրվա անբաժանելի մասն էր: Դպրոցն ավարտելուց հետո նամակներն ավելի կարճ ու հազվադեպ դարձան. մի քանի օրը մեկ՝ բարև, ինչպե՞ս ես - բարև, լավ, դու՞... ու էլի մի քանի ձեռքի տակի բառեր: Հետո՝ շաբաթը մեկ, ամիսը մեկ, հետո՝ առիթից առիթ: Այնպես, ինչպես դանդաղ վերջանում է մեղմիկ երաժշտությունը, այդպես էլ սառում էր նրանց մտերմությունը, թեև սխալ է այդպես կարծել, քանի որ նրանք, իրարը չլինելով այդքան, մնում էին մտերիմ նույնքան: Նրանց կապում էր մի անօրինակ մտերմություն, քանի որ միասին էին ապրել կյանքի ամենահամեղ պատառներից մեկը: Նամակները ցամաքել էին գուցե նրանից, որ աղջկա անձնական կյանքում սրտաճմլիկ սիրային անարդարություններ չկային, որոնցով նա անգիտակցաբար ճանկռում էր Ցիանկոյի հոգին: Մյուս կողմից նա արդեն գիտեր Ցիանկոյի զգացմունքների մասին: Դա մի անտանելի շրջան էր նրա համար: Պետք է նորից մտովի ապրեր անցած չորս տարիներն ու վերաիմաստավորեր դրանք: Բազմաթիվ երևույթների, ապրած րոպեների իմաստն ու խորությունը նա նոր էր հասկանում, ու կար թե՛ խղճի խայթ, թե՛ զղջում, թե՛ ափսոսանք՝ թե՛ արածի, թե՛ չարածի համար: Տասներորդ դասարանում նա կես տարի տանջվում էր հենց Ցիանկոյի համար՝ զսպելով սեփական զգացմունքը հանուն ընկերության: Նա ափսոսում էր խեղդված զգացմունքները, բանտարկված բառերը, անտեղի տվայտանքը, որ կարոտով ես հիշում ու կուչ գալիս ներկայում, որն այդքան անորոշ է:*

*Դա մեկ տարի առաջ, իսկ հիմա ամեն ինչ առավել քան հստակ է, համենայն դեպս՝ աղջկա համար: Նրա ընտրյալը բոլորովին այլ մարդ է, իսկ այդ մարդու նվիրած մատանին հիմա նրա մատին է, ու մի քանի ժամ առաջ կայացավ նրանց պսակադրության արարողությունը, որին հրավիրված էր նաև Ծիանկոն:*

*Թող չթվա, թե աղջիկը չէր սիրում իր ընտրյալին և ստիպված էր ամուսնանում: Նրանք սիրում էին իրար և լինելու էին երջանիկ: Աղջիկը փայլուն էր անցել այդ անտանելի փուլով և հստակ որոշում կայացրել՝ կողպել անցյալի պատրանքը, ընդունել իրապես ապրված անցյալը և առաջ գնալ: Իսկ Ծիանկոյին պահել սրտում՝ որպես ամենամտերիմ ընկերոջ:*

*Ծիանկոն իր հերթին խոստացել էր նույնը:*

*Նրանք երկուսն էլ բավականին կայացած ու հաստատ մարդիկ էին, և այդ որոշումը երկուսն էլ ընդունում էին սեփական գիտակցության ամենավերին ատյաններում առանց դույզն-ինչ տարակուսանքի:*

*Բայց հիմա՝ այդ արարողությունից հետո, Ծիանկոն ակամա եկել էր «Խենթերի» այգի ու թաքուն նայում էր աղջկա սենյակի պատուհանին, որ մի քանի ժամ առաջ դադարել էր նրանը լինելուց: Մի տեսակ ամեն ինչ խառնվել էր իրար: Անցյալն ու ապագան եկել էին ներկա, իսկ ներկան, առիթից օգտվելով, փախել էր: Ծիանկոն կանգնել էր այն ծառի տակ, որը մի ժամանակ իրենցն էր համարում: Հիշում էր, թե ինչպես էր տասներորդ դասարանում որոշել ասել նրան իր սիրո մասին ու չասաց, քանի որ նրան գտավ մի անկյունում՝ ինչ-որ մեկի համար արտասվելիս: Եթե միայն իմանար, որ այդ ինչ-որ մեկը հենց ինքն էր: Հանկարծ տեսնում էր իրեն այգու անկյունում, բաժակը ձեռքին իր այսօրվա փայլուն կենացը կրկնելիս: Իրոք ի սրտե էին այդ մաղթանքները. նա երբեք այդքան սիրտ ու հոգի չէր մաշել ցանկության վրա:*

*Ծիանկոն ուներ տեսանելի անհոգ ապագա, հիանալի շրջապատ ու էլի շատ բաներ, որ կցանկանայիր որդուդ: Բայց հիմա ոչինչ չկար. մի ընկեր էր պետք ու հե՛նց նա՝ սրտում պահածը, որ հիմա իր առաջին ամուսնական գիշերն է անցկացնում:*

*Ինչ խոստումով էլ սանձես միտքդ, ինչքան էլ պարզ լինի, որ ուշացել ես, միևնույն է, հավատում ես: Հավատում ես, որ վերջին պահին ինչ-որ հրաշքով կփոխվի ամեն ինչ, ու միայն այդ վերջին վայրկյանը շրջելուց հետո ես զգում կորստիդ ողջ ուժը: Դա անհաղթահարելի է: Ինչքան էլ ինքնասիրությունդ ու հպարտությունդ համառեն, մեկ է, խոստովանելու ես ինքդ քեզ, որ գետնին ես, ինչքան էլ սառեցնես դատողությունդ, մեկ է, երազելու ես: Ընկնելու ես այն անդունդը, որտեղ կորցնում ես քեզ, նպատակներդ, երազներդ, որտեղից վերադառնում ես՝ կամ կորցրած ամեն*

*ինչ, ու պարզապես շարունակում գոյատևումդ, կամ առավել ուժեղ՝ սիրտդ ու հոգիդ փակած պողպատե հաստ դռների ետևում: Դա մի վիրավորված կիսաերջանիկ վիճակ է: Դռներից ներս շատ քչերն են, մնացածը դրսում են ու կարևոր չեն: Նրանք կազմում են շրջակա միջավայրի մի մասը, ու եթե օգուտ չես կարողանում տալ, ապա պետք է աշխատես գոնե չվնասել նրանց:*

*Ծիանկոն գիշերվա ժամը երեքն անց կեսին կարողացավ դուրս գալ այգուց և կամ մոռանալով, կամ ոչ, որ մեքենայով է՝ սկսեց քայլել դեպի տուն: Սիրտն ու հոգին քարացել էին, իսկ աշխարհը հիմարի պես պտտվում էր, ու ծառերը ծաղկում էին՝ չհասկանալով, որ գարունն ամենևին էլ տեղին չէ, ու, ո՞վ գիտե, գուցե հենց ինքն ամենևին տեղին չէր: Կարծես սառույցից քանդակված մի փխրուն դղյակ լիներ նրա սրտում, որ կառուցել էր շունչը պահած և պաշտպանել ամեն ինչից: Ու հիմա քանդվում էր այդ դղյակը շխկշխկալով, իր յուրաքանչյուր ծանր քայլի հետ, և ինչքան ինքը հեռվանում էր նրա տնից, այնքան ցավոտ էին փշրվում նուրբ քանդակները դատարկ դղյակի պատերից: Շուտով այդ տեսարանին խառնվելու էին նաև տղամարդու զուսպ արցունքները, որոնք և ավարտուն տեսք էին հաղորդելու գիտակցաբար անդունդը գլորվողին:*

*Երեքն անց հիսուներեքին նա հասավ քաղաքի ամենագեղեցիկ կամուրջներից մեկին, որից քիչ հեռու էլ իր տունն էր: Չկարծեք, թե նրա մտքում ինքնասպանության արծիվ էր թևածում: Նա այդքան թույլ չէր, պարզապես քայլում էր տուն...*

***

Նա ծանր հևում էր, ու սիրտն այնպիսի անբնական աղմուկով էր թփրտում, որ կարծես պատրաստ էր պատռել կուրծքն ու դուրս թռչել իրեն այդքան երկար խոցոտող բանականության ու հոգու մագիլներից: Ճակատը պատվել էր սառը քրտինքով, վիրավորանքն ու անզորությունը խցանվել էին կոկորդում, ինչից նա շնչահեղձ էր լինում: Աչքերը չոված էին, և թվում էր՝ պատրաստ էին պայթել արցունքների ճնշման տակ. չէր արտասվում, չնայած այս պահին նրան դա ամենից շատ էր հարկավոր: Գուցե արցունքներին ի վերջո կտրվեր ազատություն, եթե Նեկրիստոն հանկարծ չնկատեր աղբակույտը, որի մոտ այնքան շտապում էր, և որի մասին, սակայն, մոռացել էր՝ տարված անթիվ իրարամերժ ենթադրություններով ու հետևություններով: Սակայն աղբակույտը նկատելով՝ նա անհաբեկված կանգ առավ. քարացել էր տեղում ու սուզվել մտորումների անդունդը: Ինչպե՞ս ներկայանալ Նաստալդին, ինչպե՞ս հերթական անգամ նրանից թաքցնել հիմա արդեն

անտանելի դարձած կսկիծը: Ի վերջո իր վրա մի գերբնական ուժ գործադրելով՝ նա հագավ իր սովորական հագիվ նշմարելի աննոգ կիսաժպիտը, որն այս անգամ, չգիտես ինչու, մի քիչ անբնականորեն այլայլված ստացվեց, և քայլերը մի կերպ փոխելով՝ ուղղվեց դեպի ընկերոջ բնակարանը՝ հուսալով գոնե մի քիչ ցրվել ու սթափվել հերթական անկեղծ ու անմիջական զրույցից...

*Կյանք Ծաղրածու*

*Վախենալու դեմք ունես, ծաղրածու՛,*
*Դու չես կարող ինձ ուրախացնել,*
*Բայց միևնույն է, մնում ես դու ծաղրածու,*
*Զուր ես փորձում ինձ վախեցնել...*

—Դուրդ եկա՞վ:

—Քո բոլոր գրածներն են ինձ դուր գալիս, ծերու՛կ: Ճիշտ ես՝ կյանքն ինձ դժվարանում է ուրախացնել, իսկ վախեցնել... չգիտեմ: Չգիտեմ՝ ինչը կարող է քեզ վախեցնել: Ինչպիսի՞ն է տուն չունեցող, ամեն ինչ կորցրած, կիսաքաղցած թափառականի պատկերացումը վախի մասին, ի՞նչ ունես կորցնելու: Մնում է մահը, իսկ մահից, հաստատ գիտեմ, որ չես վախենում:

—Լսի՛ր, Նեկրի՛ստո, նախ, եթե խոսում ես կյանքի ահալի կողմերից, ապա մահը մի՛ խառնիր դրանց: Մահն սկսվում է այնտեղ, որտեղ կյանք արդեն չկա: Իսկ մահից, ճիշտ ես, իրոք վախենալ պետք չէ, քանի որ նախ չգիտես՝ այն վախենալու է, թե ոչ, և երկրորդ, եթե նույնիսկ շատ վախենալու է, ապա միևնույն է, մի օր էլ նա է վերջանալու: Ու մի բան էլ. ես իմ մահից չեմ վախենում, դու քո մահից չես վախենում, բայց ես քո մահից սարսափում եմ... Այսինքն պետք է ասել՝ ես իմ մահից չեմ վախենում: Դու չես էլ հասկանա, թե ես ինչ ունեմ կորցնելու, ու լավ է, որ չես հասկանա, ես ուրախ կլինեմ: Դու, ավելի լավ է, այս մեկը լսիր: Երեկ եմ գրել, այն երրորդ կիսադատարկ աղբամանից երեկ իր նման մի կիսադատարկ գինու շիշ պեղեցի ու՝

***Երբեմն...***

*Երբեմն թվում է, թե ուր որ է կկործանվեմ,*
*Երևի երբեմն ես կործանվում եմ...*
*Երբեմն թվում է,*
*Թե ես ընդամենը ապագան անցյալ դարձնող մեքենա եմ,*

*Երևի երբեմն կյանքը հենց ինքն այդ մեքենան է...*
*Երբեմն թվում է՝ ասելիք չունեմ,*
*Երևի տողերն այս հենց այդ են ասում...*
*Երբեմն թվում է, թե խիղճս մեռել է,*
*Շուտ պիտի սատկեր այդ երբեմնի խիղճը...*
*Գիտեմ՝ երբեմն ուրախանում եմ,*
*Այն վերջին անգամ երբեմնից առաջ...*
*Երբեմն թվում է, թե իրոք սիրում են,*
*Երևի երբեմն լինում է այդպես...*

Վերջին տողերից հետո Նեկրիստոյի հորինած կիսաժպիտն ու խորամանկ աշխուժությունը հօդս ցնդեցին։ Այդ փոքրիկ տողերը մի քանի վայրկյանում հիմնովին փլուզեցին նրա կերտած կերպարը։ Ի վերջո գլուխ բարձրացրին այդքան խնամքով թաքցված զգացմունքներն ու ապրումները և հոգու ամենանվիրական անդունդներից վեր հառնելով՝ իրենց ողջ անկեղծությամբ պատկերվեցին խորտակված աչքերում։ Նա մի տեսակ թևաթափ եղածի նման մոտեցավ Նաստալդին, վերցրեց նրա ձեռքի քրքրված տետրը, նստեց նրա կողքին ու խոսեց.

—Մի աղջիկ կա...

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ԺՊՏԱՑՈՂ ԱՉՔԵՐ

*Երբեմն թվում է, թե իրոք սիրում ես,*
*Երևի երբեմն լինում է այդպես...*

Հուլիս ամիսն էր, սովորական մի շոգ օր: Քննություն էր: Քննաշրջանն արդեն մոտենում էր իր ավարտին: Նստած էր նա, ինչպես միշտ, աջ շարքում, բայց այս անգամ ոչ թե հինգերորդ, այլ յոթերորդ նստարանին, որովհետև նրան հաջողություն բերող ավանդական տեղը զբաղեցրել էր մի գեր անծանոթ, ում նա երբևէ չէր տեսել համալսարանում: Իսկ ինքն ուշացել էր, որովհետև առավոտյան դարձյալ վեճի էր բռնվել հոր հետ պատասխանատու քննության նախօրյակին կեսգիշերից շատ ավելի ուշ տուն վերադառնալու համար: Սակայն նրա տրամադրությունը սովորականից ավելի լավ էր: Կողքից նայողի համար զարմանալի էր, թե ինչու: Հավանաբար այս անգամ հորը տանուլ չէր տվել բանավեճը: Տեղավորվելուց հետո մի քանի րոպե անց միայն նա սթափվեց՝ նկատելով մի քանի անծանոթների ևս կողքի շարքում: Զարմանքը փարատվեց, երբ դասախոսներից մեկը հայտնեց, թե քննությանը պետք է մասնակցեն նաև զուգահեռ հոսքի ուսանողները, իսկ թե ինչ պատճառով, դրան նա ուշադրություն անգամ չդարձրեց, որովհետև արդեն տարված էր անծանոթուհիներից մեկով: Նա քարացել էր, կամ ավելի ճիշտ՝ արձանացել: Գունատ, քնաթաթախ աչքերը հառել էր նրա վրա, ով մտքում կարծես կրկնում էր սովորածը՝ նայելով պատուհանից դուրս: Ամբողջական էր աղջկա կերպարը. անտարբեր, մտածող հայացք, նայող, բայց ոչինչ չտեսնող աչքեր, որոնց մեջ աներևույթ մի ծվեն ժպիտ կար նույնիսկ այդ պահին: Հասարակ մի աղջիկ, հասարակ կազմվածք, հասարակ դեմք: Ժպտացող աչքեր... Հասարակ հագնվածք, հասարակ սանրվածք: Ժպտացող աչքեր... Վարդագույն, նուրբ շուրթեր, մտախոհ, արտահայտիչ հոնքեր, հասարակ, բայց ժպտացող աչքեր...

Մոռացության էր մատնվել նա, կարծես կորցրել էր իրեն, մոռացել էր, թե ինչի համար է եկել: Մի ակնթարթում հասցրեց երազել մի ամբողջ հավերժություն, չէ՞ որ նա հանճարեղ երազող էր: Երազանքն ավարտվեց, երբ գրավիչ անծանոթուհու ընկերուհին ինչ-որ բան շշնջաց նրա ականջին, իսկ նա գլուխը կախեց և ժպտաց: Ժպտացող շուրթեր, ժպտացող աչքեր... Մի վայրկյանում նրա գլխում ծնվեցին և մեռան հազարավոր մտքեր. այդ թվում

ծնվեց նաև նրա ամենանվիրական երազանքներից մեկը: Այդ ժպիտը ամենաշքեղ բանն էր, որ տեսել էին իր աչքերը: Չկարողացավ զսպել ծիծաղը, բայց և արագորեն սթափվեց, երբ կողքի նստածները տարօրինակ հայացքները գցեցին նրա վրա: Պարզապես հիշել էր փոքր ժամանակվա ցանկությունը, թե ուզում էր կույր ծնված լինել: Ախր ինչպե՞ս կտեսներ նա այդ հրաշքը, եթե կույր լիներ: Սակայն տպավորությունն այնպիսին էր, թե կույրն անգամ չէր կարող չնկատել այդ ժպիտը: Փորձեց ձևացնել, թե ոչինչ չի եղել. զարմանալիորեն այս անգամ կարծես թե ստացվում էր: Գլուխը կախեց իր հարցատոմսի վրա և սկսեց կարդալ առաջին հարցը՝ չնայելով դեսուդեն:

«Ե՞րբ էի ես այսչափ գրավվել, ե՞րբ էր վերջին անգամ ինչ-որ մեկը կլանել իմ ամբողջ ուշադրությունը»: Վերցրեց գրիչը, փորձեց պատասխանել. «Երբեք»: Քննություն էր, այո́ , բայց կյանքի քննություն: Քննություն, որին պատրաստվել է պետք: Բայց չէ՞ որ այդ առարկան չի դասավանդում ոչ ոք: Միայն ինքնուսը կարող է հանպատրաստից հանձնել այդպիսի քննություն, իսկ դա նրա մոտ առաջին անգամ էր: Փորձ չուներ: Իսկ հայրը դեռ առիթ չէր ունեցել այս թեմայի շուրջ զրուցելու որդու հետ: Սարսափեց, երբ սկսեց կարդալ իրական հարցերը: Ոտքերը դողացին, խուճապի մատնվեց: Գլուխն առավ ափերի մեջ, շնչառությունն արագացավ: Հիշել էր, որ հայրը սպառնացել էր հորեղբոր մոտ ուղարկել այս քննությունը ևս ձախողելու դեպքում: Իսկ հորեղբայրը արտասահմանում էր: Խնդրեց դուրս գալ, չթույլատրեցին: Նա պատրաստ էր գոռալ, ճչալ, բայց մի կերպ կարողանում էր խեղդել այդ ցանկությունը: Անհանգիստ էր, տեղը չէր գտնում: Փնտրում էր մեկին, ով կարող էր օգնել իրեն, շրջվեց հետ, անօգուտ էր: Ոչ ոք չկար:

—Անհանգիստ ես, ինչ-որ բա՞ն է պատահել,– դիմեց նրան հսկող դասախոսներից մեկը:

Շիկնեց նա ու չկարողացավ հարցին պատասխանել: Բայց շիկնեց ավելի շուտ նրա համար, որ բոլորը շրջվեցին դեպի իրեն, այդ թվում և նա:

—Պատասխանի́ ր, տղա́ ս, վա՞տ ես զգում քեզ:

Նրա լռությունը ծիծաղ առաջացրեց լսարանում:

—Ո՛չ,– լսվեց նրա բարձր ձայնը լսարանով մեկ, և ինքն էլ զարմացավ, թե ինչու այդպես բարձր ստացվեց:– Ես երբեք ինձ ավելի լավ չեմ զգացել:– Նրան թվաց, թե վերջին կապակցությունն արտահայտեց մտքում, բայց՝ ոչ:

Ծիծաղն ավելի սաստկացավ:

Դասախոսը մոտեցավ նրան, ձեռքը դրեց բոցավառվող ճակատին:

—Դու ջերմում ես, տղա́ ս: Ես քեզ թույլ եմ տալիս վերադառնալ տուն, իսկ քննությունը կհանձնես վերահանձնման օրը:

Փրկված էր: Խոր հոգոց հանեց, երբ դուրս եկավ լսարանից: Բայց, միևնույն է, երկար ժամանակ չէր կարողանում հասկանալ, թե ով փրկեց իրեն՝ Աստվա՞ծ, բարեսիրտ դասախո՞սը, երեկվա զբոսա՞նքն անձրևի տակ, թե՞…

Դուրս եկավ բակ և թաքնվեց այգու՝ իր սիրած ծառի ստվերում, որ նկատելի չլինի:

Սպասում էր նա իր… Չէր կարողանում հարմար բառ գտնել: Սպասում էր նրան, բայց ի՞նչը չէր սիրում՝ սպասելը:

Ծխում էր ագահորեն՝ բաց չթողնելով անգամ մի փոքրիկ ծխի քուլա, փորձելով վերադասավորել իր մտքերը:

Ժամը մի ամբողջ հավերժություն թվաց նրան: Եվ ահա, երբ տուփից հանեց վերջին գլանակը, մուտքի մոտ տեսավ ծանոթ պատկերը: Ծխախոտն ընկավ ձեռքից: Կանգ առան նրա բոլոր շարժումները: Կարծես սիրտն անգամ չէր աշխատում: Պահել էր շունչը, նայում էր նրան՝ մոռացած ասես, թե ինչի համար էր սպասել: Մի՞թե միայն նորից տեսնելու: Դա էլ, սակայն, բավարար էր: Երերուն քայլերով գնում էր նրա ուղղությամբ, իսկ նա կանգնած էր ընկերուհիների հետ և թեժ զրույցի էր բռնվել: Թեման, բնականաբար, քննությունն էր: Նրանք արդեն այնքան մոտ էին, որ լսվում էին նրանց ձայները: Կանգնեց տեղում, քարացավ՝ հուսալով իմանալ գոնե անունը:

—Ի՞նչ կստանաս, ինչպես միշտ՝ գերազա՞նց,— հարցնում էր ընկերուհին:

—Երևի այո,— պատասխանեց նա՝ ուրախ ժպտալով:

Սպասեց, մինչև ցրվեցին, ուզում էր հետևել, երբ հայրը զանգահարեց՝ հարցնելու համար, թե ինչպես է հանձնել քննությունը:

Պատմեց ողջ եղելությունը, բայց հայրը չհավատաց և բարկացած հրամայեց շտապ վերադառնալ տուն՝ հիշեցնելով երեկվա խոսքերը չարաբաստիկ ուղևորության մասին:

Առաջին անգամ տղան տեղի տվեց. բացատրությունը պարզ էր. արդեն կորցնելու բան ուներ: Որոշեց վերադառնալ տուն:

Անսովոր էր: Բայց ուրախ: Ամեն դեպքում հետաքրքիր էր զգում իրեն: Հուզված էր, շփոթված: Չէր կարողանում համակերպվել այդ խենթ մտքի հետ: Մտածում էր, բայց ավելի շատ՝ փորձելու համար հասկանալ, թե արդյոք պե՞տք է ուրախանալ: Եթե նույնիսկ պետք էլ չէր, նա անկարող էր զսպել սրտին, որն աշխույժ թռվռում էր, ասես նոր էր զգացել, որ կենդանի մարդու ներսում է և ոչ թե մեռած: Իմաստավորվում էր կյանքը. այնպիսի զգացողություն էր, թե իբր այսքան տարի զուր էր ապրել: Քայլում էր անսովոր արագությամբ՝ շտապելով կարծես ինչ-որ մեկին պատմելու եղելությունը: Բայց ու՞մ: Դրա մասին նա չէր մտածում, նրա միտքը զբաղված էր շատ ավելի

կարևոր հարցերով: Զգաց, թե ինչպես հասավ տուն: Թակեց դուռը սրտանց՝ մոռանալով, որ վեճ է սպասվում դարձյալ: Եվ ահա նրա առջև կանգնեց հոր սիրալիր կերպարանքը, ով աչքերով տուն էր հրավիրում, ինչպես երկար սպասված հյուրի: Զարմացավ կրկին: Զարմանալի էր, թե ինչը կարող էր այդպես զարմացնել ամբողջ կյանքը զարմանքով ապրած երիտասարդին: Գրկեց հորը՝ դրանով խիստ զարմացնելով նաև նրան: Վերջինս ամուր գրկեց միակ զավակին, ինչպես ամեն անգամ, երբ հաշտվում էին: Նստեցին և մի բաժակ սուրճի շուրջ տղան կարողացավ համոզել հանդարտված հորը, որ իրեն իսկապես թույլ էին տվել վերահանձնել: Հայրը լրջորեն խնդրեց պատրաստվել այս անգամ գոնե (չէ՞ որ վերջին քննությունն էր)՝ նրա փոխարեն ափսոսալով չարչարանքը:

Մի քանի ժամ անցավ, նա փակվել էր սենյակում և ուրիշ ի՞նչ կարող էր անել, եթե ոչ երազել: Ո՛չ, կարող էր... Հանկարծ վեր թռավ տեղից, վազեց գրադարակի մոտ, վերցրեց դասագիրքը և սկսեց ագահորեն կարդալ՝ խորանալով էության մեջ՝ մոռանալով ամեն ինչ, այդ թվում և նրան: Արժե հանուն մեկի սիրո մոռանալ նրան... համենայն դեպս մի քանի ժամով: Անձնուրաց սովորում էր, հակառակ արդյունք էր ունեցել այս ամենը նրա վրա: Վերելքի րոպեներ էին նրա համար: Ամբողջ կյանքում վայրէջքներ ունեցողը կարծես թևեր էր ստացել: Ո՛չ, թևերը չէին պատճառը, պարզապես աշխարհն էր շրջվել:

Կյանքում դեռևս առիթ չէր ունեցել այդքան կարդալու և գրելու: Համակված էր վեհ գաղափարով, իրոք հավատում էր, որ կլուսավորվի իր խավար կյանքը: Մյուս կողմից էլ կարծես զբաղմունք էր գտել՝ ժամերը սպանելու, մինչդեռ մինչ այս նա ամեն կերպ փորձում էր խնայել ժամանակը, ինչպես բոլոր խելացի մարդիկ, միայն այն փոքրիկ ուղղումով, որ չգիտեր՝ ինչի համար: Այժմ բացարձակապես անտարբեր էր կորցրած ժամանակի համար. առհասարակ զարմանալի արարած է մարդը, նա տեղը չի գտնում, երբ նրանից խլում են իր ունեցվածքը, և կողքից է նայում այն փաստին, որ անվերադարձ գնում են ժամերը, որոնք կարճ կյանքում խիստ սահմանափակ են: Բայց ինչքան էլ որ ջանում էր, միևնույն է, ժամանակը կարծես կանգ էր առել:

Բայց մութն, այնուամենայնիվ, ընկավ: Դադարեց կարդալ այն ժամանակ միայն, երբ զգաց, որ աչքերը ցավում են: Պատրաստվեց քնելու՝ արդեն հասկանալով, որ դա էլ հեշտ չի լինելու: Պառկած էր՝ հայացքը հառած առաստաղին: Բայց վերջինս ոչ մի կերպ չէր կարող խոչընդոտել նրա՝ դեռ շարունակվող թռիչքին: Աննհանգստությունից թե հուզմունքից, թե պարզապես ուրախությունից չէր կարողանում անջատվել, բայց շատ էր ուզում քնել, որպեսզի թռչեին այն ժամերը, որոնք բաժանում էին իրեն իր երազանքների

թագուհուց, չէ՞ որ հասցրել էր կարոտել դեռ անծանոթ աղջկա՝ արդեն հարազատ դարձած դեմքի արտահայտությունը: Մտածում էր մերթ նրա, մերթ ապագայի մասին, իսկ թե ինչ դեր կարող էր խաղալ նա իր ապագա կյանքում, չէր ուզում մտածել: Երբեք չէր նախատեսել այս տարբերակը: Փաստորեն ինչ-որ բան իրոք բաց էր թողել: Սիրում էր մտածել, բայց հիմա չէր կարողանում ինքն իր հետ ընդհանուր հայտարարի գալ: Կորցրել էր սառը դատելու բացառիկ ունակությունը, որն այնքան թանկ էր իր համար. դա այն եզակի բաների թվում էր, որ քիչ թե շատ հաջողվում էր նրան:

Որքան լավ կլիներ, եթե այս անգամ հասկանային իրեն. հիմա ավելի, քան երբևէ ուներ ինչ-որ մեկի կարիքը, ով կարող էր պարզապես մխիթարել և բուժել հույսերը, որոնք վաղուց արդեն հոգեվարքի մեջ էին: Շատ էր ուզում գոնե երազում տեսնել նրան, ախր խեղդում էր կարոտը: Այդտեղից նա եզրակացություն էր արել, չէ՞ որ կարոտել կարելի է միայն նրան, ում... Ամեն դեպքում ենթադրությունը պետք է ստուգվեր, այլապես շատ բան կարող էր կորցնել... թեև ոչինչ էլ չուներ:

Առավոտյան վաղ արթնացավ, չնայած որ հանգստյան օր էր: Սովորականի պես հագնվեց, լվացվեց, ուզում էր գնալ խոհանոց՝ սուրճ պատրաստելու, միջանցքում տեսավ հորը, սովորականի նման բարևեց:

—Ապրե՛ս, տղա՛ս, որ հասկացար ինձ, միայն թե հետո հավաքի՛ր իրերդ,– ժպտալով ասաց հայրը բարևի փոխարեն:

Նա քնաթաթախ գլխով արեց, թեև չհասկացավ, թե ինչի մասին է խոսքը, բայց և չհարցրեց հորը, թե ինչ նկատի ուներ: Ցրված էր մի փոքր, ինչպես միշտ, երբ նոր էր արթնանում: Երբ սուրճը ձեռքին մտավ հյուրասենյակ, նոր գլխի ընկավ: Սկզբում ինքն էլ էր զարմացած, կարծես ինքը չէր այդ ամենի հեղինակը: Ամենուրեք թափված էին տետրեր, գրքեր, սևագիր թղթեր: Տգեղ էր, սակայն, այնուամենայնիվ, աշխատանքային տրամադրող մթնոլորտ էր ստեղծվել: Սուրճից հետո ջանասիրաբար հավաքեց թափթփված իրերը, փակեց գրքերը, բայց էջանիշներ դնելով, և դրեց գրասեղանի անկյունում: Մտադիր էր շարունակելու, բայց ոչ հիմա: Պառկեց նեղլիկ անկողնու վրա ու սկսեց կծել շրթունքները: Երկար մնաց պառկած, մինչև որ հասավ հույսերի հանգրվանին: Այդպես հաճախ էր լինում. մտածում էր, մինչև որ այլևս ոչ մի ելք չգտնելով՝ հույսը դնում էր ամենազոր երկնավորի վրա ու փորձում այդ հույսով ամրանալ, գոտեպնդվել և շարունակել պայքարը անողոք և աներևույթ թշնամու դեմ:

Այդ և հաջորդ օրերը բուռն էին նրա համար և՛ ապրումների, և՛ աշխատանքի առումով, չնայած որ հանգստյան օրեր էին:

Անցավ մի շաբաթ, և եկավ երկուշաբթին, որը սովորական չէր նրա համար: Պետք է նորից գնար համալսարան, գնար վերաքննության: Բայց նա վախենալու բան չուներ, այս անգամ առավել, քան երբևէ վստահ էր սեփական ուժերին: Քննությունը հաջող հանձնելուց հետո նա ուրախ-ուրախ անցնում էր միջանցքով և հանկարծ քարացավ: Աչքը ընկել էր ցուցակներին: Ենթադրությունը առաջին մասով հաստատվեց: Նա, անփորձ լինելով հանդերձ, մշակել էր երկու փորձարկում՝ համոզվելու համար՝ արդյո՞ք դա այն է, ինչը մարդիկ սեր են անվանել, թե՞ հերթական պատանեկան անցողիկ հրապուրանք: Իսկ առաջին փորձի էությունն այն էր, թե կհիշի արդյոք նրան առաջին անգամ մոռանալուց հետո: Արդյունքը դրական էր. նա վերհիշեց աղջկան մեկշաբաթյա մոռացումից հետո. չէ՞ որ այս ընթացքում մի պահ անգամ չէր մտածել նրա մասին՝ դասագրքերով տարված:

Վերհիշեց, այո՛ , բայց ոչ ինքն իրեն, այլ հուշումով, իսկ հուշեցին նրան ցուցակները, հուշեց նրա խոսակցությունն ընկերուհու հետ համալսարանի բակում: Եվ նրա գլխով մի միտք անցավ: Նա մեծ խանդավառությամբ մոտեցավ ցուցակներին և երկար փնտրտուքից հետո միայն գտավ այն երեք հոգուն, որոնք իրեն հետաքրքրող կուրսից էին և վերջին քննությունից գերազանց գնահատական էին ստացել: Կարդաց նրանց անունները. երկուսը տղաներ էին, իսկ երրորդի անունն էր Կամելիա: Երջանկությունից փայլեցին նրա խամրած աչքերը. դա նրա առաջին փոքրիկ հաղթանակն էր:

***

Կանգնած էր նա իր տեղում՝ ծառի ստվերի տակ: Սպասում էր: Չէր համբերում: Արդեն թքած ուներ ամեն ինչի վրա երեկվանից հետո, երբ հայրը նրան տուն չէր թողել: Դրսում էր գիշերն անցկացրել ու չխնամված տեսք ուներ, մինչդեռ մինչև այդ ամեն անգամ, երբ պատրաստվում էր մոտենալ նրան և փորձել զրույցի բռնվել հետը, հագնում էր իր ունեցած ամենաշքեղ հագուստը, որը, դժբախտաբար, նույնպես հասարակ էր, և ամեն ինչ անում էր՝ գեղեցիկ տեսք ունենալու համար: Իսկ այս անգամ ավանդույթը խախտել էր: Մեծ հույս ուներ, որ կխախտվի նաև ամեն անգամ վերջին պահին համարձակության անբավարարության պատճառով այդ մտքից հրաժարվելու ավանդույթը: Այս անգամ սիրտը մի քիչ այլ կերպ էր բաբախում. դա նկատելի էր անգամ նրա քնաթաթախ աչքերից, որ չէին համապատասխանում զարմանալիորեն անտարբեր դեմքի արտահայտությանը: Ապշած նայում էր մասնաշենքի մուտքին, և հուզմունքն աճելու փուլում էր, դեռ չէր հասել իր առավելագույնին, քանի որ դեռ մի քանի րոպե կար մինչև դասի ավարտվելը:

Անսպասելիորեն դռների արանքում հայտնվեց ծանոթ կերպարանքը: Նա էր… Դանդաղ էր քայլում, գլուխը կախ: Նա հանկարծ այլայլվեց… երբ նկատեց, որ սիրելիի աչքերը թաց էին: Դող անցավ նրա մարմնով, և առանց երկար մտածելու, ինչը որ հատուկ չէր իրեն, մոտեցավ և կանգնեց նրա առջևում՝ իր դեռ չոր, բայց միշտ տխուր աչքերը սևեռելով նրա՝ այդ պահին թաց, բայց միշտ ժպտացող աչքերին: Աղջիկը մի պահ բարձրացրեց հայացքը, հետո նորից կախեց գլուխը՝ փորձելով շրջանցել անթարթ աչքերով իրեն նայող տղային: Բայց նա կոպիտ վճռականությամբ բռնեց նրա նուրբ ձեռքը՝ վստահ հարցնելով.

—Ինչո՞ւ ես արտասվում, Կամե՛լիա:

Անզուսպ ժպիտ խաղաց աղջկա շուրթերին: Կամացուկ ձայնով ասաց՝ մի կերպ զսպելով իրեն.

—Դուք երևի ինձ ինչ-որ մեկի հետ եք շփոթում:

—Ո՛չ, դու ինձ չես ճանաչում, բայց իմ ամենանվիրական երազանքն էր ծանոթանալ քեզ հետ: Իսկ հիմա իմ առաջին երազանքն է իմանալ վիշտդ և կարողանալ օգնել քեզ:

—Ես Ձեզ չեմ հասկանում:

—Լսի՛ր, Կամե՛լիա, խնդրում եմ՝ պետք չէ ձևացնել, դու շատ լավ ես հասկանում իմ ուզածը:

—Դուք հաստատ շփոթում եք, ախր իմ անունը Կամելիա չէ, Ձեզ մեկ ուրիշն է պետք:

—Ո՛չ, ինձ միայն դու ես պետք,— արագորեն արտասանեց տղան՝ շփոթմունքից կարմրելով:

Մի՞թե ինչ-որ բան սխալ էր տեսել: Ծանր լռության մի քանի անհարմար վայրկյաններից հետո նա նորից սկսեց խոսել՝ արդեն կմկմալով.

—Ախր դու էիր միակ աղջիկը ձեր կուրսից, որ վերջին քննությանը գերազանց էր ստացել:

Հիմա էլ աղջիկը գլուխը կախեց՝ շփոթմունքից շիկնելով, ինչպես կամաչեր ցանկացած գերազանցիկ, երբ նրան հիշեցնեին միակ չորսը, որ նա ստացել է իր կյանքում:

—Ո՛չ, դա իմ ընկերուհին էր, ես չորս էի ստացել,— ասաց նա՝ նորից գլուխը խոնարհելով:

Երկկողմանի անհեթեթ իրավիճակ էր ստեղծվել՝ անսպասելի, չնախատեսված: Բայց նրանց միավորել էր շփոթմունքը:

Լռությունը ցրեց տղան՝ հարցնելով.

—Այդ դեպքում կասե՞ս քո անունը:

—Էլլա,– քաղցր ձայնով հնչեց մի բառ, որին վիճակված էր դեռ երկար մնալ Նեկրիստոյի սրտում:

Այս երկար սպասված ծանոթությունը նրա երկրորդ՝ արդեն բավական ծանրակշիռ հաղթանակն էր, որին հաջորդեց մի փոքրիկ պարտություն. նա ոչ մի կերպ չկարողացավ իմանալ, թե ինչու էր սիրելին արտասվում… կամ որ նույնն է, ինչու էր նա չորս ստացել:

Մի տեսակ տարօրինակ էին այն հարաբերությունները, որ գոյացան կիսամանկական երազանքների ու մանկական կիսատության պատրանքների հողի վրա: Դրանք ստեղծվեցին անխուսափելի անսպասելիությամբ, չնայած Նեկրիստոն ողջ կյանքում ենթագիտակցորեն սպասել էր դրանց, գուցե, սակայն, ոչ այդ տեսքով:

* * *

Պարզապես ընկերներ էին… Կամ գուցե իսկապես ընկերներ էին… Կամ երևի Էլլան էր այդպես կարծում, կամ գուցե նա պարզապես չգիտեր, թե ինչ կարծեր: Այն զավեշտալի ծանոթությունից երկար ժամանակ չէր անցել, սակայն նրանց միջև գոյացած աներևույթ մտերմությունը հասցրել էր մի տեսակ շղթայել նրանց սրտերը, չնայած որ պարզապես ընկերներ էին, կամ գուցե Նեկրիստոն այլ կերպ էր մտածում…

Ամեն օր՝ դասերի ավարտից հետո, նրանք ինքնաբերաբար հանդիպում էին ենթագիտակցորեն նախապես պայմանավորված վայրում ու գրոսնում մոտակա պուրակում: Զարմանալիորեն սահուն էին ընթանում նրանց զրույցները: Նույնիսկ առօրյա ամենասովորական ու տաղտկալի թեմաների մասին նրանք խոսում էին մի այնպիսի ոգևորությամբ ու հետաքրքրությամբ, որ անգամ ինքը՝ ժամանակն էր խռովում նրանցից՝ արժանանալով նրանց ստորացուցիչ անտարբերությանը: Այսպես անտեսված ու վիրավորված՝ ժամանակն աննկատ անցնում էր՝ թաղելով քաղաքը գիշերային խավարի մեջ: Իսկ վերջինիս չնկատել նրանք չէին կարող, հատկապես Էլլան, որ սովոր էր տուն գնալ դասերից անմիջապես հետո: Նեկրիստոն նրա համար չափազանց հետաքրքիր մի զրուցակից էր, ում հետ կարելի էր անվերջ խոսել ցանկացած թեմայով, որը Էլլայի մնացած ծանոթների նման չէր և իր յուրօրինակ ու մի քիչ էլ ցնորամիտ մտքերով մի տեսակ տարբերվում էր քաղաքի գորշության մեջ: Ա՜խ, որքան կուզեր Էլլան նրա նման շատ ընկերներ ունենալ…

Իսկ Նեկրիստոն իսկապես երջանիկ էր, սակայն քանի որ այդ քմահաճ հոգեվիճակն այցելում էր նրան առաջին անգամ, նա նույնիսկ չէր հասկանում, որ երջանիկ է: Ինչ-որ տարօրինակ հուզում էր զգում կրծքում, սիրտն այնքան

էր թեթևացել, որ կարծես պատրաստ էր կտրել իր տիրոջ ոտքերը գետնից ու ամեն մի սիրառատ բաբախումով բարձրացնել նրան ավելի ու ավելի բարձր, գուցե մինչև երկինք: Առաջին անգամ սեր գտնել, այն էլ այդ տարիքում, դա իրոք մի բացառիկ երևույթ էր, որ տեղի ունեցավ կյանքի իմաստը կորցնել ու վաղաժամ ծերանալ հասցրած մի պատանու համար: Մտքերն ազատ սավառնում էին նրա գլխում՝ սլանալով դեպի իր երազների դղյակը: Իսկ դղյակում արքան հենց ինքն էր՝ Նեկրիստոն՝ իր առաջին հաղթանակի թագը գլխին ու լավագույն հույսերից հյուսված ծիրանին ուսերին: Իսկ ինչո՞ւ ոչ. այդքան երկար ուրիշ դղյակներում ստրուկ լինելուց հետո նա պարզապես արժանի էր գոնե մի քանի ժամով անհոգ զբոսնել սիրուց կերտված շքեղ դահլիճներում ու հիանալ վստահության հողի վրա կանգնեցված հոյակերտ սյուներով: Այնքան կատարյալ էր այդ դղյակը, այնքան բացարձակ էր արքայի իշխանությունը, որ այդ ամենը կորցնելու մտքից անգամ Նեկրիստոյի մարմինը սարսուռ էր պատում: Սակայն, ինչպես գիտենք, ճիվաղ կորուստը խլում է հենց այն ամենը, ինչի կորստից մենք ամենաշատն ենք սարսափում: Նեկրիստոյի առաջին երջանկությունը մի քանի ամիս տևեց միայն ու ավարտվեց մի սովորական հանդիպման սովորական զրույցի ժամանակ, երբ Էլլան ի վերջո համաձայնեց պատմել իրենց առաջին հանդիպման օրվա իր տխրության պատճառը.

—Նեկրի՛ստո, ես քեզ իմ լավագույն ընկերն եմ համարում, ու դու առաջին մարդն ես, որին կխոստովանեմ այն, ինչ նույնիսկ ինքս ինձ մինչև վերջ չեմ խոստովանել: Ինձ թվում է... կարծես... մի խոսքով, կարծում եմ, որ սիրահարվել եմ... Չեմ կարծում, որ դու նրան ճանաչում ես,– մի փոքր մտածելուց հետո ավելացրեց աղջիկը,– կարծեմ նա մեզնից մի քիչ ավելի մեծ է: Իրականում ես էլ նրան չեմ ճանաչում, պարզապես ամեն անգամ նրան տեսնելիս մի տեսակ հոգիս մեջս կծկվում է ու...

Նեկրիստոն լուռ լսում էր այն երկրաշարժին, որ մի քանի վայրկյանում հիմնովի փլուզեց իր շքեղ դղյակը: Նրան թվաց, թե ինչ-որ շիկացած երկաթ խոցեց իր գլուխը և խողխողեց ուղեղը՝ մի անասելի ցավ պատճառելով: Տղան զզվանք զգաց իր սեփական ուղեղի խանձահոտից: Իսկ Էլլան չզգաց այդ զարհուրելի խանձահոտը, քանի որ տարված էր այն տղայի նկարագրության մանրուքներով.

—Նա այնքան լուրջ ու խոհուն հայացք ունի, այնքան առնական տեսք ունի, որ կարծես...

Անիմաստ էր արդեն զղջալը... Նեկրիստոն անզգուշությամբ թույլ տվեց, որ սիրո անգութ քամիները ներխուժեն իր մեջ ու պոկեն անփորձ սիրտը կրծքի տակից՝ տանելով հեռուներ: Ուշ է արդեն զղջալը, նրա սիրտն այլևս

քամիներին է պատկանում, խենթ ու խելառ ու... միամիտ քամիներին: Ուշ է արդեն զղջալը...

—Չգիտեմ, չեմ կարող բացատրել զգացածս, գուցե դա հենց այն է, որ մարդիկ անվանում են...

«Հիմար,– առաջին բառն էր, որ ի վերջո ծագեց Նեկրիստոյի գլխում,– ինչպե՞ս կարող էի այսպես խաբվել, ինչպե՞ս կարող էի հավատալ, որ ես էլ կարող եմ երջանիկ լինել, ինչպե՞ս կարող էի մտածել, որ Էլլան սիրում է ինձ: Ախր նա երբեք նման բան չէր ասել, նույնիսկ այդպես մտածելու առիթ բնավ չէր տվել... Ես եմ մեղավոր. իմ այդ տրամաբանական դատողությունները հերթական անգամ ինձ սխալ եզրահանգման բերեցին: Ամեն ինչ բնական է ու շատ էլ տրամաբանական, ախր չէ՞ որ մենք պարզապես ընկերներ ենք, պարզապես... ընկերներ...»:

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ԹՌՉՔ ԱՌԱՆՑ ԹԵՎԵՐ

*Ճակը չի կարող փոխել իր ծագումը:*

Արդեն բավական ուշ էր: Խավարն ամբողջությամբ կուլ էր տվել փոքրիկ քաղաքը, և նույնիսկ գործող ամենաշքեղ բացօթյա սրճարանի գունավոր լույսերն ունակ էին լուսավորելու տարածության մի փոքրիկ կտոր միայն, իսկ դրանից դուրս ճնշող խավար էր: Խավարը, սակայն, անսպասելիորեն ընդհատվում էր սրճարանից ոչ հեռու գտնվող մի փողոցային լապտերով, որ չգիտես ինչ հրաշքով որոշել էր կատարել իր առօրյա աշխատանքը՝ չնայելով իր բազմաթիվ գործընկերների ակամա գործադուլին: Լապտերը, սակայն, գործելով իր ուժերի գերլարումով, կարողանում էր լուսավորել տարածության մի սահմանափակ կոնաձև կտոր միայն: Լուսավոր այդ փոքրիկ շերտի հարևանությամբ բոլորովին պատահաբար հայտվել էին մի քանի բարդի, որոնք դեռ նախորդ դարից մնացել էին սրճարան կառուցելու համար անբարենպաստ այդ տարածքում: Քամին հանդիստ խաղում էր բարդիների մահամերձ տերևների հետ: Այդ տերևների գունագեղ բազմազանությունը գուցե աչք կշոյեր, եթե ընկղմված չլիներ խավարի մեջ: Տերևներից ամենահամարձակները, որոնք բնականաբար օժտված էին նաև ամենավառ գույներով, ի վերջո պոկվում էին իրենց հարազատ մորից ու տրվում քամու կամքին, որ հոժարությամբ սփռում էր նրանց քաղաքով մեկ: Սակայն այս տերևներից միայն սակավաթիվ ընտրյալներն էին, որ քամու բարի կամքով բախտ էին ունենում մուտք գործելու անթափանց խավարն ընդհատող այն փոքրիկ լուսավորված շերտը: Բնությունից գրեթե ամբողջովին կտրված այդ սառը քաղաքում բոլորովին պատահաբար ստեղծված մի փոքրիկ հրաշք էր դա, որ արարել էր հուսալքված մայր բնությունը՝ փորձելով մարդկանց հիշեցնել իր կատարելության, գեղեցկության կամ գոնե ներկայության մասին: Պատկերացրեք. մթությունից վեր հառնող մի փոքրիկ լույսի կտոր, որում սավառնում են աշնանային բազմաբղետ տերևները՝ պարելով ոչ թե հարևան սրճարանի, այլ քամու ներդաշնակ երաժշտության տակ, հանդիստ պտույտներ են գործում ու օդում տարբեր ոլորաններ գծելով՝ ի վերջո իրենց մահկանացուն են կնքում սառն ու չոր ասֆալտին: Սակայն նրանց փոխարինում են նորերը, որոնք, հատելով լույսի ու խավարի սահմանը, հայտնվում են այդ հրաշագեղ պարահանդեսում և բնազդորեն հետևում իրենց նախորդների օրինակին: Այնքան արտառոց էր այդ տեսարանը, որ

գեղեցկությունն ու բնությունը արժևորող ցանկացած քաղաքացի կարող էր ժամերով սքանչանալ այս փոքրիկ երևույթների բոլորովին պատահական համադրությամբ, որ ինչ-որ չափով զմայլելի էր դարձնում մռայլ քաղաքը:

Սակայն, ավա՜ղ, այժմ բոլորովին այլ արժեքներ էին գնահատվում, և սրճարանի մեծաքանակ այցելուներից և ոչ մեկը չնկատեց հարևանությամբ պատկերված այդ փոքրիկ հրաշքը, և դրա գեղեցկությունը պարզապես կորավ զուր տեղը: Իսկ սրճարանում մարդիկ մտածում էին բոլորովին այլ բաների մասին. խավարն ընդհատող արդեն ավելի մեծ լուսավոր շերտում սավառնում էին բազմաթիվ մտքեր, որոնք համեմված էին նորաձև երաժշտության հազիվ տանելի հնչյուններով: Սակայն սրճարանի այդ բազմազան խառնուրդում միայն մեկ սեղան էր, որ առաքում էր երազանքներ, հույսեր և, որ ամենագեղեցիկն է, սեր: Իսկ այս տարօրինակ ճառագայթման աղբյուրը նույն զույգն էր, որ քաջ ծանոթ էր սրճարանի ողջ անձնակազմին:

Մեսսետան անթարթ նայում էր իր դիմաց դրված բաժակին, որ կիսով չափ դատարկ էր... Նա վայելում էր այս մոգական պահը՝ համեմված երջանկության աննշմար կաթիլներով ու պարուրված իր դիմաց նստած երիտասարդի հայացքից ճառագող սիրո սավանով: Վայելում էր կիսադատարկ բաժակի խմիչքը, վայելում էր ոչնչի մասին հնչող աղմկոտ երաժշտությունը, սրճարանում տիրող քաոսային իրարանցմանը կարծես չափ տվող բազմաբղետ պայծառ լույսերը և, իհարկե, վայելում էր իր երիտասարդ զրուցակցի հոգեթով ներկայությունը: Բանչեի՝ մանկական անմեղություն արտահայտող շուրթերից ճառագում էր ինչ-որ մոգական բառերի շարան, որ մեղմորեն շոյում էր աղջկա հոգին, դարմանում էր նրա՝ տարիների ընթացքում վաստակած բարոյական սպիերն ու մեղմ շշնջում էր նրա ականջին, որ ամեն ինչ լավ է լինելու... Արդեն վեց օր ու տասներեք ժամ էր, ինչ Մեսսետան երջանիկ էր, իսկապես երջանիկ. վերջին անգամ այսպես երջանիկ եղել էր միայն նախորդ կյանքում: Եվ, այնուամենայնիվ, իր և իր ճակատագրի անշուք հարաբերությունների փորձը նրան ստիպում էր մի փոքր վերապահորեն վերաբերվել սեփական երջանկությանը: Նրան ամենուրեք հետապնդում էր մի տարօրինակ զգացողություն, որ ծանրանում էր նրա կրծքին: Մի զգացողություն, որ անհնար էր բացատրել, որ անհնար էր նույնիսկ զգալ, այն կարելի էր միայն ունկնդրել, այն կարծես հառնում էր գիտակցաբար մշուշով պատված ենթագիտակցության խորքերից ու երգեհոնի թանձր հնչյունների նման ծանր կախվում նրա սրտից:

Բայց այդ ամենն այժմ կարևոր չէր. չէ՞ որ Մեսեետան հիմա իր սիրեցյալի հետ էր, որ ոգևորությունից փայլող աչքերով ինչ-որ բան էր պատմում աղջկան ու պարբերաբար սեղմում նրա՝ սեղանին դրված ձեռքը, սեղմում էր քնքշորեն,

բայց և ամուր: Նա գուցե միակ մարդն էր աշխարհում, որ կարողանում երբեմն-երբեմն ստիպել նրան մոռանալ իր հետ տեղի ունեցած բոլոր արհավիրքները և ունկնդրել վստահությամբ ու ապահով ապագայի նախերգանքը: Բանչեի հետաքրքրաշարժ պատմության հանկարծակի ընդհատվելն ու աշխույժ կայծերով բոցկլտացող աչքերի սևեռումը ինչ-որ չարագույժ կետի աղջկան ստիպեցին կողքի շրջվել: Տղայի ավագ եղբայրն էր, որ իր ցանկասեր ընկերների հետ հենց նոր հանգրվանել էր սրճարանի հեռավոր սեղաններից մեկի շուրջ և նկատելով իր մանկամիտ եղբորը «Վայելքների» պողոտայի այն պոռնիկի հետ՝ որոշել էր մոտենալ՝ ողջունելու սիրահար թռչնակներին և բավարարելու իր հետաքրքրասիրությունն ու անմեղ արյան ջերմությունը ճաշակելու գիշատիչ բնազդը:

—Բարև՛, ախպերի՛կ: Ես էլ մտածում էի, թե ուր է պարբերաբար անհետանում իմ մոլորյալ եղբայրը,– ոգևորված ժպիտը դեմքին՝ ուրախ ասաց նորեկն ու արագորեն տեղավորվեց սեղանի շուրջը՝ անհոգ շպրտելով,– դեմ չե՞ք:

—Ի՞նչ ես ուզում,– հանդիստ արտաբերեց Բանչեն, ով արդեն կանխագուշակում էր սկսվելիք տհաճ խոսակցության հետագա ընթացքը, բայց և պատրաստ էր դիմագրավելու ավագ եղբորից սպասվող ծաղրական հարցերին ու խայթող ակնարկներին:

—Ինչ եմ ուզու՞մ,– կեղծ զարմանքով հարցը վերադարձրեց չսպասված հյուրը,– առանձնապես ոչինչ: Պարզապես նկատեցի, որ նոր ընկերուհի ես գտել և որպես իր փոքրիկ եղբորը սիրող ավագ եղբայր՝ որոշեցի մոտենալ ու բարևել,– և ապա շրջվելով դեպի աղջիկը՝ հանդիստ տոնով ասաց,– ներողությու՛ն, կհիշեցնե՞ս քո անունը, գեղեցկուհի՛:

«Ինչպե՞ս կարող են միևնույն մարդիկ ծնող հանդիսանալ իրարից այսքան տարբեր այս երկու էակների»,– այս միտքն արագ սահեց Մեսսեդայի գլխում, մինչ նա կհասցներ դեմքին փակցնել իր նախկին աշխատանքից մնացած սառցե անտարբերության ու ծաղրող հմայքի դիմակը և անփութորեն պատասխանել.

—Անունս Մեսսեդա է:

—Մեսսեդա,– կրկնեց անտակտ եղբայրը,– շատ գեղեցիկ անուն է: Տարօրինակ է, որ կարելի որոշ աղջիկների հետ ծանոթ լինել շատ մոտից, բայց նույնիսկ նրանց անունը չիմանալ:

Փորձելով շեղել Մեսսեդայի ուշադրությունը եղբոր հիմար ակնարկից՝ Բանչեն թեթև տոնով ասաց.

—Հա, գիտե՞ս, իմ եղբայրն այնքան կարճ հիշողություն ունի, որ մեկ-մեկ իր սեփական անունը կարող է մոռանալ, հատկապես երբ մի փոքր

չարաշահում է խմիչքը,– և կտրուկ նայելով եղբորը՝ ավելացրեց,– ինչպես, օրինակ, հիմա:

Բանչեի զայրացկոտ հայացքը, սակայն, չսաստեց եղբորը, նույնիսկ ավելին. նրա՝ ալկոհոլով բորբոքված ուղեղն այն ընդունեց որպես մարտահրավեր և որոշեց շարունակել խաղը՝ էլ ավելի նենգացնելով խաղի կանոնները.

—Ինձ միշտ հետաքրքրել է, Մեսսե՛տա, որքա՞ն է վաստակում քո մասնագիտության տեր աղջիկը:

—Լռի՛ր,– կտրուկ ընդհատեց նրան Բանչեն: Եթե դա չլիներ իր ավագ եղբայրը, զայրացած տղան հիմա կհարվածեր նրան: Սակայն մի կերպ զսպելով իրեն պատած ցասումը՝ նա շեշտակի ավելացրեց,– դու իմ ընկերուհու հետ ես խոսում, մի՛ մոռացիր դա: Նա այլևս դրանով չի զբաղվում ու երբեք էլ չի զբաղվելու:

Ապա, վեր կենալով տեղից, Մեսսետային ասաց, որ հարբած եղբորը պետք է շտապ տանի տուն: Բռնելով վերջինիս ձեռքը՝ կտրուկ ուղեկցեց նրան դեպի դուրս:

Բայց Մեսսետան արդեն հասցրեց տխրել. ախր ինչո՞ւ է կյանքն այսքան նողկալի և նախանձ. հազիվ հասցրել էր մեկի հետ արտաաշխատանքային կապեր հաստատել, և, մեկ է, կյանքի իներցիան համառորեն խանգարում է երջանկության իր փորձին: Այս հարբեցող տականքն իր մի քանի կծու ակնարկով Մեսսետային ստիպեց հիշել իր անմխիթար վիճակի մասին և նետվել հուշերի գիրկը, ընդհուպ մինչև այն իրադարձությունները, երբ իր կյանքն սկսեց տրամագծորեն շեղվել: Այդ պահին մի երկու զույգ կաթիլ գլորվեցին նրա հմայիչ այտերի վրայով: Այդ արցունքների մեջ այնքան վիշտ ու մաղձ կար, որ դրանց ծանրությունը ցավեցրեց աղջկա դեմքը: Մտքում փորձում էր հասկանալ՝ մի՞թե իր իրավիճակն այլևս հնարավոր չի լինի փոխել, երբ հանկարծ ականջին հասավ իր նախկին աշխատավայրի՝ մոթելի անունը: Այն հիշատակվեց մի երիտասարդի կողմից, ով նոր էր մտել սրճարան և ընկերոջ հետ անշտապ տեղավորվում էր հետևի սեղանի մոտ՝ բնավ էլ չնկատելով Մեսսետայի ներկայությունը: Եթե նույնիսկ նկատեր էլ, հազիվ թե ճանաչեր, քանի որ վերջինս ամբողջովին կերպարանափոխվել էր Բանչեի հետ հանդիպման համար:

Բայց խոսակցության առարկան հենց ինքն էր.

—Գիտես, չես հավատա՝ ում հետ եմ գիշեր անցկացրել երկու շաբաթ առաջ: Պարզվում է՝ նա հիմա պոռնիկ է:

Մեսսետայի լռողությունը պարզորոշ նույնականացրեց այդ ձայնը մի երիտասարդ այցելուի հետ, ում հետ, իրոք, քնել էր վերջերս: Որոշեց աննկատ շրջվել և տեսնել նրան. հաջողվեց. չէր սխալվել:

—Այդ ու՞մ մասին ես խոսում, չեմ հասկանում,– ասաց բամբասողի զրուցակիցը, ով մեջքով էր դարձած Մեսսետային:

—Հիշո՞ւմ ես՝ տարիներ առաջ, երբ բռնի տիրացար մի երեխայի, այդ նա էր, ես նրան անմիջապես ճանաչեցի, նա հիմա պոռնիկ է...

Խոսքերին հետևած չոր սառցե ծիծաղը սթափեցրեց աղջկան: Նրա շրթունքն ուժգին դողաց, իսկ փոքրիկ սրտիկը դադարեց բաբախելուց՝ հիշելով ցավելու չափ ծանոթ դեպքը: Մեսսետան շանթահար գամվել էր աթոռին, նա չէր լսում այլևս, թե ինչի մասին է երգում ճաշարանի գունագեղ երաժշտությունը, չէր նկատում առհասարակ ոչինչ իր շուրջը: Նրա հետաքրքրությունն ու սրտի տրոփյունը հասան իրենց պատմական առավելագույնին, բայց նա կարողացավ իրեն հավաքել, և սառը դատելով որոշեց առանց աչքի ընկնելու քայլել դեպի սրճարանի ելքը՝ ճանապարհին մի թռուցիկ հայացք նետելու այն մյուսին, ով այժմ դեպի իրեն մեջքով էր նստած, և ով փաստացի պատասխանատու էր իր կործանված կյանքի համար:

Մի պահ կարծես ամեն ինչ վերացավ նրա շուրջը, ամեն ինչ սառեց ու քարացավ, և ժամանակը մի ակնթարթ կանգ առավ ու սպասեց, որ նա իրականացնի իր ողջամիտ մտահղացումը: Իր հպանցիկ հայացքն ուղղեց դեպի չարաբաստիկ սեղանը և այդ ակնթարթն անգամ բավական էր, որպեսզի կարողանար հստակորեն նույնականացնել իր քրոջ ամուսնու դեմքը...

* * *

Մեղմ քամին հանդարտ շոյում էր Էլլայի վարսերը և նուրբ համբուրում նրա դեմքը: Խաղաղ գետակը, որի վրա պառկած ճախրում էր նա, այնքան զգույշ էր հոսում, որ չխանգարի դշխուհու անդորրը: Երկու ափերից դեպի անամպ երկինք սլացող ծառերը կարոտագին փաթաթվում էին գլխավերևում՝ ստեղծելով մի երանավետ կամար գետակի վրա՝ երկնքի տակ: Շուրջբոլորը լուսավոր էր ու լեցուն դրական լիցքերով: Բուսականությունն այնքան խիտ էր ու կանաչ, իսկ տերևների արտացոլանքը գետակի մակերևույթին՝ այնքան ջինջ ու անաղարտ, որ եդեմային այդ բնապատկերին գուցե միայն հրեշտակներն էին պակասում: Անպատմելի երանություն էր ապրում Էլլան իր այդ գիշերային ուղևորության ժամանակ. նա հասցրել էր շրջել աստղերի մոտով, լողալ սպիտակ ամպերի մեջ, քայլել ջրերի վրայով, ճախրել անապակ երկնքում, իսկ

հիմա պառկել էր նավակի մեջ և իր քնած հոգին վստահել նրա անվրդով ընթացքին:

Քաղցր էր այս երազը շատ ավելի, քան այն բոլոր դրախտային պատկերները, որոնց ականատեսն էր լինում Էլլան քնի վերջին փուլում՝ արթնանալուց անմիջապես առաջ: Չլիներ հեռախոսի զանգը, նա դեռ երկար կմնար վայելքի ծոցում, սակայն աղմուկից երազը մի պահ ընդհատվեց: Բայց քանի որ դեռ լիովին չէր արթնացել, շրջվեց մյուս կողմի վրա, հարմար գրկեց բարձը և նորից փորձեց տեղափոխվել իրական աշխարհի դարպասներից այն կողմ:

Այդ ընթացքում նրա նորաթուխ ամուսինը խուճապահար լսում էր զանգողի տագնապային խոսքը՝ փորձելով չկորցնել կենտրոնացումը: Վայրկյանների ընթացքում նրա՝ երջանկությունից բավարարված դեմքը սփրթնեց ու արձանացավ: Նա, ճիշտ է, սովոր չէր վախի զգացումին, բայց անակնկալից լեզուն կապվել էր: Սկզբում նա ուղղակի չկարողացավ հավատալ այն ամենին, ինչ որ լսեց, որովհետև երբեք չէր պատկերացրել, որ կյանքում որևէ բան կարող է այդպես հանկարծակի փոխվել: Նա մի պահ այնքան էր այլայլվել, որ բնազդաբար ուզում էր քայլ անել դեպի ննջասենյակ՝ կնոջն արթնացնելու և նրանից հարցում անելու այդ նորության մասին: Բայց այդ ընթացքում ընկերոջ անընդհատ խոսքերից նա հասցրեց սթափվել և կասկած ընկավ մեջը՝ թե արդյո՞ք այս ամենն իսկապես համապատասխանում է իրականությանը: Իրոք, անհեթեթ էր թվում այսպիսի հանգուցալուծումը և չափից դուրս պատահական էր՝ միանգամից հավատալ կարողանալու համար: Մի՞թե ճակատագիրը գրի էր առել իր ողջ անցյալը և հարմար պահ էր որսացել՝ իր գլխին չար կատակ խաղալու համար: Իհարկե, նա իր կյանքի և առողջության մասին չէ, որ անհանգստացավ, քանի որ իր անվտանգությունը հովանավորված էր: Ուղղակի զարմանքից էր շվարել ու նեղվել էր պատահականության այդ անկանխատեսելի խաղից: Հետո պատեց սեփական հիմարության զգացումը. ախր ինչո՞ւ պետք է ինքը այդպիսի արարք գործեր, որ հիմա էլ կանգներ փաստի առաջ: Ճիշտ է, երիտասարդ էր, արբած էր, արյունը եռում էր երակներում, բայց մի՞թե կարելի է: Երկար չէր կողմնորոշվում՝ ինչ պետք է անել, և կարծես ժամանակ շահելու համար մի քանի անգամ ստիպեց ընկերոջը երդվել, որ տեղեկությունը հավաստի է:

Հետո մտավ ակնթարթային վերլուծությունների փուլ ու շտապելով սկսեց ծանրութեթև անել ներկա վիճակն ու հնարավոր հեռանկարները: Խոստովանել և հանձնվել նշանակում է անփառունակ տարիներ ճաղերի հետևում, բացահայտ հերքումն անհեթեթ էր թվում, իսկ փախուստը... թերևս միակ ելքն էր այդ անտանելի լաբիրինթոսից: Այս ամենը սեփական «ես»-ի

տեսանկյունից, իսկ Էլլան... Ինչպե՞ս անել, որ նա չիմանա դրա մասին, չէ՞ որ կկորցնի նրան առհավետ: Ամոթից գետինն էր մտնում. չէր կարող այդքանից հետո նայել Էլլայի աչքերի մեջ, եթե վերջինս իմանար դրա մասին: Իսկ ինչպե՞ս համոզել նրան, որ դա թյուրիմացություն է. դրանով ինքը որոշ ժամանակ կշահեր՝ Էլլայի հետ փախչելու կամ ավելի լավ պատրվակ հորինելու համար: Բայց արդյո՞ք Էլլան կհամաձայներ փախչել կամ կհավատար իրեն ավելի շատ, քան հարազատ քրոջը... Այս ամենն այնքան արագ էր անցնում Էվիլիոյի մտքով, որ նա չէր հասցնում հերթով կենտրոնանալ այդ տարբերակներից յուրաքանչյուրի վրա: Մի բան միայն հաստատ էր. իր սիրուն կկորցներ այսպես թե այնպես, բայց եթե Էլլան էլ սիրում է, ինչում նա համոզված էր, ապա պարտավոր է ներել նաև դա, եթե ինքը համարձակություն գտնի խոստովանելու և անկեղծորեն զղջալու: Բայց այդ դեպքում նույնպես ինքը երկար տարիներ ստիպված կլինի Էլլայից հեռու լինել, իսկ հետո էլ հաստատ ամեն ինչ առաջվանը չի լինի:

Ժամանակի սղությունից նրա խուճապն ահագնանում էր: Երբեք և ոչ ոք նրան այսպիսի արագ որոշման առջև չէր կանգնեցրել. որոշում, որից կախված կլինի իր հետագա կյանքը, իսկ իր սիրած էակի կյանքը, միևնույն է, կխորտակվի ու հենց իր պատճառով: Դա սարսափելի սեղմում էր օղակը, և արյունը երակներում պաղած՝ նա սցենար էր մշակում ապաշխարության: Ծնկել, մեղանչել և տղամարդավարի պատասխան տալ իր անմարդկային վարմունքի համար: Այս դեպքում գոնե Էլլայի աչքում քիչ թե շատ բարձր կպահեր իր երբեմն պատիվը, չնայած, վերջին հաշվով, դա ոչինչ չէր փոխի, միայն խիղճն ավելի հանգիստ կլիներ: Սա էր նրա վերջնական որոշումը. ավելի լավ լուծում նա ուղղակի չհասցրեց մտածել...

Ազդանշանների ձայները գնալով ուժգնանում էին, և վայրկյաններ անց շենքը շրջապատեցին մի քանի ոստիկանական ավտոմեքենաներ: Նրանցից հապշտապ դուրս պրծան և շքամուտք մտան մի խումբ զինված ոստիկաններ: Նրանց առջևից շնչակտուր և այլայլված վազում էր մի տարիքով սպա, ով բոլորովին վերջերս ավագ դստերն ամուսնացրել էր կրտսերին պատվազրկողի հետ...

* * *

Ակնթարթ չանցած՝ ոստիկանախումբը երրորդ հարկում էր: Հրամանատարը, որ ծայրաստիճան հևում էր աստիճանները զույգ-զույգ բարձրանալու, ինչպես նաև ընդհանուր հուզմունքի պատճառով, հրամայեց առանց թակելու կոտրել դուռը: Երեք ուժեղ համազարկից հետո ծանր դուռը

տեղի տվեց՝ արձակելով ջարդվող փականի վերջին ճիչը: Դա այնքան ուժգին էր և հանկարծակի, որ Էլլան քնից վեր թռավ: Անակնկալ տագնապից նա համարյա շնչահեղձ էր լինում: Մի քանի վայրկյան դեռևս պահանջվեց եթերային երազից կտրուկ երկիր իջեցված հրեշտակից, որպեսզի մարսեր պահը և սկսեր գիտակցել, որ այլևս արթուն է: Նրան թվաց, թե երազում էին ուզում ներխուժել իրենց բնակարան, և արդեն սկսում էր ուրախանալ այն փաստի կապակցությամբ, որ արդեն զարթնել է, երբ ննջասենյակի դուռը կտրուկ բացվեց, և երևաց այլայլված հոր տանջահար և ցասումնալի կերպարանքը: Ապշեցումը տեղափոխվեց երկրորդ փուլ, տագնապը բազմապատկվեց հազարապատիկ: Մի պահ պապանձված նայում էր հորը՝ դռան արանքից նրա ետևում տեսնելով սև դիմակներ հագած և զենքերը ձեռքներին այսուայնկողմ վազվզող հատուկ ջոկատայիններին:

Այդ վայրկյանները բեկումնային էին նաև հոր համար: Նա խոր հիասթափություն էր ապրել, երբ ննջասենյակում չէր հայտնաբերել Էվիլիոյին: Մինչ նա քարացել էր, խմբի մյուս անդամները, ավելի արագ կողմնորոշվելով, շտապ խուզարկեցին ամբողջ բնակարանն ու չգտան ոչ ոքի, փոխարենը գտան դեպի ետնաբակ լայնորեն բացված պատուհանը:

—Պարո՛ն գնդապետ, նա փախել է...

—Ի՞նչ է կատարվում այստեղ, գրո՛ղը տանի,– վերջապես ճչաց անկողնում նստած անհաբեկված Էլլան:

Հայրը պատասխանելու փոխարեն ծամածռեց դեմքը, հանկարծ թեթևակի կռացավ՝ ձեռքը տանելով սրտին: Մի խոր հոգոց ևս հանելուց հետո նրա մարմինն ամբողջ ծանրությամբ տապալվեց գետնին...

* * *

Նինյոն վերջնականապես խորտակված էր: Վրեժի հնարավորություն չունենալու գիտակցությունը խեղդում էր նրա շունչը կրծքում, իսկ արցունքներն՝ աչքերի մեջ: Այն տիրակալը, երեկվա առաջնորդը, այն ամենակարողը հայտնվել է մի այնպիսի խղճալի վիճակում, որ ուղղակի անճանաչելի էր դարձել: Այն բոլոր մտքերը, արժեքները, այն բոլոր ճշմարտությունները, որոնց ինքը սովոր էր և քարոզում էր շուրջը, մեկ վայրկյանում հօդս ցնդեցին՝ ուղղակիորեն հասկացնելով, որ այսօր այստեղ կան անձինք, որոնք բարձր են կանգնած ցանկացած ճշմարտությունից: Արյունը զեղվել էր նրա գլխում ու ժայթքելու համար կարծես ճեղք էր փնտրում: Անհավանական զուգադիպություն էր թե ճակատագրի դառը կատակ, միևնույն է, փաստն այն է, որ երկու քույրերն էլ զոհ էին գնացել մի

սրիկայի, որի արյունը Նինյոն կխմեր այդ պահին: Բայց ինչպե՞ս գտնել նրան, ինչպե՞ս մաքրել հաշիվները, կամ ումի՞ց օգնություն խնդրել. այս հարցերն արդեն տեղ չէին անում նրա գլխում, քանի որ զայրույթը շրջափակել էր այն: Նայում էր քույրերին ու ամաչում էր սեփական գոյությունից. հազար ընկերոջ քույրերին և ընկերուհիներին հավուր պատշաճի կարողացել էր պաշտպանել, իսկ հիմա կանգնած էր նյարդային պոռթկման առջև: Նման վիճակում նրան այլևս ոչ ոք չէր կարող հանգստացնել, թերևս միայն մայրը կկարողանար, եթե, իհարկե, ինքն էլ չգտնվեր խելագարության շեմին: Նինյոն ծանր հևում էր ու պատրաստ էր գլուխը պատերին խփել, միայն թե մի նոր միտք, իրավիճակից դուրս գալու մի նոր ելք ծնվեր, բայց ամեն ինչ ապարդյուն էր: Ախր հետքերը տաք էին. նա գիտեր, թե որտեղ է եղել այդ վիժվածքը մի քանի ժամ առաջ: Իրեն չէր ների, եթե այս անգամ էլ առիթը բաց թողներ: Հստակ գիտակցում էր, որ եթե ընկերները նրա թաքստատեղին գտած չլինեին այս անգամ, ուրեմն ուրիշ առիթ էլ չէր լինի: Ճիշտ է, շատերն էին անցել ու մշակվել Նինյոյի ձեռքի կամ ոտքի տակով, սակայն իր ստանձնած դերի համար նա չափազանց ներողամիտ էր: Բայց այս անգամ նա ավելի շուտ կկախվեր, քան կներեր այդ վայրի կենդանուն: Չգիտեր՝ ինչի սպասել. դողացող ձեռքերով բռնել էր գլուխը և հետուառաջ էր անում հիվանդանոցի միջանցքով: Ամեն անգամ հետ շրջվելիս, երբ աչքը դիպչում էր հեկեկացող քույրերի ու լուռ արտասվող մոր անմխիթար հայացքներին, արյունը կանգ էր առնում նրա երակներում: Վրեժի ծարավը քամում էր նրա կյանքի հույսը և ստիպում գնալ ծայրահեղ միջոցների. ցավն այն էր, որ այդ պահին նույնիսկ ծայրահեղ լուծում չկար: Այդ պահին բացարձակապես ոչինչ չկար, միայն չարագույժ հայացքներ, դառնաղի արցունքներ ու անորոշության մի հսկա կույտ, որի տակ կքել էին ծնողների, և փշրվել՝ քույրիկների կյանքերը: Էլ չէր դիմանում, ուզում էր գոռալ ամբողջ շենքով մեկ, երբ հեռախոսը զնգաց: Արդեն մի քանի րոպե էր, ինչ զանգում էին, բայց նա չէր լսում: Առանց նայելու համարին՝ մոտեցրեց ականջին, ոչ մի բան չարտասանեց, միայն լսում էր ընկերոջ պարզած տեղեկությունները: Հանկարծ աչքերը փայլեցին մի պղտոր ու ահասարսուռ փայլով, և կիսատ թողնելով զրույցը՝ վազեց դուրս: Հարազատները, սակայն, հազիվ նկատեցին նրա վազքը և մինչև ուշքի եկան, նա արդեն դրսում էր:

Ուղեղը սկսում էր մաքրվել, մտքերի ընթացքը գնալով դառնում էր ավելի հստակ ու լամինար: Ձեռքը տարավ գրպանը, շոշափեց դանակը և ամուր բռնելով այն գրպանի մեջ՝ շարունակեց քայլել: Այն ամբողջ ցասումը, որ, շատերին ներում շնորհելով, հավաքել ու զսպել էր իր մեջ, այժմ հավաքված էր մի բռունցքի մեջ, և կենտրոնացումը վճռական էր ու անընկճելի: Եթե մի քանի րոպե առաջ հուզումն էր փակել նրա մտքերի ծորակները, ապա այժմ նա

դիտավորյալ անջատել և մի կողմ էր դրել ինչպես գրպանի հեռախոսը, այնպես էլ ուղեղը, որ ոչինչ չկարողանար խանգարել իր մտադրությանը: Սառը քամին խփում էր նրա դեմքին և անգամ նրա թուլտվությամբ կարծես անցնում էր գլխի միջով՝ սրբելով ամեն ինչ ու թողնելով միայն վրեժի զգացողությամբ պարուրված վիրավորանքի վերքերը: Վերջիններիս ցավն էր հենց արագացնում նրա քայլերը, որոնք շուտով նրան կբերեին մի մութ բակ, որտեղ նրան սպասում էր երկար սպասված հանգուցալուծումն այս անիծյալ իրավիճակի, ինչպես նաև մի խումբ երիտասարդներ…

Նինյոն հարգված էր իր շրջապատում և համարյա թե հեղինակություն էր, բայց մնացել էր միայնակ կանգնած մի անինքնասեր և արկածախնդիր սրիկայակույտի առջև, որը ոչ մի հեղինակություն չէր ճանաչում սեփական հայրերից ու հորեղբայրերից բացի…

Նինյոն սկսեց հասկանալ՝ ինչ է իրեն սպասվում, բայց չընկրկեց. նրա դեմքին վախի ոչ մի արտահայտություն չկար, սակայն զգացվում էր, որ անակնկալի է եկել. չէր սպասում, որ իրեն սպասելիս կլինեն: Շրջապատողներից մեկը, պատուհանից ցատկելիս ոտքը ցավեցրած լինելու պատճառով փոքր-ինչ կաղալով, քայլերը հանդարտ ուղղեց դեպի նա և քանի մոտենում էր, այնքան ավելի էր զանազանվում նրա քաջածանոթ դեմքը: Նինյոն՝ նյարդայնությունից ընդարմացած, չկարողացավ ճիշտ գնահատել իրավիճակը և մինչ կհասցներ հարձակվել նրա վրա, երկու կողմից նրա ձեռքերն ամուր բռնեցին, իսկ նրան ոչինչ չէր մնում անել, բացի խոսելուց, այն էլ հարմար բառ չէր գտնում՝ արտահայտվելու համար, և միայն անթարթ հայացքը հառել էր Էվիլիոյի կերպարանքին ու արագ հևում էր:

Վերջինս իրեն հատուկ բարձր ոճով սկսեց հեգնական քմծիծաղով և ապա շարունակեց ոչ պակաս հեգնական շեշտադրությամբ՝ խոսքով փորձելով ձևացնել, թե անկեղծ է.

—Գիտե՞ս, դու իսկական ընկեր ես, իսկական եղբայր ու զավակ, ու ես մատով անգամ չէի դիպչի Մեսսեսային, եթե իմանայի, որ քո քույրն է, ու եթե մենք ուրիշ կյանքում ապրեինք: Բայց հիմա դու էլ գիտես, որ ո՛չ իմ դիրքը, ո՛չ էլ իմ կարգավիճակը թույլ չեն տա ներողություն հայցել քեզնից, առավել ևս, երբ քո պատվախնդրությունը ոչ մի կերպ չի ների այս պարագայում: Այնպես որ, քանի դեռ քո ձեռքերն ազատ են, ես գիտեմ, որ իմ կյանքին վտանգ է սպառնում, իսկ ես սիրում եմ ապրել, ավելին՝ ես սիրում եմ այսպես ապրել, սիրում եմ ստիպողաբար ստանալ այն, ինչ ինքնակամ չեն ցանկանում ինձ տալ, ու գիտես՝ դու էլ կարող էիր այդպես ապրել, ու գուցե և քո դուրն էլ գար, բայց այսպիսին է կյանքը, ու լավ կանես՝ համակերպվես այդ մտքի հետ:

Այս վերջին խոսքերն արտասանելիս Էվիլիոն զգաց, որ իր կեղծավորությունն արդեն զգացնել է տալիս, և մի պահ հազիվ զսպեց իր ծիծաղը՝ խղճալով զոհին: Արտաքուստ նա որպես վերջին մխիթարանք զոհին ուզում էր ցույց տալ, թե ինքը մեղավոր չէ, մեղավոր է այս հասարակությունը, որ չի պայքարում անպատժելիության դեմ, և որ այդպիսի մարդկանց թույլ է տալիս զբաղեցնել օրենքից բարձր դիրք, սակայն հոգու խորքում նա ծաղրում էր Նինյոյին և խաղում էր նրա հոգու հետ. նրա այլանդակ հոգին նորից աշխուժացել էր:

Նինյոն արդեն դադարեցրել էր անհույս ջղաձգումները, բայց վերջին խոսքերից հետո մի գերմարդկային ճարպկությամբ կտրուկ դուրս պրծավ իրեն բռնող թակարդից և հասցրեց դանակի սայրն ընդհուպ մոտեցնել Էվիլիոյի կոկորդին,... բայց ավելին անել նրան չհաջողվեց...

Դանակը զնգոցով ընկավ ձեռքից, նա երկու ձեռքով բռնեց խոցված կուրծքը և ընկավ գետնին. մեկ-երկու վայրկյան, և սիրտը դադարեց բաբախել...

Վերակենդանացման բաժանմունքից եկող ոտնաձայները, խուճապն ու իրարանցումը մատնեցին այնտեղ տիրող տագնապային իրավիճակի մասին: Սարքերը սրտի կանգ էին արձանագրել, գնդապետն այլևս չէր շնչում... Ճիշտ այն պահին, երբ պատառոտել էին իր զավակի կուրծքը, նա կարծես հանձնվեց անզորությունից և վերջապես որոշեց մեռնել՝ դռան առջև թողնելով երեք կանանց, որոնցից տարիքով մեծն իսկույն ուշաթափ եղավ, երբ իմացավ ամուսնու մահվան մասին...

* * *

Ջութակի ողբանվագ հնչյունները ցանկացած ունկնդրի կստիպեին սարսուռ ապրել, սակայն ներկաները չափազանց զբաղված էին իրենց հեռավոր մտերիմների հետ զրուցելով, որոնց հանդիպում էին միայն նմանատիպ առիթներով: Այսպիսով, երաժշտությունը լսում էր միայն ինքը՝ երաժիշտը, որի համար, սակայն, այն չափազանց առօրեական էր դարձել, որպեսզի որևէ զգացմունք արթնացներ: Թափորն իսկապես բազմամարդ էր ու բազմաբղետ. եկել էին բոլորը՝ հեռու և մոտիկ բարեկամները, կամեցող ու նախանձ հարևանները, ավագ քննիչի ազնիվ ու կաշառակեր գործընկերները ու իր վերջնական հանգրվանը գտած երբեմնի հեղինակություն համարվող երիտասարդի թևաթափ ընկերները: Եկել էին վերջին անգամ իրենց հարգանքի տուրքը մատուցելու հանգուցյալներին: Իր ներկայությամբ կրտսեր գործընկերոջը պատվել էր նույնիսկ նախարարը, որ, կարծես մոռացած, թե

ինչի համար է այդտեղ ժամանել, մեծ եռանդով ու դեմքի կարևոր արտահայտությամբ հեռախոսով զրուցում էր ինչ-որ անկարևոր բանի մասին, երբեմն էլ ինչ-որ հրահանգներ տալիս իրեն շրջապատած թիկնապահներին: Կարմիր կաղնուց պատրաստված լաքապատ բարձրորակ դագաղում անխռով պառկած էր սպան: Նրա՝ մեռելային սպիտակությամբ կնքված այլայլված դեմքն այժմ դժվար էր նույնացնել այն երջանիկ ու բավարարված դեմքի հետ, որ ցուցադրում էր դագաղից քիչ հեռու դրված լուսանկարը: Նրա կատարյալ շտկված համազգեստը, անթերի փայլեցված կոշիկներն ու այլևս ոչինչ չարտահայտող գունատ դեմքը ստեղծում էին մի ազդեցիկ, բայց այլևս անիմաստ պատկեր երբեմնի մեծության, որին պարզապես անհնար էր նայել առանց սարսուռի: Երկրորդ դագաղը, որ սպիտակ էր, դրված էր ընդամենը մի գերեզմանափոս այն կողմ: Դրա մեջ հանգչում էր կյանքով լի մի երիտասարդ, որը բոլորի հիշողության մեջ պիտի մնար ճիշտ այնպես զվարթ, ինչպես պատկերված էր նկարում՝ անթերի սանրած մազեր, լայն, պարզ ճակատ, առնական հայացք ու գիշերային անաստղ երկնքի նման սեփ-սև աչքեր, որոնցում կարելի էր կարդալ անսահման արիություն, անկոտրում կամք և գրեթե աննշմար թախիծ: Երիտասարդ քահանան, որ իր սև թավ մորուքի շնորհիվ շատ ավելի հասուն ու պատկառելի տեսք ուներ, քան իրականում էր, առօրյա անփութությամբ անշտապ մրթմրթում էր իրավիճակին համապատասխանող աղոթքներ: Սակայն ինչպես և արարողությանը բոլորովին անհարիր չութակի ավելի քան հարիր լացի տխուր ակորդները, այնպես էլ առ Ամենազորն ուղղված աղոթքի բառերը ոչ ոք չէր լսում, և նույնիսկ եթե լսեին էլ, դժվար թե հասկանային: Թաղումը բավականին շքեղ էր սգո տարաբնույթ ծաղկեպսակների բազմազանությամբ ու գունագեղությամբ: Տարատեսակ ծաղիկների բազմերանգ գլխիկները՝ երիզված մուգ ժապավեններով, շուրջբոլորը տարածել էին մի անուշաբույր տրամադրություն, որը գուցեև զգալի կլիներ, եթե չլիներ անշտապ ծխացող խնկի ծանր ու մածուցիկ հոտը: Ոչ այնքան սև ժապավենների վրա ոսկեգույնով գրված տխմար արտահայտությունները, որքան պսակների շքեղությունն ու դրանց դիմաց վճարված գումարներն էին միտված արտահայտելու պսակը գնողի անկեղծ վերաբերմունքն այս կամ այն հանգուցյալի նկատմամբ:

Շոգն արդեն անտանելի էր դառնում, շոգից տառապող ու երբեմն-երբեմն թաշկինակներով քրտինքը սրբող անհամբեր ներկաների անտարբերությունը՝ նույնպես: Ոմանք զրուցում էին քաղաքականությունից, ոմանք՝ գործերից, մյուսները փորձում էին տեղեկություններ ստանալ ինչ-որ գրողի ծոցում կորած բարեկամներից, մի քանիսը նույնիսկ փորձում էին առիթն օգտագործել՝ որոշ գործնական հարցեր տեղում լուծելու համար, մյուսներն էլ

պարզապես լուռ ծխում էին՝ ինչ-որ անհասկանալի խորությամբ կնքված տրտմություն արտահայտող դեմքերով: Մի խումբ կանայք ակտիվ կիսաշշուկով քննարկում էին տեղի ունեցած դժբախտության ահավորությունն ու անվերադարձ կորստի ծանրությունը, մատնանշում, թե որքան անարդար է կյանքը և նույնիսկ մերթընդմերթ արձակում խորին ցավակցանքով լեցուն հոգոցներ: Թափորում ամենաակտիվները Նինոյի ընկերներն էին, որոնք մեծ եռանդով ու ջանասիրությամբ կարգավորում էին ինչ-որ մանր կազմակերպական հարցեր՝ այդպիսով, գուցե, փորձելով գոնե վերջին անգամ օգտակար լինել իրենց ընկերոջը, ում իրենք այնքան պարտական էին և ում, սակայն, այդպես էլ չկարողացան օգնել կենդանության օրոք: Դագաղներին ամենամոտ կանգնած էր ամբողջովին սև հագած ու բարձրաձայն արտասվելուց ողջ մարմնով ցնցվող հորաքույրը, որը, չգիտես ինչու, այսօր հատկապես որոշել էր բոլորին ցուցադրել, թե որքան թանկ էին իր համար եղբայրն ու եղբորորդին, և թե որքան ծանր ու խորն էր նրանց կորստի վիշտը: Չնայած խեղճ հորաքրոջ գործադրած ջանքերին՝ նրա վրա ևս ներկաներն ամենևին ուշադրություն չէին դարձնում: Կատարյալ անուշադրության էին մատնված նաև հորաքրոջից քիչ հեռու ակնկոր կանգնած երեք սգավոր կանայք, որոնք, իրենց հերթին, հրաժարվում էին ուշք դարձնել լալկան ջութակի սրտակեղեք հնչյուններին, քանզի առանց այդ էլ նրանց կսկիծն անտանելի էր...

***

Միայնակ էր մնացել Էլլան... Բոլորովին միայնակ... Լուռ նստած էր դատարկ սենյակում՝ անզոր հայացքը հառած դեպի անորոշ ու ոչինչ չխոստացող ապագան: Սենյակում լսվում էին միայն Էլլայի փոքրիկ սրտիկի անտեղի բաբախյունները: Աղջկա հանդարտ ու համաչափ շնչառության ներքո ուժասպառ սրտիկը կամացուկ շշնջում էր մի տխուր պատմություն մի փոքրիկ աղջկա մասին, որն առաջին անգամ առերեսեց այս բիրտ աշխարհի հետ: Ի վերջո շնչառությունը դարձավ ընդհատ ու կցկտուր, և հրեշտակի այտերի մարմարե գունատությունը ողողվեց ջերմ արցունքներով: Դրանց աղիությունը զգացին այն անթերի շուրթերը, որոնց համբուրողն արդեն չկար. նա պարզապես... փախել էր: Փախել էր նա, ում այդքան սիրառատ գուրգուրում էին այս դողացող ձեռքերը, որ հիմա իզուր փորձում էին մաքրել արցունքների՝ հետզհետե առատացող առվակները: Այս փխրուն էակի խարազանված հոգին կարծես դուրս էր եկել մարմնից ու կողքից նայում էր իր այդ թշվառ կացարանին՝ զուսպ հեկեկալով: Ա՜խ, դաժան մարդիկ, մի՞թե չգիտեք, թե ինչ

է լինում փոքրիկ գառնուկին, երբ նրան գազանի երախն են նետում. նրան պարզապես հոշոտում են. կամ ինչ է լինում այն ճենապակյա փխրուն սրտիկին, որ դողացող ձեռքերին են վստահում. այն ի վերջո կոտրվում է՝ բաժանվելով հազարավոր մանր կտորների, և ինչքան էլ հետո դրանք նորից հավաքես ու սոսնձես, միևնույն է, այլևս նախկին սրտիկը չես ստանա:

Միայնակ էր Էլլան, ինչպես այն փոքրիկը, որից խլել էին նրա ամենասիրելի խաղալիքը: Խոշոր աչքերը արցունքների մշուշի միջով անտարբեր դիտում էին լքված սենյակի ճնշող պատերը: Թվում էր՝ ամեն կողմից նրան էին ուղղվել բազում հանդիմանող հայացքներ, ինչպիսին այնքան անարդար հասարակությունը ուղղում է միայնակ կանանց վրա: Ավելի ճիշտ՝ ոչ թե միայնակ, այլ լքված: Որքա՜ն կուզեր հիմա պատմել իր ողջ զգացածը, այն անտանելի ցավը, կսկիծն ու տվայտանքը, որ կեղեքում էին իր անբասիր հոգին: Որքա՜ն կուզեր անզուսպ արտասվել ինչ-որ մեկի ջերմ գրկում, ով իրեն գոնե կհասկանար, որքան կուզեր այժմ լինել մեկի կողքին, որի հետ պարզապես կլռեր: Բայց ու՞մ... Չէ՞ որ նա բոլորովին միայնակ էր...

Նրա կյանքը փոխվեց տրամագծորեն: Նախ՝ կորցրեց սիրած անձին, առանց որի իր կյանքը չէր պատկերացնում վերջին տարիներին: Կորցրեց հորը, ում հարգում ու սիրում էր պաշտելու աստիճան: Կորցրեց եղբորը, ում հետ չափազանց կապված էր: Օրեր անց մասամբ կորցրեց մորը, ում ստվածացնելով հանդերձ՝ ստիպված եղավ թողնել հիվանդանոցում՝ հոգեբույժների հսկողության տակ: Որոշ չափով կորցրեց նաև քրոջը, ում դեռ երկար ժամանակ պիտի մեղադրեր անսպասելի նորությունն իրեն առաջինը չասելու համար: Լինում էին պահեր, երբ անգամ չէր էլ հավատում նրան. կարծում էր, որ նա կարող է հորինած լինել այդ ամբողջ պատմությունը՝ զուտ նախանձից ելնելով: Երբեմն մտածում էր, որ Մեսսետան չպետք է հրապարակեր այդ փաստը, եթե նույնիսկ դա այդպես էր. նա կարող էր երջանիկ լինել Էվիլիոյի հետ՝ թեկուզ առանց իմանալու, որ նա հանցագործ է և պոտենցիալ մարդասպան: Երբեմն իրեն թվում էր, թե ինքը հենց այդպես էլ կվարվեր, եթե լիներ քրոջ փոխարեն: Երբեմն գժվում էր այդ մասին մտածելուց:

Մեսսետայից էլ երկար ժամանակ պահանջվեց՝ մարսելու համար հոր և եղբոր հանկարծակի կորուստը մասամբ իր՝ պահի տակ առանց երկար մտածելու, տաք և հուզված գլխով կատարած արարքի համար: Նրա հոգեկանը խախտվում էր, երբ մտածում էր, որ գուցե սխալվել է:

Էլլայի հոգեկանը խախտվելու եզրին էր, երբ շուտով պարզվեց, որ Էվիլիոյից երեխայի է սպասում, և վերջնականապես խախտվեց, երբ վիժելուց հետո պարզվեց, որ այլևս չի կարող մայր դառնալ:

Սակայն ամենազոր ժամանակի անկասելի հոսանքն աստիճանաբար մեղմում էր զգացմունքային աղետը, որ քույրերն ապրում էին: Իհարկե, ոչ թե աղետն էր մեղմվում, այլ դրա ընկալումն էր էքսպոնենցիալ բթանում: Անելանելի վիճակը քույրերին ստիպում էր ձգտել իրար, որպեսզի միասին կարողանան փորձել հաղթահարել այն սոսկալի թակարդը, որ անողոք կյանքն անխնա դարանել էր նրանց առջև:

Որոշ ժամանակ անց նրանք նորից մտերմացան, չնայած որ Էլլան չափազանց վատ էր զգում, երբ, իմանալով հանդերձ քրոջ եկամտի աղբյուրը, ստիպված եղավ նրանից գումար խնդրել՝ մոր խնամքը հոգեբուժարանում ապահովելու համար…

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՏԵՂԱՊՏՈՒՅՏ

*Որ անտուն հոգին երազներ ունի, դու գիտեիր վաղուց…*

Տունդարձի ճամփին Նեկրիստոն զզվանքով էր նայում շուրջը: Այս օրը մեկն էր մեռելային լռությամբ կնքված այն դատարկ օրերից, որ անտարբեր անգիտակցությամբ ծամում էր Նեկրիստոն իրարամերժ մտքերի խլացուցիչ աղմուկի մեջ: Դրանք գլխիկոր անցնում էին՝ անխոս հետևելով իրար, կարծես հոգեհացի էին եկել: Եկել էին վերջին հրաժեշտը տալու դագաղում անշարժ պառկած և սեփական կյանքից ու հենց այս անմիտ օրերից ինքնակամ հրաժարված երիտասարդին: Գուցե նեղացած հանգուցյալի այդ անտարբեր վերաբերմունքից՝ օրերը մի չնչին փորձ անգամ չէին անում՝ ինչ-որ կերպ գրավելու նրա ուշադրութիունը կամ գոնե տարբերվելու մեկը մյուսից: Իսկ Նեկրիստոն, թեև արտաքուստ կատարյալ հանգիստ, ներքին սարսափով էր հետևում իր իսկ ճակատի կնճիռներն օրըստօրե խորացնող այս անտանելի արարողությանը, որի վերջը դեռ բնավ չէր երևում, իսկ սկիզբը մի տեսակ արդեն մոռացվել էր վաղուց: Ձգտում էր ինչ-որ վերաբերմունք արտահայտել աշխարհին, որ առնվազն անտարբեր էր նրա բնական քմահաճույքների նկատմամբ: Արդյունքում նա շարունակ մերժվում էր իր իսկ բարդույթների ճնշման տակ, և ստացվում էր այնպես, որ երբեք բանը չէր հասնում վճռական հարցին: Կապանքները նրան լուռ ուղեկցում էին դեպի փակուղի՝ բաղձալի անվերջության արահետի փոխարեն: Անորոշությունը պարզապես ծագում էր ճակատագրի, բախտի և իրենից կախված իրադարձությունների անկանոն վերածածկից: Հիրավի, ամենաշատը մտածել էր հենց այդ հակադրության շուրջ, բայց այդպես էլ չէր կարողանում գտնել մի հարցի պատասխան, որը գուցե հնարավորություն տար նրան կյանքն ավելի բուռն դարձնելու: Չգիտեր՝ ում մեղադրեր, երբ պատահաբար տեսավ մի հարսանեկան շարասյուն՝ ողողված իր ներկա հոգեվիճակին բացարձակապես չսազող տոնական ձևավորմամբ և ազդանշաններով: Պարզապես հոգնել էր իր երազանքները ուրիշների մոտ իրագործված տեսնելուց: Այստեղ արդեն հօդս էին ցնդում խեղված ճակատագրի ամենավառ ներկայացուցչի երերուն հույսերը, որ քողարկված էին նրա տողերի տակ և բառերի արանքում: Զարմանում էր, թե որտեղից Նաստալդին այդքան բալասան, որ հեռու էր պահում հույսերը մահի կանչերից…

Շարունակ փորձում էր անկեղծանալ իր հոգու հետ, որ համարձակության անբավարարության պատճառով չէր խոստովանում, որ պատճառը համարձակության պակասն է: Բայց ազնիվ հոգին չի կարող վախկոտ լինել. նրա անհաստատակամությունը ավելի շատ հետևանք էր այն բանի, որ համոզված չէր, թե ով է մեղավորը: Չէ՞ որ անիմաստ է մեղադրել սեփական «ես»-իդ ճակատագրի թերացումների համար, բայց մյուս կողմից էլ նույնքան անհեթեթ է վերջինիս գրպարտելը, երբ չես փորձում իրերը դասավորել քո հայեցողությամբ: Ծայրահեղությունների հերթափոխում նա մերթընդմերթ գոտեպնդվում էր և կարծելով, որ ուղիղ իմաստով ոչինչ չունի կորցնելու, որոշում էր հաջորդ օրը կյանքն ի նորո սկսել: Սակայն հաջորդ առավոտյան բախվելով սովորույթի ուժեղ պատին՝ ստիպողաբար մոռանում էր կյանքը նորացնելու սին պատրանքը և նետվում հակառակ ծայրահեղության գիրկը:

Ալարելով փոխում էր քայլերը և ագահաբար նայում էր շրջապատի բոլոր իրերին, բայց նողկանքը կաթում էր խամրած աչքերից, և խոր հուսահատությունից անգամ չէր էլ ծխում: Սիրտը թեթևացնում էին միայն խոր հոգոցները, որ հանում էր ամեն անգամ, երբ մտքերով հանգրվանում էր հերթական տրամաբանական փակուղում:

Շատ անգամ էր անհույս ճիգեր գործադրել այլընտրանքային տրամաբանություն երկնելու համար, որ միգուցե բացատրեր վերջապես, թե ինչ է իրականում կատարվում շուրջը, բայց մի աներևույթ հզոր ուժ կասեցնում էր նրա մտածելու կարողությունը: Նրան մնում էր միայն ականջ դնել հոգու ձայնին, որն, իր հերթին, խուճապից կորցրել էր խոսելու ունակությունը:

Քիչ էր մնում մինչև տուն, երբ որոշեց երկարատև ընդմիջումից հետո նորից կիսվել Աստծո հետ: Եկեղեցին հեռու չէր, բայց երբ քայլերն ուղղեց դեպի այնտեղ, նորից մտքափոխ եղավ: Չէ՞ որ եկեղեցին դեռ պետք է ճանապարհեր հարսանեկան թափորին... Րոպեներ անց հասավ տուն և այլայլված իրեն նետեց բազմոցի վրա ու աչքերը փակեց: Տանը դեռ ոչ ոք չկար. մայրը աշխատանքի էր, հայրը... նույնպես:

Րոպեներ անց նրան արթնացրեց դռան թակոցը: Նա մի կերպ հասցրեց ուշքի գալ և քայլերն ուղղեց դեպի դուռը: Սովորականից փոքր-ինչ ջերմ ընդունեց մորը, սովորականի պես անտարբեր օգնեց տեղավորել բերած մթերքները:

—Ների՛ր, որ արթնացրի,– մեղավոր ձայնով արտասանեց իր միակ զավակի նկատմամբ չափազանց ուշադիր մայրը, որն արդեն զգում էր, որ ինչ-որ բան է պատահել Նեկրիստոյին:

—Ոչի՛նչ, մայրի՛կ,— պարզապես գիշերը լավ չէի քնել ու որոշեցի հանգստանալ:

—Ե՞րբ պետք է վերջապես գիշերները քնել սովորես, որդի՛ս,— շարունակեց մայրը:

—Երևի երբեք (ինչպե՞ս կարող եմ քնել, եթե ցավը տանջում է հոգիս):

—Տղա՛ս, ի՞նչ է պատահել,— այս անգամ արդեն կարեկցանքով շշնջաց մայրը:

«Չգիտեմ, գիտեմ միայն, որ չեմ կարողանում իմ տեղը գտնել կյանքում, ինձ թվում է՝ մեկը որոշել է, որ ես միշտ պետք է դժբախտ լինեմ, ու ամեն ինչ անում է իր որոշմանը տեր կանգնելու համար: Ինձ մշտապես հետապնդում են մռայլ մտքեր, որոնցից ես ոչ մի կերպ չեմ կարողանում ազատվել: Ու այլևս ոչինչ ինձ չի ուրախացնում: Ինչ-որ բան կարծես հետապնդում է ինձ, անգամ գիշերները: Արդեն մի քանի օր է՝ ես տառապում եմ մղձավանջների ձեռքին: Բայց ցավն այն է, որ այդ անորոշ վախի զգացողությունը ինձ շարունակում է ուղեկցել արթնանալուց հետո էլ: Այնպիսի տպավորություն է, թե ինչ-որ աներևույթ մեկն ուզում է հաշվեհարդար տեսնել հետս: Ու ամեն ինչ այնքան անորոշ է: Իմ կյանքը համատարած երաշտի է նման, ի՞նչ կարող եմ ցանել, որ ծիլեր տա, ինչո՞վ կարող եմ խավարը լցնել, այն էլ այնպես, որ խավարին սովոր աչքերս չծակվեն: Ամեն ինչ ծայրահեղ վատ է, ու ինձ թվում է՝ խելագարվում եմ... Ո՛չ, այսպիսի կյանքն ինձ համար չէ: Բայց ինչ-որ մեկը պետք է պատասխան տա այս ամենի համար, մի՞թե կյանքն այնքան է հեռացել արդարությունից կոչեցյալից, որ մեղավորներն այլևս չեն պատժվում: Ինչպե՞ս խաղաղեցնեմ անհանգիստ հոգիս: Ես իմ ձևով եմ գժվում և իմ ձևով էլ պետք է բուժվեմ»,— խոսելու փոխարեն մտածեց Նեկրիստոն՝ ասելով.

—Ամեն ինչ կարգին է, մայրի՛կ, ուշադրություն մի՛ դարձրու:

Մայրն իհարկե զգաց, որ դա այնքան էլ այդպես չէ, և ուզում էր մխիթարել.

—Տղա՛ս,— գորովալից շշնջաց՝ գրկելով որդուն,— դու ամեն ինչ շատ մոտ ես ընդունում սրտիդ, ամեն մի մանրուք ծանր է տանում փխրուն հոգիդ, հանի՛ր գլխիցդ այդ ավելորդ մտքերն ու փորձի՛ր ցրվել: Մի հետաքրքիր զբաղմո՛ւնք գտիր քեզ համար և կտեսնես՝ ինչ արագ են անցնում այդ տարօրինակ զգացողությունները: Գիտեմ, Աստծուն այնքան էլ ուժեղ չես հավատում, բայց եկեղեցի գնալն էլ քեզ մի փոքր կհանգստացնի:

—Լավ, կգնամ, բայց միայն նրա համար, որ դու ես ասում,— մի փոքր լռելուց հետո ասաց Նեկրիստոն և հագնվելով դուրս եկավ տնից:

—Զգո՛ւյշ կլինես...

Նեկրիստոն արդեն վաղուց չէր նկատում այս բառերը, որ ամեն անգամ տանից դուրս գալիս նրա հետևից արտասանում էր մայրը: Ու ափսո՛ս, որ չէր նկատում: Ախր այնքա՛ն չգնահատված սեր կար այդ երկու բառի մեջ: Այնքա՛ն իմաստ ու սպասում կար այն հայացքում, որը հետևում էր որդուն՝ հուսալով, որ գուցե այս անգամ նա մի պահ կշրջվի ու կժպտա: Չէ՞ որ դա գոնե կհուսադրեր, որ իր որդին դեռ իրենն է, ու հիշում է, որ իրենն է: Բայց դա վաղուց արդեն տեղի չէր ունենում ու ոչ միայն իրենց ընտանիքում, այլև ընդհանրապես՝ քաղաքում: Անհարմար առօրյան ու անիմաստ խնդիրներն այնքան խիտ էին տեղավորվել քսանչորս ժամում, որ տեղ չկար տարրական հարգանքի ու զգացմունքների համար: Բայց չէ՞ որ մարդկային ճիշտ փոխհարաբերությունների բանալին հենց այդ մոռացված ու մի անկյուն նետված հարգանքն է՝ վաղուց արդեն մեռած արժանապատվության եղբայրը:

Տանից դուրս գալիս Նեկրիստոն այլայլված տեսք ուներ, ինչպես գրեթե միշտ: Միայն կորցնելու բան այլևս չունեցողի հանդուգն ու ցասումնալից հայացքի շնորհիվ էր, որ կարողանում էր ցրել հետաքրքրասեր անցորդների ուշադրությունն իր վրայից: Անհանգիստ քայլերը վերջապես նրան բերեցին այն պուրակը, որի մոտով այսօր մի անգամ արդեն անցել էր, բայց ներս չէր մտել: Բարեբախտաբար, հարսանքավորներն արդեն մեկնել էին: Անտարբեր հուսահատությամբ նա մոտեցավ հնացած և գունաթափ պատերով փոքրիկ կառույցին. հնադարյան մի մեծ վանական համալիրից մնացած միակ հետնորդն էր այն, որ վայելում էր սակավաթիվ մարդկանց հազվադեպ այցելությունները:

Լռության ու հանգստության միակ ապաստարանն էր քաղաքի աշխույժ աղմուկի մեջ: Այստեղ գալիս էին քչերը, որոնց մի մասը հավատացյալներ էին, մի մասը՝ դեռևս բարեպաշտ մնացողներ, մյուս մասն էլ՝ վերջիններից գումար շորթելու համար եկող փորձառու մուրացկաններ: Ոմանք այստեղ խաղաղություն էին փնտրում, ուրիշները գալիս էին հրաշքների ակնկալիքով (հատկապես նրանք, ովքեր առաջին անգամ էին), ոմանք էլ՝ հույսի հետքերով:

Նեղ լուսամուտներից ներս մտնող լույսը հազիվ լուսավորում էր սրահի կենտրոնական մասը, մինչդեռ անկյուններում տեղադրված մոմավառության սեղանները թողնված էին հատուկենտ մոմերի արձակած լուսավորության հույսին: Մուտքի դիմաց տեղակայված էր խորանը, որ ժապավեններով առանձնացված էր մնացած մասից, իսկ կենտրոնում դրված էին մի քանի նստարաններ Աստծո հետ զրուցել ցանկացողների համար: Տիրող լռությունը մերթընդմերթ խախտվում էր միայն ներկա երեխաների բարձր ձայներից և ելումուտ անող կանանց ոտնաձայներից: Խունկի և վառված մոմի հոտը քանդակներով և սրբանկարներով պատված խունացած գմբեթի տակ ստեղծում էր մի հաղորդության գոտի՝ լցված բարեբեր հույսերով: Ոմանց

դրանք կարողանում էին պարուրել, իսկ մյուսները հեռանում էին նույնքան հուսահատ, որքան որ ներս էին մտել:

Նեկրիստոն վերջին անգամ այստեղ եղել էր տարիներ առաջ հոր հետ, բայց չէր մոռացել արարողակարգը: Մի քանի մոմ գնելուց հետո նա դանդաղ ու անկյանք քայլեց դեպի սրահի կենտրոն, նստեց վերջին նստարանի եզրին և խոր հոգոց հանելուց հետո հայացքն ուղղեց դեպի խորանը: Նա չգիտեր՝ ինչպես դիմել Աստծուն, և, առհասարակ, նա աղոթելու չէր եկել: Ցրված մտքերը մի կերպ հավաքելուց հետո նա կարողացավ մտածել միայն մի բան. «Մի լուսավոր կետ լիներ իմ կյանքում, հանուն որի ես կդիմանայի գրկանքներին և կհաղթահարեի ամեն, ամեն ինչ»...

Դա նրա մտքով շատ արագ անցավ, և ինքն էլ զարմացած մնաց, թե ինչու կյանքի մատուցած դժվարությունները հաղթահարելու համար օգնություն խնդրելու փոխարեն, ըստ էության, ուզեց մի բան, հանուն որի անիմաստ չէր լինի նույնիսկ տանջվելը: Մի փոքր ևս մտածելուց հետո նա ինքն իրեն հասկացավ. արդեն հասուն էր և գիտակցում էր, որ ոչ ոքի կյանքն առանց փորձությունների չի լինում, պարզապես իր մոտ այդ ամենը փոքր—ինչ այլ կերպ էր: Ամայացած անապատ, որի եզրը չի երևում, իսկ բարկ ավազը վառում է ոտքերդ: Ահա նրա կյանքը: Մի՞թե հերոս չէր նա, որ այսքան դիմացել էր: Ո՛չ: Նա հերոս չէր... նրա հայրը՝ նույնպես... երևի հենց դրա համար էլ ինքը հերոս չէր: Հերոսներն այդ ժամանակ վայելում էին կյանքը և զբաղված էին նոր հերոսներ ծնելով ու նրանց հերոսական ոգով դաստիարակելով: Ա՜խ, եթե միայն այդ նորելուկ հերոսները կարողանային համարձակություն գտնել գիտակցելու, որ ծնողների հարցում ընդամենն իրենց բախտն է բերել, նրանք գուցե դադարեին իրենց վեր դասել այն ամբոխից, ում բախտը այդ հարցում այնքան էլ չէր բերել: Բայց մեր հերոսը չէր էլ երազում ծնված լինել այդպիսի մի հերոսական ընտանիքում: Իսկ հերոսանալու նրա հույսի վերջին մնացորդները, մի փոքր սնունդ առնելով խորանի խաչից, նրան ուղեկցեցին մոմասեղանի մոտ: Մինչ զգուշորեն կհաներ ձեռքի մոմերից մեկը, հայացքը բարձրացրեց և ի՜նչ... Նրա առջև հայտնվեց մի ծանոթ կերպարանք, որ, ձեռքերն իրար ամուր հպած, աչքերը փակած, գլուխը խոնարհած, կանգնած էր վառվող մոմերի դիմաց: Իր հեզության դիվային փայլով նա սաստկացնում էր իր միջով անցնող հույսի մասնիկները, որ առկա էին օդում, և ոչ երկրային երանության մի պատրանքով հիանալու մերկ հնարավորություն էր ընձեռում շրջապատի մարդկանց, այդ թվում և Նեկրիստոյին, որ բոցերի արանքից նրան երկար նայելով և հիշողությունը մի փոքր ևս պրպտելուց հետո վերջապես նույնացրեց նրան այն վերջին և միակ հրաշքի հետ, որ երբևէ երջանկություն էր ունեցել տեսնելու:

* * *

Վերջապես... Վերջապես Նեկրիստոն գտել էր նրան, ում իրականում պատկանում էր իր հոգին ու ողջ կյանքում պատկանել էր: Ի վերջո իր կողքին էր հայտնվել իր բոլոր թաքուն աղոթքների հասցեատերը, իր ամենանվիրական փափագների նպատակակետը, իր պատանեկան անուրջների տիրուհին: Քանհինգ տարվա հնության թունելի վերջում ի վերջո նշմարվեց այդքան երկար սպասված փոքրիկ լույսի շողը: Լույս, որ ժամանակին դուրս էր պրծել իր իսկ սիրառատ գրկից և սավառնելով անթափանց խավարների միջով՝ վերջապես ճիշտ ժամանակին հանդրվանել էր Նեկրիստոյի թունելի վերջում, հանդրվանել էր, երբ ինքը՝ լույսը, արդեն մարելու եզրին էր:

Նա նորից հանդիպեց Էլլային, ճակատագրի բերումով թե նախախնամության հեգնանքով: Հանդիպեց, սակայն, բոլորովին այլ հանգամանքներում: Էլլան թևատված ու մոլորված էր իր կյանքի վերջին կտրուկ իրադարձությունների պատճառով, իսկ Նեկրիստոն թևատված էր ողջ կյանքում: Մի խոսքով, առնվազն այժմ նրանք շատ ավելի շատ ընդհանուր բան ունեին, քան այն ժամանակ, երբ Էլլան դեռ օրիորդ էր՝ համակված Էվիլիոյի հետ ունեցած կեղծ երջանկության սին պատրանքով: Այժմ նա անհամեմատ ավելի հասուն էր և կոփված: Նա պարզ գիտակցում էր, որ երազներն ու կյանքն ամենևին էլ նույն բանը չեն: Բնավ, մինչդեռ ապրել պետք էր:

Էլլան առավել քան երբևէ կարիք ուներ մեկի, ում ուսին կարող էր հենվել, ավելին՝ հենց Նեկրիստոյի նման մեկի, ով ոչ մի վերապահում չէր կարող տածել իր միակ սիրո թիրախի նկատմամբ: Այդ իսկ պատճառով Էլլան այս անգամ շատ ավելի կտրուկ և բնական ձևով Նեկրիստոյին թողեց իրեն ավելի մոտ՝ մասամբ նաև փորձելով հասկանալ, թե ինչու է վերջինս մշտապես թախծոտ. այժմ Էլլան գիտեր այդ բառի իմաստը:

Այսպիսով նրանք առանց երկար ու բարակ խոսքերի կարծես հասկացան իրար, միմյանց աչքերում կարդացին այն ցավն ու տառապանքը, որ տարբեր պատճառներով հասցրել էին վերապրել իրենց կարճատև շփման ավարտից մինչև այս ճակատագրական հանդիպումը: Երևի այդ ցավն էր, կամ գուցե երկուսին էլ եկեղեցի բերած ըմբռնումն ու նոր կյանք մտնելու նրանց թաքուն ցանկությունն էր, որ օգնեցին նրանց՝ այդքան հեշտությամբ ու անկեղծորեն վերսկսելու վաղուց ընդհատված զրույցը: Նրանք կարծես երջանիկ անցյալից հառնող աղոտ ուրվականներ լինեին միմյանց համար՝ իրար կապված անհոգ ու ջերմ հուշերով: Մինչև ուշ գիշեր նրանք մնացին եկեղեցու կողքի «Խոստովանության» պուրակում: Այդ ժամանակն առավել քան

բավական էր, որպեսզի նրանցից ամեն մեկը այս կամ այն չափով փորձեր վերարտադրել այն փոքրիկ կամ մեծ ողբերգությունը, որ ինքն ապրել էր բաժանման ընթացքում:

Երբ հասավ Էլլայի հերթը, նա անկեղծության պոռթկման պահին պատմեց Էվիլիոյից բաժանման մասին, սակայն անմիջապես իրեն հավաքեց, և մինչ ապշած և թաքուն ուրախացած Նեկրիստոն կհասցներ արձագանքել այդ նորությանը, խնդրեց չհարցնել, թե ինչն էր պատճառը: Նեկրիստոն երկար չպնդեց, որովհետև արդեն լսեց այն, ինչ իր սիրտը փափագում էր. Էլլայի սիրտը նորից ազատ է, իսկ միտքն՝ ավելի հասուն: Նեկրիստոյի ներքին ուրախությանն այդ պահին չափ չկար, չնայած միևնույն ժամանակ սրտանց կարեկցանք էր տածում Էլլայի ենթադրյալ ողբերգության կապակցությամբ: Բայց ի խորոց սրտի նա մի տեսակ համոզված էր, որ Էվիլիոյի նման մարդիկ միշտ էլ կասկածելի են, և ինչ-որ չափով իրեն բավարարված էր զգում, որ իր կանխատեսումները հավանաբար իրականացել են: Դրանից ոգևորված՝ նա անգամ սկսեց մի փոքր գոռոզ տոնով Էլլային դաս տալ, թե ա՛յ թե ինչ է լինում հում և չգիտակցված պատանեկան կրքերի վերջը: Էլլան, ճիշտ է, նեղվեց, բայց միևնույն ժամանակ սկսեց հավատալ, որ, իրոք, Նեկրիստոն իրավացի է, և մեղադրել ինքն իրեն, որ ժամանակին այդքան հիմար է եղել: Սակայն մի բան հստակ դրոշմվեց նրա գլխում, որ ավելին դեռ պետք չէ պատմել, գոնե հիմա, քանզի Նեկրիստոյի զգացմունքը հաստատ և անվերադարձ կփոխվի խղճահարության, ինչը բնավ ցանկալի չէր իր համար: Էլլան կարիք ուներ ավելի շատ սիրվելու, քան խղճահարության ու կարեկցանքի: Իսկ Նեկրիստոյին ճանաչելով՝ նա իրոք վախենում էր, որ եթե նա իմանա, թե իրականում ինչքան ծանր դրության մեջ է ինքը հայտնվել իր կամքից անկախ, նրա զգացմունքները որակապես կփոխվեն, և այլևս ոչինչ նույնը չի լինի: Այդ պատճառով նա կարողացավ որոշել, որ դեռ ավելին չի ասի և կհետևի, թե ինչպես են իրադարձությունները ինքնաբերաբար զարգանում: Սակայն ինչ էլ որ լիներ այդ բաժանման պատճառը, այն չէր կարող փոխել Նեկրիստոյի կարծիքը Էլլայի մասին ու չէր շեղի նրան իր երանավետ ճանապարհից դեպի իր կյանքի բաղձալի իմաստավորում. Նրա սերը մի տեսակ իսկական էր... Իսկական էր նաև Էլլայի համարձակությունը, որ գտավ իր մեջ՝ ներելու ինքն իրեն Նեկրիստոյի հանդեպ ժամանակին գիտակցաբար թույլ տված իր միամտության համար: Այժմ նա սկսեց մի փոքր այլ աչքերով նայել նրան, և գուցե սկսում էր անկեղծորեն հավանել նրան, հատկապես, երբ վերջինս փիլիսոփայում էր:

Վերջապես՝ բախտորոշ մի կիրակի, երբ Նեկրիստոն հերթական անգամ փնովում էր սեփական թափթփվածությունը՝ Էլլայի հեռախոսահամարն

անզգուշությամբ կորցնելու համար, տակնուվրա եղած իր սենյակում հանկարծ լսեց իր մաշված հեռախոսի տխուր զանգի ձայնը: Իսկ զանգողը նույն համարի տերն էր, որն այդ օրն առավոտից հուսահատորեն փնտրում էր Նեկրիստոն:

Նրանց երկրորդ հանդիպումն անցավ նույնքան ջերմ ու անմիջական: Այս հանդիպմանը մի քանի օրից հաջորդեց նմանատիպ երրորդ հանդիպումը, հետո` չորրորդը, մինչև, ի վերջո, եկավ մի պահ, երբ նրանք իրենց առօրյան այլևս չէին պատկերացնում առանց տեսակցության, ու առանց մեկմեկու անցկացված ժամերը դառնում էին մի տեսակ անիմաստ ու տաղտկալի:

Էլլայի համար Նեկրիստոն իսկական փրկություն էր: Նա միակ մարդն էր աշխարհում, որ հասկանում էր իրեն, որ ուզում էր հասկանալ: Նա նորից հայտնվեց Էլլայի կյանքում, հայտնվեց կյանքի ամենածանր պահին` կարծես ի պատասխան աղջկա կիսատ մնացած աղոթքի: Նեկրիստոյի շնորհիվ նա հետզհետե սկսում էր վերագտնել իրեն արտաքին աշխարհին կապող մաշված ու ծվեն-ծվեն եղած թելերը...

Իսկ Նեկրիստոն կարծես բոլորովին այլ մարդ էր դարձել: Համաձայնե՜ք` այս ամենից հետո նրա համար անչափ դժվար էր չհավատալ ամենազոր նախախնամության միջամտությանը, որ վիճակել էր նրանց հանդիպել... հերթական անգամ:

Խորն էին տղայի երանության արմատները: Նա գտնվում էր կյանքից երազ տանող կամրջի վրա ու հաստատուն քայլերով հեռանում էր դեպի երազն ամեն անգամ, երբ արժանանում էր Էլլայի ժպիտին: Երազներն այնքան հարմար էին դասավորում իրերը Նեկրիստոյի հոգու ներքին խոհանոցում, որ թվում էր` այլևս ոչինչ հարկավոր չէ կյանքը ներդաշնակորեն վայելելու համար: Շուրջն ամեն ինչ գունավոր էր թվում նրան, ու գույների խաղն այնքան հագեցած էր, որ նրա աչքերը թմրում էին արբեցումից: Ամեն մի անշունչ համայնապատկեր այժմ թվում էր, թե կյանքով է եռում ու հուզիչ է բուրում: Գեղեցիկ էր դարձել աշխարհը նրա համար, բայց կար մի բան, որ ավելի էր բերկրանքով լցնում նրա սրտի կաթսան: Ամեն անգամ, երբ փակում էր աչքերը, Էլլայի չքնաղ պատկերն էր հայտնվում նրա առջև` այնքան կենդանի ու այնքան հյութեղ, որ մնացյալ աշխարհը կորցնում էր իր հետաքրքրությունը: Այդքան վայրիվերումներից հետո այսպիսի պարգևը շատ մեծ հրճվանք էր պատճառում մանկացած էությանը: Բոլոր դժվարություններն ու կենցաղային քաշքշուկները մի կողմ դրած` նա անվերապահորեն ընկղմվում էր հրաշքների աշխարհը, որի հեղինակն ու գլխավոր դերակատարը այն գանձն էր, որ արդեն շատ մոտ էր իրեն: Նա թույլ էր տալիս իրեն` չխնայել երևակայությունը` երազելու համար և ոչ ոք սթափ չէր այլևս նրան հետ պահելու համար: Քաղցր էր հյուսված այդ պատրանքն ու գրագետ էր

փակցված կյանքի պատին: Այնքան էր տարված իր սիրով, որ դեռ նրանից չբաժանված՝ արդեն կարոտում էր... Նրա խոսուն աչքերին, աստվածային ժպիտին ու գերբնական հայացքին, եթերային շարժուձևին, մեղմ ու գրավիչ ձայնին: Կարոտելու բան իսկապես կար, ուղղակի նրա կարոտը շատ բուռն էր ու հորդահոս, ու երբ դուրս էր գալիս ափերից, սկսում էր խեղդել կոկորդը: Իսկ երբ մի կում կարոտ առնելուց հետո նորից բացում էր աչքերը, հիշում էր, որ սիրում է կյանքը, ուղղակի մի պահ մոռացել էր այդ մասին...

***

Ու այդպես նորացած ընթացք ստացավ վաղուց ընդհատված մի պատմություն, որը դժվար է անգամ սիրավեպ կոչել: Անխոս դրաման, սակայն, հանդչում էր ամեն անգամ, երբ տրամաբանության շղթան կապվում էր ճակատագրի քմահաճույքներին: Ի՞նչը կարող էր ավելի ճնշիչ լինել անձնուրաց ոգևորության ծարավ ստրուկի համար, քան այն պարզ գիտակցումը, որ հանկարծ էլլայի հայացքի հետևում կարող էր ոչինչ չլինել: Մխիթարող էր թերևս այն, որ ինչ էլ լիներ, քիչ կլիներ: Ոչինչ չէր կարող հասնել այն անտեղի ծագած նվիրումի մաքրությանը, որը մեխել էր Նեկրիստոյին իր սիրո խաչին: Այնքան բովանդակալից էր այդ ազնիվ տենչը, որքան որ թյուր էր հանգամանքների նման դասավորվածությունը, որը մի կողմից կծկում էր սիրտը՝ հիշեցնելով, որ կյանքը շարունակվում է, մյուս կողմից քամում էր միտքը՝ հիշեցնելով, որ այսպես երկար չի կարող շարունակվել: Ու սպասում էր, մինչև վրա կհասնի այն ծայրահեղ պահը, երբ կամ կհասնի մտացածին այն բարձունքին, որ կառուցել էր սեփական խոհերով, կամ կյանքի հաշվետվության տակ ինքնաբերաբար կգրվի «չստացված» մակդիրը: Բայց մինչև այդ ժամանեց մի պահ, երբ նա ճարահատյալ որոշեց այլևս ոչինչ չորոշել: Դա իր մեղմացնող ազդեցությունն, իհարկե, թողեց կսկիծով լի սրտի ցավերի վրա, բայց միանշանակ լուծում չտվեց և ոչ մի հարցի: Ընդամենը հասցրեց մի միջանկյալ թմրած վիճակի: Այնուամենայնիվ, այժմ նա ազատ էր. հաճելի էր սեփական կյանքին վերաբերվել այնպես, կարծես այն քոնը չէ: Չէր ստացվում միայն մի բան. նա այդպես էլ չկարողացավ իր սիրած էակին վերաբերվել այնպես, կարծես թե իր սիրածը չէր: Շատ դեպքերում դա հենց կլիներ այս կենաց-մահու խնդրի ճշմարտացի լուծումը, որը և Նեկրիստոյին ավելի գրավիչ կդարձներ այս ամենի բուն պատճառի համար և, առհասարակ, կխեղդեր տառապանքի ցանկացած փորձ: Բայց այդպես վերաբերվել նա չէր կարող, որովհետև փորձի պակասը թույլ չէր տալիս հասկանալ, որ այդ դեպքում զգացմունքների պարտակումը անկեղծության ոտնահարում չէ, այլ

մի ուրիշ բան, որը անգամ կարող է գովելի լինել, եթե հասկացվի դիմացինի կողմից, իսկ դա եթե լիներ, ապա կլիներ այն դեպքում միայն, երբ հուզումների թուիչքը կենցաղի ֆոնի վրա կլիներ նույն փուլում, ինչ որ իր մոտ էր: Իսկ մեր դեպքում դա այդպես չէր. Նեկրիստոն անընդհատ կամ առաջ էր ընկնում կամ չէր հասնում, իսկ այն պահերը, երբ սիրահարվածն ու անտարբերը գոնե մտքերով քայլում էին համընթաց, այնքան կարճ էին տևում, որ դժվար էր հասցնել ինչ-որ լուրջ նժար թեքել քո կողմը, մանավանդ երբ կյանքն այդպես չէր նախատեսել: Երևի այդտեղից էլ պետք էր սկսել այս վերլուծությունը... Ինչևէ, ավարտել անորոշության անպտուղ տառապանքները խելամիտ անհրաժեշտություն էր, բայց թե ե՞րբ, դա մեկն էր այն անպատասխան հարցերից, որոնց նույնիսկ ինքը՝ իմաստուն Նաստալդը, կդժվարանար պատասխանել: Աննշմարելի մի հույս կործանարար ուժով ստիպելու աստիճան խորհուրդ էր տալիս մի քիչ էլ սպասել, գուցե կյանքի ընթացքը կդառնա ավելի նպաստավոր: Հենց այս մասին չմտածելու համար էր նա գերադասում մնալ անսթափ թմբիրի մեջ, որը, սակայն, ընդհատվում էր ամեն անգամ Էլլայի ուշքի բերող հայացքին հանդիպելիս. այն շատ ավելի զորեղ էր, քան ցանկացած հանգստացնող բան, որ Նեկրիստոն իր համար կարող էր հորինել:

Իսկ Էլլայի զգուշավորությունն ու գաղտնապահությունը նրան տալիս էին մի զգայուն խորհրդավորություն, որ անցողիկ քամիների հոսանքում մի լրացուցիչ ծանրություն էր հաղորդում նրա քաղցրահունչ շուրթերի զգլխիչ անկյուններին: Ընդամենը երկուսուկես տասնամյակների կենսափորձը նրա դեմքին շատ ավելի մեծ տարիքին հատուկ լրջության երանգներ էր տվել՝ դրանով իսկ խորացնելով նրա անմատչելիության պատրանքը: Դրան հակառակ՝ միշտ փայլող խոշոր աչքերի խորքում անթաքույց էր կաթնակեր էությունը: Մանկահասակ հոգու և փորձառու մտքի այս բախումը ավելի ցայտուն էր դառնում, երբ նա ժպտում էր, չէ՞ որ ժպտում էր նաև աչքերով, չնայած վերջին ժամանակներս՝ բավական հազվադեպ: Նա ուղղակի չէր կարող թեթև տանել ո՛չ իր անմխիթար վիճակը, ո՛չ էլ Նեկրիստոյի ներկայիս հոգեվիճակը, բայց դա ամենևին էլ խղճի խայթից չէր: Նա, համենայն դեպս, ինչ-որ մի աղոտ բան զգում էր այդ տղայի հանդեպ, և սուտ կլիներ ասել, թե միանգամայն անտարբեր էր: Պարզապես մինչ այս երբեք չէր փորձել մի փոքր շատ ժամանակ հատկացնել այդ մասին խոկալուն ու իր զգացածը վերծանելուն: Նա գուցե չէր սիրում կամ չէր ուզում սիրել, գուցե չգիտեր՝ ինչ է ուզում, և հաստատ չգիտեր, թե ինչ է սերը: Մի՞թե միայն այն տենչը, որ կապում էր այն նախորդ ու անցողիկ բարձրաշխարհիկ սրիկայի հետ, թե՞ այն սրտի թրթիռը, որ համակում էր իրեն ամեն անգամ այդ մեծապատիվ երիտասարդի կեղծ բովանդակությանը հառնելիս, թե՞ այն իրարամերժ

ապրումները, որ կսկծեցնում էին իր վերքերն այդ հանցագործի հետ ամեն համբույրը հիշելիս... Այլևս կորած էր Էլլան, միայն թե ինքն էլ դա դեռ ամբողջովին չէր գիտակցում: Ու չէր փրկի նրան ո՛չ Նեկրիստոն, ո՛չ էլ նրա անաղարտ և չգնահատված սերն իր ողջ ջերմությամբ: Չէր փրկի ո՛չ պաշտելի մայրը, որ վշտից վաղաժամ ծերացել էր, ո՛չ էլ փոքր եղբայրը, որն այլևս չկար...

...Ցերեկվա տապն արդեն անցնում էր, երբ Էլլան արթնացավ քնից. մի երկու ալարկոտ շարժում, և նա արդեն դուրս եկավ սենյակից՝ առանց հայելուն ուշադրություն դարձնելու: Աննույս երկրպագուի այդ վերջին նվերը հենց նրա բախտակիցն էր. նա հայտնվել էր այն պահին և այնպիսի տեղում, որ երբեք չէր կշտանում Էլլայի ուշադրությունից և տաք փաղաքշանքից: Արդեն բավական երկար ժամանակ էր, ինչ Էլլան չէր համարձակվում նայել հայելուն՝ ինքն իրենից վախենալով և կամ զզվելով: Գուցե պատճառը նույնն էր, որ չէր կարողանում հանգիստ նայել և Նեկրիստոյի դեմքին, ում աչքերի հատակում հստակ արտացոլվում էր իր իսկ ներաշխարհի կրկնապատկերն ամենայն մանրամասնություններով: Սովորականի պես անցավ միջանցքով, սովորույթի ուժով հրաժարվեց ինչ-որ բան ուտել և մտավ լոգարան: Մինչ սառը ջուրը կթրջեր նրա՝ անփույթ խնամքից արդեն քրոջինին զիջող դեմքն ու նույն քրոջինի նկատմամբ դեռ բավական կուսական և անմաշ մարմինը, արցունքի մի քանի կաթիլ հասցրեցին խառնվել ցնցուղի ջրի հետ...

Այդ օրը նորից հանդիպելու էր Նեկրիստոյին, և եկեղեցում հանդիպումից շաբաթներ անց վերջապես որոշել էր պատմել ամեն ինչ:

Հանդիպման վայրը քաղաքի թերևս միակ գեղեցիկ «Համբույրների» կամուրջն էր, որ նախատեսված չէր երթևեկության համար և այդ պատճառով դեռ այնքան էլ աղտոտված ու մրոտված չէր: Իսկ, որ ամենակարևորն է, երեկոյան ժամերին այնտեղով ոչ ոք չէր անցնում, քանզի իսկական գեղեցկությունն այլևս հետաքրքիր չէր ոչ ոքի: Երեկոյան դատարկությունն էր այդ կամուրջը դարձնում Նեկրիստոյի մարդախույս էության տենչալի հանգրվանը: Նա Էլլային այստեղ էր հրավիրել, երբ իմացել էր, որ նա իսկապես չգիտի այս կամրջի և այգու մասին: Գուցե նաև այն պատճառով, որ այդ օրը թաքուն համարձակվել էր որոշել, որ պետք է համբուրի նրան և վերջապես ասի, որ սիրում է, գուցե նույնիսկ առաջարկի ամուսնանալ: Չի կարելի ասել, որ այս մտահղացումը երկար ժամանակ ջանասիրաբար հղկվել էր նրա գլխում ու ամենևին էլ արդյունք չէր երկարատև հոգեբանական մշակման, այլ մի տեսակ պատահաբար դուրս հորդած խելառ, բայց և շատ օրինաչափ մի ցանկություն էր՝ բխած Նեկրիստոյի սրտի ամենաթաքուն խորքերից:

Վերջապես եկավ հանդիպման պահը:

Նեկրիստոն քայլում էր կամրջի մի կողմից՝ հիանալով մյուսից իրեն հանդարտ մոտեցող Էլլայի՝ այլևս խոնարհ, բայց երբեմնի գոռոզությունը դեռ ամբողջությամբ չկորցրած քայլվածքով: Առաջին հայացքների փոխանակությունն ուղեկցվեց փոխադարձ ժպիտով: Էլլայի ժպիտը զուսպ էր ու կարճատև, Նեկրիստոյինը՝ տիրական ու ազդեսիվ: Էլլան մի քանի քայլերի ընթացքում նկատեց, որ Նեկրիստոն առաջին անգամ չափազանց խնամված տեսք ունի, որը մասամբ համապատասխանեց նրա ժպիտի՝ առաջին անգամ վճռական լինելուն: Կոկիկ սանրված մազեր, բավական նորաձև հանդերձանք ու փայլուն կոշիկներ: Թեև՝ նրա քայլվածքը մի տեսակ անբնական էր թվում, մինչև որ Էլլան նկատեց, որ մի ձեռքը պահել էր հետևում. նա թաքցնում էր կարմիր վարդը: Նեկրիստոն էլ հիանում էր իր սիրո թիրախի կախարդիչ գեղեցկությամբ, չնայած որ հասկանում էր, որ Էլլան առանձնահատուկ ոչ մի ջանք չէր թափել այդ օրն արտառոց գեղեցկությամբ փայլելու համար: Իրականում դա մտահոգության ճշմարիտ առիթ կարող է հանդիսանալ, բայց ամենագետ Նեկրիստոյի հուզված գիտակցությունն այս անգամ վրիպեց: Մի քանի քայլերի ընթացքում նա մանրակրկիտ զննեց Էլլային, սկզբում վերից վար, հետո՝ վարից վեր: Հիանում էր նրանով, կարոտել էր նրա ամեն ինչին և ցնծում էր այն մտքից, որ աշխարհի գեղեցկուհին այժմ իրեն այդքան մոտ է:

Վերջին մի քանի քայլերի ընթացքում նա սկսեց շփոթվել ու ամաչել, կարծում էր՝ կհամբուրվեին: Իսկ Էլլան ինչ-որ աներևույթ մի ուժից սկսեց ընկրկել և փոքրացնել քայլերը՝ կարծես վտանգ կանխագուշակելով: Այդ ամենը շատ արագ կատարվեց, բայց Նեկրիստոն հասցրեց որսալ այդ անակնկալ ընկրկումը: Դրանից նրա շփոթմունքն առավել աճեց, և իրեն կորցնելով՝ նա արագ մոտեցավ ու մոտենալուն պես անմիջապես գրկեց Էլլային՝ իր ցրված մութ աչքերը հառելով ուղիղ նրա խոշոր աչքերի մեջ, որ այդ պահին չէին ժպտում.

—Տխուր ես...

—Գիտեմ...

—Ո՞ւ:

—Ուրիշ է ամեն ինչ... Աշխարհը... Ուրիշ է աշխարհը՝ հեռու այն հեքիաթից, որ ես էի հորինել: Ձեռքերն են ուրիշ, խոսքերն են ուրիշ, գուցե հիմա ես էլ եմ ուրիշ: Ուրիշ են մարդիկ, որոնք ժպտում են, ուրիշ են խոսքերը, որոնք ասվում են, ուրիշ են շուրթերը՝ զուր համբուրվում են, և՛ ուրիշ, և՛ հարազատ... Հասկացի՛ր, Նեկրի՛ստո, ես վաղուց արդեն մեռել եմ անցյալում ու ինձ ետ չես բերի, ու խնդիրն ամենևին էլ քո մեջ չէ: Չեմ էլ պատկերացնում մեկին քո փոխարեն, որ այս ամենից հետո կսիրեր ու կամք կունենար

մոտենալու այնպիսի մաշված շուրթերի, ինչպիսին իմն են հիմա, անկախ նրանից, թե ինչ հպարտ անցյալ են ունեցել դրանք...

Էլլայի աչքերը չդիմացան, բայց բաց մնացին. Նա ցավեցնելու աստիճան կծոտեց շուրթերն ու շարունակեց.

—Դու ամենամեծ հրաշքն էիր, որ կարող էր տեղի ունենալ ինձ հետ հիմա, բայց... Բայց ախր հենց դու էլ գիտես, որ ինձ մոտ չես գալիս, դու սիրում ես այն աղջկան, որ նստած էր լսարանում ու մտածում էր մի ինչ-որ հիմար խնդրի վրա... Նա մնացել է այնտեղ, այն լսարանում... ու քո սրտում, իսկ իրականում նա չկա...

Նեկրիստոն քարացել էր: Նրա մտքով անգամ չէր անցնում, որ Էլլան ոչ միայն կարող էր մի քանի վայրկյանի ընթացքում գուշակել իր մտադրությունը, այլև միանգամից սկսել մերժման տեքստն՝ առանց առաջարկությունը լսելու: Նա ամբողջովին կորցրեց իրեն, ձեռքից գցեց վարդը, բայց կարծես իրեն իսկ գտեպնդելու համար սեղմեց օղակը՝ Էլլայի նուրբ իրանն առնելով էլ ավելի ամուր ձեռքերի մեջ: Նա ամուր փակեց աչքերը, ու արցունքները, այտերը շոյելով, գլորվեցին դեպի այգու կամրջի կիսաթաց հատակը: Դրանից հայացքը նորից վեր բարձրացնելով՝ ասաց.

—Մի՛ դատապարտիր ինձ՝ երկրորդ անգամ կորցնելու քեզ, Է՛լլա, ես սիրում եմ քեզ, դու կաս...

—Ես կամ քո գլխում միայն, գուցե նաև քո սրտում, իսկ քո դիմաց հիմա մի ուրվական է կանգած՝ հալածված իր անցյալից, վախեցած իր անհայտ ապագայից ու կապված ներկայից մի բարակ թելով միայն: Մի տարօրինակ անհանգստություն կա, որ չեմ կարող բառերով բացատրել: Խճճվել եմ իմ անհաշվելի դժբախտությունների ոլորաններում: Ես պետք է մտածեմ, Նեկրի՛ստո, պետք է հասկանամ, թե ինչ եմ ուզում այս կյանքից: Ես նախ պետք է ինձ հասկանամ... պետք է մտածեմ... Վաղը կխոսենք...

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

## ՄԻԵՎՆՈՒՅՆ Է, ՄՆՈՒՄ ԵՍ ԴՈՒ ԾԱՂՐԱԾՈՒ

*Чем выше мораль, тем глубже кризис.*

Ծերուկը խոր հոգոց հանեց... Նա վաղուց էր կասկածում, որ Նեկրիստոյի սիրտը տանջում է ինչ-որ անհանգստություն, բայց չէր էլ կարող պատկերացնել, որ իր երիտասարդ ընկերը մի գրեթե ավարտուն և այդքան խճճված սիրային պատմության հերոս կարող էր հանդիսանալ՝ առանց իր գիտության: Եվ այժմ ի՞նչ կարելի էր ասել: Ինչպե՞ս փարատել նրա խոցոտված ու փոթորկված սիրտը: Ի՞նչ խորհուրդ տալ մի տղայի, որը... սիրահարված է: Աղջիկը հավանաբար որոշել էր խզել կապերը, բայց այս ենթադրության բարձրաձայնումն անգամ կարող էր թևատել երիտասարդ սիրահարի հոգին: Նաստալդը բավական երկար ժամանակ չխոսեց, կարծես ժողովում էր մտքերը.

—Սիրելի՛ս, կանայք շատ տարօրինակ արարածներ են, նրանք այնքան փոփոխական են, այնքան անկանխատեսելի ու այնքան նրբազգաց: Նրանք շարժվում են բնազդով, իսկ թե այն ինչ է հուշում նրանց, մենք՝ տղամարդիկս, երևի երբեք չենք հասկանա: Աղջիկը պարզապես շփոթված է, նրա հետ այնքան բան է կատարվել, այնքան մաղձ է կուտակված նրա սրտում, այնքան չարտասված արցունքներ: Նա հիմա այնքան բան է զգում, լցված է բազմաթիվ իրարամերժ մտքերով ու զգացմունքներով: Նա պետք է պրպտի իր հոգին, հասկանա ինքն իրեն, հասկանա ու գիտակցի իր չստացված սիրո հիմքերը: Այս ամենից հետո միայն նա կորոշի, թե ինչ է իրականում ուզում: Նրան ժամանակ տուր, տղա՛ս: Թող հանգիստ մտածի, թող որ հասցնի մարսել իր հետ կատարվածը և երբ կհաշտվի եղածի հետ ու կգիտակցի, որ կատարվածն արդեն անցյալում է մնացել, ու էջն արդեն թերթվել է, նա անպայման կցանկանա նոր էջը սկսել քեզ հետ, չէ՞ որ դուք իրար սիրում եք: Հանդարտվի՛ր, Նեկրի՛ստո, ամեն ինչ լավ է լինելու, և անկախ ամեն ինչից, անկախ նրա կայացրած որոշումից՝ կարևոր է, որ դու միշտ իմանաս, որ նա սիրում է քեզ: Իսկ սիրող մարդիկ կարող են նաև սխալ ընտրություն կատարել: Ամեն դեպքում, ինչ էլ որ տեղի ունենա, նշանակում է՝ բարին դա է: Դու այժմ շատ տաքացած ես, իսկ թեժ գլխով մտածել պետք չէ, գնա՛ տուն և փորձի՛ր մտածել... ոչնչի մասին: Դու հյուծվել ես, իսկ քո հոգին ու միտքը խուճապահար սավառնում են ապագայի խաչմերուկներում՝ դեգերելով հնարավոր զարգացումների ոլորաններում: Մտքերդ հավաքի՛ր, կենտրոնացի՛ր և փորձի՛ր սառը դատել: Գնա՛ տուն ու աշխատի՛ր քնել: Իսկ երբ առավոտյան արթնանաս, կհասկանաս, որ պատրաստ

ես այդ վճռորոշ խոսակցությանը: Իսկ աղջիկը, համոզված եմ, ճիշտ որոշում կկայացնի: Գնա՛ , Նեկրի՛ սար, բարի գիշեր...

***

—Ողջու՜յն, բարեկա՛մ, կարո՞ղ ես մի քանի րոպե ինձ տրամադրել:

Լռություն էր խավար սենյակում. ունայնության ճառագայթները անշշուկ բեկվում էին հին կահավորանքի կնճռոտ մակերեսից: Խռպոտ ծեր ձայնը զարմանալիորեն ստիպված եղավ նորից հնչել, չնայած որ համատարած անդորր էր.

—Լսի՛ ր, սիրելի՛ ս, ես հասկանում եմ, որ միտքդ այնքան զբաղված է, որ ինձ համար ժամանակ չունես, բայց հավատա՛ , ես կարող եմ քեզ օգտակար լինել. ինձ դժվար է քեզ տեսնելը այս վիճակում, երբ մտքերդ անկախանում են գիտակցությունիցդ ու սավառնում անորոշ կածաններով:

Հանկարծակի բարձրացած քամու պատճառով լուսամուտի շրխկոցով փակվելն ընդմիջեց բառերի շարքը: Բայց խոսողը համառ էր, չլսողը՝ նույնպես... Սակայն երբ վերջինս թեքեց հայացքը աղմուկի կողմը, ձայնը շարունակեց՝ զգալով, որ նա ամբողջությամբ սուզված չէ իր մտորումների մեջ և դեռևս ի վիճակի է արձագանքելու արտաքին ազդակներին և ոչ միայն արտաքին...

—Պետք չէ փորձել փախչել ինքդ քեզնից, տե՛ ս, թե դա ինչի կարող է հանգեցնել: Քեզ նոր չեմ ճանաչում, գիտեմ, որ բնությամբ հարմարվող չես, սակայն կան բաներ, որոնց հետ պետք է հաշտվել և ընդունել այնպես, ինչպես որ նրանք կան, օրինակ...

—Նկատի ունես անցյա՞լը: Մի՛ ծիծաղեցրու, խնդրում եմ, նոր չէ ասելիքդ, և զուր ես փորձում քեզ փորձառու ներկայացնել, ես և դու միևնույն փորձն ունենք, այնպես որ գնա՛ ու քեզ ուրիշ ունկնդիր փնտրիր: Ի՞նչ կարող ես դու ասել, որ ես չգիտեմ:

—Դու անտանելի գոռոզ ես, ինչպես միշտ, հատկապես երբ ինչ-որ խնդիր ունես: Բանն էլ հենց այն է, որ ես նպատակ չունեմ քեզ նոր բան սովորեցնելու, ես պարզապես ուզում եմ հիշեցնել մի քանի ճշմարտություն, որ դու շատ լավ գիտես, ուղղակի սովոր ես մոռանալ, երբ մտածելու բան շատ ես ունենում:

—Եթե եկել ես հիշեցնելու, որ ես ամենավերջին անհաջողակն եմ, ուրեմն դու արդեն կատարեցիր սխրանքդ, հիմա հանգիստ թող իմ ջարդոտված հոգին:

—Ո՛չ, ես քեզ դա չէի ուզում ասել, բայց եթե շարունակես ինձ ծաղրել կամ մտածել, թե ես եմ քեզ ծաղրելու եկել, ապա կհեռանամ:

—Դու ո՞վ ես, դու չկաս, դու իմ երևակայության հերթական արդյունքն ես: Ես եմ քեզ հորինել, որ մենակ չմնամ, երբ մենակ եմ... Դու կգնաս, քեզ կհաջորդեն մյուսները. իմ երևակայությունն անսպառ է, և...

—Հիվա՛նդ,– շեշտակի ընդհատեց ձայնը:

Հուսահատ մեղմ հոգոցը և գլխի միաժամանակյա խոնարհումը նշան էին համաձայնության հանկարծակի հնչած ճշմարտության հետ:

—Տեսնու՞մ ես, ես էլ երբեմն իրավացի եմ: Ու ես քեզ օգնելու համար եմ այստեղ, իսկ դու երբեք ինձ չես ուզում լսել: Ինչի՞ տեղ ես քեզ դրել: Մի՞թե կարծում ես` դու ես ամենաիմաստունը, կամ դու ես կառավարում իրականությունը: Կամ ինչո՞ւ ես նախախնամության հոգսերը փորձում փաթաթել վզիդ: Ի՞նչն է քեզ խանգարում մի պահ բաց թողնել այդ սովորույթներդ ու հետևել հոսանքին: Ու ընդհանրապես, դե՛ն նետիր այդ գրքերը, դրանք քեզ սխալ ուղղությամբ են տանում, իսկ ավելի ճիշտ` դու չես կարողանում դրանք ըստ նշանակության օգտագործել:

—Չլինեին դրանք` ես վաղուց ճկել էի կյանքի բալաստի ծանրության տակ: Դու գիտես, որ դրանք անհրաժեշտ հակակշիռն են հոգուս կայունության համար: Դու պետք է, որ իմանաս. դրանք են իմ ամենավստահելի ընկերները և միակ ընկերները...

—Ես երբևէ այդպիսի ընկերություն չեմ տեսել, որ ընկերն ընկերոջ քունը խանգարի, դա, մեղմ ասած, այնքան էլ ճիշտ չէ:

Քամին, որ արդեն վաղուց ներխուժել էր սենյակ, վկա էր զրույցին ու վայելելով կողմերի լիակատար անտարբերությունն իր նկատմամբ` կամացուկ թերթեց բացված հինավուրց գրքի խունացած էջերը: Նրանց շրշյունին համբերատար արձագանքեց վարագույրի խշխշոցը, որի մեղավորը նորից քամին էր: Գիրքը բացվեց հարյուր յոթանասուներկուերորդ էջի վրա, որտեղ գրված էր.

*Քնքուշ մի հնչյուն, թեթև մի թռչուն,*
*Գալարվեց ձեռքում խենթ սիրահարի,*
*Փաթաթվեց նրա երկար մատներին,*
*Կամացուկ սահեց ստեղնաշարերին,*
*Մի սուր ճիչ հանեց, հետո կտրվեց,*
*ՈՒ թափվեց կրկին...*
*Համբուրեց մեղմիկ նրա մատները,*
*Գլորվեց ընկավ ալիքի թևին...*

*Մեկ խոսեց հանդարտ, մեկ զարնվեց ափին...*
*Ու լռությունը զարմացավ մի պահ...*

Լռությունն իրոք որ կորցրել էր իրեն. այն իր տեղը պարզապես չէր գտնում՝ լսելով համրի և խուլի խոսակցությունը, որը շարունակվեց այսպես.

—Դու երբևիցե տեսե՞լ ես՝ ինչպես են առկայծում վաղորդյան աստղերը:

—Այո՛, պատահել է երբեմն, գուցեև հաճախ, մի քանի օր առաջ էր վերջին անգամ:

—Ե՞վ, ինչի՞ էր դա նման, կպատմե՞ս ինձ:

—Դրանք այնքան մտացածին էին, որքան որ դու ես: Դրանք իմ հիվանդ երևակայության ստեղծագործություններն էին, որ բախում էին անհամար մտորումների կողպեքով կոճկված սնդուկի ներսից:

—Հետո՞: Բացեցի՞ր այն:

Նա կտրուկ հայացքը սևեռեց հայելուն, կարծես նախընտրեց հայացքով պատասխանել:

—Հասկանալի է, բանալին էիր կորցրել:

—Ցավն այն է, որ գիտեմ՝ որտեղ է այն, բայց չգիտեմ՝ ինչպես ձգեմ դեպ ինձ, գուցե հուշե՞ս:

—Ուրախ եմ, որ վերջապես դու էլ սկսեցիր ինձ հարցեր տալ: Այո՛, կհուշեմ: Ոչ մի բանալի պետք չէ ձգել. ցանկացած սնդուկ, որ ընկնում է գլխիդ, ընկնում է իր բանալու հետ միասին: Քեզ բնավ պետք չեն այն սնդուկների պարունակությունները, որոնք քո կյանքից դուրս են ու քեզ հետ ոչ մի կապ չունեն: Իսկ բանալին ես եմ, որ կամ:

—Դե համեցի՛ր, խնդրե՛մ, գլխիս մեջ և պտտվի՛ր մի երկու պտույտ:

—Ես այնտեղ եմ արդեն և դրանով եմ զբաղված արդեն մի քանի րոպե:

—Ների՛ր գոռոզությանս, բայց ես ինչ-որ տարբերություն չեմ զգում:

—Անհամբե՛ր երեխա, ամեն ինչ միանգամից երբեք չի լինում...

—Երբեմն լինում է, գուցեև հաճախ, մի քանի օր առաջ էր վերջին անգամ: Ու գիտես, որ իմ չափ համբերություն մեկ էլ թերևս վիպագիրներն են ունեցել:

—Պատմի՛ր, ես լսում եմ:

—Մի ամիս չի անցել: Նա կար, նա հայտնվեց հանկարծակի, երբ ամենևին չէի սպասում, հետո անհետացավ, հետո նորից հայտնվեց, դե գիտես՝ սովորաբար ինչպես է լինում: Այդ ընդմիջմանն էլ հենց ես տեսա ժպիտն աստղերի, բայց հետո ամեն ինչ չքացավ: Չքացավ և նա, ես կորցրեցի իմ բանալին:

—Պետք չէ խուճապի մատնվել:

—Ամենևին. ես կոփված եմ արդեն, սովոր եմ դրան, ուղղակի միշտ մեղադրում եմ ինձ, թե ինչու պահը բաց թողեցի:

—Պահը դեռ նոր պետք է գա:

—Ուզում եմ հավատալ դրան, բայց հոգուս խորքում վստահ չեմ:

—Մի՛ մատնվիր խուճապի:

—Փորձում եմ, բայց մտքումս անընդհատ նրա դեմքն է լողում, ու նրա ճողփյունից ուղեղիս հեղուկը կարծես կաթում է ականջներիցս...

—Առանց խուճապի:

—Ե՞րբ է այս ամենի վերջը գալու: Վերջապես ե՞րբ կգա այն օրը, որ էլ կարիք չի լինի ինձ հիմար զգալու:

—Երբ առաջին անգամ ինքդ քեզ հավատաս: Եվ երկրորդ անգամ ինքդ քեզ վստահես: Դու կարող ես, ես հպարտանում եմ քո կարողություններով ու քեզանով ընդհանրապես:

Հազիվ նշմարելի ժպիտը մի պահ խաղաց ինքն իր ներքին ձայնի հետ մտովի երկխոսության բռնված Նեկրիստոյի դեմքին, բայց՝ մի պահ ընդամենը ու արագ անցավ:

—Ա՜խ, որքան կարիք ունեմ այդ խոսքերը լսելու, շնորհակալ եմ, որ պարգևեցիր ինձ այդ հաճույքը: Բայց ինձ թվում է՝ ևս մի բանի կարիք ես դեռ ունեմ... չգիտեմ՝ ինչի, բայց մի բան, թվում է, պակաս է:

Այս ասելով Նեկրիստոն նորից հայացքը սևեռեց հայելուն ու նրա մեջ տեսավ այս անգամ իրեն: Դեմքը գունատ, հազիվ լուսավորված հեծկլտացող մոմի դեղին վերջալույսով, աչքերը հոգնած, հոնքերը կիտած, շուրթերի անկյունները միշտ ամուր գամված:

—Գիտեմ, մի բան պակաս է,– լսվեց նորից,– բայց մի պահ սպասի՛ր, ես այն կբերեմ քեզ համար,– համառեց ներքին ձայնը:

—Դե որ այդպես է, ես կհասցնեմ դեմքս սառը ջրով թարմացնել, մինչ վերադառնաս,– ասաց Նեկրիստոն կամացուկ և վեր կացավ աթոռից:

Նրա բոբիկ ոտքերի անաղմուկ քայլը, սակայն, նրան տարավ սկզբում պատուհանի մոտ՝ քամուն դուրս վռնդելու համար, այնուհետև նոր միայն՝ բաղնիք: Երբ վերադարձավ, կատարյալ մութ էր. մոմն արդեն հանգել էր: Դեպի անկողինը տանող ճանապարհին նրա ոտքը շատ ցավոտ դիպավ աթոռի ոտքին, և ցավից կատաղած՝ նա շրխկոցով աթոռը տապալեց գետնին: Ցավից շուրթերը կծոտելուց հետո, երբ հորիզոնական դիրք ընդունեց, վերհիշեց ձայնը, որն արդեն չկար: Եվս մի ճմռթված ժպիտ սեփական տխմարության հասցեին, և խաբված լինելու զգացումը սրտում, ալկոհոլի մի ամբողջ դույլ դեռ արյան մեջ և ծխախոտի մի ձմեռվա ածուխ թոքերում՝ նրա գիտակցությունն աստիճանաբար դիրքերը զիջեց քնին:

Դժվար թե նա հասցրեց ընկերանալ տարօրինակ գրուցակցի հետ, և դեռ հարց է, թե ինչպես կհասկանա այս միջադեպը, երբ արթնանա ու տեսնի աթոռը գետնին, հայելին՝ փշրված: Միայն գիրքն էր դեռ իր տեղում՝ սեղանին, բայց բացվել էր արդեն երկու հարյուր տասնչորսերորդ էջը, որտեղ ասվում էր.

*Քո սրտի հետ ընկերացի՛ր,*
*Սիրի՛ր նրան դու հենց այնպես,*
*Մի պահ ոչինչ մի՛ մտածիր,*
*Գուցե հոգուդ ձայնը լսես:*
*Մի՛ պարտադրիր քեզ հիանալ*
*Թշվառ կյանքով ճոխ վանդակում,*
*Փորձի՛ր ապրել ու մահանալ*
*Եվ հետք թողնել այդ գնդանում:*
*Ու ցանկացի՛ր չհասկանալ՝*
*Ինչ ես արդյոք դու ցանկանում...*

* * *

—Հասկացի՛ր ինձ, խնդրում եմ: Դու ինձ համար շատ թանկ մարդ ես եղել, բայց, ցավոք, ոչ ավելին... Ու հավատա՛, ես փորձել եմ ինձ ստիպել հավատալ, որ սիրում եմ քեզ...

—Չեմ հասկանում,– կիսաձայն հառաչեց տղան,– չեմ հասկանում... Ախր ի՞նչ ստիպելու մասին է խոսքը:

Սակայն աղջկա հայացքը սառն էր ու աննկուն, հայացք, որը կերտելու համար նա այնքան երկար էր տառապել:

—Դու շատ լավ էլ հասկանում ես... Այս ամենը պարզապես սխալ էր, սխալ էի ես, սխալ էիր դու, սխալ էր մեր ամեն մի զրույցն ու իմ ամեն մի ժպիտը, որ դու գուցե այլ կերպ ես հասկացել:

—Այո՛,– խոր հոգոց հանեց տղան ու կիսաձայն շարունակեց, կարծես ինքն իր հետ էր խոսում,– այս կյանքն է սխալ... Ես եմ սխալ, որ հերթական անգամ ամեն ինչ բոլորովին այլ կերպ հասկացա, ու... դու ես սխալ,– նա հայացքը կտրուկ ուղղեց զրուցակցին:– Դու՛... որ անտուն կատվի պես թափառում էիր աղոտ փողոցներով: Իսկ ես քեզ տուն տարա, կերակրեցի, ջերմացրի ու այն ամենը, ինչ ունեի, առաջարկեցի քեզ, սիրտս բացեցի քո ճանկերի առաջ: Իսկ դու՞... դու նույնիսկ ճանկերդ չխրեցիր նրա մեջ... դու պարզապես հեռանում ես՝ պոչդ անհոգ թափահարելով,– վերջին բառերն

արտասանվեցին մի ջղաձիգ ժպիտի ուղեկցությամբ, որ մի տեսակ անբնական տեսք տվեց նրա դեմքին:

—Չգիտեմ՝ ինչ ասեմ, ների՛ր, խնդրում եմ, բայց հասկացի՛ր նաև ինձ. ես հենց այն պահին, երբ հասկացա, որ միևնույն է, չեմ կարող հրամայել սրտիս քեզ սիրել, քեզ ասում եմ դրա մասին: Ես անկեղծորեն չեմ ուզում, որ դու տառապես և կապվես ինձ հետ, որովհետև համոզված եմ, որ մեր միջև ոչինչ չի ստացվի: Ախր սիրտը միակ բանն է, որին չես հրամայի: Ների՛ր, որ չեմ պատկերացրել, որ դու այսքան արագ կարող էիր կապվել ինձ...

—Ի՞նչ... կապվե՞լ... արա՞գ...– Տղայի համար այս ամենն ուղղակի անհեթեթ էր հնչում: Իհարկե կապվել էր, իհարկե համոզված էր, որ նույնքան էլ աղջիկն է կապվել իրեն: Իհարկե, արդեն բավական ժամանակ շփվում էին, այնքան, որ կյանքից հիասթափված և այլ շրջապատ չունեցող տղան հասցներ այնքան կապվել, որ այլևս կյանքն առանց նրա չկարողանար պատկերացնել: Ու հիմա լսում է այսպիսի խոսք:– Դու ինձ ձե՞ռ ես առնում: Քեզ ամեն ինչ թույլ կտայի, բայց ոչ դա:

—Դու այդպես չես կարծում, դու ինձ լավ ես ճանաչում...– անզոր շշնջաց աղջիկը՝ առանց հեռացնելու արդեն խոնավ հայացքը թաց հատակից,– ենթադրենք՝ այդպես ստացվեց, բայց միևնույն է: Մենք երևի ստացանք այն, ինչ ուզում էինք, եթե դու դա չէիր ուզում, ապա ես էլ չէի այրվում ցանկությունից, այլ մոխրացած կուչ էի եկել մի փոշոտ անկյունում և, մեկ է, չէր ստացվում պատսպարվել կյանքի քամու բորբոքիչ ազդեցությունից: Ես չափից շատ եմ քեզ հարգում, ու ամենայն ազնվությամբ քեզ լավն եմ ցանկանում,– կմկմալով արտաբերելուց հետո աղջիկն արդեն թաց աչքերով ու հեկեկոցով շարունակեց կարճ մենախոսությամբ.– ա՜խ, Աստվա՜ծ, ինչո՞ւ ինձ բավարար իմաստություն չես տվել, որ սկզբից ևեթ կանխեի այս փակուղային հարաբերությունը, ինչո՞ւ ես միանգամից չէի հասկացել, որ նա այլ հույսեր է կապել ինձ հետ: Ինչո՞ւ ենք մենք երկուսով հիմա դրա համար տառապում:

Տղայի մտքերն արդեն այլ ուղղությամբ էին գնում. նա զգայականի գերակշռության տակ հակվում էր մտածելու, որ աղջիկը ոչ միայն անկեղծ չէ, այլև դիտավորյալ է այս թատերական ներկայացումը սարքել՝ բաժանումն իր համար արդարացված և տղայի համար ավելի ցավալի դարձնելու համար: Նեկրիստոն քիչ էր մնում կասկածեր, թե այս տեքստը մտածված է եղել հենց այն պահից, երբ նրանք սկսել էին շփվել: Նա նույնիսկ չէր զարմանա, եթե իմանար, որ այդ ճառն Էլլայի հերթապահ խոսքերից մեկն էր, որ նա, ըստ երևույթին, բավական հաճախ էր օգտագործում այս ու այն կողմից հայտնված և իրենով հետաքրքրված մոլախոտերը վերջնականապես արմատախիլ անելու

համար: Նրա աչքում սիրեցյալի ձյունասպիտակ պատկերը սկսեց պատվել գորշ շղարշով:

—Ինձ չափից շատ հարգել պետք չէ: Ինձ սիրել էր պետք... չափի մեջ... ժամանակին...

—Գիտեմ, բայց կյանքն այնպիսի բան է, որ...

—Բավական է ինձ կյանք սովորեցնես: Ես գիտեմ՝ ինչ է այն: Գիտեմ՝ ինչպիսին է այն: Սխալ: Սխալ է այս կյանքը,– այս եզրահանգումից հետո արդեն հերթը տղայի մենախոսությանն էր,– գիտեմ... սակայն չեմ կարողանում հասկանալ խղճիդ... գուցե ինքդ էլ չես կարողանում: Ախր մի՞թե դժվար է քերծել նուրբ հոգին. բոլորն էլ կարող են, բայց դու՝ իմ սիրելին... իմ հրեշտակը... ինչո՞ւ... Անհավատալի է... բայց գիտե՞ս՝ իմ հիասթափությունն էլ իր պատմությունն ունի, իզուր ես քեզ վերագրում: Եվ քո արցունքները հիմա... Ախր ինչպե՞ս կարող եմ մխիթարել քեզ ես, որ ծաղրածուի կամավորն եմ կյանքի կրկեսում: Գուցե ժամանակին շատ ես ծիծաղել, հիմա ժամն է հատուցման... Ամեն դեպքում մի՛ կարծիր, թե դու ես դժբախտը: Հին չեն քո արցունքները ու մաքուր էլ չեն այլևս ու քոնը չեն եղել երբեք... Իսկ իմ շուրթերով հիմա ես չեմ քեզ հետ զրուցում, այլ հենց անդադար ժամանակի ժամանակավոր այն դադարը, որ քեզ կտրեց քո երջանկությունից, ինձ էլ՝ քեզնից... Նույնիսկ եթե քեզ վերագտնես, ինձ այլևս չես գտնի... որովհետև ազնիվ չէր քո փնտրտուքը և իմ գտածոն, որ ընդամենը դու էիր, իսկ կորուստս անգին է... բայց մեկ է, կարող ես ինձ սիրել... Ոչ նրա համար, որ սրտեր ես կողպել, այլ որ կարողացել ես կրքեր բանալ և նվիրում նվիրել... Հիմա, երբ խոսում ենք, այնուհետև նոր փորձում մեր ասածներին որևիցե հարիր մեկնաբանություն գտնել, մենք դարձյալ կերպար չենք, այլ միայն ձևավորում մեկս մյուսի կյանքում: Իսկ կյանքը, որ մի գթառատ աճպարար է միայն, մեզ ամեն անգամ օդ շպրտելիս նախ փոխանակում է տեղերով, հետո էլ արժանացնում գետնի հետ ճակատային բախման, որն այնքան տհաճ չէ, ինչքան այն գիտակցումը, որ նորից են քեզ գետնից պոկում, մինչդեռ օդում երկար չես մնա... Բթացել ենք ծափի աղմուկից և դարձել մեր իսկ ստրուկը...

Այս ոչ այնքան կապակցված և մտածմունքներով ընդհատված խոսքերից հետո աղջկա հատուկենտ արցունքները վերածվեցին հորդառատ լացի: Խեղդվելով արցունքների արանքից՝ նա հազիվ կարողացավ ասել.

—Ես քեզ չեմ սիրում...

* * *

Սովորական գիշեր էր, սովորական փողոց՝ ժլատորեն լցված ծիրանագույն լույսով: Իսկ Նեկրիստոն քայլում էր՝ գրեթե դիպչելով շենքերի պատերին, որտեղ ավելի խավար էր: Կարծես թաքնվում էր: Իր մտքերից էր թաքնվում, որոնք այսօր վերջապես դադարել էին հիմար ձևանալուց ու անկեղծ խոսում էին սրտի ու հոգու հետ երազանքների մասին: Նա վերացել էր բոլոր ժամանակներից, հարազատ կորցրածի դառնությամբ կախել գլուխն ու բաժանվել իրականությունից՝ մնալով օդում քարացած: Այլևս զարթոնք էր...

Հնամաշ ոտնամանների ձայները հեռվից լսվող մի դաշնամուրային մեղեդու նման փորձում էին ճեղքել խավարը և սալարկված ու անձրևից դեռ տեղ-տեղ թաց փողոցներից վերացնել իրենց կրողին ու նետել երազված երջանկության աշխարհը, որին հենց իրենք՝ ոտնամանները, չէին սազի: Հենց այդ պատճառով էլ երևի նրանք Նեկրիստոյին բերեցին իրենց թաղամաս՝ աղբամանների մոտ: Երբ ոտնամանների երաժշտությունը դադարեց, որպես դրանց սահուն շարունակություն՝ նրա աչքերից սկսեցին դեպի հատակի ճեղքերը վազել իրեն լքող հույսի հատիկները:

Նաստալդին ոչինչ բացատրել պետք չէր, նա հանդիստ սպասեց մինչև կգար սիմֆոնիայի իր մասը...

—Քո՝ վաղուց արդեն սիրելը մոռացության մատնած ու դրա արդյունքում արիացած սիրտը թույլ տվեց, որ քամին խաղա քո գրքի այն էջի հետ, որը կյանքդ իմաստավորելու միակ հնարավորությունն էր. քամին, օգտվելով արիացած սրտիդ անտարբերությունից, նույն անտարբերությամբ ու հեգնանքով պոկեց այդ էջն ու գցեց կրակի բերանը: Կրակն ագահաբար լափեց այն վայրկյանների արանքում. վաղուց այդքան համեղ պատառիկ չէր համտեսել: Ուշ է... Հիմա զուր ես փորձում ձեռքդ խցկել նրա երախը: Մոխրից բացի դու այնտեղ էլ ոչինչ չես գտնելու. ձեռքդ գուցե այրես: Սակայն սարսափելին հաստափոր գրքի բարալիկ էջի կորուստը չէ, այլ այն, որ առանց այդ էջի թեկուզ ողջ գիրքն էլ ծամես, իմաստը, միևնույն է, չես հասկանալու: Ու դեռ երկար դու կվազես ստորակետից ստորակետ, միջակետից միջակետ, գլխիկոր կքայլես տողերի արանքով, կփորձես դնել վերջակետ, սակայն վերջակետն այդ կրկին կդառնա բազմակետ... Կսկսես քրքրել մոռացումդ ու հանկարծ կգտնես անզգուշաբար այնտեղ նետված մեկին: Հետո նա կհասկանա, որ իր մեջ գտել ես ուրիշին, ու ստիպված կլինես նորից քրքրել մոռացումդ, մինչև կգտնես մյուսին: Վերջապես կգտնես հենց նրան, ու ամեն ինչ կսկսվի նորից: Հետո մի անիմաստ օր այլևս նրան էլ չես գտնի: Խելագարի պես կսկսես քրքրել այդ անիծյալ մոռացումդ, ինչպես ես աղբամանն եմ

քանդում, երբ սոված եմ... Ու չես գտնի: Մի կողմ կշպրտես անցյալը, քարուքանդ կանես ներկան ու չես գտնի: Հուսահատ կփորձես հուսալ, որ կգտնես նրան ապագայում, բայց տարտամ հույսերդ վաղուց արդեն քեզնից փախել են դեպի հատակի կիսաբաց ճեղքերը... Վերջապես ճարահատված նորից կսիրես ու կհասկանաս, որ մի անգամ են սիրում ու սիրում են մինչև վերջ՝ անցնելով հազարավոր հորինված վերջեր ու հասնելով անվերջին...

Նեկրիստոն անորոշ երկու քայլ արեց հետ, շրջվեց ու գրեթե մոռացավ այն ամենը, ինչ քիչ առաջ ասում էր Նաստալդը:

—Գիտե՞ս, ուզում եմ՝ սիրտս հանեմ ու գրողի ծոցն ուղարկեմ:

—Ես նրան լավ կնայեմ:

Այստեղ Նաստալդի հումորն ամենևին տեղին չէր, բայց այդպիսին էր նրա հումորը. անտեղի գալիս ու այդպես էլ չքանում էր, և տպավորություն էր ստեղծվում, թե չստացվեց, իսկ Նաստալդը մտածում էր, թե չհասկացան, բայց դրան մեծ կարևորություն չէր տալիս՝ հուսալով, որ հետո կհասկանան:

—Չեմ կասկածում,– պետք է թեթև ժպտար, բայց չժպտալով ասաց Նեկրիստոն ու որոշեց չշարունակել քիչ առաջ ընդհատվածը՝ մտածելով, որ մեկ է, նախ՝ չի կարողանալու արտահայտել ողջ զգացածը, ու հետո՝ եթե նույնիսկ մի երկրորդ Նեկրիստո հայտնվեր, չէր հասկանալու իրեն: Եվ, ընդհանրապես, կային բաներ, որոնք սիրտ էին քամում, ու նա հարազատ հոգի էր ման գալիս, որ նկարագրեր զգացածը, բայց մեկ է, ամենաէականը բերանից դուրս չէր գալիս, մի տեսակ կոկորդից կախվում ու նորից կուլ էր գնում:

—Չէ՛, գիտեմ՝ հաստատ լավ եմ լինելու, ո՞ւր պիտի փախչի այդ երջանկությունը: Պարզապես հիմա մի քիչ հոգնել եմ, ուզում եմ նստել ու հանգստանալ առանց անցյալի ու ապագայի,– ասաց Նեկրիստոն, ապա մի պահ լռեց ու շարունակեց.– կյանքը սիրում է իմ վրայով անցնել:

Թափառականը մի յուրահատուկ ժպիտ նետեց նրա վրա, կարծես ափսոսալով, որ Նեկրիստոն մի շատ կարևոր բան չի հասկացել:

—Կյանքն ընդամենը ձեռնափայտով թրխկացրել է գլխիդ, նա շատ ավելիին է ընդունակ:

Նրա ձայնը դողաց, ու Նեկրիստոյին թվաց, թե նա արտասվում է, և արագ շրջվեց դեպի Նաստալդը:

Թափառականը կանգնած էր իր ողջ թշվառությամբ, իսկ ավելի ճիշտ կլիներ ասել՝ կիսականգնած էր: Անհայտ անցյալն այնքան ծանր էր կախվել նրա ուսերից, որ ծնկները մինչև վերջ չէին բացվում: Նեկրիստոն սխալվել էր, նա չէր արտասվում, բայց այնպիսի անորոշ հայացք էր նետել դեպի ոչ մի տեղ, որ անհնար էր անարցունք նայել այդ վաղուց արդեն հավերժ փակվել

ցանկացող աչքերին: Ինչքա՜ն ուժ ու կամք էր անհրաժեշտ այս աչքերն անարցունք պահելու համար:

—Ո՞րն է ապրելու քո հիմնավորումը, ծերո՜ւկ: Լավ, անցյալդ քե՜զ պահիր, հիմա ի՞նչ ունես կորցնելու, այդպես էլ չասացիր:

—Անցյալս, Նեկրի՛ սոո, ես մի բան ունեմ, ու հենց դա էլ վախենում եմ կորցնել՝ անցյալս,— կիսաձայն կրկնեց թափառականը:

—Անցյալդ... դա քոնն է, ոչ ոք չի կարող այն վերցնել քեզանից:

—Քո իմացածը այնքան էլ այն չէ, այնքան էլ իրական չէ: Ապրի՛ր, Նեկրի՛ սոո, ու ապրի՛ր այնպես, որ ներկադ արժանի լինի անցյալիդ, այլապես կկորցնես անցյալդ: Իսկ առանց անցյալի դու ոչինչ չունես: Պետք է ապրել, Նեկրի՛ սոո...

* * *

«Պետք է ապրել,— մտքում կրկնեց Նեկրիստոն անտուն թափառականի խոսքերը,— ապրել»... Այս բառը նրա վրա ինչ-որ տարօրինակ ազդեցություն թողեց: Բառից սկիզբ առած հախուռն մտքերի շղթան նրան տարավ բոլորովին այլ ուղղությամբ, որի մասին Նաստալդի մտքով անգամ չանցավ, երբ արտասանում էր իր կարճ մենախոսության վերջին բառերը: «Ապրել անցյալին արժանի, ես արդեն անցյալ չունեմ... Ապրել... ինչո՞ւ, ո՞ւմ համար. որպեսզի ամեն քայլափոխիս առերեսեմ սեփական «ես»-իս, որ անխոս հայացքով պիտի մատնանշի սեփական ոչնչությունս ու անզորությունս, որպեսզի ամեն մի գեղեցկուհու մեջ նորից ու նորից հուսահատորեն փնտրեմ նրան ու, իհարկե, չգտնեմ: Մի՞թե ամեն օր պետք է մաշկիս վրա զգամ օդում սավառնող այս տխմար քաղաքի բնակիչների փոքրոգությունն ու անիմաստությունը: Ապրեմ... ո՛չ, ավելի շուտ քարշ տամ իմ չնչին գոյությունը: Իմ սիրտը փշրված է, և ոչ միայն սիրտը. բոլոր հույսերս ու ակնկալիքներս, բոլոր երազանքներս մի վայրկյանում հօդս ցնդեցին՝ թողնելով միայն կործանիչ դատարկություն և անվերադարձ կորստի դառը գիտակցում: Ես ամբողջովին հյուծված եմ, ես էլ ապրել շարունակելու ուժ չունեմ»... Նեկրիստոն նույնիսկ չնկատեց, թե ինչպես քայլերը նրան բերեցին կամրջի մոտ... Նրա գլխում ծագած միտքը նույնքան անսպասելի էր, որքան սարսափելի, նույնքան բնական էր, որքան սոսկալի...

Տառապանքի սառը հողի ավելորդ ճեղքերից մեղմորեն երկինք էին արտանետվում սառրացված վերջին հույսերի նստվածքները: Նրանց կենարար շիթերը, սակայն, դժվար թե բավականացնեին հանգուցյալ հողակտորի անկյանք հորիզոններին: Մի թունավոր դառնություն անխնա հրկիզել էր

անսնունդ հողաշերտի ողջ կմախքը՝ թողնելով միայն անպիտան փշրանքներ և արյան ծարավ խոր ճաքեր: Ահա այսպես մռայլ էր Նեկրիստոյի ողջ կյանքը, և վերջին կոտրվածքից հետո համարյա բան չէր փոխվել: Այդ միևնույն բանն էր, հանուն որի նա վճռեց ապրել, և հիմա դրա շնորհիվ էր քայլում դեպի կախաղան: Անիմաստության շղարշն ամուր գրկել էր նրա քարկոծված հոգին և մտադրություն չուներ բաց թողնելու: Ներշնչանքի պակասից խեղդվողի ձեռքերն ամուր գամված էին չստացված սիրավեպի անմշակ խաչին, և փրկությունն ինքն էլ էր փախչում նրա անփայլ աչքերի սոսկալի արտահայտությունից: Վերջապես նա հասկացավ, որ կյանքը ոչ միայն անիմաստ է, այլ նաև պետք չէ ինչ-որ իմաստ փնտրել կամ որևէ իր կամ անձ շփոթել նրա հետ: Փոխարենը պետք է համբերատար սպասել կյանքի ավարտի այցին, բայց չէ՞ որ նա սպասել չէր սիրում: Չնայած՝ նա կարծես հենց սրան էլ սպասում էր. ճիշտ է, եղել էին պահեր, երբ նա անգամ հավատում էր իր հաղթանակին և երջանիկ կյանքի ուշացած գալուստին, բայց հավատացե՛ք, դրա համար առիթներ կային: Էլլայի ամեն մի ժպիտը սրել էր գիլիոտինի սայրը, որը, հիմա կախված Նեկրիստոյի գլխավերևում, փայլում էր պիտանի լինելու բավարարվածության զգացումից: Մահվան կանչերն այնքան քաղցր էին նրա համար, որ ամեն տեսակ տարակուսանք այլևս ավելորդ էր: Նա ոչ միայն ճգնում էր մոռանալ Էլլայի մերժումը, այլ նաև ինչ-որ մի կերպ սառեցնել սրտին, որ ոչ մեկին այլևս չսիրի ու չնվիրվի, բայց չէ՞ որ այդպես էլ անհեթեթ է ապրելը: Հակառակում նրան էլ ոչ ոք չէր համոզի: Այդ պահին նա իրեն համարում էր աշխարհի ամենադժբախտ մարդկանցից մեկը, և Նաստալդի երջանկությունն անգամ արդ նախանձելի էր: Ճիշտ է՝ փոքր-ինչ չափազանցված էին վիրավորված մտքի ընդհատված թռիչքները, բայց, անկասկած, անտանելի ծանր էր նրա վիճակը, և ամենաուժեղ կամքն ունեցողի համար անգամ դա մահացու աղետ էր...

Եվ ահա կանգնած էր խեղճ թագավորը «Ճակատագրական բաժանումների» մռայլ կամրջի վրա՝ հայացքը հառած դեպի «Չգնահատված հերոսների» անհատակ ձորը: Կայանել էր՝ կյանքերի անգույն հույսերից հյուսված թափանցիկ պարանից բռնված, հայացքը վերջին մտքերի եղբայրական գերեզմանին: Դառնաշունչ մեռելահամը թափահարում էր գզգզված հոգու վտիտ կմախքը և խոստանում էր, որ փշրումն անցավ կլինի: Հոխորտացող կրքերի շիկացած բովում նրա ճակատին դեռ սառը քրտինքի գոլորշիներ էին խարսխվել՝ տալով մեռնողի վեհության հասնող մի դիմանկարի սևագրի տեսք: Անտաղանդ ճակատագրի վրձնահարվածներից այլանդակության էր հասել այդ խեղճ թշվառի առանց այն էլ անշուք կերպարանքը, և ոչ ոք չէր գնահատի այդ պահին անօրինակ արվեստի այդ

ինքնաժխտող գործի ողջ գեղարվեստական արժեքը։ Նրա գլխին իզուր տեղացած տառապանքի սև ձյան անողոք փաթիլներն էին, որ հալվել էին նրա՝ համբույրի համ չզգացած բերանի մեջ՝ հեշտացնելով այն ամբողջ աղբի կուլ տալը, որ թքել հնարավոր չէր։ Կյանքն այնքան խորն էր նրան թաղել դագաղի մեջ, որ էլ հողի տակ թաղելու անհրաժեշտություն չէր լինի։ Ու ցանկացած ցուցանակ, որ մի ժամանակ նա շփոթում էր ուղեցույցների հետ և կուրորեն փորձում էր հետևել, այժմ ողողված էր միայն նրա ծաղրանկարներով, և նայելը միայն տարածում էր հոգին նվաճած անբեկանելի ցավն ամբողջ մարմնով մեկ։ Նույնիսկ եթե կյանքը ներողություն խնդրեր նրանից, դա էլ կնմանվեր ծաղրուծանակի։ Նրա սիրտը նրբորեն բարուրված էր փշալարերով, որոնց օղակը գնալով սեղմվում էր, մինչև կքամեր ողջ արյունն ու սրտի չիրը մատաղ կաներ իր անկուշտ աստվածներին։ Այդ ամենին անհրավեր հյուր էին դառնում նաև տրորված արժանապատվությանախտանիշներն ու ստորացված զգացմունքների վերջին հուսահատ ճիչերը, որ դժոխական թատերաբեմը դարձնում էին սոսկալի։ Ըստ էության վայրկյաններ էին, բայց այնքան երկար էին թվում, որ նա ժամանակ ուներ հասկանալու, որ կյանքի անհաբեկություններին դեմ պայքարի և ոչ մի միջոց արդյունավետ չէ, նույնիսկ եթե համախմբվի մի ողջ սերունդ։ Անելանելի վիճակի հետ առերեսումը փետրահան էր անում նրա՝ արհեստական մխիթարանքներից պատրաստված վերջին թևերը, որոնք, միևնույն է, այնքան զորեղ չէին՝ այդպիսի քամու ներքո մի ամբողջ կենդանի հոգու ծանրությունը բարձրում պահելու համար։ Նրան ապօրինաբար դուրս էին հանում իր սեփական ձեռքերով կառուցած փոքրիկ բանտախցից, որը միակ տեղն էր, ուր նա քիչ թե շատ ազատ էր զգում։ Այդ զազրելի նախախնամությունն ուղղակի արդուկում էր նրա անհամ արցունքները դեռ աչքերի մեջ՝ դեմքը թողնելով միայն քրտինքի հույսին։ Իսկ զույգ մաշված աչքերի, զույգ դեղնած այտերի, կնճռոտված ճակատի, անհանգիստ շնչառությունից արագ թրթռացող քթանցքների ու հուսալքության սոսկումից պինդ իրար կպած երկու շուրթերի համայնապատկերն արդեն դժվար էր նմանվում դեմքի, այն էլ՝ կենդանի։ Քավարանի անմար կրակներն ագահորեն լափում էին նրա անմեղ էության կոտրտված մնացորդները, իսկ տեղայնացնել այդ կրակի օջախն այլևս ոչ ոք ի զորու չէր։ Անպատասխան սերն էլ թեժացնում էր հուրը, և անմնացորդ նվիրումի խանձահոտը դառնում էր թունավոր։ Դա միակ տարերային աղետն է, որ տալիս է մեկ զոհ և լավագույն դեպքում՝ նաև մեկ վիրավոր. դժվար է ասել՝ սա բարորա՞կ դեպքն էր, թե՞ ոչ, բայց համաձայնե՛ք, որ այս պահին արդեն բացարձակ կարևոր չէր, թե որ գրողի ծոցում է այն մյուս մեղավորը, որ կա՛մ վիրավոր է, կա՛մ ոչ այնքան։ Սիրելուց Նեկրիստոն մերժում էր իր «ես»-ը

հանուն սիրեցյալի, բայց նրա պատճառով հոգեվարքում հայտնվելիս նրա գլխում էլ տեղ չէր մնացել այդ անիծյալ դշխուհու մասին մտածելու համար, որովհետև գլուխն ամբողջությամբ լցված էր շլավացող վերքերի կիսադեղին թարախով, որ քիչ էր մնում դուրս թափվեր ականջներից...

Զուր էր արդեն դառն հայհոյանքներ տեղալ այն երազների հասցեին, որոնք միտումնավոր թաղել էին նրա արթուն միտքն ապուշության հասնող լավատեսության անթափանց փոշում: Անիմաստ էր հանդիմանել սեփական սրտին, որ անզգուշությամբ մինչև վերջ բացվել էր մի հարազատ անծանոթուհու առջև և իր ամեն մի սիրառատ բաբախումը զոհել այդ հարազատի անշնորհակալ զոհասեղանին: Գուցե անիմաստ էր նաև մեղադրել այդ անծանոթին, որ այդքան ներելի կերպով մերժել էր մահամերձ սրտի հոգեվարքի վերջին գուրգուրանքները: Գուցե մեղավորն այդ հեքիաթային անծանոթի սիրտն էր կամ դրա բացակայությունը, կամ մեղավորն այդ սրտի բացակայության պատճառը հանդիսացող այն դահիճն էր, որ իր ամենաթողության կարգավիճակի պարտականություններից ելնելով՝ իրեն իրավունք էր վերապահել գլխատելու այժմ արդեն բացակա սրտում ծագած առաջին սիրո փխրուն ծիլերը: Սակայն այժմ անիմաստ էր փնովել առհասարակ որևէ մեկին, քանզի մեղադրանքների այդ շղթան կբերեր միայն մի փակ շրջանի, որում քայլամոլոր թափառելն էլ ավելի կհեռացներ Նեկրիստոյին իրական կյանքից: Իսկ վերջինս արդեն այնքան էր խրվել միօրինակ տառապանքի բորբոսների մեջ, որ ավելի շուտ նմանվում էր մղձավանջի, քան իրական կյանքի: Եվ դրանից եկող հիասթափության ու հուսահատության գարշահոտն այնքան անտանելի էր, որ ստիպում էր Նեկրիստոյին կասկածել՝ ուզում է արդյոք նա դուրս գալ բողոքների այն փակ շղթայից դեպի իրականության գիրկը, թե ոչ: Այսպիսով ստեղծվում էր երկրորդ՝ ավելի մեծ, փակ շրջանը, որն էլ ավելի էր հեռացնում նրան իր իսկ լարած թակարդի երանավետ ելքից: Մտորումների անթիվ ու անվերջանալի արահետները բերում էին նորանոր փակուղիների, կամ, որ ավելի սարսափելի էր, հերթական փակ շրջանների: Համաձայնե՛ք՝ նման գլխապտույտի մեջ անչափ դժվար է չփղձկալ...

Աչքերը լցված էին, բայց արցունքները չէին հոսում: Իսկ երկինքն ամպած էր, բայց դեռ անձրև չէր գալիս: Հուսալքված էր. նրան գահընկեց էին արել: Աչքերը չէր թարթում. ուշադիր զննում էր այն տեղը, որտեղ պետք է իր վերջնական հանգրվանը գտներ: Բայց սրտում կասկած կար, չէր համարձակվում: Ձեռքերի մեջ առավ գլուխը, որտեղ այնքան խզուր մտքեր էին ծնվել ու ... Վերհիշեց այն պահը, երբ ուզեց համբուրել նրան: Առհասարակ նրա ոչ մի ցանկություն դեռ չէր կատարվել: Այդ մեկն էլ, իհարկե,

բացառություն չէր: Արցունքի մի կաթիլ հազիվ կարողացավ ընկնել աչքից: Փորձեց հետևել դրան, բայց անկարող էր: Այն անմիջապես անհետացավ մռայլ խավարում: Վերջապես թարթեց աչքերը և կարծես սթափվեց այդպիսով: Գրպանից հանեց աղբամանների մոտից վերցրած կավճի մի կտոր և սկսեց իր, ինչպես ասում են սև, բայց այս դեպքում բառի բուն իմաստով սպիտակ գործը գորշ ասֆալտի վրա.

«Ինչո՞ւ էիր հույս տալիս, եթե վերջում պետք է այսպես հուսախաբ անեիր: Ինչո՞ւ ինձ մոտ թողեցիր, եթե հետո պիտի վանեիր: Ինչո՞ւ: Մի՛ պատասխանիր: Կգնաս, կմտածես, կտանջվես, կարտասվես: Ինձ կհիշես, գլխի կընկնես: Բայց ես անվերադարձ եմ գնում, իմացի՛ր, որ ինձ էլ հետ չես բերի: Ես իմ կյանքը նվիրեցի քեզ: Ա՜խ, քո այդ անիծված ժպտացող աչքերը: Կույր լինեի ես, որ չտեսնեի դրանք»:

Կանգ առավ մի պահ. նորից հիշեց իր վաղեմի երազանքը: Կարծում էր՝ կույրերը չեն արտասվում: Նոր միայն զգաց, որ քրտնել է: Եզակի դեպք էր, երբ ինքն իրեն չէր խնայում. շռայլում էր իր ողջ հասարակ բառապաշարը, ամեն կերպ ջանում էր ավելի ազդեցիկ գրել, որ խորը ցավեցնի նրա սիրտը: Բայց էլ չուզեց շարունակել. շտապում էր, քանի դեռ չէր փոշմանել: Նետեց կավիճը ներքև, ինչպես մարդասպանը իր զենքը կնետի գործի ավարտից հետո: Մոտեցավ կամրջի եզրին, զգուշորեն բարձրացավ եզրաքարի վրա: Նա ընդհանրապես ամեն ինչ զգույշ էր անում, և նրա ամեն մի քայլը տրամաբանական էր: Բայց այդ պահին այլևս տրամաբանական չէր, թե ինչու պետք է զգույշ լիներ: Ինչի՞ց զգուշանալ: Զգուշանալ, որ հանկարծ վայր չընկնի՞: Զմռռանանք՝ ինչու էր նա այդտեղ: Եվ առհասարակ, ինչի՞ են հասնում մարդիկ ամբողջ կյանքում զգուշանալով: Բարձրացավ, և դա դժբախտաբար առաջին դեպքն էր, որ զգուշանալով հասավ բարձունքի: Կանգնել էր հպարտ, կարծես ամենևին էլ ամոթալի չէր այն, ինչ պատրաստվում էր անել: Քամին սաստկանում էր, և նա զգում էր քամու օգնությունը, որ հրում էր նրան հետևից. մի կերպ էր կարողանում պահել իրեն: Եվ նա վերջին անգամ նայեց երկնքին: «Տե՛ր, ես ինձ չեմ սպանում, ես ինձ թողնում եմ քո քմահաճույքին: Թե ճիշտ ես համարում իմ այս աշխարհում մնալը, դադարեցրու քամին: Դու կարող ես, չէ՞, այդ անել: Իսկ եթե ոչ, թող քամին մնա այնպիսին, ինչպիսին հիմա է, և ես, միևնույն է, երկար չեմ կարող պահել ինձ»:

Մի քանի լուռ վայրկյանից հետո նա հայացքը գցեց գետնին: Սթափվեց… Դողաց… Զղջաց…

Բայց ոչ նրա համար, ինչ պատրաստվում էր անել, այլ նրա համար, ինչ որ գրել էր կամրջի վրա: Թե իջներ այդտեղից գրածները մաքրելու համար, նա համոզված էր, որ այլևս չէր բարձրանա: Ճարահատյալ նորից դիմեց Աստծուն.

«Կյանքում իմ ոչ մի երազանք չի կատարվել: Խնդրում եմ, կատարի՛ր վերջին ցանկությունս: Թո՛ղ երկինքը գոնե արտասվի իմ հետևից և անհետ մաքրի այն բոլոր հիմարությունները, որ ես ուղղել եմ իմ երազների թագուհուն»: Հետո նորից սկսեց կասկածել. իսկ միգուցե իջնել և սեփական ձեռքերով մաքրել գրածը, չէ՞ որ Աստված երբեք ուշադրություն չէր դարձրել իր խնդրանքներին: Երկմտանքն ու վարանումը է՛լ ավելի խորացան, կասկածի ու վախի սերմերը սկսեցին ծիլեր տալ: «Ա՜խ, Էլլա՜, նույնիսկ մահանալիս ինձ հանգիստ չես տալիս»,– այս միտքը հայտնվեց նրա գլխում, բայց այդպես էլ չկարողացավ դուրս պրծնել նրա բերանից և այդպես էլ մարեց՝ իր հետևից թողնելով մի անհաստատ ու անորոշ վիճակ: Պետք էր կենտրոնանալ... «Հավաքի՛ր քեզ, Նեկրի՛ստո, պետք է վերջացնել սկսած գործը: Ինչպես Նաստալդն էր ասում՝ մահվանից վախենալ պետք չէ, չէ՞ որ չգիտենք՝ այն վախենալո՞ւ է, թե՞ ոչ»: Այս մտքերը նրան վճռականություն հաղորդեցին: Անշարժ կանգնել էր, ու ոչինչ մտքով չէր անցնում, խորը շնչում էր ու պարզապես ավարտում էր այդ պահը, որին պետք է հետևեր հաջորդը: Ի վերջո Նեկրիստոն հասկացավ, որ արդեն պատրաստ է: Քամին ամբողջությամբ մաքրել էր նրա ուղեղն ու հոգին, աչքերը փակ էին, դժվարությամբ էր շնչում. երևի քամու ուժգնությունից էր: Դժվար է բացատրել, թե ինչու էր նրա դեմքին նորից ի հայտ եկել իր սովորական կիսաժպիտը, որը, սակայն, այս անգամ չափազանց շատ բան կարող էր նշանակել. գուցե գոհ էր իր այս անբնական վերջից, գուցե կյանքի վերջին վայրկյաններին նրա գլխում սավառնում էին այն հիշողությունները, որ քիչ թե շատ իմաստավորել էին իր այս չապրած կյանքը, կամ գուցե դա պարզապես նյարդերից էր: Ամեն դեպքում նա իսկապես պատրաստ էր, պատրաստ էր տրվել քամուն և միաձուլվելով նրան՝ գրկախառնվել անտակ թվացող անդունդի հետ: Նետվելով ներքև՝ նա չէր ընկնի, այլ կճախրեր, քամին նրան կտաներ այն երանավետ աշխարը, որտեղ իր բոլոր նվիրական երազանքներն արդեն ի կատար էին ածվել... Համոզված լինելով նման աշխարհի գոյության մեջ՝ նա մարմինը հանդարտ առաջ տարավ: Սա գուցե տրամաբանակ ավարտն էր այն չստացված սիրավեպի, որ տեղի ունեցավ Նեկրիստոյի ու իր կյանքի միջև, և որտեղ կյանքն ի վերջո անպատասխան սիրո զոհ դարձավ... «Ինչ լինում է, թող լինի»,– այս միտքն արագ անցավ նրա գլխով ու կարծես դարձավ այն փոքրիկ կայծը, որ գործի գցեց ինքնասպանության ահեղ մեխանիզմը: Ոչ այնքան հեռվում գտվող եկեղեցու զանգերն այդ պահին ազդարարեցին գիշերվա ժամը չորսը: Ղողանջների նվագակցության տակ գլուխը կախեց ներքև, փակեց աչքերն ու ոտքերով հրվեց առաջ...

* * *

Մի ամբողջ հավերժություն անցավ, մինչև ինքնապանության այդ եսամոլ ակնթարթը, դժգոհելով ու քթի տակ ինչ-որ բան մրթմրթալով, անվերադարձ հեռացավ՝ իր դիրքը զիջելով հաջորդ՝ փրկության ակնթարթին, որն անսպասելիորեն հայտնվեց տիեզերքի ինչ-որ անհայտ մի անկյունից և հաղթականորեն ներխուժեց Նեկրիստոյի կյանքի հենց այդ անհյուրընկալ հատվածը: Ի՞նչ էր դա. Նեկրիստոն չընկավ ներքև, նա կարծես կախվել էր օդում և այդ անհեթեթ ու անտրամաբանական պահին փորձում էր տրամաբանել: Մի՞թե Աստված ի վերջո լսել էր իրեն, և քամին փչում էր մի այնպիսի ուժգնությամբ, որ թույլ չէր տալիս նրան իրականացնել իր կյանքի վերջին թռիչքը: Բայց չէ՞ որ քամին հակառակ էր փչում... Երևի պարզապես այս վճռական պահին նրա մարմինն ու քաջությունը դավաճանել էին իրեն, ու նա հիմա ամուր սեղմված էր կամուրջը երիզող երկաթյա ճաղերին: Սակայն դրանց սառնության փոխարեն Նեկրիստոն ջերմություն էր զգում, ջերմությունն այն ձեռքերի, որ ամուր գրկել էին իրեն ու ամեն գնով փորձում էին պահել իրեն այս աշխարհում: Իհարկե, մտածեց Էլլայի մասին. «Էլլան է իմ փրկիչը, միայն նրանից է կախված իմ կյանքը, հենց նա էր դատապարտել ինձ այս արարքին ու նա էլ, իհարկե, փրկեց ինձ... Նա հասկացել է ամենը և վերադարձել է՝ ուղղելու իր գրեթե ճակատագրական դարձած սխալը: Այո՛ , նա հասավ ճիշտ ժամանակին»: Այս մտքերը մի հերթական երկարատև ակնթարթում սավառնում էին նրա գլխում, մինչ նա փորձում էր վերականգնել իր հավասարակշռությունն ու շրջել գլուխը՝ տեսնելու համար իր փրկչին, իր թագուհուն, իր աստվածուհուն: Պատկերացրե՛ք, թե ինչքան ուժգին էր Նեկրիստոյի մարմինը պատած սարսուռը, ինչքան ահեղ էր նրան համակած սարսափը, և, ի վերջո, ինչքան խորն էր նրա հիասթափությունը, երբ հասկացավ, որ իրեն փրկողն ամենևին էլ Էլլան չէր, այլ մի տարօրինակ անծանոթ, որն անդադար կրկնում էր նրա անունը և էլի շատ բառեր ու նախադասություններ, որոնք արդեն չէր լսում Նեկրիստոն: Նա իր անզգա աչքերն ուղղեց դեպի ծիանկոն ու մարմնի ամբողջ ծանրությամբ ընկավ վերջինիս վրա... Ուշաթափվեց...

Երբևէ մտածե՞լ եք, թե ինչպիսի զգացողություն է ունենում մահացող մարդը, կամ ինչպե՞ս կարող է իրեն զգալ նա, ով ամբողջությամբ պատրաստ լինի մահանալուն, գուցե նաև մահանա, և հետո նորից վերադառնա այս աշխարհ՝ ապրելու երկրորդ հնարավորություն ստանալով: Ինչպե՞ս կարող է իրեն զգալ մարդը, ով, հրաժարվելով կյանքում ամեն ինչից և հենց իրենից՝ կյանքից էլ, ի վերջո ստանում է ամենաարժեքավորը՝ նույն կյանքը:

Նույնիսկ այս ամենը պատկերացնելով էլ չի կարելի հասկանալ, թե ինչ զգացումներ կային Նեկրիստոյի սրտում, ու ինչ մտքեր կային նրա գլխում, երբ բացեց աչքերն ու կամաց-կամաց սկսեց գիտակցել, թե ինչ էր կատարվել: Նրան փրկողը Ցիանկոն էր՝ դպրոցական ընկերը: Այն սակավաթիվ մարդկանցից մեկը, ով քիչ թե շատ հասկանում էր նրան ու կիսում նրա գաղափարները: Արդեն մի քանի տարի նրանք չէին տեսնվել. դպրոցն ավարտելուց հետո ամեն մեկն իր ճանապարհով գնաց, ու երբեմնի ջերմ ու հետաքրքիր հարաբերությունները պահպանելու համար և ոչ մեկի առօրյայում ժամանակ չգտնվեց. ամեն մեկն իր պատճառներն ուներ...

* * *

Չնայած արդեն բավական ուշ էր, բայց գորշ պատերով ու հայելապատ դռնով անճաշակ սրճարանը գրեթե լեփ-լեցուն էր: Ընդհանուր խառնաշփոթի ու ծխից գոյացած անթափանցելի մշուշի մեջ անցուդարձում էին սեղանից սեղան շտապող մատուցողները: Գրեթե բոլորի սեղաններին դրված էին միևնույն պատվերները՝ սև սուրճ, գարեջուր և, իհարկե, ծխախոտ: Այցելուների գռեհիկ ծիծաղը, բարձրաձայն խոսակցությունները և մատուցողների տեղափոխած շշերի ու բաժակների չխկչխկոցները ստեղծել էին մի անտանելի աղմուկ: Այն նույնիսկ խլացրել էր սրահում սավառնող անճաշակ երաժշտության երգեցիկ հնչյունները, որոնք մեղմորեն գրգռում էին մարդկանց նյարդային բջիջները: Մի խոսքով, սրահում տիրում էր մի կատարյալ օրինաչափ քաոս, որի մեջ բոլորն էլ ջանասիրաբար ներդնում էին իրենց լուման՝ նույնիսկ չգիտակցելով, ավելի ճիշտ՝ չմտածելով դրա մասին: Միանման սեղաններից մեկի շուրջ նստած էին երկու չափազանց տարբեր մարդիկ՝ մի կենսուրախ երիտասարդ ու մի կենդանի դիակ: Ցիանկոն ուզում էր սկսել խոսակցությունը, սակայն դժգոհ դեմքով երիտասարդ մատուցողը խանգարեց նրան: Սեղանին դասավորելով գարեջրի շշերն ու բաժակները և աշխատանքային անփութությամբ փոխելով դեռ նախորդ հաճախորդներից մնացած լի մոխրամանը՝ նա մի անտարբեր հայացք գցեց նույնքան անտարբեր հայացքով բաժակներին նայող դիակին ու անհետացավ ծխի քուլաների արանքում: Հայացքով ճանապարհելով երիտասարդին՝ Ցիանկոն միանգամից շրջվեց դեպի ընկերը և սկսեց.

—Նայի՛ր այս տղային, Նեկրի՛ստո: Նա միանշանակ դժբախտ է. երևի ատում է իր կյանքը, ամեն օր դժկամությամբ անում է իր ձանձրալի աշխատանքը: Իր տարիքին անհամապատասխան կնճիռները ծանրացած են կյանքի առօրյա հոգսերից, իսկ խամրած աչքերը դժգոհությունից բացի ոչինչ

չեն արտահայտում: Ինչո՞ւ է նա այսքան դժբախտ, չեմ կարող ասել: Բայց համոզված եմ նրա կյանքն այնքան էլ սարսափելի չէ, ինչքան կարող է թվալ, մի՛ մոռացիր, որ մեդալը երկու կողմ ունի: Վստահ եմ՝ նրա կյանքում կան այնքան արժեքավոր ու գեղեցիկ բաներ, որ նա հանգիստ կարող է երջանիկ ապրել, եթե միայն նկատի դրանք: Մարդիկ տեսնում, ընկալում ու ապրում են իրենց կյանքն այնպես, ինչպես ուզում են: Նայի՛ր կյանքիդ, ինչպես մի ուրախ ու հետաքրքիր խաղի, որից դու կարող ես ու պետք է հաճույք ստանաս: Ընդունի՛ր կյանքդ իբրև մի մեծագույն հրաշք, և այն հենց այդպիսին էլ կդառնա: Հուսով եմ՝ հասկանում ես, որ ես ամենևին էլ մատուցողի մասին չեմ խոսում:

Նեկրիստոն դեռ նոր էր ծնվել... Ոչինչ չէր մտածում, գլխում դեռ ոչինչ չկար: Նրա ուղեղը սպունգի պես ներծծում էր ընկերոջ ասածները և դրանք ընկալում առանց վերլուծության: Լուռ գլխով արեց՝ տալով իր համաձայնությունը, և սպասեց խրատական այդ ճառի շարունակությանը, որ կարող էր լցնել նրա դատարկված հոգին և գոնե մասամբ իմաստավորել իր խեղված կյանքը: Իսկ Ցիանկոն հենց դրան էլ սպասում էր.

—Կյանքն իսկապես հրաշք է, Նե՛կրո, ես սա քեզ ասում եմ ամենայն պատասխանատվությամբ: Այն հրաշք է բոլորի համար, պարզապես պետք է կարողանալ տեսնել այդ հրաշքը: Ես չգիտեմ պատճառը, թե ինչու էիր դու փորձում այդ հիմար քայլն անել, սակայն ինչ պատճառ էլ որ լինի, ոչինչ չի կարելի վեր դասել սեփական կյանքից. կյանքդ պետք է սիրես, և այդ ժամանակ նա էլ քեզ կսիրի: Ցանկացած խնդիր, ցանկացած հոգս, նույնիսկ ցանկացած դժբախտություն պարզապես մի փոքրիկ դրվագ է քո երկար կյանքից, և որքան էլ սարսափելի լինի, միևնույն է, մի օր այն անցնելու է: Պատմի՛ր, խնդրում եմ, պատմի՛ր ինձ ամենայն մանրամասնությամբ, թե ինչ է պատահել, ի՞նչն էր քեզ դրդել այդ թեթևամիտ, անպատասխանատու և ամոթալի արարքին:

Ցիանկոն վառեց ընկերոջ ծխախոտը և անհամբեր հայացքը խորասուզեց նրա աչքերի մեջ՝ փորձելով գոնե մի բան պեղել դրանց անթափանց խորքերից: Նեկրիստոն լուռ ծխեց գլանակի մեծ մասը՝ այդ ընթացքում ժողովելով մտքերը և փորձելով հնարավորինս շատ փաստարկներ հավաքել իր ինքնասպանությունն ինչ-որ կերպ արդարացնելու համար:

Ծխախոտի մի ամբողջ տուփ վերջացավ, ու գարեջրի մի քանի շիշ դատարկվեց, մինչև Նեկրիստոն ավարտեց իր փոքրիկ պատմությունը՝ խտացված տխուր գույներով: Ցիանկոյի երեսին մի տարօրինակ ժպիտ հայտնվեց.

—Ա՜խ, Նեկրի՛տո, Նեկրի՛տո, նույն ռոմանտիկ հիմարն ես մնացել: Եվ այս ամենն ու՞մ պատճառով, մի սովորական աղջկա, որը նույնիսկ արժանի էլ չէ քեզ: Հասկացի՛ր, սերն ամեն ինչ չէ, որ որոշում է կյանքում… Իհարկե, սերը հիասքանչ է, այն զարդարում է մեր կյանքը, ջերմությամբ է լցնում մեր սիրտն ու հոգին, էապես փոխում է մեր մտածելակերպն ու վերաբերմունքն առհասարակ ամեն ինչի նկատմամբ և այլն և այլն, սակայն մի՛ մոռացիր, որ այն պարզապես մեր կյանքն ուղեկցող մի լրամաս է, առանց որի նույնպես կարելի է և պետք է ապրել: Դու պարզապես ընկճված ես չստացված հարաբերություններից, ինչը լոկ մի սովորական օրինակ է այն անթիվ-անհամար հարաբերությունների, որ տեղի են ունենում անթիվ-անհամար մարդկանց հետ: Գիտե՞ս, թե օրական քանի այդպիսի զույգեր են բաժանվում ու միանում, հասկացի՛ր, դու միակը չես, ավելին՝ դու ո՛չ առաջինն ես, ո՛չ վերջինը: Ընդունում եմ՝ ձեր դեպքում ամեն ինչ մի փոքր ավելի բարդ է ու խճճված, սակայն անհաջող հարաբերությունների պատճառով մարդիկ իրենց չեն սպանում, դա պարզապես անմտություն է, անպատասխանատու և անհետևողական մի քայլ: Գիտե՞ս, թե նրա նման դեռ քանիսը կլինեն քո կյանքում, դու նրան չես էլ հիշի:

Նեկրիստոն լուռ լսում էր ընկերոջը, նա ուզում էր ինչ-որ կերպ հակառակվել նրան, ասել, որ Էլլային երբեք չի մոռանա, որ իր դեպքն արտասովոր է, ու այդ պատճառով էլ նրան ոչ մեկը չի հասկանա, սակայն Ցիանկոյի սառը դատողության կերտած տրամաբանված ամեն մի խոսքը կարծես ներխուժում էր Նեկրիստոյի դեռ նոր վերածնվող հոգու մեջ և անպատասխան հարվածներ էր հասցնում նրա սրտին: Ոչինչ չէր գտնում նրան ասելու: Ոչ մի կերպ չէր կարողանում բացատրել ընկերոջը, նույնիսկ ինքն իրեն, այն խանդավառության պատճառը, որով մի քանի ժամ առաջ ուզում էր հեռանալ կյանքից: Կարծես մի ակնթարթում մոռացավ այն բոլոր պատճառներն ու մտքերը, որոնք դեռ ժամեր առաջ համառորեն դրդում էին իրեն ինքնասպանություն գործել: Նույնիսկ չէր հասկանում՝ համաձայն է նրա հետ, թե ոչ: Իսկ Ցիանկոյի խորաթափանց հայացքը կարծես սավառնում էր ընկերոջ գլխում՝ խուսանավելով քաոսային մտքերի հորձանուտներում: Նա շատ էր տանջվել սիրո պատճառով և հետո միայն, գուցե բավականին ուշացած, եկել էր այն եզրահանգման, որ սերն իրոք գերագնահատում են, և այստեղ ավելի մեծ դեր է խաղում ներշնչանքը: Այսպիսով, ավելի փորձված ու սառնարյուն լինելով այս հարցերում՝ Ցիանկոն ուզում էր օգնել ընկերոջը, որպեսզի վերջինս ավելի հեշտ հաղթահարի այս չափազանց տհաճ, բայց բոլորի կյանքում անխուսափելի ժամանակաշրջանը: Ի վերջո նա շարունակեց.

—Ա՜խ, այս աղջիկները. նրանք լրիվ այլ կերպ են մտածում, նրանց այդ չտրամաբանված արարքներն այնքա՜ն անկանխատեսելի են և այնքա՜ն անբացատրելի: Գիտե՞ս, Նեկրի՛ստո, եթե նա իսկապես հոգար քո մասին, ապա չէր շփվի քեզ հետ, չէր հուսադրի ու քեզ թևեր չէր տա՝ խոստանալով, որ դրանցով հավերժ կճախրես, և այդ ամենից հետո այդքան անսպասելի չէր թևատի քեզ: Այժմ դու պետք է ապացուցես թե՛ նրան ու թե՛ ինքդ քեզ, որ դու շատ բանի ես ընդունակ և ցանկության դեպքում ամեն ինչի կարող ես հասնել:

Մի փոքր երկմտելուց հետո Ծիանկոն շարունակեց.

—Ի միջի այլոց, ես բազմաթիվ լուրջ նպատակներ ու ծրագրեր ունեմ, որոնք սկսելու և իրագործելու համար քո խելքն ու լրջությունը ինձ շատ կօգնեն: Համոզված եմ՝ մեր հանդիպումը պատահականություն չէր: Հավատա՝ մենք միասին շատ բաների ենք ընդունակ և կարող ենք լուրջ հաջողության հասնել, եթե մեզ չխանգարեն շեղող հանգամանքները, այսինքն սերը, կանայք և նման բաներ: Դու այժմ պետք է որոշում կայացնես. պատրա՞ստ ես արդյոք ամբողջությամբ տրվել գործիդ ու կյանքիցդ ջնջել քո այս անհեթեթ արարքը՝ իր բոլոր պատճառներով ու սկզբնաղբյուրներով: Եթե այո, ապա դու իսկապես այսօր նոր կյանք ես սկսում՝ սասծիս բոլոր իմաստներով:

Ծիանկոն սպասում էր պատասխանի: Նա չէր փորձում կռահել, թե ինչ կար ընկերոջ գլխում կամ ինչ պատասխան կստանա, քանի որ այդ վիճակում գտնվող մարդը կարող էր կամայական մի փոքրիկ մտքից անգամ մի կարևոր ու ճակատագրական որոշում ընդունել: Իսկ Նեկրիստոյի գլխում քաոսի փոխարեն արդեն մտքերի ուղղորդված հոսք էր, որը թեև նորից ուղղված էր դեպի Էլլան, սակայն այս անգամ մի քիչ ուրիշ բովանդակություն ուներ. «Դու ինձ մերժեցիր, Է՛լլա... բայց կանցնի շատ ժամանակ, և դու կհասկանաս, որ ոչ ոք քո մասին այնքան հոգ չի տանի, որքան ես, և ոչ մեկը քեզ այնքան չի սիրի, որքան ես էի սիրում... Եվ այդժամ դու գուցե կզղջաս այսօրվա քո արարքի համար ու նորից կցանկանաս լինել իմ կողքին: Իսկ եթե մենք երբևէ նորից հանդիպենք կամա թե ակամա, ես արդեն նույնը չեմ լինի, և այդ ժամանակ միայն կգիտակցես քո այսօրվա կորուստը»:

—Գիտե՞ս,– ի վերջո պատասխանեց Նեկրիստոն՝ իր համար անսովոր մի սառը հայացք նետելով զրուցակցի վրա,– գիտե՞ս, թե քանի անգամ եմ որոշել նոր կյանք սկսել, ամբողջովին փոխել ինձ ու ինձ շրջապատող աշխարհը, երեկոյան քնել, իսկ առավոտյան արթնանալ բոլորովին այլ մարդ դարձած, սակայն անհույս անհաջողակի համառությամբ ես ամեն առավոտ զարթնում էի նույնպիսին, ինչպիսին որ քնել էի, և որոշում էի այդ ճակատագրական փոխակերպումը հետաձգել ևս մեկ օրով: Այնինչ նոր կյանք սկսելու համար ինձ

նախ մահանալ էր պետք: Երևի դու ճիշտ ես, Ցիա՛նկո, մեր հանդիպումը պատահական չէր...

Նեկրիստոն մի քանի վայրկյան լուռ ըմբոշխնում էր ծխախոտի՝ արդեն սպառվող գլանակը, և Ցիանկոյին թվաց, թե ընկերը մտքերով արդեն չափազանց հեռու է, սակայն վերջինս հանկարծ հեռացրեց գլանակը բերանից ու ճզմելով մոխրամանի մի անկյունում՝ կտրուկ շարունակեց.

—Ասում են՝ մեր ցանկությունները, որպես կանոն, իրականանում են, բայց ոչ այն տեսքով, ինչպես մենք սպասում էինք. ես երազում էի նոր կյանք սկսել, այսպիսով՝ անցնելով այս ամենի միջով ու հանդիպելով քեզ՝ ի վերջո հասա իմ բաղձալի նպատակին՝ չնայած այն ժամանակ ես ամենևին էլ այս չէի ուզում... Հետաքրքիր բան է ճակատագիրը, Ցիա՛նկո, եթե իհարկե այն գոյություն ունի... Ամեն դեպքում, մարդիկ պետք է զգուշանան անմիտ ցանկություններից. երբեք չես իմանա՝ ինչ տեսքով այն կկատարվի...— մի քիչ մտածելուց հետո Նեկրիստոն ավելացրեց՝ ուղիղ նայելով ընկերոջ աչքերին,— ուզեմ, թե չուզեմ, ես արդեն նոր կյանք եմ սկսել, և դա ինձ դուր է գալիս:

Այդ պահին Ցիանկոն ընկերոջ աչքերում մի տարօրինակ փայլ նկատեց, որը մինչ այդ ոչ ոք երբևէ չէր նկատել նրա աչքերում: Դա սերն էր փայլում, սերը կյանքի ու սեփական անձի հանդեպ, որ ի վերջո բույն էր դրել Նեկրիստոյի սրտի մի փոքրիկ անկյունում՝ հետագայում է՛լ ավելի ընդլայնվելու հաստատ մտադրությամբ: Նույն այդ փայլն էր, որ արտացոլվեց Ցիանկոյի աչքերում և նրանց փոքրիկ սեղանը լուսավորեց մի անհասկանալի խանդավառությամբ: Այսպիսով սկսվեց մի զրույց, որ պիտի շարունակվեր մինչև առավոտ: Ցիանկոն անասելի ոգևորությամբ պատմում էր իր բոլոր ծրագրերը՝ անհամբերությամբ թվելով դրանց իրագործման համար անհրաժեշտ պայմաններն ու նախադրյալները: Իսկ Նեկրիստոն, մոռացած ամենքին ու ամեն ինչ, ուշադրությամբ լսում էր ընկերոջը՝ փորձելով ըմբռնել ամեն մի մանրուք...

* * *

Առավոտյան ժամը յոթն էր, երբ դժգոհ մատուցողի քնատ հայացքի ուղեկցությամբ երկու ընկեր դուրս եկան հայելապատ դռնով անճաշակ սրճարանից՝ եկած կատարյալ համաձայնության թե՛ անձնական և թե՛ գործնական բոլոր հարցերում: Նրանք ջերմորեն բաժանվեցին՝ պայմանավորվելով նորից հանդիպել երեկոյան՝ որոշ անհապաղ խնդիրներ ևս մեկ անգամ քննարկելու համար:

Միայնակ քայլում էր Նեկրիստոն, ինքն էլ չգիտեր, թե ուր: Նրա մտքերն անորոշ ժամանակով լքել էին իրենց այսքան տարի շահագործած գլուխը և

անհոգ սավառնում էին քաղաքով մեկ: Դրանք հիանում էին փոքրիկ քաղաքի խղճուկ պուրակներով, թշվառ բակերով ու դեռ ամբողջովին չապականված առավոտյան թարմ օդով: Առաջին անգամ իր հասուն կյանքում Նեկրիստոն ոչինչ չէր մտածում, նույնիսկ չէր ուզում վերլուծել եղածը, ինչ-որ պատճառահետևանքային կապերով հանգուցել վերջին դեպքերը կամ իր տրամաբանական դատողություններով փորձել գնահատել կատարվածի բոլոր հետևանքները: Նա ի վերջո ազատվեց միջինից խելացի գրեթե բոլոր մարդկանց բնորոշ շատ մտածելու և ամեն ինչ վերլուծելու բարդույթից, որը երբեմն այնքան անհամ ու անբնական է դարձնում կյանքը: Նեկրիստոյին արդեն միանշանակ կարելի էր դասել ավելի իմաստուն մարդկանց խմբին, սակայն դա նրան ամենևին էլ չէր հուզում: «Ճակատագրական բաժանումների» լուսավոր կամրջի վրայով անհոգ քայլում էր մի պատանի՝ վայելելով իր կյանքի առաջին օրը:

Տղան նույնիսկ չնկատեց, թե ինչպես հասավ մի ծանոթ աղբակույտի, այնքան ծանոթ, որքան ոչ մի աղբակույտ ծանոթ չի լինում իր տարիքի և ոչ մի երիտասարդի: Նա ինքնաբերաբար մոտեցավ դեպի աղբակույտի ժամանակավոր կենվորը, որ անհոգ քնած էր ինչ-որ տարօրինակ թղթերից պատրաստված և ամեն անգամ տարբեր տեսք ունեցող որջում: Այս անգամ, չգիտես ինչու, այս աղբակույտը մի տեսակ օտար թվաց նրան. չէր կարող հասկանալ, թե ինչն էր պատճառը, գուցե նրա հոգում այլևս չկար այն աղբը, որ սովորաբար նա դատարկում էր այստեղ: Ինչևէ, նա մոտեցավ ծեր հարբեցողին, որը սովորաբար քնում էր մինչև կեսօր, հատկապես ամռանը, և սկսեց արթնացնել նրան: Նաստալդին պետք եկավ մի քանի րոպե, որպեսզի վերջնականապես զարթնի և գիտակցի ընկերոջ գալուստը:

—Ողջու՜յն, ի՜մ բարեկամ, հուսով եմ՝ ոչինչ չի պատահել,— մի փոքր անհանգստացած՝ հարցրեց թափառականը՝ աչքերի փոքր-ինչ խամրած փայլն ուղղելով տղայի վերափոխված դեմքին:

Նեկրիստոն, կարծես, հենց սրան էր սպասում, որպեսզի պատմեր ընկերոջն իր հետ կատարվածը, այն հրաշքը, որ փրկեց իրեն, երկարատև գրույցը, որ ոչ ավել, ոչ պակաս, վերաիմաստավորեց իր կյանքը և, իհարկե, բոլոր-բոլոր այն զգացմունքները, որ այժմ մինչև եզրը լցրել էին նրա դատարկված հոգին: Սակայն... նա կարկամեց, կատարվածը վերաբերում էր լոկ իրեն, պետք էր այն պարզապես գիտակցել, ըմբռնել ինչպես հարկն է և անցնել առաջ՝ առանց հետ նայելու: Անհրաժեշտ էր այդ տարօրինակ գիշերը թողնել անցյալում՝ պահելով այն սրտի որևէ թաքուն անկյունում: Վերհիշել ու վերապրել այդ ամենը կնշանակեր արժեզրկել հեքիաթային գիշերը... Թող որ այն մնա Նեկրիստոյի հոգում, որպես մի երանավետ պատրանք, որպես աղոտ

հիշողություն, որն այնքան թանկ է ու հարազատ, որ նույնիսկ վախենում ես տրվել դրան՝ այն առօրեական չդարձնելու համար: Այդ պահը հավետ կլինի տղայի հետ՝ լուսավորելու նրա կյանքի ուղին, բայց և միշտ կլինի անհաս իր գիտակցության համար: Այսպիսով՝ շղարշելով կախարդական գիշերը մոռացության կիսաթափանցիկ մշուշով, Նեկրիստոն սկսեց իր սովորական կիսաժպիտով.

—Ողջու՜յն, սիրելի՛ Նաստալդ, ես պարզապես զբոսնում էի մոտակայքում և որոշեցի արթնացնել քեզ՝ ինձ հետ զմայլվելու այս հոգեթով այգաբացով:

Նաստալդի դեմքին հայտնվեց մի ժպիտ, որ ավելի շուտ զարմանք էր արտահայտում, քան ուրախություն, և որն ի ցույց դրեց նրա բերանում մնացած սակավաթիվ ատամների աղետալի վիճակը:

—Քո խոսքերը մի տեսակ երգեցիկ են այսօր, իսկ նման կիսաժպիտ ես երբևէ չէի տեսել դեմքիդ, քեզ հետ ինչ-որ բա՞ն է պատահել, թե՞ մեղավորն իմ սթափ ուղեղն է, որի ընկալումը դեռ չի հասցրել բթացնել գինին:

—Գիտե՞ս, Նաստա՛լդ, այսօր դպրոցական ընկերոջս հանդիպեցի… բոլորովին պատահաբար… Նա այժմ մի գործ է ձեռնարկում և ինձ առաջարկեց օգնել իրեն: Ես համաձայնվեցի, երևի ժամանակն է ինչ-որ բան անելու անվերջ դժգոհելու և ճակատագրից բողոքելու փոխարեն, պետք է ի վերջո սանձել այդ ճակատագիր կոչվածին, թող նա ինձ տանի ուղիղ դեպի իմ նպատակը: Կարծես ինչ-որ բան իմ մեջ փոխվել է, նույնիսկ չգիտեմ՝ ինչ է հետս կատարվում, բայց վստահ եմ՝ մենք կհասնենք հաջողության: Ասա՛ ինձ, ծերու՛կ, ի՞նչ ես կարծում դու հաջողության մասին:

Նաստալդը բավական երկար մտածեց, աղբաման նետված ու այլևս նորից վառվելու հույսը կորցրած ծխախոտի մնացորդը վերջին անգամ բոցավառվեց ավելի պայծառ, քան երբևէ խղճուկ շրջմոլիկի չորացած շուրթերին: Կիսախոնավ գլանակի այրման մեղմ ճարճատյունը միակ ձայնն էր, որ վրդովում էր հարատև լռությունը, մինչև Նաստալդը կպատրաստեր իր հերթական բազմաբովանդակ ճառը, որից, սակայն, այս անգամ անմասն էր մնացել ներշնչանք պարգևող գինին:

—Հաջողություն… փառք… իշխանություն… հուշակ… Այժմ դրանց հասնում են միայն ստահակները. դա բոլորը գիտեն, ախր ինչպե՞ս կարող է քեզ նման ազնիվ հոգի ունեցող տղան հասնել այդ ամենին: Հասկացի՛ր, տղա՛ս, հաջողության հասնելու համար պետք է բռունցքներիդ մեջ ամուր սեղմես բազում կյանքերից ու ճակատագրերից հյուսված պարանը, որ մագլցես իշխանության վտանգավոր ժայռն ի վեր, պետք է տրորես սեփական հպարտությունդ ու սկզբունքներդ, որպեսզի բարձրանաս փառքի

ստորինաններով, պետք է խմես արցունքներդ, որ կուլ գնան կոկորդիդ կանգնած դառը վիրավորանքներն ու անարգանքը, որոնք անխուսափելի են նման խորդուբորդ ճանապարհին, պիտի ապրես ցոփությամբ ու հղփության մեջ, որ մոռանաս խղճիդ մասին: Հաջողության հասնելու համար բազում զոհեր ու զոհողություններ են պետք,– եզրափակեց Նաստալդը՝ վերջին բառերն ասելով այնպես, կարծես ինքը հենց դրանցից մեկն էր լինելու:

Նեկրիստոն ապշած էր. ծերուկի ասածն, իհարկե, չէր կարող խաթարել իր ծրագրերը, սակայն նա քիչ ավելի լավատեսական ու ոգևորող պատասխան էր ակնկալում:

—Ես այդպես չեմ կարծում, դու երևի քո այժմյան վիճակից ես դժգոհ, այդ պատճառով էլ հաջողակ մարդկանց անազնիվ ես համարում:

Նաստալդը նորից ցուցադրեց իր ատամների անմխիթար վիճակը, այս անգամ, սակայն, ժպիտը դառնությամբ էր լի.

—Իմ այժմյան վիճա՞կը: Իմ այժմյան վիճակը ես եմ ընտրել և դրանից ամենևին դժգոհ չեմ... Իմ այժմյան վիճակը: Երբ քեզ կտրվի հաջողությունը, և կհասնես ուզածդ բարձունքներին, այն ժամանակ հոգսերիդ սարից կնայես ներքև, ու իմ առօրյա խնդիրները չնչին կթվան քեզ, այնքան չնչին, որ կերազես լինել իմ այժմյան վիճակում...

Նաստալդի մարմնով աննկատ անցավ մոռացված անցյալի թույլ սարսուռը... Հետո հանկարծ սթափվեց՝ նկատելով ընկերոջ զարմանքը, հասկացավ, որ նրա այս խոսքերն ավելի շուտ միտված էին արդարացնելու հենց իրեն:

—Ների՛ր, բարեկա՛մս, ես պարզապես մի քիչ նյարդային եմ դառնում, երբ առավոտյան սովորականից վաղ եմ արթնանում, բացի այդ, ես գինու կարիք ունեմ, այդ պատճառով անիմաստ բաներ եմ խոսում, ավելի լավ է՝ ուշք չդարձնես հարբեցող թափառականի խոսքերին... Առանց երկմտելու արա այն, ինչ կարողանում ես ամենից լավ անել, հոգի դիր գործիդ մեջ ու հաճույք ստացիր ընթացքից սկսած մինչև վերջնական արդյունքը, դու գիտես՝ ինչ պետք է անես: Ես իսկապես անչափ ուրախ եմ քեզ համար: Ավելի ուշ կխոսենք, իսկ հիմա ավելի լավ է՝ ես քնեմ...

Բաժանվեցին սովորականից սառը... Նաստալդը մի վերջին անգամ հայացք նետեց տղայի աչքերին, որոնցում այս առավոտ տարտամորեն տեսել էր այն երանավետ կյանքը, որին ինքն ու իր թշվառը աղբակույտը ամենևին չէին համապատասխանում: Նա ժպտաց այս առավոտ արդեն երրորդ անգամ, այս ժպիտն արդեն մի անպաճույճ ցնծություն էր ազդարարում, այն ցնծությունը, որ կարող է զգալ ամենահավատարիմ ընկերը՝ ընկերոջ

հաջողությունը գիտակցելով, և այն հիասթափությունը, որ կարող է զգալ ընկերն իր ընկերոջն այլևս պիտանի չլինելու գիտակցումից:

Իսկ Նեկրիստոն դեռ երկար կհիշեր այս հանդիպումն ու այս բաժանումը, հազարավոր անգամներ նա մտքում կկրկներ այն բառերը, որոնք ինքն այդպես էլ չասաց Նաստալդին այդ վերջին հանդիպմանը, և որոնց այնքան արժանի էր իր ամենամոտ ընկերը... Ի՞նչ իմանար տղան, որ բազմածալք գործերի սարդոստայնն այնքան վարժ ու աննկատ էր պարուրելու իր առօրյան, որ այլևս ժամանակ չէր մնա այցելելու այն գարշահոտ աղբակույտում բնակվող անտուն հարբեցողին...

## ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

## ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ

*I luoghi più caldi dell'inferno sono riservati a coloro, che in un periodo di crisi morale si mantengono neutrali.*
*D. Alighieri*

Անցնում էր ժամանակը... Փոխվում էին տերերը, փոխվում էին դերերը, մեռնում էին ծերերը, իսկ մնացածները զբաղված էին գոյատևելու համար միջոցներ հայթայթելով: Այն խումբը, որին չէին սպառնում բարձունքներն ու փառքը, տքնում էր զորուգիշեր, սակայն բարեկեցության մակարդակի աճը չէր շտապում իրեն զգացնել տալ: Զբավարարված հույսերի անդուլ հերթափոխն էր նրանց կյանքի մշտնջենական ուղեկիցը, և հարմարվողական բնույթից ելնելով՝ նրանք օրըստօրե ձեռք էին բերում ավելի հասանելի բաների մասին փափագելու կենսական հմտությունը: Նախանձելի չէ այդպիսի վիճակը. այդ գործընթացն այնքան տևական էր ու տաղտկալի, որ նրանք աստիճանաբար կորցնում էին գիտակցումն այն բանի, որ շատ շուտով վրա է գալու մի պահ, երբ այլևս պետք է ստիպված լինեին երազել միայն այն ամենի մասին, ինչ որ արդեն ունեն: Իսկ նրանք այնքան էլ շատ բան չէ, որ ունեին: Թերևս նրանց ամենաարժեքավոր ունեցվածքը քիչ թե շատ անբասիր մնացած մարդկային որոշ ազնիվ հատկանիշներն էին, որոնցով և առանձնանում էին ամբոխից և պիտակավորվում որպես հասարակ աշխատավոր, քանզի միայն նրանց մոտ էին դեռ պահպանվել այդ առաքինությունները: Այդ թշվառներն այնքան քիչ նյութական բարիք ունեին, որ անգամ կարողանում էին ազգային, պետական և համամարդկային շահերը բարձր դասել նեղ անձնականից: Գուցե դրա՞ համար էին այդքան ցած իջել: Իսկ նրանք, ովքեր ելել էին շալակը քաղաքի, տասանորդից ավել երբեք չէին տրամադրի բարեգործական միջոցառումների, այն էլ հասարակական կարծիքն իրենց հանդեպ բարեհաճ պահելու և այդպիսով իրենց վերարտադրվելու հնարավորությունները պահպանելու նպատակով միայն, այլ ոչ թե ներքին հոգևոր մղումների ճնշման տակ: Այս անհոգիները կորցրել էին ամեն տեսակ ամոթ ու վախ, և նրանց ընչաքաղցությունն անցել էր ամեն չափ ու սահման, և այլևս չափելի չէր մարդկությանը ցայսօր հայտնի և որևէ սանդղակով: Այլանդակ թալանը, որ կազմակերպվում և ղեկավարվում էր նրանց կողմից, ամենազազրելի կերպով խմում էր ժողովրդի արյունը՝ զրկելով նրան աճելու և զարգանալու բնական իրավունքից: Մյուս կողմից, սրանց մեծ մասը նույնպես մանուկ կամ պատանի

ժամանակ պատկանել է այն մյուս՝ մի կերպ ծայրը ծայրին հասցնող դասին, և գուցե հենց դրա վախից էր այժմ գոփում ամենը, ինչ միայն հնարավոր էր՝ ապահովագրելու համար իրեն և իր թանկագին ժառանգներին այն անախորժ ժամանակների հնարավոր կրկնությունից: Բայց սա՝ մի մասը միայն, իսկ մնացած մասն այս մեքենայությունների սարդոստայնի մեջ էր մտել դեռ մոր պտուկը բերանում՝ առանց որևէ գիտության նողկալի համակարգից դուրս գտնվող զուգահեռ իրականության մասին: Չգրված օրենքների այս յուրատեսակ աղբակույտը բացառում էր մարդկայնության որևէ դրսևորում՝ սպառնալով վռնդել համակարգից դեպի ծայրահեղ աղքատություն լավագույն դեպքում և ուղղակի բանտ՝ վատագույնի: Դժվար է հասկանալ, թե ինչպես են ձևավորվել խաղի այսպիսի կանոնները և ինչպես են ենթարկվել էվոլյուցիայի. մի՞թե ձևավորման փուլում չի հայտնվել մի ազնիվ հզորություն, որ կանխի չարիքը: Այլապես հիմա կանխելու մասին խոսելը ֆանտաստիկայի ժանրից կլինի, քանզի հիմա որքան էլ ազնիվ լինի հզորը, և որքան էլ հզոր լինի ազնիվը, նրան հեշտությամբ կուղարկեն գրողի ծոցը՝ իր ազնվությունն ու մարդասիրական գաղափարներն այնտեղ կյանքի կոչելու: Իսկ իրականությունն ավելի մեծ ոսպնյակի տակ մանրակրկիտ զննելիս տպավորություն է ստեղծվում, որ այս ժամանակաշրջանում ուղղակի *ազնիվ* և *հզոր* հասկացություններն են դարձել անհամատեղելի: Իրոք. ցանկացած անձ, ով իրենից քիչ թե շատ ինչ-որ մակարդակի ուժ է ներկայացնում, միանշանակ իշխողի կողմից է խաղում, երևի ուժը հենց դրանում է, որովհետև այս նույն մարդիկ եթե մի պահ հայտնվեն համակարգի հովանուց դուրս, կհոշոտվեն ակնթարթորեն: Իսկ ցանկացած անձ, ով ունի քիչ թե շատ ազնիվ մղումներ, ենթարկվում է աննկարագրելի ճնշման անազնիվներին ծառայող վայրի շների կողմից և արդյունքում կամ ուղղակի դուրս է մղվում երկրից, կամ դառնում է հաշմանդամ, կամ կորցնում է ազնվությունը երեսուն արծաթի դիմաց՝ նմանվելով առաջին անգամ մարմնով գումար վաստակած մանկահասակի, կամ էլ մերթ կորցնում է ազնվությունը, մերթ ձեռք բերում վերստին՝ նմանվելով վիրաբույժի մոտ կարկատանի գործով հաճախ այցելող պոռնիկի, ով իրեն մատուցում է որպես պարկեշտ արարած: Անչափ հետաքրքիր կլիներ, եթե բարիկադներից այն կողմ իրենց կապիտալի վրա պինդ նստած և ժողովրդի սներակից ատամներով ամուր կառչած կենդանիներից որևէ մեկը բավական գրագիտություն և խիղճ ունենար գոնե անանուն կերպով խոստովանելու՝ արդյո՞ք այն, ինչի մեջ ինքը խրված է, արդար է և ճիշտ:

Բայց ամենազոր ժամանակը մոռացության էր մատնում այդպիսի ամեն մի մանրուք: Հիրավի, ահեղ մի ուժ է ժամանակը, այն անխոնջ շարժվում է առաջ, շարժվում է հանդարտ ու անշտապ: Այն կարող է թվալ չափազանց

անհամասեռ, քանի որ վայրկյաններ կան, որ տարիներ են տևում, իսկ որոշ տարիներ թռչում են վայրկյանների պես: Սակայն այս ամենը պարզապես թվում է, մինչդեռ ամենակարող ժամանակը մի հզոր վիշապի պես միշտ նույն ձևով սողում է առաջ՝ մաշեցնելով ու փոշիացնելով իրեն շրջապատող անզոր աշխարհը: Նրա շարժումը դժվար է նկատել, և առաջին հայացքից կարող է թվալ՝ ժամանակն անշարժ է, սակայն երբ մի պահ կանգ առնես ու հետ նայես, ինչպես հետևում են մի հորդառատ գետի հունին, կարելի է տեսնել, թե ինչքան մեծ տարածություն է այն կտրել-անցել, ինչքան տիղմ ու մամուռ է բերել իր հետ ու թե ինչքան ամուր կամուրջներ է խարխլել ու խարխուլ կամուրջներ քանդել: Այսպես ճեղքելով բազում հազարամյակներ ու քաղաքակրթություններ՝ ժամանակը միևնույն համառությամբ շարունակում է հոսել առաջ՝ բացարձակապես անտարբեր իր շուրջը տեղի ունեցող փոփոխություններին, որոնք հետևանք են հենց իր անողոք հոսքի:

Նույնքան անտարբեր էր ժամանակը նաև այն փոքրիկ քաղաքի նկատմամբ. բազում շքեղ կառույցները, որ օրըստօրե բարձրանում էին քաղաքի մեջքին, և անթիվ խղճուկ հյուղակները, որ պարբերաբար անհետանում էին անթափանց մշուշում, նույնիսկ չարժանացան նրա ուշադրությանը: Իսկ քաղաքում շատ բան էր փոխվել… Փոքրիկ տապանաքարը, որ հայտնվել էր փոքրիկ քաղաքի ընդարձակ գերեզմաններից մեկում, նշված փոփոխություններից թերևս ամենաաննշանն էր: Տապանաքարի վրա գրված էր միայն հանգուցյալի անունը, և այն վերջին բանաստեղծությունը, որ նա գրել էր մեռնելուց մի քանի րոպե առաջ միայն: Զարմանալիորեն առանձնացված ու միայնակ էր այդ քարը, ինչպես այն շրջմոլիկը, որի հոգին հիմա հանդարտ սավառնում էր գերեզմանով մեկ և այս մռայլ վայրի ամեն մի այցելուի ականջին կամացուկ շշնջում էր իր այն վերջին տողերը.

*Զմռսվա ցրտից խունացած հոգիս*
*Փորձում է ժայթքել մի նոր թարմություն,*
*Բայց ընդարմացած իր խոր ցավերից…*
*Տիրում է հանկարծ դատարկ լռություն:*
*Ներսս պատում է մերկ ունայնություն:*
*Գլուխս կարծես բախվում է պատին՝*
*Խոր վերք թողնելով մաշված ճակատին,*
*Ոսկորներս չոր իրար են սեղմվում*
*Եվ կտրող ցրտից ուժգին մղկտում:*
*Ես կծկվում եմ՝ պատի տակ նստած,*

*Փորձելով հիշել ամառը անցած,*
*Սակայն արևը վառվում է հանկարծ,*
*Այրում է հոգիս ու սիրտս մարած:*
*Ես տեսնում եմ մի լույսե պատուհան*
*Եվ հանգիստ քայլում դեպի լուսավոր դռները մահվան:*

Որքան գեղեցիկ էր Նաստալդի մահը. նույնիսկ ինքը՝ ժամանակ կոչվող այդ անտարբեր մեքենան, մի պահ կանգ առավ այն ցրտաշունչ ձմեռվա երկու երկարատև ակնթարթների արանքում ու հայացքով ճանապարհեց իր հին ընկերոջը դեպի ավելի լավ աշխարհ: Իսկ մարդիկ չնկատեցին այդ, նրանք անտարբեր անցնում էին արդեն ամայացած աղբակույտի կողքով՝ մի սառը հայացք միայն գցելով ծեր թափառականի սառած դիակի վրա և նույնիսկ ուշք չդարձնելով կեղտոտ ու մաշված տետրի պոկոտված էջերի ուրախ պարին ձմռան քամու սառը երաժշտության տակ: Եվ միայն մի խունացած թերթիկ չէր մասնակցում այս ուրախ պարահանդեսին. այն կծկվել էր ծերուկի սառած ափի մեջ ու լուռ սգում էր իր արարչի մահը: Հենց այս փոքրիկ թղթի կտորի վրա էին գրված այն կիսահարբած տողերը, որ հետո փորվեցին Նաստալդի տապանաքարի վրա...

Այսպես անցան տարիներ, թռան վայկյանների նման, բազում արդար մարդիկ գլորվեցին անդունդը, նույնքան էլ ճիվաղներ վեր հառնեցին ճահիճներից ուղիղ դեպի «Ամենաթողության» երկնաքերը: Բազմաթիվ անմեղ էակներ զոհ գնացին տականքներին, տկար ու խղճուկ մարդիկ ե՛լ ավելի խղճալի վիճակում հայտնվեցին, իսկ ամենակարող տխմարներն ե՛լ ավելի հղփացան: Մի խոսքով, քաղաքը շարունակում էր ապրել իրեն բնորոշ ու կանխատեսելի կյանքով... Սակայն քաղաքի սովորական առօրյայում՝ ձանձրալի գորշության ներքո, այնուամենայնիվ տեղի ունեցավ մի տարօրինակ երևույթ. երկու բոլորովին ազնիվ ու անմեղ երիտասարդ հասան բաղձալի հաջողության միմիայն իրենց խելքի ու հնարամտության շնորհիվ: Իսկ հասարակությունը, որ երբևէ ոչ մի բացառություն չի ընդունում, այս անգամ նույնպես բացառություն չարեց և մի փոքր մտածելուց հետո կայացրեց իր հեղինակավոր դատավճիռը. տղաներին կամ օգնել էր որևէ ազդեցիկ բարեկամ, կամ նրանք իրենց հաջողության ճանապարհը հարթել էին բազմաթիվ դիակների վրայով: Ինչ արած, այդպես էր ընդունված փոքրիկ քաղաքում, և պարզամիտ հանրությունը պարզապես չի կարող պատկերացնել մի բան, որ երբևէ չի տեսել: Քաղաքի իրականության այս անբուժելի խնդիրը, իհարկե, չէր էլ հուզում տղաներին, որոնք արդեն սկսել էին անհոգ վայելել իրենց քրտնաջան աշխատանքի՝ հետզհետե հասունացող պտուղները:

«Ամենաթողության» երկնաքերի լավագույն գրասենյակներից մեկը նրանց էր պատկանում, որը ձեռք էին բերել ոչ թե որևէ բարեկամի, այլ սեփական կամքի, համառության ու գուցե նաև Աստծու օգնությամբ: Չնայած Ցիանկոն արդեն վաղուց դադարել էր Աստծուն հավատալ ու, ինչպես մարդկանց մեծամասնությունը, հավատում էր ավելի շատ նյութականին, քան ինչ-որ երկնային ամենազոր էակի, այնուամենայնիվ, նա երբեք չէր վիճում, երբ ընկերն ամեն հարմար առիթով վկայակոչում էր երկնային ուժերի աջակցությունն իրենց բոլոր գործերին: Նեկրիստոն դեռ հարմարվում էր իր այդքան կտրուկ վերափոխված կյանքին ու հետզհետե գիտակցելով ու գնահատելով իր լավագույն որակները՝ նոր միայն սկսում էր հպարտանալ դրանցով: Այսպիսով նա վայելում էր իր նոր կյանքը՝ միևնույն ժամանակ նաև չմոռանալով նախորդը:

Նա չէր մոռացել... ո՛չ իր կրած զրկանքները, ո՛չ սոցիալական անհավասարության մտրակները, ո՛չ անարդարության ապտակները, ո՛չ էլ անօրինության փամփուշտները, որ քրքրել էին իր՝ այդպես էլ ուրիշի մաշած հանդերձը կրել չցանկացող մերկ հոգին: Վիրավորանքը, մերժումները և հուսահատությունը անցել էին անպաշտպան հոգու միջով ու ավերել ամեն ինչ: Բայց մեղավոր չէր նրա հայրը, որ նվիրաբերելով իր անձը ազգի պաշտպանությանը՝ ժամանակ չէր ունեցել որդու համար պարիսպներ կառուցելու: Նա չէր մոռացել... ո՛չ հորը, ո՛չ հոր խորհուրդները, ո՛չ էլ վեճերը: Անվերջ երկար պաշարում ապրած ոտնահարված հոգու ավերակների տակ, սակայն, թաղված մնացել էին արժանապատվության մնացորդները, որոնք այսօր անգին էին: Ուղղակի նա կարողացել էր հենց իրեն վերապահել ինքն իրեն գնահատելու իրավունքը՝ հույսը չդնելով շրջապատի վրա: Ու երջանիկ էր, չէ՞ որ երջանկությունը նույն իրականացված երազանքն է: Ճիշտ է, նա չէր երազում անհատապես վրեժ լուծել այն բոլորից, ովքեր բացահայտ կամ թաքուն կերպով երբևէ հարձակվել էին իր վրա, բայց մեկ է... չէր մոռացել: Ո՛չ վաղեմի երազանքները, որ այսօր իրականություն էին, ո՛չ էլ վաղեմի իրականությունը, որ այլևս անցյալ էր: Ու կոտանքների հուշն աչքերում, վրեժի զենքը գրպանում լցրած՝ նա դուրս եկավ եկեղեցուց հպարտ կեցվածքով, որն այնքան հմայիչ էր: Մարդկանց բարձրից էր նայում, բայց ընդամենը կես ատիճան, այն էլ՝ հոգու դեռևս չլավացած սպիները դարմանելու համար: Բայց երբևիցե հասարակական տրանսպորտից օգտվածի անհագ համեստությունն այնպես ներդաշնակ էր խառնվել բարձր եկամուտ ունեցողին հատուկ հպարտության հետ, որ նա ուղղակի փայլում էր մի անասելի գրավչությամբ: Իսկ եկեղեցի ժամանել էր, որպեսզի Աստծուն շնորհակալություն հայտներ, չէ՞ որ չէր մոռացել, որ պատահականությամբ է

ողջ մնացել: Չէր մոռացել ո՛չ այդ օրը, ո՛չ մութ կամուրջը, ո՛չ էլ... փրկչին, որ հիմա մեքենայի մոտ իրեն էր սպասում...

Նեկրիստոյի ներաշխարհն արդ համահունչ էր արտաքին աշխարհին առավել, քան երբևէ, ու նրա հոգու անվրդով ճախրը ճակատագրի մայթերով նմանում էր հաղթանակի նվիրված շքերթի: Դեմքն ուրախություն էր ճառագում, բայց նա հավելյալ ջանք չէր խնայում խռովքի նշույլները պարտակելու համար: Դա նրան մի յուրատեսակ բավարարվածության զգացում էր տալիս. հաղթանակն իրենն էր: Ճիշտ թե սխալ, համարում էր, որ կյանքը վերջապես վերադարձրեց իր պարտքերը: Ու պարտատիրոջ պահանջատիրությունն ամուր մեխված էր նրա պարզ ճակատին՝ հարթելով կյանքի փորագրած կնճիռները: Իսկ սեպն ու մուրճն այլևս փշրված էին կարծրացած կամքի պատասխան հարվածներից: Մեղմ հեգնանքը զարդարում էր նրա անընկճելի կերպարը, իսկ կիսաժպիտն այժմ ավելի շատ ժպիտ էր, քան թախիծ: Քիչ բարկացած էր, բայց դա դժվար էր զանազանել կարեկցանքի և խղճի արտահայտությունից, և վերադրման արդյունքում մակերևույթին արտացոլված էր մի վերաբերմունք, որն ավելի շատ մոտ էր գորշ անտարբերության: Նրա հաստատակամ վճռականությունը վարակիչ էր, իսկ ապահովության զգացումը հեշտությամբ կպարուրեր ցանկացած մարդու, ով նրա հետ գոնե երկու բառ կփոխանակեր: Նրա հոգին հարմար տեղավորվել էր անպարտելիության գահին, կրում էր հաղթանակի դափնին և ցնծության թագը, իսկ հերոսության գավազանը շողում էր կուրացուցիչ փայլով: Դա նրան դուր էր գալիս և շատ էր սազում: Այն խորհրդավոր հանգստությունը, որ իջել էր բազմաչարչար Նեկրիստոյի շնչառության վրա, այժմ համոզիչ կերպով նրան ուղեկցում էր կարծես դեպի երազած լույսը: Ճանապարհին քաղաքավարի կերպով անտեսելով բոլոր անցորդների դժգույն դեմքերը՝ նա շրջում էր ասես իր սեփական այգու սալարկված ծառուղում, որտեղ մուտք գործելու համար այլևս անցաթուղթ էր պետք: Սկզբում մի փոքր վարանելով՝ նա, այնուամենայնիվ, սիրալիր կերպով ընդունել էր կյանքի նվերները և ավելի շատ սրտի մղումով, քան թե քաղաքավարությունից ելնելով՝ ժամանակ էր գտել եկեղեցում հայտնվելու: Ոչ մի աղոթքի ժամանակ նա այնքան չէր խոնարհել գլուխը, ինչքան այս անգամ, երբ շնորհակալությունների ու գոհունակության անբառ արտահայտությունների արանքում միակ խնդրանքը թերևս ծնողի համար էր: Մրմունջները և անխոս աղոթքները բխում էին աղացված սրտից մնացած մասունքներից: Բայց այդ հանգամանքը նրան ոչ մի կերպ չէր խանգարում. շարունակում էր ապրել, կամ գուցե նոր-նոր էր սկսում. մի բան հաստատ էր՝ ավարտելու մտադրության ոչ մի նշույլ: Հերթական հարություն վերածնունդների հարուստ փորձ կուտակած այս երիտասարդի համար. նախ՝

Ցիանկոն, հետո՝ նրա առաջարկը, հետո էլ՝ դրանց պտուղները, իսկ ամենից առաջ՝ Էլլան: Նա էլ չէր մոռացվել, չնայած այն, ինչ հիմա էր զգում այդ երիտասարդ կնոջ հանդեպ, ոչ այլ ինչ էր, եթե ոչ սխալ բաղադրատոմսով մարինացված սիրո, մեծահոգության չհասնող խղճահարության և վրեժխնդրության չհասնող անտարբերության մի կիսաեփ խառնուրդ, որ վաղուց համը կորցրած էր, ու եթե նոր անակնկալներ չլինեն, ապա այլևս՝ նաև անպիտան: Մինչ հրաշքը Նեկրիստոն ապրել էր հրաշքի հույսով, իսկ դրանից հետո նա հավատում էր հրաշքներին, բայց ապրում էր՝ չսպասելով դրանց բարեհաճությանը: Ամենազոր կյանքից նա կարողացել էր հետ խլել իր ճակատագրի ղեկը, և այն դողդողալով վարելու ժամանակներն էլ արդեն անցել էին: Իրադարձությունների և դերերի այս անսպասելի հերթափոխը կարող էր խուճապի մատնել ցանկացած անձի, բայց նրան այլևս ոչինչ չէր զարմացնում: Իսկ նուրբ ընդարմացումից նրան սթափեցնել կարող էր միայն ուժեղ երկրաշարժը կամ Ցիանկոյի մեղմ ձայնը.

—Եղբա՛յր, չգիտեի, որ այսքան խորը հավատում ես, որ մի ամբողջ ժամ տրամադրեցիր եկեղեցի այցելությանը, բայց մեզ սպասում են: Ոսկի է ժամանակը, իսկ րոպեներ անց մեզ սպասում է հենց այդ ժամանակը ոսկով փոխարինելու հերթական պայմանագրի կնքումը, հուսով եմ՝ չես մոռացել:

—Ցիա՛նկո, ընկե՛րս, այս տախտակի վրա շատ բան կանխորոշված է, քայլերը, պայքարը՝ գուցե նույնպես, իսկ դադարները՝ հատկապես: Եթե այն մութ օրը ես մի փոքր շտապեի, կամ դու մի փոքր ուշանայիր, հիմա այլևս ստիպված չէիր լինի ինձ սպասել…

Մեկ ակնթարթ լռությունը շատ սազեց այս պահին ու տարավ նրանց հին էջերի խարխուլ միջանցքներն ու նորից հետ բերեց դեպի կանգնած ներկան, որ կարծես անվրդով սպասում էր մինչև նրանց վերադարձը:

Ու դրության անվիճելի տերերը տեղավորվեցին մեքենայի մեջ արդեն սովորական դարձած զույգ հանդիսավորությամբ և շարժվեցին նեղ փողոցով, որ տանում էր դեպի բլուր բարձրացող գլխավոր ճանապարհը: Առօրյա կատակներով նրանց զրույցը համարյա ակնթարթի հասցրեց առանց այն էլ կարճ ուղին. ևս մի քանի րոպե, և նրանք կբարձրանային ևս մի աստիճան վերև: Խոսքն այստեղ, իհարկե, ժամանակի գետնանցումի աստիճանների մասին է, որ փռված է կյանքի պողոտայի տակ, ու որով կյանքի մյուս մայթ անցնելու համար նախ իջնել էր պետք: Ճիշտ է, օրինաչափ վերելքից Նեկրիստոն իրեն բավարարված էր զգում, բայց հին երազողի կարիերան երբեմն զգացնել էր տալիս: Այդ մաշված թղթի կտորների կույտը նրան որոշ իշխանություն տալիս էր, բայց ու՞մ վրա: Հուսահատ թշվառների մի թոռոմած ծաղկեփունջ. ահա նրա իշխանության իրացման ամբողջ թիրախը, իսկ այլընտրանք չկար: Ինքն էլ

այդտեղից էր սերում, բայց դրա ընտրությունն էլ բնավ իր ձեռքերում չէր: Գերհոգնած մկանների, քրտնաթաթախ մարմինների ու սևացած դեմքերի այդ պատահական հավաքածուն, որ քաղաքի բնակչության մեծամասնությունն էր կազմում, երբեմն զբաղեցնում էր Նեկրիստոյի միտքը, բայց դա նրա գործը չէր... Երևի կյանքը մի օր նրանց պարտքերն էլ կվերադարձներ, ուղղակի Նեկրիստոն ցուցակում առաջինն էր: Հասարակ ծագման և հաշմանդամ զինվորի որդու հաջողությունները տասնամյակների կտրվածքով եզակի էին և խորթ բոլորի համար, ովքեր ինչ-որ չափով տեղյակ էին նրա թուիչքի մանրամասնություններին:

***

Չնայած որ դեռևս շատ ուշ չէր, «Ամենաթողության» երկնաքերի մոտակայքում արդեն գրեթե ոչ ոք չկար: Դրսում միայնակ կանգնած էր ծեր դռնապանը: Նա հագել էր իր սովորական սև գրպաններով կարմիր համազգեստը, որը նրան ավելի շուտ նմանեցնում էր ինչ-որ զվարճալի մուլտֆիլմի հերոսի և լիովին համապատասխանում էր նրա զբաղեցրած կարևոր պաշտոնին: Հենց այս համազգեստն իր կարմիր գլխարկի հետ շատ հաճախ պատճառ էր դառնում շենք ելումուտ անող հղփացած այցելուների ծաղրական հայացքների: Սակայն դռնապանն արդեն վաղուց ուշադրություն չէր դարձնում այդ ամենին և իր աշխատանքային ժպիտը դեմքին՝ հարգանքով բացում էր դուռը բոլորի առջև: Իսկ նրանք էլ տալիս էին իրենց մանր դրամը ծերուկին՝ իր գործը լավ կատարելու կամ էլ պարզապես իր այդ զավեշտալի տեսքի համար:

Անձրևը գնալով ուժեղանում էր: Մուտքի ծածկի տակ կանգնած բարձր հասարակության ծաղրածուն մտքում հաշվում էր րոպեները մինչև իր հերթափոխի ավարտը, չնայած չէր էլ պատկերացնում՝ ինչպես պետք է տուն հասներ այդ անձրևին: Շուրջը նայելով ու համոզվելով, որ ոչ ոք չկա՝ որոշեց վառել ծխախոտի գլանակը՝ ժամանակն ինչ-որ կերպով սպանելու համար: Ծխի կործանիչ քուլաները, սակայն, դեռ չէին էլ հասցրել ներթափանցել ծեր դռնապանի թոքերի խորքերը, երբ միջանցքում նկատեց երկու երիտասարդի, որոնք ուրախ զրուցելով մոտենում էին ելքին: Ծերուկը նրանց լավ էր ճանաչում. նրանք երկնաքերում գործող բազմաթիվ կազմակերպություններից մեկի սեփականատերերն էին: Դռնապանն արագ դեն նետեց գլանակը և շտկելով առանց այն էլ իդեալական համազգեստը՝ շտապեց բացել դուռը: Տղաներից մեկը, որ ավելի համեստ ու կոկիկ էր հագնված, դրամը դրեց ծիծաղելի համազգեստի ոչ պակաս ծիծաղելի գրպանն ու հաջողություն

մաղթելով ծերուկին՝ ընկերոջ հետ ուղղվեց դեպի կայանատեղին: Իսկ ընկերը, որ ամբողջ ճանապարհին շաղակրատում էր, մի պահ հանկարծ լռեց, հետո խորամանկ հայացքն ուղղեց զրուցակցին ու կարծես հիացած հենց նոր գլխում հղացած իր մտքից՝ ասաց.

—Լսի՛ ր, Նեկրի՛ ստո, արի՛ այս գիշեր մի լավ զվարճանանք և փող ծախսենք լրբերի վրա, մենք հաստատ վաստակել ենք այդ…

—Դե դա այդքան էլ վաստակ չէ ու…

—Լա՛ վ էլի, վերջացրու՛ , նորից սկսեցիր քո մաքրամաքուր հոգին շաղ տալ աշխարհով մեկ, պետք է ապրել, Նեկրի՛ ստո, պետք է ապրել:

Ինչքա՜ ն ծանոթ էին այս բառերը… Դրանք մի տեսակ տարօրինակ զգացում արթնացրին: Նեկրիստոն մի վայրկյանում թերթեց ողջ անցյալը, հիշեց Նաստալդին ու շատ ցանկացավ հենց այդ պահին մի քանի մեխակ վերցնել ու գնալ նրա շիրմին: Այնքա՜ ն բան կար խոսելու… հիշեց իր վաղեմի երազանքը՝ հասնել այն ամենին, ինչ հիմա ունի ու մի լավ տուն նվիրել Նաստալդին, որը ձմռանը պետք է շատ տաք լիներ, ու սառնարանը՝ միշտ լիքը… Միակ բանը, որ նա հասցրեց անել, փոքրիկ գերեզմանաքարն էր… Գուցե շատ ճիշտ կլիներ մի լավ արտասվել, պատմել Ցիանկոյին, թե ինչ է հիմա կատարվում իր հոգում, բայց սովորության համաձայն՝ նա որոշեց սեփականը թողնել աչքերից ու կոկորդից այն կողմ…

—Հե՜ յ, ի՞ նչ ես քարացել, դե մի բան խոսիր, գալի՞ ս ես հետս, թե՞ ոչ: Մի գեղեցկուհու համար ունեմ, գուցե ընկերուհի էլ ունենա… Կանչե՞ մ քեզ համար:

Նեկրիստոն զգաց, որ իրեն իրոք անհրաժեշտ է գոնե մի քանի ժամով անջատել գլխուղեղն ու որոշեց գիտակցաբար նետվել դեպի անգիտակիցը: Նա կիսաժպիտով ասաց.

—Կանչի՛ ր, բայց ես նախ հարբել եմ ուզում:

—Վերջապե՜ ս:

Ցիանկոն շատ արագ հավաքեց մի հերթական մարմնավաճառի համար և պայմանավորվեց ժամը տասնմեկին նրան ու գործընկերուհուն վերցնել «Անմեղության» նրբանցքից, որը միացնում էր «Վայելքների» խճուղին «Անապակ սիրո» փողոցի հետ, և որն, ինչպես ճիշտ կռահեցիք, միակողմանի էր:

Կեսգիշերին մոտ արդեն հարբած Նեկրիստոն, խախտելով կանոնները, հակառակ կողմից մտավ այդ փողոց և, առաջացնելով հերթական ու քաղաքի համար սովորական խառնաշփոթ՝ հայտնվեց նրբանցքում, որտեղ մի անձրևանոցի տակ իրար սեղմված նրանց էին սպասում երկու գիշերային թիթեռնիկներ: Նրանք արագորեն տեղավորվեցին Նեկրիստոյի բավականին

շքեղ մեքենայի ետևի նստատեղին և միանգամից արժանացան Ծիանկոյի ոգևորված դիմավորությանը, ով դիմացի նստարանից շրջվել ու իրեն հատուկ մի խորամանկ հայացք էր նետել աղջիկների վրա:

—Հաճելի ժամանց մեզ, աղջիկնե՛ր, ինչպե՞ս եք:

—Լավ,– ասաց նրանցից մեկը, բայց դա Ծիանկոյին ընդհանրապես չէր հետաքրքրում, նա միանգամից շարունակեց.

—Լսի՛ր, բայց ընկերուհիդ հրաշք է հա, նույնիսկ նախանձեցի ընկերոջս,– մնալով նույն ոգևորության մեջ ու քթի տակ ծիծաղելով` նա շարունակեց.

—Հը՞ն, ի՞նչ կասես, եղբա՛յր:

Նեկրիստոն վերջապես հայացքը նետեց հայելու վրա, որի միջից անթարթ նրան էին նայում... այն անիծյալ խոշոր աչքերը...

—Ընկերուհիդ լավ ամաչկոտ է, հա՞, բայց, անունն ի՞նչ է,– շարունակեց իրավիճակը բոլորովին այլ կերպ տեսնող Ծիանկոն:

—Ընկերուհիս չէ, քույրս է` Էլլան...

Այդ անունը վերջնականապես ջախջախեց Նեկրիստոյի այն հույսը, թե գուցե աչքերը կամ հայելին խաբում են: Ավելի, քան երբևէ կուզեր խաբված լինել, բայց հստակ էր Էլլայի աչքերի արտացոլանքը հայելում, ինչպես և նրա հոգու դեռևս չինչ պատկերն իր հոգու հայելում: Ախր աննման էին այդ աչքերն այն աշխարհում, որի հետ Նեկրիստոն երբևէ առնչվել էր: Կրկին վաղեմի զավեշտալի երազանքներից մեկը զգուշորեն հիշեցրեց իր երբեմնի գոյության մասին, բայց այս անգամ էլ ժպիտ չպարգևեց նրա շուրթերին: Եվ այս աներևույթ հարվածից մթնեց աչքերի առջև, մարմինը ցնցվեց մի ահարկու դողից, որ քիչ էր մնում` փշրեր ոսկորները: Սիրտը հաճույքով կկանգներ, եթե ենթարկվեր գիտակցությանը: Իսկ հասուն միտքն ամեն ինչ կարող էր կանխատեսել, միայն ոչ դա: Չէր պատկերացնում, որ երկնքից իջածը միանգամից կհայտնվեր փողոցում: Ախր թռչելու համար ծնվածը սողալ չի կարող: Այսպես կմտածեր նա դեռևս մի քանի րոպե առաջ, իսկ այդ պահին բոլոր զգացմունքները սպառնում էին իրեն ու տանջում, մինչև կխոստովաներ, որ բավարարված է` Էլլային այդ վիճակում տեսնելով: Խորը վիրավորված էր, երբ մտածեց, որ փաստորեն Էլլան նախընտրել է անառակ կյանքն իր անապակ սիրո փոխարեն: Սկսեց ենթադրություններ անել, թե ինչն է հավանաբար պատճառ հանդիսացել, որ Էլլայի երբեմնի ամուսինը լքել է նրան: Մի պահ սկսեց անգամ հասկանալ ու հարգել այդ Էվիլիո կոչեցյալին: Բայց խոստովանելու ունակությունն էլ թաքնվեց մոռացումի մութ անկյունում: Մյուս կողմից էլ այդ փխրուն ու ճերմակ մաշկը գազանաբար համբուրելու

գայթակղությունը խելահեղ գլխապտույտ էր առաջացնում հարբած գլխում, որին դիմադրելը նույնքան ծանր էր։

Ինչևէ, նրա դեմքի արտահայտությունն արդեն բավական էր անորոշությունից մեռնելու անհագ ցանկության գոյության փաստն անառարկելի դարձնելու համար։ Հիրավի, նա այս պահին ավելի շատ էր ուզում մեռնել, քան այն պահին, երբ փրկվեց հրաշքով, որն այս պահին իր կողքն էր նստած և ակամա սպանում էր նրան իր չարաճճի նախաձեռնության անսպասելի ընթացքով։ Երազեց մեռնել կամ գուցե կանգնեցնել ժամանակը, կամ թեկուզ ետ շրջել այն, կամ գոնե ցատկել դրա վրայով, միայն թե չապրեր այդ խելառ ակնթարթների տաժանակրությունը։ Ափսո՜ս, որ մեքենան այդ հնարավորությունները չուներ. այն կարող էր տեղափոխել միայն ասֆալտի վրայով, իսկ այդպես երբեք ինքդ քեզնից փախչել չես կարող։ Չես կարող փախչել նաև ետևում նստած հեքիաթից, որի հետ փախչելը երազանքդ էր ընդամենը մի քանի տարի առաջ։ Այս ամենը քաջ գիտակցելով նույնիսկ՝ Նեկրիստոն ամբողջ ուժով ակամա հենվեց ոտնակին՝ կարծես մահը փնտրելով։ Բայց ինքնապահպանման բնազդը, որ վերջերս զարմանալիորեն արթնացել էր նրա մեջ, հմտորեն պտտում էր ղեկն այնտեղ, որտեղ պետք էր։ Ու այդ գերբնական և գուցե անհարիր ուժով ղեկավարվող մեքենան նրանց տարավ մի տեղ, որտեղ ցածրորակ նյութերով ռոմանտիկ և գրավիչ միջավայր կերտելու ցանկությունն ակնհայտորեն չէր իրականացել...

Մղձավանջը դեռ մի քիչ էլ պետք է շարունակվեր, մինչև մտերմացած զույգը կհեռանար իր սենյակը, իսկ նոր ծանոթացածները, որ իրականում վաղուց էին ճանաչում իրար, բայց այդպես էլ մինչև վերջ չէին ճանաչել, կառանձնանային իրենց սպասող ռազմի դաշտում, որտեղ անշուշտ առաջին անգամն էր, երբ կռիվն ընթանալու էր հոգեկան հողի վրա և գուցե բոլորովին առանց զենքերի ու վահանների, որ այնքան ավելորդ էին այս պարագայում։ Բայց չէր բացառվում, որ կայանար երկար սպասված հաշտությունն ու անկողինն ընդամենը հաստատեր խաղաղության դաշինքը։ Բայց մինչ այդ Նեկրիստոն պետք է կարգավորեր իր ներքին խռովությունները, գուցե Էլլան՝ նույնպես։ Վերջապես մտան սենյակ...

* * *

Դուռը շրխկոցով փակվեց, և ներկաները քիչ ահաբեկված անմիջապես ոտքի կանգնեցին։ Նրանց դեմքերն առաքում էին տարբեր նրբերանգներով տրամադրություններ, բայց անխտիր բոլորի դեմքերը տխրության արտահայտություն էին պարունակում իրենց մեջ։ Իսկ դահլիճը զարդարված էր

առօրեական տոնականությամբ: Նրա բարձր առաստաղը փայլում էր իր ճերմակությամբ, իսկ խոշոր լուսամուտներից լույսն անարգել ներխուժում էր այդ սրահը, որը սովորական տան մի քանի հարկ կտեղավորեր: Հանդիսավորությունն ու պատկառանքը բազմապատկում էին երկու սյուները, որ վեր էին խոյացել կենտրոնական մասում, որոնց զանգվածեղ իրանները, սակայն, հազիվ էին պահում առաստաղի անզուսպ ծանրությունը: Ներս մտնողները հանդարտ և հանդիսավոր քայլերով տեղավորվեցին իրենց տեղերում՝ կենտրոնական մասում գտնվող երեք բարձրադիր գահերի վրա, որոնք դեմքով նայում էին դեպի մնացած նստարանները, և որոնցից մեջտեղինի հենակը մի փոքր ավելի բարձր էր մյուս երկուսինից: Անմիջապես դրանց առջև մի կաղնե սեղան էր՝ լաքապատված ամենաօրակյալ և փայլուն նյութերով, որը, սակայն, մի փոքր ավելի մուգ գույն ուներ մանրահատակի և մնացյալ կահավորանքի համեմատությամբ: Սեղանի առջև մի բաց տարածություն էր, որին հաջորդում էին ևս երկու սեղան իրենց աթոռներով, իսկ դրանք հետևից եզերված էին մի լայնական բազրիքով, որը կիսում էր դահլիճը երկու անհավասար մասերի: Բազրիքի մեջտեղի հատվածը, որ ընկած էր ամենաբարձր գահն ու մուտքը միացնող լայն կենտրոնական միջանցքի վրա, բացվող էր, և մուտքից մինչև այդտեղ գցված էր մի գորգ, որ միանշանակ կարմիր էր եղել, երբ նոր էր: Բարձրադիր գոտու ձախ կողմում՝ ազատ տարածության վերջավորության վրա, ճաղապատված մեկուսարանում, տեղավորեցին ակնկոր ամբաստանյալին, որի ձեռքերը, վստահությունից թե խղճահարությունից, կապված չէին: Մեջտեղի գահին բազմածը, որ անընդհատ նայում էր նրան, իր դեմքի խիստ արտահայտության մեջ լուծում էր նաև աննշան հուզմունքի մի երկու կաթիլ, որ մերթընդմերթ գտնում էր իր արտահայտությունը հայացքը շրջելիս և աչքերը թարթելիս: Բավականին ծանր էր նրա ուսերին դրված պատասխանատվությունը. նրա կայացրած որոշումը մեկ կամ երկու կյանքերի վրա կարող էր ունենալ ծայրահեղ վճռական ազդեցություն: Բայց նա, մեծ փորձ ունենալով, չէր ընկճվում այդ լարվածության հերթական կտրուկ վերելքից: Նրա աջ և ձախ կողմերում նստածներն ունեին ենթաառաջնորդին բնորոշ բոլոր հատկանիշները. ավելի ազատ ու անկաշկանդ էին և բարձրից ու մի քիչ էլ հեգնական երանգով էին նայում թե՛ վկաներին, թե՛ առավել ևս մեղադրյալին ու պաշտպանին, մինչդեռ դատավորի հայացքի մեջ երկար փնտրելուց հետո անգամ կարեկցանք կհայտնաբերեիր: Այդ երկուսը կրում էին պահի հուզականության միայն պոչի ծանրությունը, որը նրանց առօրեական և հավասարակշռված տրամադրություն էր հաղորդում, և նրանք այդ գործի քննությանը վերաբերվում էին իմիջիայլոց, կարծես այս փուլում իրենցից այլևս ոչինչ

կախված չլիներ, և կարծես իրենց բարեկամին չէին դատում: Նրանց այդպիսի տրամադրվածությունն ավելի էր խեղդում պաշտպանի դիրքը. նա այնպիսի խեղճ ու անվճռական տեսք էր ստացել, որ այդ պահին իրեն էլ մի քանի պաշտպան չէին խանգարի: Իսկ մեղադրող կողմը ներկայացնողը բացարձակ անտարբեր էր անխտիր բոլորի հանդեպ, անգամ ամբաստանյալի, որին գրողի ծոցն ուղարկելու համար էր նա այդտեղ: Հետաձգված և ձգձգված դատավարության վերջին օրը վկաներից հարցաքննվելու էր միայն մեկը, ով վախն ու հուզականությունն արդեն թոթափել էր և ազնիվ վկայությամբ եկել էր նպաստելու արդարադատության իրացմանը:

—Նիստը հայտարարում եմ սկսված,— հնչեց դատավորի բարձր ձայնը,— քննվում է գործն ըստ ներկայացված հայցի, որով ամբաստանյալը մեղադրվում է արդեն ապացուցված կանխամտածված մահափորձի գործում:

Այս նույն խոսքերը, որ կրկնվում էին ամեն անգամ լսումները վերսկսելիս, ոչինչ չփոխեցին մեղադրյալի անճար հուսահատության կերպարանքում. նա այլևս կորցրել էր արդարացվելու հույսը, և ուժերը բավականացնում էին միայն մեղմ պատիժ կրելու հույսի համար:

—Հիշեցնեմ,— շարունակեց դատավորը,— որ նիստը հետաձգվել էր դարձյալ համարձակության պակասի պատճառով, բայց ճակատագրի մղումով և հասկանալի պատճառներով այլևս հետաձգելն անհնար է, և շուտափույթ վճիռը՝ հրամայական: Վկայության է հրավիրվում վերջին վկան, համեցե՛ք ամբիոնի մոտ:

Դատավորի այս հրավերը մի կերպ սթափեցրեց վկային, ով ամենայն ազնվությամբ բարձրացավ դրա համար նախատեսված տեղը, անկեղծորեն երդվեց, որ չի ասի ոչինչ ճշմարտությունից բացի և սպասեց առաջին հարցին, որ հնչեցվեց դատավորի կողմից.

—Ասացե՛ք խնդրեմ, անձամբ ճանաչելով մեղադրյալին, չե՞ք կարծում, որ այսպիսի հանգամանքներում նրա կատարած մահափորձը եսասիրության մի հերթական դրսևորում է:

—Ո՛չ... միգուցե... անշուշտ: Հրաժարվել սեփական կյանքից այլևս շարունակելու անտանելիության պատճառով որոշակիորեն ենթադրում է սեփական հանգստության և հարմարավետության ձգտում, բայց չէ՞ որ կյանքը տնօրինելը իր իրավունքն է, և ոչ ոք չի կարող բռնանալ դրա վրա:

—Ես առարկում եմ,— տեղից վեր թռավ մեղադրողը,— դա ամենաստոր դավաճանությունն է ծնողների հանդեպ, վկան չի ասում այն, ինչ մտածում է իրականում:

—Առարկությունը մերժված է, նստեցե՛ք, խնդրեմ: Հաջորդ հարցը՝ չե՞ք համարում, որ այսպիսի թուլակամությունը կարող էր հեշտորեն կործանել նաև

կողմնակի մեկ անձի ապրելու իրավունքը, և ի՞նչ կլիներ հասարակության վիճակը, եթե նման իրավիճակում հայտնված ցանկացած ոք վարվեր նույն կերպ:

—Եթե անկեղծ,— կարճատև դադարից հետո պատասխանեց վկան,— ես դրանում կտեսնեի նաև այդ կողմնակի անձի մեղավորությունը, իսկ մյուս հարցի վերաբերյալ կասեմ, որ ոչ ոք չի կարող հայտնվել մեղադրյալի այսպիսի կարգավիճակում: Պնդում եմ, որ սրա վրա ազդեցություն են ունեցել նաև շատ ու շատ այլ իրադարձություններ, որոնք ընդգրկված չեն հիմնական գործում, և այն վերջին դեպքը միայն առիթ էր՝ նման հանցագործության, ինչպես դուք եք ասում, գնալու համար, բայց երբեք ոչ պատճառ:

—Շնորհակալություն, դատարանն ավարտեց հարցերը, պաշտպանող կողմն ունի՞ հարցեր:

—Ձեր թույլտվությամբ,— դողդոջուն ձայնով խոսեց դատապաշտպանը՝ տեղից վեր կենալով,— պարո՛ն, պատկերացրե՛ք Ձեզ մեղադրյալի փոխարեն, մի՞թե դուք էլ չէիք ունենա մի քանի տարի ժամանակիր աշխատանքից հետո վարձատրված չլինելու զգացումը, որն էլ հենց դրդել է վրեժի:

—Համաձայն եմ, բայց ընդունենք, որ այստեղ ոչ ոքի մեղադրել պետք չէ, բացի նախախնամությունից, որ թերևս այս ամենն էլ վաղուց արդեն կանխորոշել է:

—Իսկ չե՞ք կարծում, որ նրա որդեգրած վրեժի տարբերակն ամենամարդասիրականն է, քանի որ նա դրանով ոչ մի իրական վնաս չի հասցրել վրեժի անմիջական թիրախին:

—Այո՛, կարծում եմ, իսկ եթե նա ինքն իրեն կմեղադրեր ուրիշի ինքնասպանության համար, դա իր գործն է, որովհետև եթե նա իրոք անմեղ լիներ, այդպես չէր անի և ոչ մի պարագայում:

—Իսկ եթե դա տեղի է ունեցել հենց մերժման օրը,— տեղից ընդհատեց մեղադրողը,— մարդասիրական կլիներ, եթե նա դա հետաձգեր մի որոշ ժամանակով և կատարեր շատ հեռու մի տեղ, այլ ոչ թե այն կամրջի վրա, որը նրանց շատ բան էր հիշեցնում և կարող էր լրացուցիչ առիթ հանդիսանալ երրորդ անձի համար՝ իրեն մեղավոր ճանաչելու, ուստի պնդում եմ, որ սա ոչ այլ ինչ է, եթե ոչ մի հեշտ տարբերակ՝ քեզ հանգստություն, իսկ ուրիշին դիտավորյալ կերպով անասելի տառապանքներ պատճառելու:

—Հավատացե՛ք, որ նման դեպքում հետաձգելու ուժ դժվար թե մնացած լիներ,— խոսքն այսպես ավարտեց վկան և դատավորի թույլտվությամբ, քանի որ այլևս հարցեր չկային, զբաղեցրեց իր նախնական տեղը:

—Պարո՛ն, կարդացե՛ք մեղադրական ճառը:

—Շնորհակալությո՛ւն: Պարոնա՛յք, այս թուլամորթը վտանգավոր է հասարակության համար. չեմ կասկածում, որ նրա մտքով բազմիցս անցել է իրեն վերջ տալուց առաջ նաև նրա վերջը տալ: Եթե նրա տղամարդկությունը բավարար չէ դառը կյանքի մարտահրավերներն ընդունելու և մարսելու համար, ապա նա պետք է մեկուսացվի և վերացվի. սա է բնական ընտրությունը և գոյության կռվի ողջ էությունը: Այս ամենին գումարելով ծնողներին, բարեկամներին և ընկերներին սառնասրտորեն դավաճանելու աններքելի փաստը, ես կարծում եմ, որ նա հանցավոր է և պետք է պատժվի ամբողջ խստությամբ:

—Պաշտպանական ելո՛ւյթը,– հրահանգեց դատավորը:

Այլայլված պաշտպանը մի կերպ կանգնեց և մտքերը երկար ի մի բերելուց հետո վերջապես սկսեց.

—Հարգելի՛ դատարան, նա մեր բարեկամն է, մեր միս ու արյունն է, մեր մի մասնիկն է և շարժիչ ուժն է: Առանց նրա մեր կյանքը ոչ թե դժվար կլինի, այլ անհնարին: Ախր զգացմունքն է, որ զարդարում է մարդու կենցաղը, իմաստավորում նրա կյանքը, համեմում նրա առօրյան և լուսավորում նրա ապագան: Եվ քանի որ սիրելը մեղք չէ, ես կարծում եմ, որ առաջին մասով նա անմեղ է, իսկ փոքր-ինչ անհավասարակշիռ վերջին արարքի համար արդարադատությունից ակնկալում եմ մեղմ պատիժ:

—Դատարանը հեռանում է խորհրդակցությունների սենյակ՝ վճիռ կայացնելու:

Դատավորի այս վերջին հայտարարությունից բոլորը կարծես թե հանգստացան, քանի որ իրենց անելիքն արդեն ավարտվեց: Միայն մեղադրյալ «Սիրտն» էր, որ դեռ անհանգիստ թպրտում էր: Դատապաշտպան «Հոգին» վերջին անկեղծության համար սկսում էր փոքր-ինչ զղջալ, իսկ մեղադրող «Միտքը», ինչպես միշտ, անտարբեր էր: Վերջին վկան՝ «Խիղճը», քիչ թե շատ հանգիստ էր, իսկ մյուս վկաները՝ «Հույսը» արդեն մարած տեսք ուներ, «Հավատը» մի բուռ էր դարձել, բայց դեռ կենդանի էր, իսկ «Ենթագիտակցությունը» և «Բնազդը», արդեն ամեն ինչից կտրված, ապշահար նայում էին շուրջբոլորը: Միայն «Ճակատագիրն» էր թաքուն քմծիծաղ տալիս: Երբ դատարանը նորից ներս մտավ, օդը քարացավ: Պատվելի սառը «Դատողությունը» բազմեց իր տեղում, իսկ նրա ուղեկիցներ «Բանականությունը» և «Գիտակցությունը»՝ նրա աջ և ձախ կողմերում:

—Քննելով գործի մանրամասները՝ դատարանը վճռեց. ամբաստանյալին ճանաչել մեղավոր՝ չստացված սիրո պատճառով բոլորիս կյանքը վտանգի տակ դնելու համար: Որպես պատիժ «Սիրտը»

դատապարտվում է մեկժամյա սառեցման: Դատական նիստը հայտարարում եմ փակված:

***

Գաղտնիք չէ, որ անկողնում գործը վերջացնելու համար մեկ ժամն ավելի քան բավարար է: Եվ սառեցված սրտով ու քրտնած մարմնով Նեկրիստոն նոր-նոր կատարածը դեռևս ամբողջությամբ չգիտակցողի բացարձակ անորոշ հայացքը հառել էր առաստաղին և պառկած հետևում էր ծխախոտի ծխի քուլաների անվրդով վերելքին: Հանգուցալուծումից հետո անգամ նրա ներքնաշխարհում դարձյալ օրինաչափ քաոս էր. նա այդպես էլ չարժանացավ Էլլայի սիրուն, չնայած որ քնեց նրա հետ: Վերջինս անշարժ կուչ էր եկել անկողնու մյուս անկյունում: Նա իր անխոս հայացքն ուղղել էր առաստաղի ճաքերին, որոնք ակամա ականատեսն էին դարձել իր վերջին գործարքի: Նա իր կատարյալ մարմինը ծածկել էր ատլասե ծածկոցով` ասես ամաչելով իր հերթական, բայց ոչ սովորական այցելուից, ով կարծես ծամծմելով իր ճաքճքած շուրթերից դուրս հանող ծխի քուլաները` վայելում էր իր հաղթանակը, որին դատապարտել էր նրան հենց պարտվողը: Տիրում էր լռություն… Բայց ոչ դատարկ լռություն. նրա մեջ սավառնում էին բազմաթիվ խորտակված երազանքներ ու երազներ, չարդարացված հույսեր ու հույզեր, դատողություններ, դիտարկումներ, հերքումներ, բացատրություններ, խոստովանություններ, խոստումներ, վախեր, զգացմունքեր, ափսոսանք… Սավառնում էին նաև հուշեր, հուշեր` թաթախված տարիների փոշով ու պարուրված մոռացման կիսաթափանցիկ շղարշով: Այս լռությունն էր, որ ստիպում էր Էլլային լսել իր խորտակված սրտի հուսահատ բաբախումները և հնարավորություն էր տալիս Նեկրիստոյին՝ վայելելու դրանք… Այդ նույն լռությունն էր, որ իր բութ ատամներով կառչում էր Էլլայի հոգուց ու փոքրիկ պատառներ պոկոտելով դրանից` կտոր առ կտոր մարսում էր դրանք… Ա՜խ, ինչո՞ւ էին նրանք լռում, մի՞թե այս ամենից հետո ոչինչ չունեին ասելու: Գուցե այնքան բան կար ասելու, որ ավելի լավ էր լռել և պարզապես չխանգարել ամենազոր լռությանը՝ մարսելու այն, ինչի քաղցրությունը նրանք այդպես էլ չճաշակեցին՝ սերը…

Ի վերջո ծխախոտի մնացորդն իր վերջին հանգրվանը գտավ երկաթյա մոխրամանի ազատ անկյունում, և ծխողն իր հանդարտ քայլերն ուղղեց դեպի դուռը՝ Էլլայի խոշոր աչքերի մունջ ուղեկցությամբ…

Պատկերացրեք` որքան արցունք էր պետք, որ ամբողջությամբ լցվեին այդ աչքերը…

~ ՎԵՐՋ ~

# ՏՎԻԳԵՐՆ

# ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ

# ТВИГЕРН

# МОРАЛЬНЫЙ КРИЗИС

# TVIGERN

# MORAL CRISIS

# TVIGERN

# CRISE MORALE

Խմբագիր՝ Զ. Սարգսյան
Կազմը՝ RhysGriffiths

Հեղինակները շնորհակալություն են հայտնում Վ. Պալլոյանին, Ա. Վարդանյանին և Հ. Եփրեմյանին ցուցաբերած ստեղծագործական աջակցության համար:

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 65x98 1/16: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 11 տպ. մամուլ

Տպագրվել է «Զանգակ–97» ՍՊԸ–ի տպարանում
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak



Գիրքը լուսապատճենվել և համացանցում է **տեղադրվել** [Գրքամոլ Նախաձեռնության](http://www.grqamol.am) կողմից:

Բոլորին կողմից սիրված «[Գրքամոլ](http://www.grqamol.am)»-ը մեկնարկել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը ընթերցասերների հարթակում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությունը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորին հաճելի ընթերցանություն:

**Գրքամոլ Նախաձեռնություն**
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Since 2012 © Grqamol. All Rights Reserved.